

ՍՈՒՐԲ ԴԵՍՏՆՈՒԿ

1844 FEBRUARY

22  
Ա. 17

# ՍՈՒՐԻ ԴԵՍՏԵՌԿ

Կ Ա Մ ~~ՍՈՒՐԻ~~ 1901 թ.

## ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵՆՈՒՆ ՄԵՐՈՅ

ՀԱՅՈՑ ԱՐԳԱՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Խ Ա Ի Ր Ա Ն

## ԸՆԶԵՌԵԳՈՐԾ ՊԵՏԱԿԵՐԻՆ

ՊԵՏԱՄՈՒԹԻՒՆԸ

Հ Ա Ր Ա Դ Ր Ե Ց

Հ. ՄԱԳԱՐԻՆԸ Վ. ՍԵՄԻՆԻՆԸ

ՄԻՒԹԵՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

877



Վ. Բ. ԵՆՆԸ

ՊԵՏԱԿԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

1850. ՈՒՄՂԹ.

UNIVERSITY OF TORONTO

1881

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO


UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

1881

181



UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

## Յ Ե Ռ Ե Ջ Ե Բ Ե Ն


ԱՆՑԱԾ գացած դէպքի մը ճշմարտութիւնը պատճառներով ու ապացոյցներով գիտնալը՝ փիլիսոփայութեան մասն է: Աստի ան ամէն ուսումնական կերպով գրուած պատմական դէպքերը՝ գիտնական տեղեկութիւններ ու քիչ շատ՝ փիլիսոփայական ճառեր կրնան ըսուիլ: Մենք ալ աս Սոքրատեսի զոգոցումը աւանդել ուզելով՝ ջանացինք որ ուսումնական եղանակաւ ու փիլիսոփայութեան սովորեցուցած պատմական քննութիւններով գրենք, մէյ մը՝ որովհետեւ ուսումնական կերպէն զուրկ ու մերկուկ եւ թեթեւ գրուածք մը ալ հիմայ մեր ծաղկեալ դարուն առջին ելլելու երես չ'ունենար. երկրորդ՝ որովհետեւ աւանդելու պատմութիւննիս շատ նշանաւոր ու մեր ազգին մեծ պարծանք սեպուելու ծանրակշիռ ու ընդհանրապէս կարեւոր նիւթոյ մը վրայ ըլլալով, հարկ է ալ որ ծանր կերպով եւ ուսումնական պատճառներով գրուի, որպէս զի կարդացողին միտքն աղէկ մը կշտացրնէ, համոզէ ու գոհ ընէ:


Իրաւ աս աւանդելու պատմութիւննիս մեր ազգին մէջ բոլորովին անծանօթ չէ, բայց ան ծանօթութիւնը կամ առանց պատմական քննութիւններու՝ վեր ի վերոյ գրուած մըն է, եւ կամ ամէն մասունքը՝ սկիզբէն մինչուկ վերջը մէկիկ մէկիկ, կարգաւ ու տեղն ի տեղը աւանդուած չըլլալուն՝ գիտցողները խիստ քիչ, եւ անոնց ալ շատն ըստ մասին միայն եւ ոչ թէ բոլորը գիտեն: Հիմայ մեր բաղձանքն ան է, որ այսպիսի կրօնական ու

քաղաքական հնախօսութեան վերաբերեալ երեւելի դիպուած մը, որն որ մեր ազգին խիղճանէ ունեցած ազնուութիւնն ու յարգն այսչափ յայտնի վկայութիւններով կ'ապացուցրնէ ու բոլոր աշխարհքիս նախանձելի կ'ընէ, ամէն ազգասէրներէն մանրամասն տեղեկութիւններով ճանչցուի: Ճանչցուելէն ետքն ալ կրնանք բարոյական ստուգութեամբ յուսալ որ աս' թէ գիտնական կերպով աւանդուած ու թէ ազգային պատմութեան մէջ երեւելի մաս մը կացուցանող գրուածքս, մեր ազգին գիտուններուն առջին հաճութիւն ու յարգ կը գտնէ, ինչպէս որ երեք տարի յառաջ գերմաներէն լեզուաւ հրատարակածնիս՝ եւրոպացի գիտնոց առջին յարգ ու ընդունելութիւն ունեցաւ, եւ մենք ալ փուճ տեղ աշխատած չըլլալով՝ դրած նպատակներնուս կը հասնինք, որն որ է՝ մեր ազգին ճշմարիտ ազգասիրութեան եւ ուսումնասիրութեան պատճառ ու յորդորիչ ըլլալ:

Պատմութեանս ստուգութեանը համար բերուած վկայութիւններուն տեղերն ու հեղինակներուն անունները մէկիկ մէկիկ նշանակուած են: Բաց ասկէ՝ մեր կարդացողներուն Ս. Ղաստառակին կերպարանքին ու ձեւոյն որպիսութեանը վրայ մանր տեղեկութիւններ տալու, եւ ամէն կարելի եղանակաւ բանն աղէկ հասկըցրնելու, եւ միանգամայն՝ սրտերնուն մէջ աս սքանչելի հոգեւորական անդին՝ Աշխարքին վրայ սէր ու եռանդ մը զարթուցանելու համար, գրքուկիս սկիզբն անոր երկու տեսակ պատկերը դրած ենք:








Այլ կուրանս դասարանսի

**ԹԲՎՁԻՆ**

ջարդարուն շրջանակիս:



Kautzner sc.

Das edessenische Bild des Erlösers  
ohne verzierter Einfassung



# ՍՈՒՐԲ ԳԵՍՏԵՌԵԿ


Կ Ա Մ

## ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՌ ԱԲԳԱՐ ԽԱՒՐԱԾ

ԵՆԶԵՌԵԳՈՐԾ՝ ՊԵՏԿԵՐԻՆ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆԸ



ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Աբգարին խաղափոխութեան արեւնէրը եւ խնի մը ասոր նման  
արեւելիոսի-ննէր, իբրեւ Պարսաստանի-ն:

**ՔՐԻՍՏՈՍԻ** Տեառն մերոյ քարոզութեան երրորդ  
տարւոյն դէպ ի վերջերը, մեր Հայաստան աշխարհքիս  
մէջ արդէն երեսուն ու չորս տարիէ ի վեր Արշամայ որ-  
դին Աբգար թագաւորը կը տիրէր <sup>1</sup>. Բայց երկրին Աերին  
Հայաստան ըսուած մասին մէջ ուրիշ մէկն ալ, այսինքն՝  
Պոնտոսի Պոլեմոն թագաւորին ջենոն անունով որդին  
կը թագաւորէր, Հռովմայեցոց վերին իշխանութեան  
տակ <sup>2</sup>:

Աբգար իր թագաւորութեան տասնութներորդ  
տարիէն վեր՝ իր արքունիքը Արշակունեաց ցեղին Մծբին  
թագաւորական քաղքէն փոխադրելով, Միջագետաց  
մէջ իրմէն նոր շինուած Եդեսիա քաղաքը տարած էր <sup>3</sup>.  
ինչու որ ան ատենները աս ամէն կողմերս Հայոց Թագին  
ու Գաւազանին կը վերաբերէին: Աս փոխադրութենէս  
եօթը տարի վերջը Աբգար թագաւորը ստիպուեցաւ որ

1 Խոր. Գերբ Բ. ԳԼ. ԻԶ:  
2 Տակիա. Տարեգր. Գերբ Բ. ԳԼ. ԾԶ:  
3 Խոր. Գերբ Բ. ԳԼ. ԻԷ:

Պարսկաստան երթայ, Պարսից Արշաւիր թագաւորին մահուանէն ետքը՝ անոր Արտաշէս որդւոյն ու իրեն եղբարցը մէջ հայրենական Աթոռն ելլելու իրաւունքին պատճառաւ ծագած մեծ դժտուժիւնը, մանաւանդ թէ ըսեմ՝ զարհուրելի ու արիւնահեղ կռիւր, իբրեւ անոնց ազգականը՝ խաղաղցընելու եւ մէջերնին գտնելու համար <sup>1</sup>: Աբգար հոն բանը կարգի դրաւ, ու մէջերնին դաշինք դնելով խաղաղութիւնը հաստատեց չհաստատեց, մէյ մ'ալ մէկէն ի մէկ վրան ծանր հիւանդութիւն մը հասաւ, այսինքն է՝ բոլոր մարմնոյն սոսկալի բորոտութիւն մ'ինկաւ, որուն համար ալ ստիպուեցաւ որ շուտով մը Եգեսիա իր Աթոռը դառնայ <sup>2</sup>:

Սակայն աս միջոցին մէջ Հերովդէս Անթիպաս 2որորորդապետն ու իրեն եղբարքը Փիլիպպոս ու Լիւսանիաս, Պիղատոսն ալ մէկտեղ, որոնք որ արդէն Աբգարին գէմ սրտերնուն մէջ ոխ ու թշնամութիւն ունէին, անոր Պարսկաստան ըրած ճամբորդութիւնն առիթ առնելով, վրան զրպարտութիւններ հնարեցին, զանիկա Տիբերիոս կայսեր ու ծերակուտին աչքէն հանելու համար <sup>3</sup>: Աւստի շուտով մը գէպ ի Հռոմ մարդ խաւրեցին ու ամբաստանութիւն ըրին որ Աբգարին Պարսկաստան երթալուն միտքն ուրիշ բան չէր, բայց եթէ՝ որպէս զի հոն զօրք ժողովէ, գունդ կազմէ, եւ այսպէս Հռոմայեցւոց վերին իշխանութեան լուծը պարանոցէն թօթուելով բոլորովին ինքնիշխան ըլլայ: Աբգար աս առջի անգամուս յաջողութիւն չունեցաւ իր թշնամիներուն անիրաւ տեղ ըրած զրպարտութիւնները Հռոմայ առջեւը սուտ հանելու <sup>4</sup>: Աւստի երբոր Հերովդէս, Պատրիարքաց Արեւտ արքային տրուած օգնութեան համար <sup>5</sup> Աբգարին վրայ կրկին անգամ բարկացաւ նէ, կայսեր ու ծերակուտին առջին անոր գէմ

1 Խոր. Գեղ. Բ. ԳԼ. ԻԸ:

2 Անդ. եւ ԳԼ. Լ:

3 Անդ. ԳԼ. ԻԹ:

4 Անդ:

5 Անդ. ԳԼ. ԼԶ:

նորէն նոր զրպարտութիւններ կցկցեց, եւ այնչափ խորա-  
մանկութիւններ բանեցուց որ Աբգար վերջապէս ստի-  
պուեցաւ մասնաւոր ու արտաքոյ կարգի դեսպանութեամբ  
Հռոմայեցւոց մարդիկ խաւրելու, որպէս զի զինքը կայ-  
սեր առջեւն արդարացրնէ ու իր անմեղութիւնը ցուցը-  
նէ: Եւ աս եղաւ աւասիկ իր դարձին պատճառը:

Մինչուկ հիմայ ըսածներս, ինչպէս յայտնի է՝ մեր  
ստուգապատում՝ աղգային պատմագիրը Մովսէս Խորենա-  
ցւոյն Հայոց Պատմութեան գրքէն (Գիրք Բ. ԳԼ. ԻԶ. — ԻԹ.)  
քաղելով դրի, ետեւէն ըսելիքներուս իբրեւ Պատմագրո-  
ւի մը. նոյնպէս մատենիկիս բուն պատմութիւնն ալ  
դարձեալ նոյն ընտանի մատենագրին խօսքերովը պիտ'որ  
սկսիմ, որն որ աս պատկերիս, այսինքն՝ Գաստառակին  
պատմութիւնը չէ թէ միայն վերը յիշուած մատենագրու-  
թեանը մէջ, հասպա նաեւ իր զանազան նամակներուն ու  
իր աշխարհագրութեանը մէջն ալ կը յիշատակէ. եւ ին-  
քը Մովսէս՝ աս Աբգարու վերաբերեալ ամէն տեղեկու-  
թիւնները Եզեսիա քաղքին մէջ դանուող դիւանին յի-  
շատակարաններէն քաղած առած է, ուր որ նոյն իսկ  
Աբգարին ատենագրպիրներէն Ղերուբնա անունով մէկը,  
իր տիրոջը ամէն երեւելի ու նշանաւոր գործքերը՝ իբրեւ  
ժամանակակից ու ականատես վկայ՝ ժողոված ու մատե-  
նագրած էր<sup>1</sup>:

1 Խոր. Գիրք Բ. ԳԼ. ԼԶ:

Աբգար իր իշխաններէն զի Կանին Ելե-Ռերոպոլիս Կաղաքը Մա-  
րինոս կոստանդինոս իւր խառնակ : — Խառնակները առ արեւել-  
աբարտոս Տէրն զի իւր Կանին, Ե- ասանկով Աբգարին Կրիստո-  
ստոսութեան դարձանքն սկիզբ իւրաց : — Աբգար Յետոսի Կրիս-  
տոսի Ռոմէ զի իւր Կրիստոս Տէրն զի ալ անոր՝ նախ-  
կին պատասխանով զի Կրիստոս, զորն որ Թովմաս աստուծոյ իւր զար-  
դարանքն բերնէն գրեց, Ե-ր պատկերը իւր խառնակ (Մովս. Խոր.  
Պատմ. Հայ. Գիրք Բ. ԳԼ. Լ. — ԼԲ.) :

“Մատեններս Մարինոս, Ստորգեաց որդին, կայսեր  
Տրամանաւ Փիւնիկէի, Պաղեստինոյ, Ասորւոց ու Միջա-  
գետաց երկիրներուն վրայ կուսակալ կամ վերակացու  
դրուեցաւ : Աս մարդուս, որն որ նոյն ատենը Բեթքուբին  
քաղաքը կը գտնուէր, Աբգար իր գլխաւոր պաշտօնա-  
տարներէն երկու հոգի խաւրեց, որոնց անուններն էին  
Մարիհաբ՝ Աղձնեաց բղեաշխը, ու Շամշագրամ՝ Ապա-  
հունեաց ցեղին նահապետը, եւ միանգամայն զԱնան՝ իւր  
պալատին հաւատարիմը, որպէս զի ասոնք Աբգարին դէպ  
ի արեւելք (Պարսկաստան) ըրած ճամբորդութեան պատ-  
ճառը կուսակալին ծանուցանեն, անոր՝ Արտաշիսին ու իր  
եղբարցը մէջ դրուած դաշինքին պատճէնը ցուցնեն, ու  
նաեւ անոր աղաչեն որ կայսեր քովը միջնորդ ըլլայ :  
Խաւրուածները զանիկա Ելե-Ռերոպոլիս քաղաքը գտան :  
Մարինոս զասոնք մեծ պատուով ու մարդասիրութեամբ  
ընդունեցաւ, եւ անոնց ապսպրեց որ Աբգարին աս պա-  
տասխանը տանին, Աս բանիս համար կայսերմէ ամե-  
նեւին վախ մ'ունենար, միայն փոյթ տար որ տուրքդ  
ժամանակին անպատճառ հատուցանես :

“Խաւրուածները ետ դառնալու ատեննին Երուսաղէմ  
անցան, զԳրիստոս Տէրն մեր տեսնելու համար, որովհե-  
տեւ անոր գործած հրաշքներուն համբաւն արդէն իրենց  
ականջը հասած էր : Հոս ամէն բան իրենց աչքովը տես-  
նելէն ետքը, եկան մէկիկ մէկիկ իրը Աբգարին պատմեցին :



“Աբգար ասոր վրայ շատ զարմացաւ, սրտանց Քրիստոսի հաւտաց իբրեւ Աստուծոյ որդի, եւ ըսաւ. Անկարելի բան է որ ատ հրաշքները մարդկային գործ ըլլան, հապա անոնք ամէնն ալ Աստուծոյ բան է. որովհետեւ մարդիկներու մէջ բնաւ մէկը չի գտնուիր՝ որ մեռելները կարենայ կենդանացընել, ատ Աստուծոյ միայն գործն է:

“Այլ որովհետեւ իր մարմինը եօթը տարիէ ի վեր՝ Պարսկաստան գտնուած ատենը ստացած հիւանդութեանը անհանդուրժելի ցաւերուն պատճառաւ՝ գրեթէ փճացած էր, ու մէկն ալ չէր գտնուեր որ աս ախտը բժշկելու համար դարման մը կարենար ընել, ուստի Քրիստոսի նամակ մը գրել տուաւ, անոր աղաչելով որ շնորհք մ'ընէ իրեն գայ ու մարմնոյն ցաւերը բժշկէ: Աւասիկ նամակին օրինակը:

“Աբգարին՝ Յիսուսի Քրիստոսի Փրկչին իրիւծ նամակը:

“Աբգար, Արշամայ որդին, երկրի իշխանը, Քրիստոսի Փրկչիդ ու բարերարիդ, որն որ երուսաղեմայ կողմերը յայտնուեցար, ողջոյն շատ:

“Այս քու՝ եւ ըրած բժշկութիւններուդ վրայ շատ բաներ լսեցի, մանաւանդ որ դուն առանց դեղոյ ու բուսոյ մը զօրութեան ատ բաները կը կատարես եղեր. վասն զի լսածիս նայելով՝ դուն կուրերուն լոյս, կաղերուն քալելու ոյժ կու տաս, բորոտները կը սրբես, պիղծ ոգիները կը հալածես եղեր, ամէնքն ալ՝ որոնք որ երկայն հիւանդութիւններով չարչարուած են նէ՛ կ'առողջացընես, ու մեռածներն անգամ կը յարուցանես եղեր: Արդ երբ որ ես աս ամէն քու ըրածներդ լսեցի, ինք իրմէս աս հետեւութիւնս ըրի. կամ դուն նոյն իսկ Աստուածն ես, որ երկինքէն վար իջեր ես՝ այնպիսի հրաշքներ գործելու, եւ կամ թէ Աստուծոյ որդին ես դուն, որ այդպիսի մեծ մեծ սքանչելիքներ կը կատարես: Աս պատճառիս համար աւասիկ քեզի աս թուղթս գրեցի, աղաչելով որ աշխատութիւն յանձն առնուս ինձի հրամես, որպէս զի իմ դժար հիւանդութենէս՝ որով որ կը չարչարիմ, զիս

առողջացրնես : Նաեւ լսեցի որ Հրեայք քեզի դէմ չարա-  
խօսութիւն կ'ընեն ու զքեզ չարչարել կ'ուզեն եղեր :  
Ես՝ թէպէտ փոքրիկ, բայց խիստ աղուոր քաղաք մ'ու-  
նիմ, որն որ երկուքնիս ալ պատսպարելու բաւական է :

«Աս թուղթս տանողները զՅիսուս Երուսաղէմ քա-  
ղաքը գտան : Աս՝ նոյն իսկ Աւետարանին խօսքը կը հաս-  
տատէ, որն որ կ'ըսէ . Երուսաղէմ եկողներուն մէջ քանի  
մը հեթանոսներ կային, որոնք որ զՅիսուս կ'ուզէին տես-  
նել . իսկ անոնք որ աս լսեցին՝ Համարձակեցան Յիսուսի  
ծանուցանել, հապա Փիլիպպոս ու Անդրէաս առաքեալ-  
ներուն ըսին, ու ասոնք ալ Յիսուսի ծանուցին : Բայց  
Փրկիչը իրեն եկած հրաւերքը չուզեց նոյն ատեն ընդու-  
նիլ . եւ սակայն ուզեց որ Աբգարին նամակ մը խաւրէ,  
որուն մէջ այսպէս գրուած էր :

«Աբգարին նամակին պարասխանը, զորն որ Թոմաս առա-  
+եալ գրեց Փրկիչին բերնէն :

«Արանի անոր՝ որն որ զիս չէ տեսած ու ինձի կը  
հաւտայ, ինչու որ իմ վրաս այսպէս գրուած մը կայ . Ա-  
նոնք՝ որոնք որ զիս կը տեսնեն, ինձի պիտ'որ Հաւտան .  
եւ անոնք՝ որոնք որ զիս չեն տեսներ, ինձի պիտ'որ հաւ-  
տան ու երանելի ըլլան : Բայց ատ քուկին ինձի գրած  
խնդիրքիդ գալով՝ որով որ կ'աղաչես թէ ես քեզի գամ,  
հիմակ անոր ատենը չէ . նախ պէտք է որ ես ան բանն  
ի գլուխ տանիմ, որուն համար որ խաւրուած եմ . ու երբ  
որ աս բանս կը կատարեմ, անկէ ետքը պիտ'որ անոր քո-  
վը ելլեմ, որն որ զիս խրկած է . եւ երբոր ես վեր կ'ել-  
լեմ, ան ատեն իմ աշկերտներէս մէկը քեզի պիտ'որ խաւ-  
րեմ, որն որ քու ցաւերդ պիտ'որ բժշկէ, ու քեզի եւ ա-  
մենուն՝ որոնք որ քեզի հետ են, կեանք շնորհէ» :

«Աս նամակս բերաւ յանձնեց Աբգարին իր սուր-  
հանդակն Անան, Փրկիչին պարսկերէլը մէկտեղ, որն որ  
մինչուկ աս օրուան օրս Եդեսիա քաղաքը կը գտնուի» :  
— Ինչուան հոս Մովսէս Խորենացիին խօսքերն են . յետոյ  
կարգաւ կը պատմէ նոյն պատմագիրը՝ Քրիստոսի Տեառն

մերոյ խոստացած Առաքելոյն Հայաստան գալը, թագաւորին ու բովանդակ Հայոց աշխարհին կատարեալ քրիստոնէութեան դառնալը եւ այլն: Ինչպէս որ աս գրքուկիս վերջը՝ զատ գլխու մը մէջ դրուելու նոյն Խորենացւոյն կտորուանքներէն յայտնի պիտ'որ երեւայ: Հիմայ մենք կ'ուզենք Քրիստոսի Տեառն մերոյ վերը յիշուած սքանչելի պատկերին պատմութիւնը շարունակել, որն որ մեր ճառին բուն դիտումն է:

Ե Ր Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ի Խ

Ինչպէս շինուեցաւ աս սքանչելի պատկերս:

ԱՍ սուրբ պատկերին կամ Գաստառակին ինչ կերպով շինուելուն վրայ՝ մեր ազգային պատմութիւնը՝ Յայսմաւուրքէն եւ ուրիշ Հայ պատմագիրներէն քաղելով այսպէս կը զրուցէ: Աբգար ատ Երուսաղէմ խրկած պատգամաւորներուն հետ մէկտեղ, որոնք որ նամակ տարած էին Քրիստոսի, նաեւ պատկերհան մ'ալ ի միասին խաւրած էր, Յովհաննէս անունով: Քանի մը յոյն պատմիչներ կը զրուցեն որ աս պատկերհանը նոյն իսկ Աբգարին սուրհանգակն Անան եղած ըլլայ, որն որ անոնց կարծիքին նայելով՝ պատկերհանութիւն ալ գիտէ եղեր:

Աս պատկերհանը իր տիրոջմէն պատուէր առած էր որ եթէ Քրիստոս անձամբ գալ չուզելու ըլլայ, անոր գէմքը կամ կերպարանքը նկարէ ու իրեն բերէ, որպէս զի գոնէ անոր երկնային երեսին վրայ գաղափար մ'ունենայ եւ զանիկա տեսնելու համար ունեցած բաղձանքը ասանկով քիչ մը լեցուի: Իսկ պատկերհանը չկրնալով աս բանս յայտնի Քրիստոսին ծանուցանել, եւ ոչ ալ անոր գլուխը ժողոված մարդկան բազմութենէն քովը մօտիկնալ կարենալով, որպէս զի դիմացը կենալով անոր պատկերը հանէ, բարձրկեկ քարի մը վրայ ելած՝ Յիսուսի բոլորտիքն անոր աստուածային խօսքերը լսելու համար

կեցող ժողովրդեան ետեւը գրեթէ պահուրտելով՝ սկսաւ  
անոր դէմքը նկարել, Փրկիչն ալ իր քարոզը կը շարու-  
նակէր: Ամէն ճիգն ի գործ դրաւ պատկերհանը, աշխա-  
տեցաւ որչափ որ կրնար նէ. բանը չյաջողեցաւ, անկարե-  
լի եղաւ: Սակայն ամէն բանը դիտցող Արդին Աստուծոյ  
չուզեց խեղճ պատկերհանին գովելի ջանքն անպտուղը  
նել ու փուճ հանել. ողորմեցաւ անոր վրայ, իր առջեւը  
կանչեց, թաշկինակ մը առաւ ձեռքը, սրբեց անով իր ե-  
րեսը. եւ ինչ կը նայիս, իր երկնային կերպարանքը յի-  
շեալ թաշկինակին կամ դաստառակին վրայ սքանչելի կեր-  
պով մը տպաւորուեցաւ: Ասիկա տուաւ Քրիստոս Տէրն  
մեր Անանին, եւ պատուիրեց անոր ու մէկալ պատգա-  
մաւորներուն որ աս պատկերը վերը յառաջ բերուած  
նամակին հետ մէկտեղ Աբգարին տանին տան:

Սուրբ Գաստառակն աս եղանակաւ ելած կամ շի-  
նուած ըլլալուն միօրինակ կը վկայեն (ի բաց առեալ քա-  
նի մը փոքր ու իրին էութիւնը չիօխող տարբերութիւն-  
ները կամ պարագաները) նաեւ շատ յոյն ու լատին մա-  
տենագիրներ ալ, որոնց խօսքերը հետզհետէ եկող գլուխ-  
ներուն մէջ պիտ'որ յառաջ բերեմ: Բայց մասնաւորա-  
պէս հոս յիշուելու արժանի է Աոստանդին Պորփիրոսե-  
նին աս նիւթիս վրայ գրած հռչակաւոր ճառը, որուն ճա-  
կատն աս խօսքերս կան. Քրիստոսի շնորհօքը Հասմայեցոց  
կայսեր՝ Աոստանդին Պորփիրոսեանի՝ զանազան պատգոմ-  
քի մեծերէն  
+աղէլով, Քրիստոսի Տեսան Վերոյ անյեւագործ ու աստուածային  
պատկերին վրայ գրած ճառը, ինչ ինչպէս Ս. Գաստառակն Աբ-  
գարին խրիստեցաւ, եւ երբեք երբեսիային աս երջանիկ ու հաճ-  
բաւեալ մայրաքաղաքս Աոստանդինապոլիս բերուեցաւ — որուն  
որ բուն յունարէն ու վաւերական օրինակը կը գտնուի՝  
Փրանկիսկոս Աոմբելիս քահանային ըրած լատիներէն  
թարգմանութեամբը մէկտեղ՝ Փարիզ 1664ին տպուած  
գրքի մը մէջ, ուր որ՝ Աոստանդինոպոլիս քաղաքը Յունաց  
իշխանութեան տակը եղած ատեն կայսերներուն օրերովը  
պատահած երեւելի բաներուն հնախօսութիւնն ու յիշա-

տակարանները կը գտնուին : Պորփիրոսէնեան ճառին մէջ  
 թէպէտեւ Քրիստոսի կերպարանքին կտաւի մը վրայ ինք  
 իրեն առանց նկարչութեան ելած ըլլալուն վրայ (ինչ-  
 պէս նաեւ ետեւէ ետեւ պատմուելու կտորներուն կամ  
 պարագաներուն մէջն ալ) նախընթաց գլուխը յառաջ  
 բերուած արժանահաւատ ու ստուգապատում մատենա-  
 գրին Մովսիսի խորենացւոյ պատմածներէն տեղ տեղ քիչ  
 մը տարբեր բաներ կան, բայց ինչպէս որ ըսի՝ անոնք  
 պատմութեան բուն էութիւնը չեն եղծաներ, մանաւանդ  
 թէ իրին էական մասերուն ճշմարտութեանն աւելի եւս  
 հաստատութիւն կրնան սեպուիլ : Ուստի ասոր համար  
 զխորենացին եւ զՊորփիրոսէն իրարու հետ դիւրաւ հա-  
 մեմատելու եւ մէջերնին եղած փոքր տարբերութիւնները  
 միտք առնելու համար, վերջինին խօսքերն ալ կ'ուզէի հոս  
 տեղս դնել. բայց նման բաները կրկնելով ձանձրութիւն  
 չպատճառելու եւ կարգը չչփոթելու համար՝ գրքուկիս  
 ետեւը Պորփիրոսէնին ճառը բառ առ բառ թարգ-  
 մանելով ամբողջ պիտ'որ դնեմ, որպէս զի այսպիսի քըն-  
 նութիւններու մանր տեղեկութիւն ունենալ ուզողը թող  
 ինքիրեն համեմատէ, եւ ուրիշ ինչ պարագաներ ալ որ  
 մենք մեր պատմութեան ընթացքին մէջ չենք գրած նէ,  
 անոնց ալ տեղեկանայ :

Ս. Գասարաւանքը Երեւնի տաղաւոր Աբգարին էր բերուի: — Ճամբարդուստանն մէջ եղած «տանկելիները»: — Ս. Գասարաւանքին Երեւնի ցոցոցած յարգութիւնն ու մեծարանքը:

ԱՐԳԱՐԻՆ պատգամաւորները քրիստոսէն՝ իր երեսին պատկերն ու նամակ մ'ալ ընդունելու արժանի ըլլալէն ետքը, Երուսաղեմէն ելան ու մեծ ուրախութեամբ ճամբայ ինկան, պատահած մեծ շնորհքին լուրն օր մը յառաջ իրենց թագաւորին հասցընելու եւ զանիկա մխիթարելու համար: Ճամբորդութեան մէջ Չմշկեծեկ քաղաքը հասան, զորն որ Յոյները Հերապոլիս կ'անուանէին: Պատկերը տանողները վախնալով որ եթէ զանիկա իրենց հետ մէկտեղ քաղաք խոթելու ըլլան, դուցէ օտար ձեռք անցնելու վտանգ մը կը հանդիպի, քաղքէն դուրս երկու աղիւսի մէջ դնելով քաղքին պատուարին վրայ կամարակերպ ծակի մը մէջ պահեցին, եւ իրենք ներս մտան: Աէս գիշերուան մօտ, քաղքին պահպանութեանը համար կայնող մարդիկը տեսան որ քաղքին պատուարին վրայէն, ուր որ պատկերին կեցած ծակը կար, դէպ ի վար լուսաւոր ու կամարածեւ ճառագայթ մը սիւռուած է. բայց իրենք աս երեւութիւն պատճառը չկրցան իմանալ:

Արկրորդ օրը առտուն Անան պատկերը պատին մէջէն առաւ, առանց քաղքին մարդիկներէն մէկու մը ցուցընելու, ու իր ճանապարհորդակից ընկերներուն հետ մէկտեղ իր ընթացքը յառաջ տարաւ, եւ տասուերկու օրուան մէջ Երեւնի հասան: Բայց երբոր քաղքին մօտիկցաննէ, յանկարծուստ մօտիկ տեղուանքէ մը մեծ ամբոխի ձայն լսուեցաւ, իբրեւ թէ բազմաթիւ թշնամիներու գունդ մը վրանին կը յարձըրկէր: Վախնալով որ չըլլայ թէ տարածանգին աւանդնին կորստեան կամ յախշտակութեան վտանգի մէջ իյնայ, ամէն բանէն յառաջ սուրբ Գաստառակն ապահովընել ուզելով՝ զանիկա առջի անգամուն պէս եր-

կու կղմինտրներու մէջ փաթթած մերձաւոր փոսի կամ  
ցամքած ջրհորի մը մէջ պահեցին եւ իրենք ալ փախչե-  
լով քաղաքը մտնելնուն պէս՝ դրունքը գոցուեցան: Սակայն  
ընդ վտանգն անցնելը՝ Աբգար մարդիկներ խաւրելով պա-  
հուած պատկերը մեծ հանդէսով դուրս հանել տուաւ,  
բայց երկու կղմինտրներէն մէկը, ինչպէս ճառընտիրը կը  
դրուցէ, Աստուծոյ տեսչութեամբն ու կամօքը հոն պա-  
հուած մնաց, որպէս զի ետեւէ եկած դարերուն մէջ Աս-  
տուած անով նոր սքանչելիք ցուցրնէ, ինչպէս իրօք ալ  
Հայոց թուականին Ուեին, այսինքն է՝ Քրիստոսէն ետքը  
երկոտասաներորդ դարուն մէջ եղաւ, ու նոյն պատճա-  
ռաւ շատերը սուրբ հաւատքի դարձան: Աբգար երբոր  
պատկերն ընդունեցաւ նէ, անոր առջին երեսի վրայ ին-  
կաւ, ու երկրպագութիւն մատուցանելով՝ խոնարհու-  
թեամբ, հաւատով ու զղջացեալ սրտիւ իրեն աղօթքն ա-  
նոր ընծայ ըրաւ: Անպատմելի էր ասոր համար սրտին մէջ  
ունեցած ուրախութիւնը, անհամբերութեամբ կը սպա-  
սէր ան օրուան, որուն մէջ որ Քրիստոսի Տեառն մերոյ ա-  
նոր խոստացած Առաքեալը պիտ'որ տեսնէր: Նաեւ կը  
պատմուի՝ որ ան օրուրնէ ի վեր, երբոր սուրբ Գաստա-  
ռակը իր ձեռքն առաւ, ունեցած ախտին ցաւերը զգալի  
եղանակաւ թեթեւցան:

Սուրբ Գաստառակին Երուսաղեմէն դէպ յԵդեսիա  
ճամբորդութեան դէպքերը պատմած ատենն ալ Աոստան-  
դին Պորտիւրոժէն դարձեալ քանի մը տարբեր, կամ թէ  
գուցէ մեր քաղած աղբիւրներնէս զանց առնուած պարա-  
գաներ յառաջ կը բերէ, ինչպէս գրքուկիս վերջը դրուե-  
լու ճառէն կրնայ ինքիրեն իմանալ կարգացողը: Բայց աս-  
կից ալ զատ, Գաստառակին թէ շինուելուն ու թէ Եդե-  
սիա գալուն վրայ ուրիշ պատմութիւն մ'ալ կայ, որն որ  
դարձեալ մեր ըսածներէն քիչ ու անվնաս տարբերու-  
թեամբ մը կը զանազանուի: Նբրեւ թէ կ'ըսեն որ երբոր  
Քրիստոս Տէրն մեր Չիթենեաց լեռը վերահաս չարչարա-  
նաց ու մահուանը վրայ խոկալով տագնապի մէջ ին-

կաւ, եւ ինչպէս Աւետարանն ալ կ'ըսէ, քրտինքն երեւ-  
սէն ոլոռն ոլոռն՝ արեան կաթիլներու պէս գետինը վա-  
զելու սկսաւ նէ, աշկերտներէն մէկն անոր կտաւի մը կտոր  
կամ թաշկինակ մը տուած ըլլայ, որով որ քրիստոս ե-  
րեսը սրբելով՝ սքանչելի եղանակաւ մը իր կերպարանքն  
ատ կտաւի կտորին վրայ ելած տպաւորուած ըլլայ: Աս  
այսպէս ըլլալէն ետքը՝ Յիսուս թովմաս առաքեալին  
ապսպրած ըլլայ՝ որ աս պատկերն առնու քովը պահէ,  
ու ետքը որ Առաքեալը որ Հայաստան քարոզութեան  
խաւրուելու ըլլայ նէ՝ նոյն պատկերն ալ առնու մէկտեղ  
Աբգարին տանի: Աս պատմական տարբերութիւնս Պոր-  
փիւրոժէնն ալ կը յիշէ իր ճառին մէջ: Թէ որ աս  
պատմութեանս ընթացքին նայելու ըլլանք, Սուրբ Գաս-  
տառակը Թադէոս առաքեալին Հայաստան գալէն յա-  
ռաջ Աբգարին խրկուած պիտ'որ չըլլայ: Ինչ որ է նէ,  
կամ քիչ մը յառաջ, կամ քիչ մը ետքը, կամ աս կամ  
ան կերպով, ամէն պատմագիրները բուն էական մասին  
մէջ իրարու հետ միաբան են, այսինքն թէ՛ Ս. Գաստա-  
ռակ ըսածնիս՝ Փրկչին անձեռագործ պատկերն է, Աբգա-  
րին խաւրուած: Եւ աս մեզի հերիք էր:

Ի վերայ այսր ամենայնի հոս առանց փոքրիկ պատմա-  
կան քննութեան մը անցնիլ չենք ուզեր: Մենք՝ որովհե-  
տեւ Մովսիսի Խորենացւոյ պատմածները՝ նոյն իսկ Բա-  
նադատութեան կանոններուն համաձայն՝ աս բանիս մէջ  
ամէն ուրիշ օտարազգի պատմագիրներուն խօսքէն վեր  
դասելու կը պարտաւորինք, ինչու որ անիկա իր աս նիւ-  
թիս վրայ ըսածներն անընդմիջաբար Եդեսիա քաղքին  
յիշատակարաններէն քաղած առած է. դարձեալ՝ մենք  
որովհետեւ աս հիմակ տարբեր եղանակաւ պատմուածն  
ալ մեր ստուգագոյն սեպածին հետ միաբանել կ'ուզենք,  
անոր համար կը համարձակինք սապէս բանին հաստատու-  
թիւն ու որոշում մը տալու՝ որ թէպէտեւ քրիստոս Տէրն  
մեր իր պատկերն ըստ ամենայնի Խորենացւոյն պատմածին  
համաձայն հանած ու Թադէոս առաքելոյն Հայաստան



գալէն յառաջ՝ նամակով մը մէկտեղ Աբգարին խրկած էր. բայց մէկալ պատմագիրները, որոնց որ մէկ կողմանէ Մովսէսի խորենացւոյն գրուածքը ծանօթ չէր, մէկալ կողմանէ ալ արդէն տեղեկութիւն ունէին թէ Քրիստոսի երեսացը պատկեր մը Աբգարին ձեռքը հասած է, պատմական շփոթութեամբ մը Ս. Գաստառակին տեղ Ս. Արշամակը կամ թէ ուրիշ ասոր նման պատկեր մը իմացան, ու անոր Հայաստան հասնելն ալ մինչուկ Թագէոս առաքելոյն ատենը ձգեցին: Այսպէս երկու կամ երեք զանազան պատմութիւններն իրարու հետ խառնեցին, որն որ շատ դիւրաւ կրնար պատահիլ, ինչու որ՝ ինչպէս ետեւէ ետեւ ըսելիքներնէս յայտնի պիտ'որ երեւայ, չէ թէ մինակ երկու, հապա շատ այսպիսի կտաւի վրայ տպաւորուած Քրիստոսի պատկերներ կը գտնուին, որոնց վրայ յետոյ մէկիկ մէկիկ համառօտիւ իրենց տեղը պիտ'որ խօսինք: — Աերոյիչեալ պատմագիրներուն ատ ըսածը թէ Քրիստոս Տէրն մեր Չիթենեաց լեռը երեսին քրտինքը լաթով մը սրբելով՝ իր կերպարանքը նոյն կտաւին վրայ տպաւորուած ըլլայ, աւելի Ս. Արշամակին կամ Աերոնիքայի ըսուած պատկերին կը յարմարի, քան թէ մեր Ս. Գաստառակին. ինչու որ Ս. Գաստառակին վրայի պատկերին վրայ ամենեւին արատ կամ դալկութիւն մը չկայ ու չ'երեւար. հապա բոլորովին պայծառ ու փառաւոր աստուածային կերպարանք մըն է. իսկ Աերոնիքայի պատկերին վրայ արատ ու արեան կաթիլներ կ'երեւան, ինչպէս քիչ մը ետքը պիտի տեսնենք: Ասկէ ալ ուրեմն կ'ապացուցուի թէ ատտարբեր պատմութիւններուն մէջը չէ թէ ստութիւն կամ խաբէութիւն, հապա շփոթութիւն ու խառնակութիւն կայ, պատմական աղբիւրներու պակսութենէն, կամ նոյններուն քիչ ու անկատար քննութենէն պատճառուած:

Աբգար Ս. Գաստառակն ընդունելէն ետքը՝ ինչպէս որ արժանի էր նէ մեծ պատուոյ մէջ պահեց զանիկա, ասոր համար ալ ուզեց որ բովանդակ քաղքէն հրապարակական յարգութիւն ընծայուի անոր, ու նոյն վախճա-

նին հասնելու համար աս միջոցը մտածեց : Վաղուց հետե  
 քաղքին մեծ դրանը վրայ հեթանոս Յոյներու պաշտած  
 չաստուծոյ մը մարդապատկերը կամ արձանը կանգնուած  
 էր, որուն որ ամէն անցնող դարձողները մեծ պատիւ,  
 յարգութիւն ու երկրպագութիւն կը մատուցանէին : Աս  
 արձանս Աբգար վար առնել տուաւ, ու անոր տեղը հրա-  
 մայեց որ Քրիստոսի Տեառն մերոյ խրկած անձեռագործ  
 պատկերը դրուի, զորն որ ինք արդէն փառաւոր ոսկե-  
 զօծ շրջանակի մը մէջ անցընել տուած ու զարդարած  
 էր, պատկերին տակն աս խօսքերս փորագրել տալով .  
 Քրիստոս Աստուծոյ, «Վ որ էր յոյսը + ու վրայ էր դնէ, եր-  
 քէ+ էր յոսէն պարսպի լեւելը : Աս ընելէն ետքը, թագաւ-  
 որական հրաման հանեց որ ո՛վ որ ասկէ ետքը նոյն դռնէն  
 ներս մտնելու ըլլայ, աս պատկերին մեծաւ երկիւղիւ յար-  
 գութիւն ընծայէ : Աս կտորս ըստ ամենայնի այսպէս կը  
 պատմէ Պորփիրոսէնն ալ ու Աեդրենոս յոյն պատմիչը <sup>1</sup> :

Աս անձեռագործ պատկերին պատահած զանազան  
 դէպքերը պատմական կարգաւ շարունակելէն յառաջ,  
 կ'ուզենք անոր վաւերականութեանը համար թէ հին դա-  
 րերու եւ թէ աս մեր ժամանակիս ալ զանազան պատ-  
 մագիրներուն ու երեւելի մարդիկներուն տուած վկայու-  
 թիւնները հոս տեղս յառաջ բերել ու մինչուկ հիմայ  
 ըսածնիս աղէկ մը հաստատել, որպէս զի կարդացողները  
 իրին ստուգութեանը վրայ արդէն ապահով ըլլալով, աս-  
 կէ ետքը ըսելիքներնիս ալ աւելի եւս մտադրութեամբ  
 ու բաղձանքով մտիկ ընեն, եւ խօսածներնուս՝ արժա-  
 նաւոր յարգութիւնը չզլանան :

<sup>1</sup> Աեդրեն . ի Քաղ. պատմ. էջ 176 — 179 :

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Գ Լ Ո Ի Խ

Սրբոց Հարց, Տիեզերական — Մասնաոր ժողովոց է — ռիշ  
 երեւելի մասնագրաց վիշո-նի-ննէրը, աս՝ Աբգարին խա-րո-ած  
 «+անչելի անյե-ագործ իրկչական Պարկերիս վա-երական-նի-նը  
 հասարակելու համար:

ՄԻՆՉՈՒԿ Տիմայ ըսածներնուս հետ կը միաբանին ան  
 ամէն հին դարերու հռչակաւոր ու արժանահաւատ մա-  
 տենագիրները, որոնք աս նիւթիս վրայ գրեցին, եւ որոնց  
 որ թիւը խիստ շատուոր է: Ասոնք ամէնքն ալ կը հաս-  
 տատեն որ Յիսուս Քրիստոս Տէրն մեր իր չարչարանքէն  
 քիչ մը յառաջ, Եղեսիա քաղքին իշխանը Աբգարին՝  
 կտաւի մը կտոր կամ Գաստառակ մը խաւրած է, որուն  
 վրայ իր սուրբ կերպարանքին պատկերը տպաւորուած էր,  
 նոյն յիշեալ Գաստառակը երեսին վրայ մինակ քսելով  
 մը: Մենք հոս տեղս չենք կրնար ան ամէն մատենագիր-  
 ները՝ իրենց խիստ շատուորութեանը համար՝ մէկիկ մէկիկ  
 վկայութեան կոչել, բայց կ'ուզենք՝ ըսածնիս անտարա-  
 կուսելի ընելու համար՝ անոնցմէ քիչերը միայն յիշել եւ  
 աս բանիս վրայ տուած վճիռնին ի մէջ բերել:

Ամենէն յառաջ յիշուելու արժանի է, Սրբոյն Ե-  
 փրեմի Խորին Ասորոյ՝ իրեն Արաի անունով գրուածքին  
 մէջ Ս. Գաստառակին վրայ տուած վկայութիւնը: Աս  
 Սուրբս՝ ինչպէս յայտնի է՝ մեր Սրբոյն Յակովբայ Մծբնայ  
 հայրապետին աշկերտն էր, ու Եղեսիա քաղաքը իր սար-  
 կաւագութեան ատենը (չորրորդ դարուն մէջ) շատ հեղ  
 զՍ. Գաստառակը իւր աչօքը տեսած, ու Փրկչին Աբգար  
 թագաւորին գրած նամակն ալ կարդացած, եւ ուրիշ աս  
 բանիս վերաբերեալ շատ բաներ ալ լսած ու իրին ստու-  
 գութեանը տեղեկացած էր: Ուստի այսպիսի արժանա-  
 հաւատ մարդ մը, մանաւանդ թէ՛ Սուրբ մը, իր վերը  
 յիշուած Ատակ գրքին մէջ մեր ըսածները յիշատակելով  
 (բուն իրեն խօսքը ետքը պիտ'որ գնենք,) մեր պատմու-  
 թեանը մեծ հաստատութիւն կու տայ:

Այսպէս անժխտելի վկայութիւն կու տայ մեր ըսածին նաեւ Գրիգորիոս Բ. Սրբազան Քաջանայապետը, որն որ առ պատկերամարտ կայսր Ղեւոն Իսաւրացին գրած առջի նամակին մէջ այսպէս կը խօսի. «Նրբոր Քրիստոս Երուսաղէմ քաղաքը իր քարոզութիւնները կ'ընէր, Աբգար՝ որն որ նոյն ատենները իր իշխանութիւնը կը վարէր եւ Եղեսացոց քաղքին թագաւորն էր, Քրիստոսի սքանչելիքները լսեց ու անոր նամակ մը խաւրեց: Քրիստոս Աբգարին իր ձեռքովը պատասխան գրեց, եւ միանգամայն իր սուրբ ու փառաւոր երեսացը պատկերը խաւրեց անոր: Ուստի մարդ խրկէ ատ առանց մարդկային ճարտարութեան նկարուած պատկերին ու տես ինչչափ անհամար բազմութիւն Արեւելքի աղգերէն հոն կը ժողովին ու երկրորդագութիւն կը մատուցանեն»<sup>1</sup>:

Գրիգորիոս Բ.ին աս խօսքերուն մէջ մինակ ատ կտորը սրբադրելու է որ Քրիստոս Տէրն մեր Աբգարին խաւրած նամակը չէ թէ ինք իր ձեռքը գրեց, հապա թովմաս առաքելալը գրած էր Քրիստոսի բերնէն, ինչ որ Տէրն մեր Աբգարին նամակին պատասխան ըլլալու համար իր աշկերտին ըսած ու ապսպրած էր, ինչպէս գեղեցիկ կը ծանուցանէ մեր Մովսէս Խորենացին՝ (Տես վերը Բ. Գլխին մէջ) Եղեսիա քաղքին դիւանին վաւերական յիշատակարաններէն քաղելով:

Սուրբ Գերմանոս, Աոստանդնուպոլսի Յունաց Պատրիարքը, հիմակու յիշուած Ղեւոնի Իսաւրացոյն պա-

<sup>1</sup> Գրիգորիոս Բ. Քաջանայապետին աս խօսքերը յառաջ կը բերեն Բարոնիոս՝ իր Եկեղեցական Տարեգրութեանցը մէջ, Հատ. Թ. յամին 726. ԳԼ. 30. — Յակոբ Գրեատերոս՝ Սրբոց պատկերաց վրայ շինած գրքին մէջ, ԳԼ. Ե. — ու Լ'Ապէ մատենագիրը՝ Ժողովոց պատմութեան մէջ, Հատ. Ը. էջ 651: Յիշած մատենագիրներէս առջի երկուքն իրենց գրուածքներուն խիստ շատ տեղերը Ս. Գաստառակին վրայ զոյց կ'ընեն: — Երեք տարի յառաջ հրատարակուած՝ աս գրքուկիս գերմաներէնին մէջ, ամէն բերած վկայութիւններնիս բուն մատենագիրներուն սեպհական լեզուաւը գրած էինք. բայց հայերէնիս մէջ նոյնն ընեն յաւելորդ ու դրեթէ անօգուտ սեպեցինք:

տասխան գրելով, սրբոց պատկերաց յարգութիւնը Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ խիստ հին բան ըլլալը երկայն ճաներով ցուցնելէն ու մէկիկ մէկիկ իրն առջեւը դնելէն ետքը, անոր՝ սրբոց պատկերաց յարգութեան դէմ հնարած ու պաշտպանած մոլորութիւնը յանդիմանելու եւ երեսը զարնելու համար նաեւ աս խօսքերս կ'աւելցնէ. «Որպէս զի խօսքովս շատ հեռու չերթամ, Քրիստոսի երկինք համբառնալէն ետքը ան կինը, որն որ տեռատեսութեան ախտէն հաշած ու մաշած ըլլալով, անկէ հրաշքով մը բժշկուած էր, անոր արձանը՝ իբրեւ թէ ընդունած շնորհքին ներկայացուցիչը՝ շինել տուաւ: Բայց ասկէ ալ յառաջ՝ նոյն ինքն Քրիստոս Տէրն մեր, բուն իսկ Հօր էական նկարագիրը, սուրբ Գաստառակին վրայ իր կերպարանքը տպաւորեց ու Եղեսիա քաղաքը Աբգար իշխանին խաւրեց որն որ զանիկա խնդրած էր»<sup>1</sup>:

Հովհաննէս Գամասկացին՝ որն որ նոյնպէս Աեւոն Խաւրացւոյն ժամանակակից ու սրբոց պատկերաց յարգութեանը սաստիկ պաշտպան էր, ուղղափառ հաւատոյ վրայ շարադրած գործքին չորրորդ գրքին տասնուվեցերորդ գլուխը այսպէս կը խօսի. «Նաեւ տեսակ մը պատմութիւն կը յիշուի, այսինքն թէ՛ Աբգար Եղեսացւոց թագաւորը պատկերհան մը խրկած է, որ Տեառն մերոյ պատկերը նկարէ: Բայց երբոր անոր երեսէն դուրս ցայտող շլացուցիչ շառաւիղներուն պատճառաւ պատկերհանին անկարելի եղաւ նէ անոր կերպարանքը նկարելը, կ'ըսուի որ Տէրն մեր ինքիրեն Գաստառակն իր սուրբ ու կենդանարար երեսին քսած ու իր պատկերը վրան տպաւորած ըլլայ, եւ նոյնը Աբգարին խրկեր է, որպէս զի ասով անոր բաղձանքը լեցուի»: Նոյն Ս. Աարդապետը պատկերաց վրայ գրած առջի ճառին մէջն ալ դարձեալ աս բանիս համար լուսաւոր վկայութիւն կու տայ, այսպէս ըսելով. «Առջի ժամանակներէն հետոյհետէ կարգաւ

<sup>1</sup> Փր. Կամբեփիս Հնախօս. Կաստանդ: — Միքայէլ Ալիքսան, Գ. 217: — Բարոնիոս Տարեգր., ամբ 716. ԳԼ. 2:



մինչուկ աս մեր օրերը հասած յայտնի աւանդութիւն մը  
կայ, որն որ կը զրուցէ թէ Աբգար Եղեւսիայ թագաւորը  
Քրիստոսէն գործուած սքանչելիքները լսելով՝ այնպիսի  
մէկ աստուածային սիրով բորբոքած ըլլայ, որ անոր  
պատգամաւորներ խաւրելով՝ աղաչեց թէ անձամբ իրեն  
գալու շնորհք ընէ. թագաւորը խրկած մարդիկներուն  
պատուէր ալ տուած էր որ եթէ աս աղաչանքը մտիկ  
չըլլուելու ըլլայ նէ, գոնէ անոր պատկերը նկարելով իրեն  
բերեն: Իսկ երբոր անիկա, որ ամէն բան գիտէ ու կըր-  
նայ, աս իմացաւ նէ, Գաստառակը ձեռքն առեր, անիկա  
երեսը քսեր եւ իր պատկերն անոր վրայ տպաւորեր է,  
որ Գաստառակը որ մինչուկ աս օրուան օրս կը պահուի: :  
Աս ըսելէն ետքը՝ պատմածին հաստատութեանը համար  
ետեւի խօսքերս ալ կ'աւելցընէ. «Իսկ թէ Առաքեալները  
խիստ շատ տեսակ տեղեկութիւններ զանց առած ըլլան  
մեզի աւանդելու, առանց աստուածաշնչին մէկ տեղը զա-  
նոնք նշանակելու, Հեթանոսաց Առաքեալը Պօղոս աս խօս-  
քերով մեզի կը ծանուցանէ. Այսուհետեւ, եղբարք,  
հաստատուն կացէք, պինդ պահեցէք ան աւանդութիւն-  
ները, զորոնք որ սորվեցաք մեզմէ թէ խօսքով ու թէ  
թղթերով (Բ. Թես. Բ. 14.): Իսկ Աորընթացիներուն  
այսպէս կը գրէ. Ար գովեմ զձեզ, սիրելիք, որ միշտ ա-  
մէն բանի մէջ զիս կը յիշէք, ու իմ ձեզի սորվեցուցած  
աւանդութիւններս կը պահէք ըստ ամենայնի, ինչպէս որ  
ես աւանդեցի (Ա. Կոր. ԺԱ. 2.):» :

Աւրիշ նամակ մ'ալ կայ, որուն համար կ'ըսեն թէ  
նոյն Սուրբ Հայրը Յունաց Թէոփիլոս կայսեր գրած ըլ-  
լայ, եւ որն որ Ամբեփիսին գործքերուն մէջ լատինե-  
րէն թարգմանութեամբ ալ կը գտնուի, այսպիսի վերնա-  
գրով. «Մեր Ս. Հօրը Յովհաննու Գամասկացւոյն՝ Թէո-  
փիլոս կայսեր՝ պատկերաց սուրբ ու յարգելի ըլլալուն  
վրայ գրած նամակը:» : Բայց որովհետեւ աս գրուածքս՝  
ոչ ժամանակին կողմանէ ու ոչ ալ ոճոյն կերպին նայե-  
լով՝ Յովհաննու Գամասկացւոյն գործն ըլլալու յարմա-

181

բուժիւն կամ պատշաճութիւն մը կը ցուցընէ, անոր  
 համար քննիչներուն կարծիքն ան է որ՝ աս գրուածքս  
 Պորփիւրոժենէն յիշուած (ինչպէս վարը պիտ'որ տես-  
 նենք) երեք արեւելեան Պատրիարքաց ժողովոյն ընծայե-  
 լու է: Ինչպէս որ կ'ուզեն, որ մատենագրին որ կարծեն՝  
 թող ըլլայ, միայն թէ նոյն գրուածքին մէջ Ս. Գաստա-  
 աակին վրայ խիստ լուսաւոր, հիմնական ու վաւերական  
 վկայութիւն մը կայ, աս խօսքերով. «Մանաւանդ որ նոյն  
 իսկ կենաց տուիչը Տէրն մեր երբոր ինք գեռ աշխարհ-  
 քիս մէջն էր, իր սուրբ կերպարանաց պատկերը Գաս-  
 տառակի մը վրայ տպաւորեց, ու Աբգար անունով մէկու  
 մը՝ Եղեսացւոց մեծ քաղքին իշխանին խաւրեց, նուիրա-  
 կան Թագէոս առաքելոյն ձեռքովը, որ Գաստառակով  
 որ իր աստուածային երեսաց քրտինքը սրբելով՝ ամե-  
 նաբարակ կազմուածն անգամ իրեն բովանդակ վայելչու-  
 թեամբը վրան գրոշմեց: Աս Գաստառակս, ինչպէս նաեւ  
 թագաւորական գաւազանն իր սեպհական իրաւունքովը՝  
 կը պահէ մինչուկ աս օրուան օրս նոյն ամենափառաւոր  
 ու մեծապայծառ Եղեսիա քաղաքը: Ասով կը ցնծայ ու կը  
 պարծի ամէն բանէ աւելի. ժողովրդոց հրաշքներու զար-  
 մանալի տեսարան մ'եղած է: Ահա այսպիսի անգին գանձ  
 շնորհեց անոր մեր ճշմարիտ Աստուածը Քրիստոս,»:

Ա վաւերականութեան զօրաւոր փաստ մ'ալ նիկիոյ  
 երկրորդ, այս ինքն՝ տիեզերական եօթներորդ ժողովը  
 կու տայ մեղի, որն որ 787ին գումարեցաւ: Երբոր աս ժո-  
 ղովքիս մէջ Հարք Եկեղեցւոյ սրբոց պատկերաց յարգու-  
 թիւնը նորոգել ուզեցին նէ, Եւագրիոս յոյն պատմա-  
 գրին՝ առանց մարդկային արհեստի շինուած ու Աբգարին  
 խրկուած Փրկչական պատկերին համար տուած կամ աւ-  
 անդած վկայութիւնը յառաջ բերին, եւ ժողովքին ա-  
 մէն Հարքը հինգերորդ նստին մէջ միաբան հաւանու-  
 թեամբ ընդունեցան<sup>1</sup>: Աեւոն՝ Աոստանդնուպոլսի Եկեղե-  
 ցւոյն անուանի Ընթերցողն ալ, 350 Եպիսկոպոսաց առ-

<sup>1</sup> Լապպէ, Հատ. Ը. էջ 1030:

ջին իր բերնովը իրին ճշմարտութիւնն այսպէս հաստա-  
տեց. «Աւելոն, կ'ըսէ Լապպէ եկեղեցական պատմիչը, Աոս-  
տանդնուպոլսի թագաւորակաց քաղքին մեծ եկեղեցւոյն  
մեծապատիւ ընթերցողը՝ այսպէս ըսաւ. Ես ձեր անար-  
ժան ծառան ալ, թագաւորական պաշտօնատէրներով  
Ասորիք ճամբորդութիւն ըրած ատենս՝ Եղեսիա գացի,  
սուրբ ու անձեռագործ պատկերը տեսայ, զորն որ հաւ-  
ատացեալք կը պատուէին ու երկրպագութիւն կ'ընէին»:

Ասեւ Թէոփանէս սուրբ մարդոյն խօսքերն ամենուն  
ծանօթ են, որն որ Պատկերամարտներուն մեծ թշնամի-  
ներէն մէկն էր, եւ ինքն ալ նոյն եօթներորդ տիեզերա-  
կան ժողովը ներկայ կը գտնուէր: Ասիկա զանազան փաս-  
տերու մէջ, որով սրբոց պատկերաց յարգութեանն ար-  
ժան ու իրաւացի ըլլալը կը ցուցնէր, Ս. Գաստառակին  
վրայ ալ խօսք բերելով՝ ըսաւ. «Նոյն ինքն Տէրն մեր  
պարզ կտաւի վրայ՝ առանց արհեստի իր կերպարանքը  
կամ պատկերը տպաւորեց ու Աբգար իշխանին խաւրեց:  
Աս բանս Քրիստոս բնաւ չէր ըներ, թէ որ սրբոց պատ-  
կերաց յարգութիւնն աղէկ բան չսեպէր»<sup>1</sup>:

Ադրիանոս Ա. Քահանայապետն ալ, որուն ատենը  
որ նոյն Նիկիական երկրորդ ժողովն եղաւ, առ մեծն Աարո-  
լոս գրած նամակին մէջ՝ Եղեսիա քաղքին սուրբ Գաստա-  
ռակին վրայ նոյն վկայութիւնը կու տայ, իւր նախորդը  
Ստեփան Գ.ը վկայ բերելով, որն որ արդէն Հռովմ  
քաղքին եպիսկոպոսներու ժողովի մը մէջ Եղեսիա պա-  
հաւած սուրբ Գաստառակին վրայ մեծաւ յարգութեամբ  
ճառ մը խօսելով անոր վաւերականութիւնը ցուցըցած էր:  
Յիշեալ նամակին խօսքերն ասոնք են. «Մեր սուրբ յի-  
շատակի արժանի նախորդը Ստեփանոս իւր ատենին Արը-  
բազան Քահանայապետը, վերոյիշեալ ժողովոյն մէջ գահ-  
երէց նստելով, զանազան խիստ արժանահաւատ վկայու-  
թիւններ յառաջ բերելէն ու հաստատելէն ետքը այսպէս  
ըսաւ. Բայց ան ալ ըլլութեամբ անցնելու բան չէ, զորն

<sup>1</sup> Ս. Թէոփ. Ճառ ի վերայ նորոգ. պատկերաց:



որ մենք Արեւելքի կողմերէն հոս եկող հաւատացեալներու բերնէն շատ անգամ լսելով տեղեկացած ենք (որուն վրայ թէպէտ Ս. Աւետարանը կը լռէ, սակայն ասոր համար իր բովանդակ արժանահաւատութիւնը չիկորսընցըներ, որովհետեւ նոյն իսկ Աւետարանիչը (Յովհաննէս) կը վկայէ որ Թէպէտ Յիսուս ուրիշ շատ հրաշքներ ալ գործեց, բայց ամէնքն ալ աս գրքիս մէջ գրուած չեն)։ եւ աս տեղեկութիւնս հիմամբ ալ կը հաստատեն, այսինքն թէ քրիստոս մարդկան ազգին Փրկիչը իր մահուանէն քիչ մը յառաջ Եդեսիա քաղքին թագաւորի մը, որն որ իր աչօքը զքրիստոս տեսնել կը բաղձար եւ զինքն Հրեաներուն հալածանքէն ազատելու համար իր քովը հրաւիրած էր, որպէս զի այդչափ հռչակուած հրաշքներուն ու բժշկութիւններուն ինքն ու իրեն ժողովուրդն ալ մասնակից ըլլան, այսպէս պատասխաններ է։ Արովհետեւ դուն իմ կերպարանքս մարմնաւոր աչօք տեսնել կ'ուզես, ահաւասիկ ես քեզի իմ երեսացս պատկերը Գաստառակի վրայ տպաւորուած կը խաւրեմ, որպէս զի ասով թէ քու բաղձանքդ լեցուի եւ թէ իմ վրաս լսածներդ չըլլայ որ անկարելի բաներ սեպես, եւ երբոր ես ան ամէն իմ վրաս գրուածներն ի գլուխ տանելու ըլլամ, քեզի իմ աշկերտներէս մէկը պիտ'որ խաւրեմ, որն որ քեզի ու քու ժողովրդեանդ բժշկութիւններ պարգեւէ ու զձեզ սուրբ հաւատոյ բարձունքն հանէ, եւայլն" 1 :

Նոյն գրուածքին մէջ կը վկայէ միանգամայն նոյն Ադրիանոս Քահանայապետը թէ ատ վերը յիշուած Ստեփանոս Քահանայապետին ատենն եղած Հռոմայ ժողովին մէջ, Երուսաղեմի Թէոդորոս պատրիարքին՝ իր եւ ուրիշ երկու պատրիարքներու անուամբ գրած Սիւնհոգոսական թուղթը կարդացուած է, զորն որ ան երեք պատրիարքները նոյն Ստեփանոսին նախորդին՝ Պօղոս Քահանայապետին ուղղած էին, եւ որուն մէջ ասոնք իրենց սրբոց պատկերաց յարգութեանը վրայ ունեցած ուղղա-

1 Բարոն . Տարեգր . Հատ . Թ . ամ 769 . ԳԼ . Թ :

փառական հաւատքը յայտնելէն ետքը, Աբգարին խաւ-  
րուած Գաստառակին դէպքերուն վրայ ալ, իբրեւ ամե-  
նուն ծանօթ բան մը՝ մասնաւոր յիշատակութիւն կ'ընէին  
աս խօսքերով. «Հիմակ ատենն է որ Եղեսիայի Աբգար  
իշխանին վրայ ալ խօսիմ եւ ալ ուրիշ նոյնպիսի բաներ  
Սրբոց Հարցմէ առած յիշեմ, զորոնք որ դուք ալ խիստ  
աղէկ գիտէք : . . . Արդ գիտցած ըլլաք, Սրբազան Տէր,  
որ ես ամենախոնարհ ծառայ Թէոդորոս Պատրիարք Երու-  
սաղեմի ու մէկաշնոնք ալ որ ինծի հետ են, այսինքն՝ Առ-  
միտաս Պատրիարք Աղէքսանդրիայ ու Թէոդորոս Պա-  
տրիարք Անտիոքայ, մի եւ նոյն կարծիքն ու մի եւ նոյն  
հաւատքն ունինք, ինչպէս որ ձեր Սրբութեանը յայտնի  
է»<sup>1</sup> :

Ասոնցմէ նուազ արժանահաւատ չեն Թէոդորոս Ստու-  
դիտայ խօսքերն ալ, որն որ Յունաց հայազգի Լեւոն  
կայսեր ուղղած ճառին մէջ Եղեսիայ Ս. Գաստառակին  
վրայ աս վկայութիւնս կու տայ. «Որպէս զի մեր հաւատ-  
քը Աստուծոյ վկայութեանը վրայ՝ եւեւօք հաստատուն  
ըլլայ, նոյն ինքն՝ որն որ աս վկայութեան Տէրն է, այս  
ինքն է՝ մեր Փրկիչը, իր երեսաց պատկերը մի միայն  
քսելով մը գաստառակի վրայ տպաւորեց ու դրոշմեց, եւ  
յետոյ խաւրեց Աբգարին՝ (հաւատարիմ ու Եղեսացւոց  
մէջ խիստ երեւելի մէկու մը) որ զանիկա խնդրած էր :  
Հաղիւ թէ ասիկա ան սուրբ պատկերը ձեռքն առած  
էր, մէկէն ի մէկ անոր անպատմելի զօրութիւնն զգաց ու  
ամենուն ալ ծանոյց, եւ իր երկայն ատենէ ի վեր ունե-  
ցած անբուժելի ախտէն բժշկուելով՝ չէ թէ միայն մար-  
մնով, հապա նաեւ հոգւով ալ զօրութիւն զգեցաւ»<sup>2</sup> :

Առութեամբ կ'անցնիմ նոյն Թէոդորոս Ստուդի-  
տայ՝ Լեւոն Գ. ու Յարութիւն Ա. Քահանայապետնե-  
րուն գրած նամակները. — Գէորգ Սիւնկեղոս մատենա-  
գիրը՝ իր ժամանակագրական պատմութեան մէջ. —

<sup>1</sup> Անդ. ԳԼ. Ժ.

<sup>2</sup> Անդ. ամ 814. ԳԼ. ԻԳ.

Ս. Նիկեփորոս Կոստանդնուպոլսի Պատրիարքը, պատկերամարտ Կայսեր Լեոնի Իսաւրացւոյն գրած պատասխանին մէջ, ինչպէս Սիմէոն Մագիստրոս կը պատմէ. — Մէկալ Նիկեփորոս Կալլիստոսը՝ իր եկեղեցական պատմութեան մէջ. Բ. Հատ. ԳԼ. Է. — Սիմէոն Մետափրաստէսը՝ Եղեսացի Սամոնաս ու Գուրիաս Սուրբերուն վկայաբանութեան մէջ. Նոյեմ. 15. — Գարեհ կոմսը՝ Ս. Օգոստինոսին գրած թղթին մէջ. — Հ. Կղաւղիոսը տի Ռոթա, Գոմինիկեան կարգէն, իրեն շինած Սրբոց վարքին մէջ, որուն անունն է՝ Ոսկեղէն գործ (opus aureum) Ս. Ալէքսիոսին վարքին մէջ, 17 Յուլիս. — Սուրիոս մատենագիրը՝ Սրբոց վարուց մէջ, 16 Օգոստոս. — Եւալ ուրիշ շատերը: Ասոնցմէ ոմանք Ժ. Գլխոյն մէջ դարձեալ պիտ'որ յիշեմ: Իսկ հոստեղս բերած վկայութիւններս հիմակու հիմայ բաւական սեպուին:

Ի այց եթէ որ դեռ մէկը գտնուելու ըլլայ, որն որ հին ատեններուն այսչափ բազմաթիւ ու եւելօք արժանահաւատ պատմագիրներուն տուած լուսաւոր վկայութիւններն արհամարհելու կամ թէ բաւական չսեպելու ըլլայ, այսպիսի մէկու մը համար աւասիկ քանի մը խօսք ալ կ'ուզեմ հոս աւելցրնել: — Աս ամէն երեւելի մատենագիրներուն տուած վկայութիւններն ալ մէկ դի ձգելով, կարելի բան է մի որ մեզի հերիք չսեպուի միայն մեր ազգային ու Ասիացւոց եւ Եւրոպացւոց առջին իբրեւ արժանահաւատ ծանուցուած պատմագրի մը, այսինքն՝ Մովսեսի Խորենացւոյ վկայութիւնը, թէ եւ ինքը մինակ աս բանս պատմելու ըլլար, որն որ իր ոսկեղէն պատմութեան մէջ աս Ս. Գաստառակը յիշատակելէն ետքը, այսպիսի ապացուցական յաւելուած մ'ալ կը դնէ. «Մինչուկ աս օրուան օրս Եղեսիա քաղաքը կը գտնուի», ըսելով <sup>1</sup>: Այսպիսի զօրաւոր վկայութեան մը վրայ կրնանք մի բնաւ տարակուսիլ: Եւ ի՞նչպէս: Կարելի

<sup>1</sup> Որ (փրկչական պատկերն) կայ յԵղեսացւոց քաղաքին մինչեւ ցայսօր ժամանակի: Խոր. Պատմ. Հայոց, Գիրք Բ. ԳԼ. ԼԲ:

բան է որ այնպիսի սրբակեաց, գիտնական ու սպիտակ  
 ալեօքն զարդարեալ (որովհետեւ խիստ ալեւորութեան  
 ատեն գրեց ինք աս պատմութիւնս) ծերունի մարդ մը  
 այսպիսի ծանր նիւթոյ մը մէջ ճշմարտութենէ դուրս կամ  
 շինծու բան մը խօսի կամ աւանդէ: Եթէ որ սուտ խօ-  
 սելու համարձակէր, իր ժամանակակիցներն անոր ըսածին  
 ստութիւնը շուտով մը չէին մի խայտառակեր, անոր  
 հարցընելով թէ Գոռն ո՞ր պարիւրը կ'ըսէս. ինչ երազ կը  
 տեսնէս Գոռն. որովհետեւ մենք մինչուհ հիմայ արանկ բան մը  
 լսած չենք: Կարելի էր որ Բագրատունեաց իշխանը, որուն  
 աղաչանքով որ Խորենացին ան պատմութիւնը գրեց,  
 անկէ մասնաւորաբար աս Գաստառակին վրայ տեղեկու-  
 թիւն չուզէր թէ Ար Գրածդ ինչ պարիւր է. արդեօք ար-  
 աճն բան արոյ՞՞թ այնպէս է, եւ ո՞ր է արդեօք, եւ այլն: Եւ  
 սակայն չէ թէ միայն Մովսեսին աս տուած պատմական  
 տեղեկութեանը վրայ բնաւ մարդ մը չտարակուսեցաւ,  
 հապա նաեւ անոր աս՝ Եղեսիա քաղքին դիւանէն հանե-  
 լով տուած տեղեկութիւնը՝ բովանդակ ամենուն ծանու-  
 ցուած ազգային աւանդութեան գլխովին համաձայն գտան  
 ու միաբան հաստատեցին: — Գուցէ մէկը այսպիսի առ-  
 արկութիւն մ'ալ ընէ. Աբգարին՝ Քրիստոսի Տեառն մե-  
 րոյ հետ ըրած թղթակցութեան առթին մէջ, Գաստառա-  
 կին վրայ տրուած ծանօթութիւնը կարելի է որ բուն  
 Մովսեսին բանը չըլլայ, հապա դրսանց մարդ մը վերջի ա-  
 տենները այնպիսի մէկ ստութիւն Խորենացւոյն պատմու-  
 թեանը մէջ յանդգնութեամբ խոթած ըլլայ: — Ասոր  
 կը պատասխանեմ թէ Խորենացին Գաստառակին դէպքն  
 իրեն ազգային պատմութենէն դուրս, երկու ուրիշ  
 գրուածոց մէջն ալ կը յիշատակէ: Մէյ մը՝ իր նամակ-  
 ներուն մէջ, կամ թէ ըսեմ՝ Հռիփսիմեանց ճանապար-  
 հորդութեանը վրայ Սահակ Արծրունեաց իշխանին նամակի  
 ձեւով գրած պատմական ճառին մէջ (տես գրքուկիս  
 Ը. գլխոյն երրորդ ծանօթութիւնը.) եւ երկրորդ՝ իրեն  
 Աշխարհագրութեանը մէջ, աս մի եւ նոյն խօսքերով.

“Միջագետք . . . ունի . . . շատ քաղաքներ ալ, որոնցմէ մէկն է Եդեսիա, ուր որ Փրկչին անձեռագործ պատկերը կը գտնուի <sup>1</sup>” :

Բայց գուցէ մէկը ուզենայ նոյն իսկ Քրիստոսի Տեառն մերոյ ու Աբգարին մէջ եղած թղթակցութիւնը սուտ հանել, որպէս զի ասով Ս. Գաստառակին դիպուածն ալ դիւրաւ կարենայ ժխտել կամ պարապի հանել: Այսպէս առարկեցին ատեն մը Նատաղիս Աղեքսանդր, Տիւբէն եւ ուրիշները: Բայց Գիյըմոն եւ ուրիշ գիտնական մարդիկ անոնց պատասխան տալով՝ իրենց անհակառակելի կարծած պատճառներն այնչափ տկարացուցին որ գրեթէ բոլորովին ցրեցին, եւ անկէ ետեւ մարդ մ'ալ չհամարձակեցաւ նոյն գիտնականներուն բերած հաստատուն պատճառներուն դէմ նոր տարակոյսներ կամ առարկութիւններ ընել: Մանաւանդ որ Գաստառակին կողմը բռնող հիմայ յիշուած մատենագիրները՝ աս հին պատմութեան վաւերականութիւնը պաշտպանած ատեննին՝ մեր հայազգի մատենագիրներնուս ընդարձակ ու հիմնական ծանօթութիւնները դեռ ըստ բաւականին չէին ճանչնար, որպէս զի նոյն աղբիւրներէն ալ տեղեկութիւններ ընդունէին: Ի վերայ այսր ամենայնի Նատաղիսեանց առարկութիւններն այնչափ ճշգրութեամբ կրցեր էին մերժել. իսկ հիմայ մեր ժամանակին խիստ շատ Եւրոպացի գիտնականներուն աս մեր ազգային պատմական աղբիւրները խել մը ատենէ ի վեր ծանուցուած ըլլալով, չէ թէ միայն աս նիւթիս վրայ գլխովին անոնցմէ տարբեր կարծիք ունին <sup>2</sup>, այլ նաեւ աս թղթակցութեան պատմութեանը վաւերական ըլլալուն վրայ այնչափ համոզուած են, որ ա-

<sup>1</sup> Միջագետք . . . ունի . . . եւ քաղաքս բազումս, յորոց մի է Ուռհա (Եդեսիա) ուր անձեռագործ պատկերն է Փրկչին: Խոր. Աշխարհագր:

<sup>2</sup> Տես՝ եթէ կ'ուզես նէ, նորերս Աէլք անունով գերմանացի Աստուածաբանին աս նիւթիս վրայ գրած ճառը կամ Զատապովութիւնը, որն որ թիւպինկէն քաղաքը ամէն երեք ամիս միանգամ ելլող աստուածաբանական ճառընարին մէջ (1842. էջ 335 — 365) կը գտնուի:

նոր հակառակողները՝ եկեղեցական պատմութեան մէջ գլխովին տգէտ ու տխմարի տեղ կը դնեն: Եւ այսպէս ընելնուն պատճառն ալ արդէն յայտնի է: Ինչու որ՝ եթէ մէկը աս նամակներուն վաւերականութիւնն ուրանալու ըլլայ, պէտք է որ Աբգարին ատենը Թագէոս առաքելոյն ձեռքովն եղած Հայաստանի առջի դարձին բովանդակ պատմութիւնը սուտ հանուի, վասն զի աս դէպքերն իրարու հետ խիստ մեծ կապակցութիւն ունին եւ իրարմէ երբեք չեն կրնար բաժնուիլ: Եւ թէ որ աս պատմութիւնս ալ ուրանալու ըլլանք՝ ան ատեն ո՛չ Եւսեբիոս, ո՛չ Ս. Եփրեմ եւ ո՛չ ալ Մովսէս Խորենացին, այդչափ ամէն ժամանակի գիտնականներէն յարգուած ու արժանահաւատ գտնուած մատենագիրները, որոնցմէ որ մենք Աբգարու դարձին վերաբերեալ պատմական տեղեկութիւններն ու յիշատակարաններն ունինք, ալ արժանահաւատութեան յարգ կամ պատմական հաւատք կրնան ունենալ: Ուստի աս ուրիշ բան ընել չէ, բայց եթէ խելքի մտքի ու Բանադատութեան հակառակ գործել, որն որ ճիշդ խօսքով տգիտութիւն կ'ըսուի, որով մարդս հին ժամանակներու ամենաստոյգ յիշատակարաններն առանց բաւական պատճառի տարակուսի տակ ձգելով՝ արհամարհելու եւ մերժելու կը յանդգնի, ու ամէն գիտուններէն պատմութեան համար սահմանուած Բանադատութեան կանոնները տակն ու վրայ կ'ընէ: Ըսի ~~առանց բաւական պատճառի~~, այսինքն է՝ առանց ցուցման. վասն զի ով որ աս նիւթիս դէմ խօսած կամ գրած է նէ, երբեք անհակառակելի փաստ կամ պատճառ կամ ցոյց մը չէ կրցած յառաջ բերել, բայց միայն անզօր ու խախուտ առարկութիւններ<sup>1</sup>: Ուստի ես ալ ասոնց ամենուն դէմ պատշաճ կը սեպեմ հոս,

<sup>1</sup> Գաստառակին պատմութեան կարգը շշիւթելու եւ պատմութեանս բուն նպատակէն դուրս չելլելու համար՝ աս նամակներուն վաւերականութեան վրայ հոստեղս հանաւոր խօսք չեմ ըներ, եւ աս համառօտիւ ըսածներս բաւական կը սեպեմ. թէպէտեւ յիշուած նամակներուն ստուգութիւնը պաշտպանելով՝ Գաստառակին դէմ եղած առարկութիւնները բովանդակ ցրուած կ'ըլլային: Բայց ասիկա ալ ուրիշ առթի թո՛ղ մնայ:

իբրեւ կնիք պրակիս, ան երեւելի օգոստինեան աստուածաբանին՝ Լաւրենտիոս Բերտոսի՝ իմաստուն խօսքերն իմ կարգացողներուս կրկնել. «Մնաց որ աս անհիմն կարծիքները բաւական չեն կրնար սեպուիլ ատ հին յիշատակարանները իբրեւ լոկ ստաբանութիւն արհամարհելու կամ մերժելու. աս ընելու համար պէտք է որ նախնեաց վաւերական վկայութիւններ ու հաստատուն ապացոյցներ ունեցուին. Եւ սակայն այսպէս չեն երեւնար ատ՝ Տիւբենէն, Նատաղիս Աղէքսանդրէն, Բասնագիոսէն եւ ուրիշ քիչ մը յառաջ յիշուած պատմագիրներէն (որոնց առարկութիւններն որ ինք վերը ցրած էր) յառաջ բերուածները, որոնց հաստատութիւնը միայն ժխտական ցուցումներու, ոմանց լռելուն ու անզօր պատճառներու վրայ յեցած է»<sup>1</sup>:

<sup>1</sup> Լաւրենտ. Բերտ. վասն աստուածաբանական հրահանգաց, Գիւրք 1թ. ԳԼ. 2:

Թէ ինչ բանի համար Եւսեբիոս թէ պատմագիրը՝ առ հաշակա-  
 -որ ու ընդհանուր ասեանան ծանոցութիւն իրիչական պատկերին  
 վրայ իր Եկեղեցական պատմութեանը մէջ ասեանին յիշատակու-  
 թիւն յը չէ ըրած :

ՈՒՄԱՆՔ կարծեցին թէ Քրիստոսի Տեառն մերոյ Աբ-  
 գար թագաւորին խրկած պատկերին պատմութիւնը  
 գլխաւորաբար անոր համար շինծու բան սեպելու է, վասն  
 զի հին պատմագիրը Եւսեբիոս Պամփիւղոս՝ Աեսարիայ  
 Պաղեստինացւոց եպիսկոպոսը՝ իր Եկեղեցական պատմու-  
 թեան մէջ Ս. Գաստառակին վրայ յիշատակութիւն մը  
 չէ ըրած : Ուստի հարկ է մեզի որ հոս տեղս յայտնենք  
 թէ նոյն պատմագիրը Ս. Գաստառակին դէպքերն ինչ  
 պատճառի համար լռութեամբ անցած է : Եւսեբիոսին  
 լռելուն կամ թէ ըսեմ՝ Ս. Գաստառակին դէպքերը  
 չպատմելուն պատճառն երկու տեսակ կրնայ ըլլալ : Ամս  
 չէր գիտեր, եւ անոր համար ալ չպատմեց. կամ թէ լռ-  
 պատմել, թէպէտ եւ գիտէր : Առջինը՝ այսինքն թէ չէր  
 գիտեր, չենք կրնար ըսել, որովհետեւ մեզի ստուգիւ  
 յայտնի է որ անիկա՝ Աբգարին վրայ գրած պատմու-  
 թիւնը Եդեսիա քաղքին դիւանէն քաղած առած էր,  
 որուն որ ինքն ալ իր Եկեղեցական պատմութեան առջի  
 գրքին երրորդ գլխին մէջ կը վկայէ : Աս ըստ բաւականի  
 յայտնի կ'ըլլայ նաեւ իր պատմութեան մէջ յառաջ բե-  
 րած երկու նամակներէն, Աբգարին առ Քրիստոս ու  
 Քրիստոսին առ Աբգար : Գարձեալ կը յայտնուի ասիկա՝  
 իրեն պատմածները Խորենացւոյն պատմածներուն հետ  
 համեմատելով, որն որ ինչպէս արդէն յայտնի է՝ մի եւ  
 նոյն Եդեսիա քաղքին դիւանին յիշատակարաններէն իր  
 պատմութիւնը քաղեց առաւ : Աս ապացոյցներէն զատ՝  
 նիկեփորոս Աալիստոս յոյն պատմիչը (որն որ նմանապէս  
 Քրիստոսի Տեառն մերոյ ու Աբգարին մէջ եղած թղթա-  
 կցութիւնն ու մասնաւորաբար Ս. Գաստառակին պատմու-



Թիւնը ամբողջապէս ու ընդարձակ տեղեկութեամբ իրեն  
 Եկեղեցական պատմութեանը մէջ կը յիշատակէ) յայտնի  
 բառերով կը վկայէ թէ աս ամէն պատմական ծանօթու-  
 թիւններուն աղբիւրը՝ Եդեսիա քաղքին դիւանին յիշա-  
 տակարաններն են, այսպէս ըսելով. «Եւ նոյն իսկ աս բա-  
 ներս Եդեսիա քաղքին դիւանին յիշատակարաններէն  
 առնուած են, որն որ նոյն ատենը թագաւորական իշխա-  
 նութեամբ կը պայծառանար: Ասն զի աս ամէն բան  
 հրապարակական տարեգրութեանց մատեաններուն մէջ  
 անցած էր: Եւ Աբգարու վրայ ճառող գրքերը զասոնք  
 ալ կը պարունակէին<sup>1</sup>»:

Վամակներուն պատմութեան հետ մէկտեղ կից  
 էր նաեւ Ս. Գաստառակին բանը, եւ անկէ բաժնուիլն  
 անկարելի էր, ինչպէս Խորենացին ու Նիկեփորոս աս-  
 երկու բանս իրարմէ չբաժնելով պատմեցին: Ապա ուրեմն  
 Եւսեբիոսին ալ աս բանս ի հարկէ անծանօթ եղած պիտի  
 չըլլայ. եւ թէ որ այսչափ ծանօթ ըլլալով չպատմեց նէ,  
 ըսել է որ Ս. Գաստառակին բանը խիստ լաւ գիտէր,  
 բայց անսիոյթ եղաւ պատմելու, կամ թէ ըսեմ՝ մասնաւոր  
 լռեց ու չուզեց պատմել:

Տեսնենք հիմայ թէ այսպէս մասնաւոր լռելուն ու  
 պատմել չուզելուն պատճառն ինչ բան եղեր է: Ամենուն  
 ծանօթ բան է որ Եւսեբիոս սրբոց պատկերաց յար-  
 գութիւնը չէր ախորժեր, մանաւանդ զՔրիստոս Տէրն մեր  
 ներկայացընող պատկերները մեծ ատելութեամբ կը խոտէր  
 կը մերժէր, չէր ուզեր որ յարգութիւն ընդունին, որով-  
 հետեւ ինք աս ծուռ կարծեաց մէջ էր թէ Քրիստոս  
 իբրեւ մարդ՝ իր մարդկութենէն արդէն ելած ու յաս-  
 տուածութիւն անդր փոփոխած ըլլայ, ուստի եւ ասոր  
 համար իրեն պատկերը զգալի, այսինքն է՝ աչքի տակ իյ-  
 նող մարդկային ձեւով նկարելը կամ ներկայացընելը ան-  
 կարելի է, կ'ըսէր: Իր աս հերետիկոսական կարծիքը հա-  
 մարձակեցաւ սա ինքն Եւսեբիոս մինչուկ մեծին Աոստան-

1 Բ. Գերբ ԳԼ. է:

գիանոսի քրոջը, Լիկիանոսին կնկան Աոստանդիային ալ նամակով մը յայտնի հաղորդելու, զորն որ գրեց՝ ինչպէս Բարոնիոս<sup>1</sup> կը պատմէ՝ աս հետեւեալ առթովս:

Աս մեծ իշխանուհին անգամ մը՝ Նիկոմիդիա գտնուած ատենը՝ սրտին մէջ յանկարծ բաղձանք մը զգաց Քրիստոսի Տեառն մերոյ մարդկային ազգի Փրկչին՝ բուն պատկերը տեսնելու, զորն որ ինքն իբրեւ ճշմարիտ Աստուած կը պաշտէր: Աս իրեն փափաքին հասնելու համար՝ աս Պաղեստինու Աեսարիա քաղքին Եպիսկոպոսը՝ Եւսեբիոս Պամփիւղեանին թուղթ մը գրեց, որպէս զի անիկա՝ որովհետեւ Քրիստոս Տէրն մեր նոյն կողմերն աշխարհք եկած ու հոն իր կեանքն անցուցած էր, անոր բուն հարազատ պատկերը տեղաց մը ձեռք ձգէ ու իրեն խաւրէ, վասն զի ինքն Եւսեբիոս իր Եկեղեցական պատմութեան մէջ կը վկայէր թէ այսպիսի զանազան թէ Քրիստոսի եւ թէ Պետրոսու Պօղոս առաքեալներուն ըստ ամենայնի նմանագոյն ու պէսպէս երանգներով քաշուած պատկերները տեսած ըլլայ<sup>2</sup>: Իսկ Եւսեբիոս՝ որ չէ թէ միայն սաստիկ Արիոսեան էր, ինչպէս քիչ մը ետքը պիտ'որ ցուցնենք, հապա նաեւ Աստուածաչարչար<sup>3</sup> ըսուած հերետիկոսներուն կողմը կը բռնէր, նոյն Աոստանդիա իշխանուհւոյն աս պատասխանս գրեց: «Որովհետեւ դուն ինձի կը գրես թէ ես քեզի Քրիստոսի պատկերը խաւրեմ, ես ալ կ'ուզեմ քեզմէ հասկընալ թէ Քրիստոսի ո՞ր պատկերը կ'իմանաս, արդեօք ատ ճշմարիտ ու անփոփոխելի պատկերը, որն որ իր բնութեան բուն էական նկարագիրն է, չէ նէ մէկալ պատկերը, զորն որ ինք մեզի համար վրան առաւ, այսինքն՝ ծառայական կերպարանքը, զորն որ ինք մեր փրկութեան համար զգեցաւ: Բայց աղէկ գիտեմ որ քու միտքդ անոր բուն աստուածային կերպարանքն ուզել չէ,

1 Ամ 324:

2 Եւսեբ. Եկեղ. պատմ. Գիրք Ը. ԳԼ. 18:

3 Աստուածաչարչար կ'ըսուէին ան հերետիկոսները, որոնք կը պնդէին թէ Քրիստոս Տէրն մեր իր աստուածային բնութեամբը չարչարուած ըլլայ:

որովհետեւ հրամանքդ արդէն իրմէ (Քրիստոսէ) իսկ սոր-  
ված ես թէ «Չչայր ոչ ոք կը ճանչնայ, բայց միայն Որ-  
դին, եւ այսպէս ալ զՈրդին ոչ ոք ըստ բաւականի կը  
ճանչնայ, եթէ ոչ Հայր՝ որն որ զԱնիկա ծնաւ»,<sup>1</sup>։ Ուրիշ  
քանի մը ասոր նման խօսքերէն ետքը՝ այսպէս կը շարու-  
նակէ. «Ապա ուրեմն հրամանքդ ծառայական ու մարմնա-  
տեսիլ կերպարանքը կը խնդրես, զորն որ անիկա մեզի  
համար առաւ. բայց ասոր վրայ ալ մենք այնպէս գիտենք  
որ ասիկա իր աստուածութեան հետ միացաւ ու մահ-  
կանացուն՝ կեանքէն ընկղմեցաւ»,։ Եւ յետոյ դարձեալ  
իր խօսքն այսպէս յառաջ կը տանի. «Արդ ո՞վ կրնայ  
այնպիսի փառաց ու մեծվայելչութեան՝ աչուրները շա-  
ցընելու չափ պայծառ ու փայլուն ճառագայթները, տկար  
ու մեռած գոյներով, եւ իրեն բուն փառաւորութիւնը  
չցուցընող նկարչութեան արհեստիւ մարմնոյ աչքի տակ  
ձգելով ներկայացընել։ Որովհետեւ ատեն մը (Թաբոր)  
լերան վրայ եւ ոչ նոյն իսկ բարձրագոյն պատուոյ հաս-  
նող աշակերտները կրցան անոր երեսը նայիլ, հապա  
երեսնուն վրայ գետինն ինկան ու խոստովանեցան թէ Ան  
տեսիլն իրենց զօրութենէն վեր եղած է<sup>2</sup>։ Ուստի թէ որ  
ան ատեն իր մարմնաւոր կերպարանքը՝ իրեն մէջ բնակող  
աստուածութեան փառքէն հովանաւորուելով՝ ան աստի-  
ճանի լուսաւորութեամբ այլակերպեալ երեւցաւ նէ, ինչ  
կրնանք մենք հիմայ անոր վրայ մտածել՝ երբոր անիկա  
զմահկանացուն մերկանալով, զերկրաւորը մէկ դի ձգելով,  
ու ծառայական կերպարանքին տեսիլը Տեառն ու Աս-  
տուծոյ փառաց հետ միաւորելով՝ գլխովին իսկ փոխուե-  
ցաւ։ Այսինքն է՝ իր մահուան վրայ ըրած յաղթութենէն  
ետքը, իր արքայութիւնը մտնելէն, թագաւորական աթո-  
ռը ելլելէն ու Հօրը աջ կողմը նստելէն ետքը, իրեն Հօրը  
անձառելի ծոցը հանգիստ ընելու համար, որ հանգստին  
համար որ իրեն վեր ելլելուն ատեն՝ որպէս զի նոյնը

1 Մատթ. ԺԱ. 28:

2 Անդ. ԺԷ. 6:

միւսանգամ ժառանգէ՝ երկնային զօրութիւնները զինքն  
օրհնեցին ըսելով. «Համբարձէք, իշխանք, զդրունս ձեր ի  
վեր, համբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ թա-  
գաւոր փառաց (Սղ. ԻԳ. 7.)»<sup>1</sup>:

Աւսերբիոսի նամակին աս կտորները՝ երկրորդ նի-  
կիական Սուրբ ժողովքին վեցերորդ նստին մէջ՝ Նէոկե-  
սարիայ Գրիգորիոս եպիսկոպոսէն՝ որն որ սրբոց պատ-  
կերաց յարգութիւնը կը մերժէր՝ պանծանօք յառաջ  
բերուեցան. բայց բոլոր ժողովքին Հարցմէ՝ արդար ցաս-  
մամբ նոյն խօսքերը մերժուեցան ու ցրեցան, որովհետեւ  
աս անոնց կարծիքն է՝ որոնք որ իրենց թանձր մոլորու-  
թեամբը կ'ենթադրեն կամ կը պնդեն թէ Յիսուս Քրիս-  
տոս Տէրն մեր իր փրկութենաբեր մարդեղութեան ա-  
տեն մարդկային հոգի չառաւ, հապա իր աստուածային  
անձը հոգւոյն տեղը բռնեց. որմէ ըստ ինքեան կը հետեւի  
թէ աստուածութիւնը չարչարանքի տակ ինկած կամ  
չարչարուած ըլլայ, որն որ մեծ հայհոյութիւն է. եւ այս-  
պէս կարծողները՝ ինչպէս վերը ըսինք, Աստուածաչար-  
չար հերետիկոսներ անուանեցան: Արդ որոնք որ այսպիսի  
հերետիկոսական կարծիքներ ունին նէ՝ սրբոց պատկերաց  
յարգութեան դէմ կը կռուին, ինչպէս ամպարիշտ Սեւե-  
րոսը, Պետրոս Անափեցին, Փիլոքսենոս Հերապոլսեցին ու  
անոնց չար ընկերներն ըրին: Ասանկ մէկն էր Եւսերբիոս  
ալ, ինչպէս իր նամակներուն շատ տեղերէն եւ ուրիշ  
գրուածքներէն յայտնի կը տեսնուի, մանաւանդ վերը  
յառաջ բերուած Աոստանդիա դշխոյին գրած թղթին  
մէջ, ուր կը հասկըցընէ անոր թէ Քրիստոսի պատկերը  
քովը ունենալ կամ պահել չիկրնար, որովհետեւ անոր  
մարդկութիւնը, կ'ըսէ, աստուածութեան բնութեանը  
փոխուած է:

Աս մոլորութենէն զատ՝ կ'ուզենք հոս ցուցընել  
միանգամայն թէ Եւսերբիոս Արիոսեան հերետիկոսու-  
թեան կողմնակից էր, ինչպէս Ս. Հերոնիմոս՝ Պոմմաքիո-

<sup>1</sup> Ասպպէ, Եկեղ. պատմ. Հատ. Ը. էջ 1146:

սին ու Ռվկիանոսին գրած թղթին մէջ՝ աս բանիս յայտ-  
նի կը վկայէ աս խօսքերով. «Պորփիրին դէմ խիստ  
զօրաւոր ճառեր գրեց Ապողինար, շատ գեղեցիկ եկե-  
ղեցական պատմութիւն շարադրեց Եւսեբիոս: Սակայն  
անոնցմէ մէկը Քրիստոսի տնօրէնութիւնը կիսկտուր  
ըրաւ. իսկ մէկայլը Արիոսեան ամպարշտութեան յայտնի  
պաշտպանող էր,<sup>1</sup>: Նոյնպէս Նատաղիս Աղէքսանդրն  
ալ մասնաւոր ճառի մը մէջ<sup>2</sup> նոյն Եւսեբիոսին շատ  
գրուածներէն ու շատ մատենագիրներու վկայութիւն-  
ներէն կը ցուցնէ թէ անիկա խստապարանոց Արիոսեան  
մըն էր: Այսպիսի ըլլալուն համար ալ իրեն մոլորական  
վարդապետութիւնը Երկրորդ Նիկիական Ս. Ժողովքին  
հինգերորդ ու վեցերորդ նիստերուն մէջ դատապար-  
տուեցաւ: Ուստի այսպէս՝ կրնանք ամենայն իրաւամբք ու  
ապահովապէս հետեւցընել ու վճիռ տալ թէ Եւսեբիոս  
Քրիստոսի Փրկչին՝ իր պատկերներուն միջոցովը յարգու-  
թիւն ընդունելուն վրայ տհաճելով, մասնաւոր խորհրդով  
ու դիտմամբ նամակներուն բանը պատմեց ու Ս. Գաստա-  
ռակին պատմութիւնը դիտմամբ զանց արար, լռութեամբ  
անցաւ, թէպէտ ասոր յիշատակն ալ նոյն Եղեւսիա քաղ-  
քին դիւանին մէջ կը պահուէր: Ուրեմն իրեն կամքն  
ու դիտումն աս էր որ Ս. Գաստառակին, այսպիսի ան-  
գին ու սրբազան գանձի մը ծանօթութիւնը՝ կամաց կա-  
մաց բոլորովին մոռցուի ու մէջ տեղէն վերնայ: Թէ որ  
Եւսեբիոս ապահովաբար յոյս մը կարենար ունենալ թէ  
Ս. Գաստառակին վաւերականութեան հաստատուն պատ-  
ճառները հաստատական ցուցմունքներով յաջողութեամբ  
մը կրնայ սուտ հանել, անտարակոյս աս բանս ընելու  
ձեռք զարկած կ'ըլլար, եւ այսպէս նոյն Ս. Գաստառակին  
վայելուչ ու պարտք եղած պատիւն ու յարգութիւնը՝  
կռապաշտական բանի մը պէս կ'անարգէր ու կը մերժէր,  
ինչպէս աս բանս ըրաւ Պանէաղէս քաղաքը գտնուող

1 Ս. Հերոն Թուղթ 65:

2 Հատ. Գ. Ճառ. ԺԸ. յաղ. հաւատ. Եւսեբ. Աեսարաց:

Փրկչին հռչակաւոր մէկ արձանին նկատմամբ : Հոն (իր Եկեղեցական պատմութեան մէջ <sup>1</sup>) զրուցելէն ետքը թէ ինչպէս Աւետարանագրին <sup>2</sup> պատմած տեւատես կինը քրիստոսէն ընդունած սքանչելի բժշկութեան շնորհքին երախտագիտութեան ու յիշատակի համար՝ իրեն տան դրան առջին գեղեցիկ արձան մը կանգնել տուած էր, որն որ զքրիստոս կը ներկայացընէր, զոր արձանը որ նոյն ինքն Եւսեբիոս ալ տեսած էր, պատմութիւնն աս խօսքերով կը լմընցընէ. «Բայց աս զարմանալու բան մը չէ, որ հեթանոսները՝ որոնք որ մեր Փրկչէն բարերարութիւններ տեսած էին, այսպէս բան մ'ըրած ըլլան. որովհետեւ Պետրոս ու Պօղոս Առաքեալներուն ալ ինչպէս նաեւ նոյն իսկ քրիստոսի նկարուած պատկերները մինչուկ մեր օրերը տախտակներու վրայ պահուած տեսած ենք : Ասան զի ատ առջի դարերու մարդիկը սորված էին ան ամէն մարդիկներուն, որոնցմէ առթի մը մէջ բարիք մը գտած էին, հետեւեալն սովորեալ մը առանց զանազանութեան փրկիչներու (ազատարարներու) պէս այսպիսի պատիւներ ընծայել» : Տես որ Եկեղեցւոյն «-ըք յարգեալն-ն ըսածն ու գովելով հրամայածը՝ Եւսեբիոս արհամարհելով ու վար զարնելով հեթանոսական սովորութիւն կը կոչէ :

Ահա Ս. Գաստառակին նկատմամբ ալ այսպէս ըսած պիտ'որ ըլլար : Իսկ չըսելուն ու ետ կենալուն պատճառն ան եղած է որ դէմ դնելու եւ բացայայտ կռուելու համար զօրաւոր ու համոզողական ցուցմունքներ չունէր ձեռքը. ուստի իրեն անբաւականութիւնը միայն արդելք եղաւ Ս. Գաստառակին յայտնի դէմ գրելուն : Ինչու որ՝ վերը յիշուած Եղեսացի Ս. Սամոնաս ու Գուրիաս մարտիրոսներուն վկայաբանութիւններն արդէն քրիստոսի 306 տարիէն ի վեր բոլոր նոյն քաղքին ու շրջակայ տեղերու բնակչաց ձեռքը կը գտնուէին, որոնց մէջը Ս.

1 Գիւրք Ը. ԳԼ. 18 :  
 2 Մատթ. Թ. 20 :

Գաստառակին վրայ յիշատակութիւն կար, եւ ամենէն ալ նոյն գրուածքներն իբրեւ վաւերական ճանչցուած էին: Արդ աս այսպէս ըլլալով՝ լռութեամբ անցնելը միակ միջոց սեպեց:

Մեր ընթերցողներուն մտքէն ամէն տեսակ կասկածը մէկ գի առնելու եւ զիրենք կատարելապէս համոզելու համար թէ Եւսեբիոս Պամփիլղացիին այսպիսի դիպուածներուն մէջ լռութիւնը՝ չէ թէ միայն իր զանց առած կամ թէ լռութեամբ անցած, եւ ուրիշներուն ընդարձակ ու տեղն ի տեղը յառաջ բերած պատմական կտորներուն արժանահաւատութիւնը չհնուազցըներ, այլ մանաւանդ ուրիշ կողմանէ այդպէս երեւելի մատենագրին յարգը կ'իջեցնէ ու զինքը կասկածելի կ'ընէ, պատշաճ կը սեպեմ հոստեղս Ֆլէօրի գաղղիացի մեծ մատենագրին աս նիւթիս վրայ մեր նպատակին խիստ յարմար ըրած դատաստանը յառաջ բերել: Աս խելացի պատմագիրը՝ Եւսեբիոսին իր Եկեղեցական պատմութեան մէջ Արիօսեան հերետիկոսութեան դիպուածներն՝ իրեն ան մոլորութեան կողմնակից ու բարեկամ, մանաւանդ թէ եւ պաշտպան ըլլալուն համար՝ լռութեամբ անցնելուն վրայ խօսելով, այսպէս կը զրուցէ. «Բայց թէպէտ մէկը Եւսեբեայ Արսարացւոյ վարդապետութիւնը մոլորութենէ ազատ է ըսելու կը համարձակի ալ նէ, անոր գէթ գրաւորական վարմունքը ջատագովելը խիստ դժուարին բան է . . . : Անիկա իր Եկեղեցական պատմութեան մէջ այսպիսի երեւելի խնդրոյ մը վրայ եւ ոչ բառ մը կը գրէ: Բայց մէկը չըսէ որ Անիկա իր պատմութիւնը աս խնդիրս չբուսած արդէն աւարտած լմրնցուցած էր: Ինչու որ եւ ոչ ալ Մեծին Աոստանդիանոսի վարքին մէջ (զորն որ յետոյ գրեց) աս նիւթիս վրայ աւելի յայտնութեամբ խօսած է. գոհ կ'ըլլայ միայն ընդհանրապէս ըսելով թէ Եկեղեցւոյ մէջ եւ մասնաւորապէս Աղեքսանդրիայ եկեղեցւոյն մէջ՝ երկպառակութիւն մը կար, առանց անոր պատճառն ու ինչ ըլլալը ծանու-

ցանելու : Ուստի մէկը անոր գրելու եղանակին նայելով՝ այնպէս կրնար կարծել թէ Նիկիական ժողովքին մէջ բնաւ ուրիշ երեւելի խնդրոյ մը վրայ խօսք եղած չէ, բայց եթէ զատկական տօնին կարգադրութեան վրայ միայն : Եւ երբոր Կոստանդիանոսէն հրատարակուած օրէնքները յառաջ կը բերէ, չիբերեր ան կտորը՝ որով որ Արիոսին գրուածքները կրակը նետուելու դատապարտուեցան : Գարձեալ հօն, ուր որ Տիւրոսի ժողովոյն վրայ տեղեկութիւն կու տայ, Ս. Աթանասին դատին վրայ ամենեւին բան մը չիզրուցեր, որուն համար որ գլխաւորաբար ատ ժողովք գումարուած էր : Այսպիսի մասնաւոր դիտմամբ եղած լուծիւն մը՝ հնոց մէջ Եւսեբիոս արիօսեան մոլորութիւն ունէր ըսողներուն խօսքին աւելի հաստատութիւն կու տայ, քան թէ անոնց ըսածին, որոնք զանիկա նոյն մոլորութենէ ազատ կացուցանելու ջատագովութիւններ գրած են 1,, : Ասկէ զատ՝ ուրիշ նոյնպիսի ծանր մատենագրի մը, այս ինքն՝ Օրսի Կարդինալին նոյն Եւսեբիոսին գրուածոց վրայ ըրած դատաստանն ալ կ'ուզենք հոստեղս աւելցնել, որովհետեւ լուծանելու խնդիրնիս ծանր ըլլալով՝ շատ մը ծանր մատենագիրներու դատաստանին կը կարօտինք :

Աս երեւելի ու գիտնական ծիրանեկիրս ալ նոյնպէս Եւսեբիոսին ուրիշ ասոր նման երեւելի խնդրոյ մը մէջ ըրած լուծիւնը խիստ ու անաչառ քննութեան դատաստանին տակ ձգեց : Ասիկա իր Եկեղեցական պատմութեան մէջ խօսելէն ետքը թէ ինչպէս Գիօնեսիոս Աղեքսանդրիայ Եպիսկոպոսը՝ թէ իր անձին ջատագովութեանը համար եւ թէ Սաբելին հերետիկոսութիւնը ցրելու համար չորս գիրք գրեց, որոնց մէջը որ երեք աստուածային անձանց բնութեան միութիւնն աւելի պայծառագոյն ցուցուց, քան թէ ատ քիչ մը յառաջ Հռոմ գրած թղթին մէջ, (որուն համար որ զինքը Սրբազան Քահանայապետին առջին ամբաստանած էին թէ Գիօնեսիոս Սա-

1 Քլէօ. Եկեղ. պատմ. Գիրք ժԲ. ԳԼ. 6 :



բելին մոլորական վարդապետութեան դէմ խիստ տա-  
 քութեամբ վիճած ու զանիկա մերժած ատեն՝ մէկալ  
 դիաց ինքն ալ մոլորելով աստուածային անձանց մէջ  
 բնութեան տարբերութիւն սորվեցուցած ըլլայ, ) այս-  
 պիսի ծանր ու երեւելի վիճաբանական խնդիր մը Եւսե-  
 բիոսին լռութեամբ անցնելուն վրայ խօսքը դարձրնելով՝  
 այսպէս կը զրուցէ . «Արիօսեաններէն շատ աւելի խոհե-  
 մութեամբ վարուեցաւ աս բանիս մէջ Եւսեբիոս, որն  
 որ յայտնի տեսնելով որ այսպիսի մանրամասն տեղեկու-  
 թիւններ տալով՝ Արիօսեան հերետիկոսութիւնը ստուգիւ-  
 կը դատապարտուէր եւ ուղղափառ հաւատքը կը յաղ-  
 թանակէր, սոյնպիսի ծանօթութիւններն իր պատմու-  
 թեան մէջ բոլորովին լռութեամբ անցաւ : Մինակ՝ Սա-  
 բելին մոլորութիւնը մերժելու համար շինուած չորս գիր-  
 քերը յիշատակելը բաւական սեպելով չուզեց ամենեւին  
 եւ ոչ բառով մը նշանակել թէ նոյն գրքերն իրենց  
 հեղինակը ինչ պատճառաւ ու ինչ առթիւ գրեց . եւ այս-  
 պիսի հռչակաւոր խնդիր մը բովանդակ խորին լռութեան  
 տակ ծածկեց . . . : Այսպիսի բաներու պատմութիւնը ստու-  
 գիւ՝ նոյն սուրբ Գիօնեսիոսին Հազարամեանց մոլորու-  
 թիւնը պաշտպանողներէն մէկ քանիին հետ Արսինոյիկեան  
 ոստիկանութեան ատեանն ըրած վիճաբանական խօսա-  
 կցութիւններէն քիչ արժանաւոր չէին եկեղեցական պատ-  
 մութեան մէջ տեղի ունենալու : Աւստի աս ինչ ըսել է  
 որ Եւսեբիոս նոյն սուրբ Եպիսկոպոսին (Գիօնեսիոսի)  
 վերը յիշուած մոլորութեան դէմ այսպիսի վերնագրով՝  
 Խոստմանց վրայ շարադրած երկու գրքերը կը յիշատակէ,  
 անոնց ինչ պատճառաւ ու ինչ առթիւ շինուած ըլլալն  
 այնչափ հաւատարմութեամբ կը ծանուցանէ, եւ անոնց  
 վրայ կու տայ ամէն կարելի տեղեկութիւնները՝ որոնք  
 իր պատմութիւնը կրնային ձոխացընել ու զարդարել,  
 իսկ հոս՝ ուր որ չորս գրքերու վրայ յիշատակութիւն  
 պիտ'որ ընէր, զորոնք նոյն Ս. Եպիսկոպոսն իր ջատա-  
 գովութեան համար հռոմ խաւրած էր, ըստ ամենայնի

ներհակն ըրաւ : Աս բանիս ամենեւին ուրիշ պատճառ մը չենք կրնար գտնել, բայց եթէ իրեն՝ Արիստեաններուն ունեցած կողմնակցութիւնը, որոնք՝ եթէ նոյն բաները հաւատարմութեամբ մի ըստ միով պատմուած ըլլային՝ իրենց դատապարտութիւնն աչքերնուն առջին պիտ'որ տեսնէին, ինչպէս որ գիտենք թէ եղաւ Կոստմանց վրայ շարագրուած գրքերուն տեղն ի տեղը պատմութեամբը, որոնց մէջ որ՝ Հազարամեանց մոլորութիւնը պաշտպանողներուն հրէական կարծիքը Ս. Գիօնեսիոսէն խայտառակուելով մերժուեցաւ <sup>1</sup> :

Այսպէս կողմնասիրութիւն ցուցուց Եւսեբիոս ան երկու նամակներու նկատմամբ ալ, զորոնք Մեծն Կոստանդիանոս Նիկիական ժողովքին լմրննալէն ետքը գրեց : Ասոնց առաջինը, զորն որ կայսրը Արիստեաններուն ջնջուելուն եւ ուղղափառ վարդապետութեան պայծառանալուն համար Աղէքսանդրիա քաղքին բնակիչներուն գրած էր, եւ ոչ հեռուանց յիշատակեց Եւսեբիոս. իսկ անոր ներհակ երկրորդ նամակը՝ որուն մէջ որ Կոստանդիանոս իր բաղձանքը կը յայտնէր թէ Ս. Զատկին տօնախմբութիւնը կ'ուզէ որ բովանդակ ուղղափառ եկեղեցւոյ մէջ մի եւ նոյն օրը կատարուի, չէ թէ միայն կը յիշէ, հապա նաեւ ընդարձակ մեկնութիւններով կը բացատրէ ու կը լուսաւորէ : Աս նիւթիս վրայ՝ ալ շատ ուրիշ բաներ կրնայ ուզողը գտնել Քարոնիոսի Տարեգրութեանց մէջ<sup>2</sup>, մեր դիտած նպատակին հաստատութեանը համար : Բայց մեզի այսչափս բաւական ըլլայ համոզուելու համար թէ Եւսեբիոսին բնութիւնն է եղեր չուզած բանը լռութեամբ անցընելը : Աս բանս գիտնալով՝ բնաւ չիկրնար մէկը, առանց ողջամիտ բանադատութեան արհեստին դէմ գործելու, Եւսեբիոսին լռութենէն հետեւցընել թէ Ուրեմն Եւսեբիոս Քրիստոսի Տեառն մերոյ ատ մեծ սքանչելիքը, այսինքն թէ իր սուրբ

<sup>1</sup> Օրսի, Եկեղ. պատմ. Հատ. 2. էջ 209 — 211 :

<sup>2</sup> Հատ. Բ. ամ 109. ԳԼ. 59. եւ ամ 272. ԳԼ. 17 :

չարչարանքէն քիչ մը յառաջ իրեն երեսը կտաւի կամ  
 դաստառակի մը վրայ սրբելով կամ քսելով՝ երեսացը  
 պատկերն անոր վրայ տպաւորելը եւ նոյնը Աբգար թա-  
 գաւորին խաւրելը՝ սուտ բանի տեղ դնելով չպատմեց :  
 Այսպէս չէ : Հապա, դիտմամբ չուզեց պատմել, ինչու  
 որ Քրիստոսի պատկերաց յարգութեան սաստիկ հակա-  
 ոակ էր ինք :

Նսածներս ուղիղ Փիլիսոփայութեան գլխովին հա-  
 մաձայն են, վասն զի՝ ողջամիտ Տրամաբանութեան տուած  
 կանոններուն համեմատ՝ պատմագրի մը պատմութեան մը  
 մասը լռելը՝ ան ատեն մինակ Ուրացական ապացոյցի տեղ  
 կրնայ առնուիլ, այսինքն՝ պատմագիրն ատ բանը կ'ուրանայ,  
 չի հաւտար եղեր՝ կրնայ ըսուիլ, երբ որ պատմչին աս կամ  
 ան բանը (զորն որ պէտք էր պատմել) լռելուն պատճառը  
 չի գտնուիր : Բայց մենք տեսանք աւասիկ որ մեր խնդրոյն  
 մէջ բանն այնպէս չէ : Ուստի՝ Ս. Գաստառակին նկատ-  
 մամբ՝ Եւսեբիոսին լռելն Ուրացական ապացոյց չի կրնար  
 ըսուիլ : Մանաւանդ թէ նոյն բանադատութեան մէկալ  
 զօրաւոր ու գործունեայ վճիռը տեղի ունի հոս, որն որ  
 կ'ըսէ. թէ որ հէջը բան մը լռութեամբ անցնելու ըլլայ,  
 ըսել չէ որ՝ անիկայ շնորհը կ'ուրանայ : Արդ աս ամէն տեղե-  
 կութիւններէն ետքը՝ ցորեկուան պէս պայծառ ու յայտնի  
 եղաւ թէ Եւսեբիոս Եզեսիայ պատկերին կամ Ս. Գաս-  
 տառակին վաւերականութիւնը նոյն իսկ իր լռութեամբն  
 աւելի եւս հաստատեց, քան թէ անոր վրայ պատմելու  
 ըլլար : Արովհետեւ չպատմելուն պատճառը՝ նենգութիւն  
 ըլլալը գիտցուեցաւ : Թէպէտ նենգութենէն զատ՝ ուրիշ  
 անվնաս պատճառներու համար ալ կրնայ բան մը լռու-  
 թեամբ անցուած ըլլալ : Ինչպէս աւասիկ նոյն Եւսեբիոս  
 առջի ժամանակներու երեւելի մարտիրոսներէն շատերուն  
 անուններն իր Եկեղեցական պատմութեան մէջ չյիշա-  
 տակեց, ինչպէս՝ Ղաւրենտիոս, Աինկենտիոս Սրբերը, եւ  
 Փելիկիտաս, Պերպետուա Սրբուհիները : Գարծեալ՝ Աթե-  
 նագորայ Զատագովութեան գրուածքին վրայ խօսք մը չի-

գրուցեր, ինչպէս նաեւ մեր Սրբոյն Յակոբայ Մծբնա-  
 ցւոց հայրապետին Չգօնութիւն ըսուած գրքին վրայ յի-  
 շատակ մը չ'ըներ, սակայն ասոր համար նոյն յիշուած մար-  
 տիրոսները եւ մէկալ գրուածքները Եկեղեցւոյ ցանկէն  
 ջնջուած կամ մերժուած չեն, մանաւանդ ամէն գիտնա-  
 կան մարդիկ կը ճանչնան ու համոզուած են թէ նոյնե-  
 րը ստոյգ են, բայց Եւսեբիոս նոյնները կէս մը չէր գի-  
 տեր, կէս մ'ալ յիշատակելու մոռցաւ, ուստի չգիտ-  
 նալն ու մոռնալը պատճառ եղաւ չյիշատակելուն: Իսկ  
 մեր խնդրոյն մէջ՝ թէպէտ մոռցած չէր ու աղէկ ալ  
 գիտէր, ինչպէս աս գլխիս սկիզբը ցուցըցինք եւ մինչուկ  
 հիմայ մէկիկ մէկիկ յառաջ բերուած ու մեկնուած պատ-  
 ճառներէն ալ յայտնի եղաւ, բայց նենգութեամբ չուզեց  
 պատմել: Ուստի եւ անոր չպատմելը՝ Ս. Գաստառակին  
 վաւերականութիւնն ամենեւին կերպով մը կասկածի տակ  
 չիկրնար ձգել:

Քրիստոսի Տեառն մերոյ որչիչ պարկերներուն վրայ պեղելու-  
 թիւններ, որոնք որ նոյնպէս հրաշքով կրտսի վրայ որդա-որոն-  
 ցան որ հրաշքորձ են, եւ ասոր համար ալ շանաղան պեղելը  
 յարգութիւնն կ'ընդունին :

Որպէս զի մեր ընթերցողները Եղեւսիայ պատկերին  
 կամ Ս. Գաստառակին վրայ տուած ծանօթութիւննիս՝  
 ուրիշ նոյնպիսի զանազան առիթներու մէջ նոյնպէս հրաշ-  
 քով տպաւորուած սուրբ պատկերաց ծանօթութիւն-  
 ներուն հետ չչփոխեն, պատշաճ սեպեցինք որ վերը  
 (Գ. Գլխին մէջ) տուած խոստմունքներնու համեմատ՝  
 հոս նոյն վերջիններուն վրայ ալ քանի մը մասնաւոր տե-  
 ղեկութիւններ տանք :

Պատմութեանց մէջ՝ կտաւի վրայ տպաւորուած  
 գլխաւորաբար երեք սուրբ պատկերներ կը յիշուին,  
 որոնց վրայ Քրիստոսի Տեառն մերոյ կերպարանքը հրաշ-  
 քով մը դրոշմուեցաւ : Ասոնցմէ մէկովը Քրիստոս Տէրն  
 մեր իր չարչարանաց ժամանակը իրեն սուրբ քրտինքը  
 սրբեց, եւ ասիկա է Սրբուհի Աւրոնիքային թաշկինակը  
 (il santo sudario) : Ասոր վրայ կը տեսնուին արեան կա-  
 թիլներ, որոնք որ թխագոյն ու կապուտակ թուշերուն  
 վրայէն վար վազելու պէս կ'երեւան : Աս պատկերս կը  
 պահուի Հռոմ քաղաքը, Ս. Պետրոսի հռչակաւոր ե-  
 կեղեցւոյն մէջ, եւ ամէն տարի մեծ հանդիսի համար սահ-  
 մանեալ օրերը, ինչպէս Աւագ հինգշաբթի օրը, շքեղ  
 փառաւորութեամբ նոյն եկեղեցւոյն ներքին ու բարձր  
 պատշգամբի մը վրայէն ժողովրդեան կը ցուցուի, զորն որ  
 ես ալ իմ աչօքս տեսնելու արժանի եղած եմ :

Իսկ եթէ ինչ կերպով եւ ո՞ր առիթի մէջ աս կտաւիս  
 վրայ Քրիստոսի Տեառն մերոյ կերպարանքը տպաւորուած  
 է, եւ ուրիշ քանի մը ասոր վերաբերեալ գիտնալու ար-  
 ժանաւոր պարագաները՝ Աննա Աատարինէ Կամէրիք ա-  
 նունով երանելի Աոյս մը Օգոստինեան կարգէն՝ իր Քրիս-  
 տոսի Տեառն մերոյ դառն չարչարանաց վրայ ըրած տարե-

կան մտածութեանցն ու տեսած տեսիլքներուն մէջ 1  
այսպէս կը պատմէ :

1 Աս երանելի Աոյսն էր դուստր Բեռնարդոսի Էմմերիք ու Ան-  
նայի Հելլերս, աղքատ բայց բարեպաշտ ծնողաց զաւակ, որն  
որ ծնաւ Պրուսիայի Միւնսդէռ գաւառը գեղի մը մէջ, Սեպ-  
տեմբերի 8ին 1774ին: Իրեն վարուցը մանրամասն պարագաները  
մէկ դի թող տալով, թէ ինչպէս պզտիկուց ի վեր զարմանալի  
սրբակեաց վարք մը ունեցեր էր, այնպէս որ իրեն անմեղու-  
թեանը համար իրեն պահապան հրեշտակը, եւ Ս. Աստուա-  
ծածին ու Յիսուս Մանուկը եւ ուրիշ Սուրբերն ասոր հետ  
ընտանեբար տեսութիւն կ'ընէին, դանք գլխաւորաբար մեր  
նպատակին համաձայն եղած կտորներուն վրայ: Իր ներքին վա-  
րուցը մէջ մասնաւորաբար զարմանալին ան էր, որ միօրինակ  
շարունակեալ տեսիլքներու պատկերներ կամ երեւոյթներ  
հոգւոյն աչքին առջեւը կ'երեւային, այնպէս իրարու հետ հա-  
մեմատեալ ու կապակցեալ եղանակաւ, որ կատարեալ նախա-  
գուշակութիւն կամ պատմութիւն մը կը կացուցանէին: Հո-  
գեւոր ճամբուն մէջ իրեն գլխուն գալիքներուն, ուրիշ հեռու  
տեղեր գտնուող անձանց հոգեւորի հետ վերաբերութիւն ու-  
նեցող ներկայ պատահումքներուն, կամ թէ անցած գացած  
գիպուածներուն իբրեւ ականատես ու ականջալուր վկայ տե-  
ղեակ կը գտնուէր ու կը պատմէր, իբրեւ թէ իր ատենն ու  
իր առջին պատահած ըլլային նոյն բաները: Բայց ամենէն  
աւելի Քրիստոսի Տեառն մերոյ վարուց եւ մանաւանդ վերջին  
երեք քարոզութեան տարիներուն ու շարչարանացը գիպուած-  
ներն ու պարագաներն էին իրեն վառվռուն ու շարունակեալ  
տեսիլքներուն առարկան: Աստուած ալ անոր առաքինու-  
թիւնը, Փրկչին ցաւերուն ունեցած անպայման ջերմեռանդու-  
թիւնը եւ խաչ քաշելով Քրիստոսի նմանելու ունեցած սաս-  
տիկ եռանդը վարձատրելու, յագեցընելու եւ գոհ ընելու հա-  
մար՝ շնորհք ըրեր էր իրեն, որ Քրիստոսի Տեառն մերոյ հինգ  
վիրացն ու փշեայ պսակին ցաւերը եւ նոյն խի սպիները՝ իր  
մարմնոյն վրայ զգալի եղանակաւ կրէ: Աս ցաւերուն անհան-  
դուրժելի սաստիկութենէն, զորն որ ինք խնդրած էր ու սի-  
րով եւ համբերութեամբ կը տանէր, վերջապէս ամենածանր  
հիւանդութեան մէջ ինկաւ, որն որ աւելի կը շատնար ու կը  
զայրանար ամէն ուրբաթ օրերն ու մեծ պահոց ատեն, եւ մա-  
նաւանդ աւագ շաբթուան մէջ: Ուստի մէկ կողմանէ մարմնոյ  
տկարութենէ ու տաղնապեցուցիչ ցաւերէ պաշարուած, եւ  
մէկալ կողմանէ ալ անդադար Քրիստոսի շարչարանքներուն  
մտածմունքներովը սիրտը վառուած ըլլալով, բոլորովին իրմէն  
կ'եւէր կը յափշտակուէր: Աս յափշտակութեան մէջ արտա-  
քին բաներու զգայութենէն գլխովին զատուած ու հոգեւորի  
ընկղմուած՝ միտքը շարունակ Քրիստոսի շարչարանքներուն այն-

«Սերափիա (կամ Ղերոնիքա) իր տունը պատուա-  
կան համեմեալ գինի մը պատրաստած էր, բարեպարիշտ

պիսի մտադրութեամբ կը զբաղեցընէր, որ վառվռուն երեւա-  
կայութեանը մէջ՝ քրիստոսի ամէն պատահած բաներն ամենա-  
փոքր պարագաներովը հանդերձ մէկիկ մէկիկ աչքին առջեւը  
նկարուած կը տեսնէր, Աստուծոյ մասնաւոր այնպէս ուզե-  
լովը: Այնպէս որ, քրիստոս Տէրն մեր ընթրիքէն յառաջ իր  
ամենասուրբ Մորմէն ինչ խօսքերով բաժնուեցաւ, Ս. Աս-  
տուածածին անոր ինչ պատասխանեց, ընթրեաց ատեն քրիս-  
տոսի Տեառն մերոյ ու Առաքելոց մէջ ինչ խօսքեր անցան,  
ինչ կարգաւ նստած էին, ընթրեաց դաստիկոնն ինչպիսի եւ  
որուն էր, ընթրիքը լմըննալէն ետքը քրիստոս Տէրն մեր Ա-  
ռաքեալներովը որ ճամբէն անցնելով Գէթսեմանի պարտեզը  
գնաց. Յուդա ինչպէս մասնեց զանիկայ. ինչպէս բռնեցին  
Հրեայք եւ ուր տարին, ճամբան որուն պատահեցան. Հրեա-  
ներն ինչ կերպով նախատեցին զքրիստոս. քրիստոս Տէրն մեր  
կռնակը խաչ Քողզոթա լեռն ելած ատեն քանի հեղ, ուր ու  
ինչպէս ինկաւ. Ս. Ղերոնիքա թաշկինակովն ուր պատահեցաւ  
անոր. քրիստոսի դէմքն ինչպէս ելաւ թաշկինակին վրայ.  
Յիսուս ու իր ամենասուրբ Մայրը ճամբան իրար տեսնելով  
երկու կողմանէ ինչ ցաւեր զգացին սրտերնուն մէջ. եւ վեր-  
ջապէս՝ քրիստոսի չարչարանաց առջի օրէն մինչեւ անոր խա-  
չուիլն ու յարութիւն առնելը ինչ որ եղաւ նէ, ամէն բան  
մանրամասնաբար կը ցուցընէր անոր Աստուած, եւ ան աստի-  
ճանի պարզութեամբ՝ որ աս տեսիլքներս Ս. Գրոց շատ մթին  
տեղերուն մեկնութիւն կրնան ըլլալ. թէպէտ Վատարինէ  
Ս. Գիրքը չէր կարգացեր: Իսկ Վատարինէ թէպէտ իր խորին  
խոնարհութեամբն աս զարմանալի տեսիլքներուն վրայ մէկու  
մը բան չէր պատմեր, սիրտը չէր բանար, բայց իրեն հոգեւոր  
հայրերը կամ մեծաւորները մտածելով որ աս բաներուս  
յայտնուելէն շատ մեծամեծ օգուտներ կրնան ծագիլ ուրիշ-  
ներուն եւ Աստուած ալ կը փառաւորուի ի Սուրբս իւր,  
յանուն Սրբոյ Հնազանդութեան հրամայեցին անոր որ ասկէ  
ետեւ նոյն մտածմունքներն ըրած ատեն տեսած տեսիլքները  
գրագիր քահանայի մը պատմէ, որ ի գիր աւանդուին: Այս-  
պէս ալ եղաւ: Գրագիրը Վատարինէին մտածութիւն ըրած ա-  
տեն (որն որ միշտ ու անգագար կ'ընէր) հոն նստած, անոր  
յարչտակութեան վիճակի մէջ ըսածները մէկիկ մէկիկ կը նշա-  
նակէր: Քանի մը տարի այսինքն՝ Սրբուհւոյն վերջին տարի-  
ները մեծ պահոց ու մասնաւորաբար Աւագ շաբթուան մէջ  
այսպէս ըրաւ. եւ ամէն հեղ գրածներն իրարու համաձայն  
գտնուեցան: Աս գրուածքս յետոյ եկեղեցական քննութիւն-  
ներէն ետեւ՝ Սուրբապիս քաղաքը 1838ին արդէն հինգերորդ ան-  
գամ տպուած է գերմաներէն լեզուաւ, ինչպէս որ Երանելի  
Վոյսը կը խօսէր: Ղերջէն շատ լեզուներու ալ թարգմանուե-

բաղձանքով որ զՏէրն մեր իր դառն չարչարանաց ճամբուն վրայ անով զովացրնէ : Ասիկա մէյ մը արդէն ցաւագին ակնկալութեամբ զՔրիստոս տանող թափօրին դէմն ելած էր . ես զինքը տեսած էի որ գլուխը լաթով մը ծածկած , իրեն որդեգրած պզտիկ աղջկան մը ձեռքէն բռնած , թափօրին դէմ արտորայով կ'երթար , երբոր Յիսուս իր սուրբ Մօրը պատահեցաւ : Բայց խուժանին սաստիկ աղմուկէն ուզածը չէր կրցած կատարել , եւ այսպէս նորէն իր տունը դարձած էր , Յիսուսին անկէ անցնելուն սպասելու համար :

«Այտքը՝ գլուխը ծածկելով դարձեալ փողոցն ելաւ , ուսէն դէպ ի վար լաթ մը կախած , եւ հազիւ ինը տարեկան աղջիկն ալ իր քովն էր ու գինւով լեցուցած ամանը ծածկութի մը տակէն ձեռքը կը բռնէր . մէյ մ'ալ թափօրը մօտիկցաւ : Բաղմութեան առջեւէն գացողները փուճ տեղ կ'աշխատէին զանիկա մէկ դի վնասելու . անիկա իր չափազանց սիրոյն ու ցաւակցութեան սաստկութենէն ինք իրմէ ելած էր , ուստի քովի աղջկան հետ մէկտեղ՝ որն որ անոր զգեստէն բռնած էր , բաղմութեան քովէն գացող խառնիճազանճները , զինուորներն ու դահիճները մէյ մը երկու ձեղքեց ու դնաց ճամբուն վրայ Յիսուսին հասաւ , անոր առջին ծնկան վրայ ինկաւ ու լաթին մէկ ճոթը բանալով՝ անոր երեսին դէմ վեր վերցուց , աս լալագին խօսքերով . Տէր էմ , շնորհք արեւ ինձի որ մէյ մը երեւոյր «բէմ» : Քրիստոս ձախովը լաթը բռնեց , ու դողդոջուն ձեռքովն արիւնլուաց երեսին վրայ լաթը քիչ մը քսեց ու ետքը իր ձախը լաթով մէկ տեղ դէպ ի աջը տանելով , որն որ խաչը գրկող թեւովը դէպ ի մէ-

ցաւ նոյն գործքը : Մեր հիմակ բերած կտորնիս ալ աս դրքէն է : Երանելի Աոյսը Աննա Կատարինէ Էմմերիք մեռաւ 1824ին , կատարեալ սրբութեան համբաւու մէջ : — Աը յուսանք որ ազգերնուս մէջ առաքինի ու Քրիստոսի չարչարանքներուն ջերմեանդութիւն ունեցող անձանց սիրաբերը՝ մեր աս երանելի Կատարինէ Աուսին վրայ տուած համառօտ ծանօթութենէս շարժելով , նոյն գործքը հայերէն լեզուի ալ թարգմանել տալու փափաք ու դիտաւորութիւն կը ցուցընեն :



կալ դին երկրնցած էր, երկու ձեռաց մէջ աղէկ մը լա-  
 թը սխմեց, ու շնորհակալ ըլլալով Աերոնիքային ետ  
 տուաւ. ան ալ պագաւ ու վերարկուին տակէն առաւ,  
 սրտին վրայ դրաւ պահեց ու ոտք ելաւ: Նոյն միջո-  
 ցին պզտիկ աղջիկն ալ գինւոյ ամանը գողալով մը վեր  
 վերցուց, բայց դահիճներուն ու զինուորներուն անամօ-  
 թաբար ծաղրելէն չկրցաւ զՅիսուս անով զովացընել:  
 Աս իր գործողութեան ճարպիկ շուտութեամբը զբազ-  
 մութիւնը երկու ձեղքելով ու յանկարծ մէջերնին  
 մտնելով՝ հազիւ թէ երկու վայրկենի չափ միայն զթա-  
 փորը յապաղցուց, որով որ զթաշկինակը Քրիստոսին  
 ձեռքը տալը կարելի եղաւ: Չիու վրայ գացող Փարիսե-  
 ցիներն ու դահիճները աս յապաղման վրայ սաստիկ  
 բարկացան եւ աւելի եւս՝ Քրիստոսին այսպէս հրապա-  
 րակաւ յարգուելուն վրայ, ու սկսան զՅիսուս ծեծել  
 ու քաշքրտել, իսկ Աերոնիքան աղջկան հետ մէկտեղ  
 իր տունը փախաւ:

“Հազիւ թէ ասիկա իր խուցը ոտք կոխած էր,  
 Քրիստոսի քրտինքը սրբած լաթն իր առջին սեղանի մը  
 վրայ դրաւ, մէյ մ’ալ վրան մարելիք գալով գետինն ին-  
 կաւ փռուեցաւ, աղջիկն ալ ձեռքի գինւոյ ամանովը ճչե-  
 լով անոր քովը չոքեց: Աս վիճակիս մէջ գտաւ զանիկա  
 տնեցի բարեկամ մարդ մը, որն որ նոյն ատեն ներս  
 մտաւ ու զինքը ատ փռուած լաթին քով մեռածի պէս  
 պառկած տեսաւ, որուն վրայ որ Քրիստոսի արիւնլուայ  
 կերպարանքն ահարկու՝ բայց հրաշալի կերպով մը յայտ-  
 նի տպաւորուած էր. մարդը բոլորովին այլայլեցաւ շփո-  
 թեցաւ, զԱերոնիքան արթնցուց ու Քրիստոսի կերպա-  
 րանքն անոր ցըցուց. ասիկա ողբ ու լացքի մէջ էր ան-  
 մխիթար, եւ լաթին քովը չոքեց ու պոռաց ըսելով. Ես  
 կ’ապրեմ ալ ասէն բանէ անցնել, անա Տերն զեր ինձի յիշատի-  
 վը ինչոպէս:

“Աս լաթս գրեթէ լայնքէն երեքպատիկ աւելի եր-  
 կայն՝ բարակ ասուեղէն հիւսուած մըն էր, զորն որ

Հրեաները սովորաբար ծոծրակնուն վրայէն կը կախէին, եւ երբեմն երկրորդ մ'ալ կ'ունենային ուսերնուն վրայ: Սովորութիւն մը կար անոնց մէջ որ սգաւորներու, ողբացողներու, վշտահարներու, հիւանդներու, յոգնածներու այսպէս դիմացը կ'ելլէին, անոնց երեսը սրբելու համար, եւ ասիկա սգաւորութեան ու կարեկցութեան նշան մըն էր: . . . Աս կտաւս յետոյ միշտ իր (Վերոնիքայի) անկողնոյն գլխոյն վրայ կախուած կը կենար: Իր մահուանէն ետքը սուրբ կանանց ձեռքովը Ս. Աստուածածնայ բերուեցաւ ու Առաքեալներուն ձեռքն ալ Եկեղեցւոյն տրուեցաւ,<sup>1</sup>: Սերափիային վրայ քանի մը տեղեկութիւններէն ետքը՝ նոյն Երանելի Աղյսը հոն տեղը աս խօսքերս ալ կ'աւելցրնէ. «Յիսուսին յաղթանակաւ Երուսաղէմ մտած ատենը, զորն որ մենք Ծաղկազարդի կիրակին օրը կը տօնենք, տեսայ ես զանիկա (զՎերոնիքան) որ գիրկը տղայ մ'ունէր, եւ մէկալ կանանց հետ մէկտեղ գլխէն լաչակը կը հանէր, ու մեծ ուրախական յարգութեամբ ճամբուն վրայ կը փուէր: Աս կտաւս, զորն որ անիկա հիմակ թէպէտեւ սգաւոր՝ բայց աւելի փառաւորագոյն յաղթանակի մէջ Տեառն Յիսուսի չարչարանաց դառնութիւնը քիչ մը մեղմելու համար անոր դիմացը բերաւ, մի եւ նոյն լաչակն էր, որն որ իր կարեկից ստացողին նոր յաղթական անունը Վերոնիքա (այս ինքն՝ vera icon (εἰκὼν) որ է ըսել՝ բուն ճշմարիտ պատկեր) տուաւ, ու հիմակ հրապարակական յարգութիւն կ'ընդունի Եկեղեցիէն»,<sup>2</sup>: Բայց սոյն այս երանելի Աղյսը իրեն ուրիշ մտածութեանցը մէջ յամին 1821, Օգոստոս 2ին՝ Վերոնիքայի կտաւին վրայ աս խօսքերս ալ զրուցած էր. «Ես սանկ մէյ մը ընդհանրապէս կը յիշեմ որ յառաջագոյն անգամ մը տեսած էի թէ ինչպէս Վերոնիքայի Ս. կտաւն իր մահուանէն ետքը սուրբ կանանց քովը մնաց, ինչպէս Թադէոս աշկերտը զանիկա Եղեսիա քաղաքը

1 Ա. Կ. Էմիլիք, էջ 242 — 244.  
 2 Անդ:

տարաւ, ու հոն եւ ուրիշ տեղեր անով շատ հրաշքներ գործեց, եւ ինչպէս նաեւ Առստանդնուպոլիս բերուած էր, ու Առաքեալներուն ձեռքովը Եկեղեցւոյն տրուեցաւ. անգամ մ'ալ այնպէս մը երեւցաւ ինձի որ նոյնը Գուրին քաղաքը տարուած ըլլայ, ուր որ Քրիստոսի Գերեզմանին կտաւը (Ս. Վարչամակը) կը գտնուի: Ես ան ատեն թէպէտ աս ամէն սուրբ կտաւներուն պատմութեան տեղեակ եղայ, բայց յիշողութեանս մէջ շիտթեցի,<sup>1</sup>:

Արանելի Աուսին աս վերջին խօսքերը յայտնի Եդեսիա քաղքին Գաստառակին, ու մասնաւորաբար վերը Ե. գլխին մէջ պատմուած եղանակին կրնայ վերաբերիլ, այս ինքն թէ Ս. Գաստառակը Յիսուսի երկինք ելլէն ետքը Թագէոս առաքեալին ձեռքովը Եդեսիա քաղաքը Աբգար թագաւորին խաւրուած ըլլայ. բայց Երանելիս՝ ինչպէս որ ինքն ալ յայտնի կը վկայէ՝ աս սուրբ կտաւներուն պատմական զանազանութիւններն իրարու հետ շիտթած է:

Արկրորդն է՝ ատ մեռելագոյն թալկած պատկերը, որն որ Քրիստոսի պատանքին կամ գերեզմանի լաթին վրայ տպաւորուած էր, եւ որն որ հիմայ, ինչպէս վերը յիշուեցաւ, Գուրին քաղաքը կը գտնուի: Ասոր ալ տպաւորուելուն կերպը դարձեալ նոյն Երանելի Աոյսը Աննա Աատար. Էմմերիք իր մտածութեանց մէջ այսպէս կը ստորագրէ:

“Արբոր ամէնքը Յիսուսին մարմինը (Խաչէն իջեցընելէն ետքը) լալով շրջապատած ու հրաժարականնին տալով անոր բոլորտիքը չոքած էին, մէյ մ'ալ սիրտ շարժելու հրաշք մը աչուրնին երեւցաւ. Յիսուսի մարմնոյն բովանդակ երեսը, իր ամէն վերքերուն հետ մէկ տեղ, զինքը ծածկող կտաւին վերին ծալքին վրայ թուխ ու կարմրագոյն տեսնուեցաւ. իբրեւ թէ կ'ուզէր Յիսուս անոնց սիրալիր հոգացողութեան խնամքն ու վշտահար կարեկցութիւնը շնորհակալութեամբ վարձատրել,

<sup>1</sup> Անդ. էջ 247.

եւ անոնց՝ իր կերպարանաց պատկերն ամէն ծալքերէն  
անցրնելով յիշատակ մը թողուլ :

“Այլով ու ողբալով զսուրբ մարմինը գրկեցին, եւ  
մեծ յարգութեամբ սքանչելի պատկերադրոշմը պագին .  
իրենց զարմացումն այնչափ մեծ էր, որ կտաւը նորէն բա-  
ցին, բայց ալ աւելի զարմացան, երբոր տեսան որ սուրբ  
մարմնոյն բոլոր պատանքը ճերմակ էր ինչպէս առաջ,  
ու մինակ վերին երեսը կամ ծալքը Յիսուսին կերպա-  
րանքովը դրոշմած :

“Ատաւին աս կողմը, որուն վրայ սուրբ մարմինը  
կեցած էր, Յիսուսին բովանդակ կոնակին դրոշմն ունէր .  
իսկ ան կողմը՝ որն որ զմարմինը կը ծածկէր, երեսին  
պատկերն ունէր . բայց ասիկա պէտք էր որ ծալուելով  
դրուէր, որովհետեւ աս կողման կտաւը զանազան ծա-  
լուածքներով մարմնոյն վրայ փաթթուած էր : Աս պատ-  
կերս չոյլայ թէ արիւնյուայ վէրքերուն տպաւորումը կար-  
ծուի . վասն զի բոլոր մարմինը խնկեղէններով խիտ առ-  
խիտ ու բազմածալ պատանքներով փաթթուած էր . ասի-  
կա պարզապէս սքանչելեօք տպաւորած պատկեր մըն էր,  
Յիսուսի մարմնոյն վրայ բնակող արարչական ու կերպաւո-  
րիչ աստուածեղէն զօրութեան վկայութիւն տալու համար :

“Այս աս սուրբ կտաւին՝ ետքի ատենները պատահած  
դէպքերու պատմութենէն շատ բաներ ալ տեսայ, բայց  
հիմակ ամէնն ալ որոշ կարգաւ մը չեմ կրնար զրուցել :  
Քրիստոսի յարութենէն ետքը աս ալ ուրիշ կտաւներու  
հետ մէկտեղ Յիսուսին բարեկամներուն ձեռքն էր ան-  
ցած : Անգամ մը տեսայ որ մէկը զանիկա թեւին տակը  
կը տանէր ու իրմէ յափշտակեցին . երկու անգամ ալ  
զանիկա չրէից ձեռքը տեսայ . նաեւ ուրիշ զանա-  
զան տեղեր ալ տեսայ որ քրիստոնէիցմէ յարգութիւն  
կ'ընդունէր : Անգամ մը ասոր վրայ վէճ մը կար եւ խա-  
ղաղութիւն ընելու համար զանիկա կրակը նետեցին .  
բայց սքանչելեօք կրակին վրայէն վեր ցատքեց ու քրիստո-  
նէի մը ձեռքն եկաւ :

«Վսկէ երեք ուրիշ պատկերներ ալ շինուեցան, երբ որ քանի մը սուրբ մարդիկներ աղօթք ընելով նոյն երեք կտաւներն ասոր վրայ դրին, եւ այնպէս եղաւ որ բովանդակ տակի կողմին ու բովանդակ երեսի կողմին կարգ կարգ ծալուած պատկերները նոյն կտաւներուն վրայ ելան: Աս պատկերներս Եկեղեցւոյ հանդիսական գիտաւորութեամբն առջինին վրայ դրուելով օրհնուեցան, եւ անկէ ետեւ մեծ հրաշքներ գործեցին: Բուն գաղափարը ես անգամ մ'ալ Ասիայի կողմերը տեսայ, որ քիչ մը վնասուածի ու պատռածի նշաններ ունէր վրան, եւ ուղղափառ չեղող քրիստոնեաներէն յարգութիւն կ'ընդունէր: Բայց քաղքին անունը մոռցայ, սակայն նոյն քաղաքը կը գտնուի՝ երեք սուրբ թագաւորաց հայրենիքին մօտ, մեծ երկրի մը մէջ<sup>1</sup>: Ես աս տեսիլքին մէջ քիչ մը բաներ ալ Գուրինի, Գաղղիայի ու Կղեմէս Ա. Բահանայապետին վրայ տեսայ, ու Տիբերիոս կայսեր վրայ ալ, որն որ Քրիստոսի մահուանէն հինգ տարի վերջը մեռաւ. բայց մոռցայ թէ ինչ էր»<sup>2</sup>:

Իսկ երրորդը՝ մեր Եղեսիայ Ս. Գաստառակն է, ասիկա մէկալ երկուքէն ալ առաջ է եւ նոյն իսկ Քրիստոսէ Տեառնէ մերմէ տպաւորուած, որուն վրայ որ աս մեր գրքուկը կը ճառէ:

Աս ըսածներնէս զատ՝ մասնաւոր յիշատակի արժանի է ուրիշ Փրկչական պատկեր մ'ալ, որն որ Հռոմ քաղաքը Ս. Սեղբեստրոսի վանքին Փռանկիսկեան կուսանաց

1 Երեք սուրբ թագաւորաց հայրենիքին համար, որոնք Քրիստոսի ծննդեան ատեն Արեւելքէն եկած էին, նորածին արքային երկրպագութիւն ընելու համար, քանի մը մատենագիրք (տես Կոռնելիոս ա Լարիտէ, Մեկն. Մատթ. ԳԼ. Բ. Թիւ 1.) կարծեցին թէ Միջագետք կամ անոր մօտերն եղած ըլլայ: Ուստի ասով յայտնի կ'ըլլայ թէ սուրբ վարչամակ ըսուած սուրբ պատկերին պատմութիւնը՝ Ս. Գաստառակին պատմութեան հետ աս կողմանէ ալ կրնար դիւրաւ շփոթիլ. որովհետեւ երկուքին մէջն ալ տեղական մերձաւորութիւն կամ նոյնութիւն (Միջագետք, Եղեսիա) կը յիշուի:

2 Ան. Կատ. Էմմերիք, էջ 331 — 333:

քով կը պահուի. որոնք կ'ուզեն հաստատել թէ իրենց պատկերը նոյն իսկ Քրիստոսէ Աբգարին խաւրուած Ս. Գաստառական ըլլայ, եւ շատ հեղինակներ ալ աս կարծիքը պաշտպանեցին: Ասոր համար ես Հռոմ եղած ատենս, 1844ին, նոյն սրբակեաց կրօնաւորուհիներէն իրենց աս բանիս վրայ ունեցած ձեռագիր յիշատակարանները քննութեան համար խնդրելով առի, որպէս զի այսպիսի աղգային ու նշանաւոր իրի մը ճշմարտութիւնն աղէկ մը հասկընամ: Բայց ես գտայ որ պատմական սխալանք կայ նոյն գրուածքներուն մէջ, ինչպէս գրքուկիս ԺԱ. գլխոյն մէջ յայտնի ու պայծառ պիտ'որ ցուցընեմ:

Վարձեալ՝ հինգերորդ Փրկչական պատկեր մ'ալ կայ, զորն որ Հռոմայեցիները խիստ մեծ ջերմեռանդութեամբ կը յարգեն: Ասիկա Յունաց կերպովը նկարուած է, ու կը պահուի Ս+Մ Սանդա (Scala Santa) այսինքն Ս+ՐԲ Սանդո-դէ ըսուած հռչակաւոր մատրան<sup>1</sup> Սանդո-Սանդո-րո-մ (Sancta Sanctorum), այսինքն՝ ՍրԲ-Ի-ն ՍրԲ-ոյ անուանով աղօթարանին մէջ: Իննովկենտիս Գ. ասիկա արծրթէ շրջանակի մը մէջ առնել տուաւ, ու տարւոյն մէջ խիստ քիչ անգամ, մինակ որոշեալ օրերը՝

<sup>1</sup> Հռոմ քաղաքը փառաւոր շէնքով մատուռ մըն է, մեծահռչակ Լատերանեան Սրբոյն Յովհաննու Եկեղեցւոյն քովը, մէջը խիստ զարգարուն աղօթարանով: Աս Սքալա Սանդա մատուռս երեւելի ուխտատեղի մըն է: Քովէ քով շինուած երեք սանդուղքներէն վեր կ'ելլըցուի: Մէջտեղի սանդուղքին մարմարին քարերը Երուսաղեմէն հոն բերուած են, ու կ'ըսուի թէ Պիղատոսին պալատին ատ սանդուղցը քարերն ըլլան, որոնց վրայէն որ Քրիստոս Տէրն մեր իր չարչարանաց օրերը վեր ելաւ: Աս սանդուղքիս վրայէն ոտքով քալելն արդելուած է. հապա ծունկի վրայ դալով ելլելու է: Բոլոր տարին եւ մանաւանդ մեծ պահոց մէջ Մարտ ամսոյն ամէն ուրբաթ օրերը հոս այցելութեան եկող բարեպաշտներուն թիւը համարը չկայ: Այնչափ մարդկան ծնկուրները քսուրըտելով վեր ելլելէն Սանդուղքին մարմարին աստիճանները ալ մաշած ու վրան խորունկ խոռոչներ բացուած են. եւ որպէս զի բոլորովին չմաշին՝ Սրբազան Քահանայապետները նոյն աստիճաններուն վրայ տախտակով դոցել տուած են, որպէս զի քարերուն անդ տախտակները հիննան, որ փոխուելնին կարելի է:

ժողովրդեան կը ցուցուի : Ար պատմեն որ Աւետն Իսաւրա-  
ցւոյն ժամանակը, Աոստանդնուպոլիս քաղաքը Պատկերա-  
մարտներէն ելած հալածանքին ատեն աս պատկերս բախ-  
տաւորութեամբ մը ազատելով Հռոմ քաղաքը բերուած  
ըլլայ : Արչափ որ ասոր վրայ ալ կարծելու ըլլան ոմանք  
թէ ասիկա նոյն իսկ Քրիստոսէն Աբգարին խաւրուած  
Ս. Գաստառակն ըլլայ, նոյնին հիմակ յիշուած Հռոմ փո-  
խադրութեան պատմութեան ընթացքէն արդէն յայտ-  
նի է որ անիկա Ս. Գաստառակը չիկրնար ըլլալ :

Հիմայ կը մնայ մեզի որ ուրիշ պատկերի պատմու-  
թիւն մ'ալ յիշենք : Մեր Ս. Գաստառակին Եղեսիայէն  
Աոստանդնուպոլիս փոխադրուելէն ետքը, որն որ ԹՎԿին  
պատահեցաւ, ինչպէս գրքուկիս Թ. գլխոյն մէջ պիտի  
ցուցընենք, կը պատմուի որ Պօղոս անունով սուրբ  
ճգնաւոր մը, որն որ աս Ս. Գաստառակին մեծ ջերմ-  
եռանդութիւն ունէր, կայսեր ազաչած ըլլայ թէ Ես-  
մասնաւոր կտաւ մը պատրաստած եմ, ասիկա նոյն Ս.  
Գաստառակին վրայ դնել տաս : Աս ընելով՝ նոյն վայրկե-  
նին մէջ սուրբ պատկերը ան կտաւին վրայ տպաւորուած  
ըլլայ : Այսպէս կը պատմէ ասիկա Բարոնիոս մեծ մատե-  
նագիրը, իր Տարեգրութեանցը ԹՎԿերորդ տարւոյն ըն-  
թացքին մէջ, անմիջապէս Ս. Գաստառակին պատմու-  
թիւնն աւարտելէն ետքը, նոյն սուրբ ճգնաւորին վարու-  
ցը պատմութեան մէջէն քաղելով : Ահա ասիկ Բարոնիո-  
սին խօսքերը. «Բայց աս ալ պէտք չէ լռութեամբ անց-  
նել, որն որ նոյն պատկերին կը վերաբերի եւ նոյն Աոս-  
տանդին Պորփիրոսէնին ատենը պատահեցաւ, ինչպէս  
ասիկա Ս. Պօղոս անունով (որն որ իր բնակած տեղւոյն  
անունէն Աատրինեան կը կոչուի) նոյն ատեններն եղող  
խիստ սրբակեաց ու հռչակուած ճգնաւորի մը վարուց  
պատմութեան մէջ ամենայն հաւատարմութեամբ այս-  
պէս կը ստորագրուի : Աոստանդին կայսրը զՓոտիոս, որն  
որ իրեն Պատրիկութեան բարձր աստիճանին համար  
չատ երեւելի բայց իրեն վարուցը մաքրութեան համար

ալ եւելօք մեծ իշխան մըն էր, եւ միանգամայն կայսեր  
 պաշտօնատէրներուն մէջ գլխաւորն էր, նամակով մը  
 (վերը յիշուած) Սուրբին խաւրեց: Ասիկա անոր հետ  
 խօսակցելէն, նամակը տալէն եւ ուրիշ նամակ մ'ալ  
 անկէ առնելէն ետքը՝ երբոր ետ դառնալու կը պատրաս-  
 տուէր, Սուրբն աղաչանք մ'ըրաւ, այսինքն թէ Ես, ը-  
 սաւ, Ս. Գաստառակին մեծութեամբ անոր նման կտաւ մը  
 պատրաստեր եմ, ասիկա Քրիստոսի նոյն անձեռագործ  
 պատկերին վրայ դպցընես, զորն որ Ս. Գաստառակ կը  
 կոչեն, ու յետոյ ինծի ետ խաւրես: Աղաչանքը կատա-  
 րուեցաւ: Հազիւ թէ ճգնաւորը կտաւը բացեր էր,  
 մէկանց Քրիստոսի կերպարանքը տեսաւ վրան, այս ինքն՝  
 Ս. պատկերին ճիշդ ու հաւասար նմանութիւնը: Բայց  
 պատմագիրն անմիջապէս աս խօսքս ալ կ'աւելցընէ. Սա-  
 կայն ուրիշներուն աչքին այդպիսի բան մը նոյն կտաւին  
 վրայ չէր երեւար<sup>1</sup>: Ասով յայտնի կը ցուցընէ թէ ա-  
 նիկա իրական պատկեր մը չէր, որ ամէն մարդ կա-  
 րենար տեսնել. հապա Ս. ճգնաւորին աչքին միայն կ'ե-  
 րեւար տեսիլքի մը պէս, քանի անգամ որ անիկա նոյն  
 կտաւին վրայ կը նայէր: Ի վերայ այսր ամենայնի ճեա-  
 քէդդի Խտալացին իրեն՝ Փրկչական պատկերին Ստորա-  
 գրութեան մէջ<sup>2</sup> կը կարծէ թէ ասիկայ ստոյգ աչքի ե-  
 րեւցող պատկեր մը եղած ըլլայ, եւ ասոր համար ալ կը  
 պնդէ թէ ատ երեւելի ու մինչուկ աս օրուան օրս ճենովա  
 քաղաքը պահուած Փրկչական պատկերը (որուն վրայ որ  
 մենք քիչ մը ետքը տեղն ի տեղը պիտ'որ ճառենք) նոյն  
 իսկ աս ճգնաւորինն եղած ըլլայ:

Ա երջապէս պատմութիւնը մեր Ս. Գաստառակին  
 նմանութեամբը նկարուած ուրիշ գաղափար մ'ալ կը յի-  
 շատակէ, որն որ ան ատեն քաշուեցաւ, երբոր Պարսից  
 Խոսրով թագաւորն ուզեց որ Գաստառակը դեռ Աոս-  
 տանդնուպոլիս չփոխադրուած՝ իր դիւահար աղջկանը

1 Բարոն. Հատ. Ժ. 495:

2 Iconologia Salvatoris, ԳԼ. Ը:



բժշկութեան համար իրեն տէրութեան արքունիքը բերուի: Եղեսպոստոսները չուզեցին այսպիսի սրբազան գանձ մը անխոհեմութեամբ հեթանոս թագաւորի մը ձեռք յանձնել. բայց թէ որ չխաւրելու ալ ըլլային՝ թագաւորը կը բարկանար, անոր համար խելացութիւն մը բանեցընելով՝ Ս. Գաստառակին գաղափարը որչափ որ կարելի էր նէ՝ անոր նման նկարել տուին, եւ բուն օրինակին տեղ զանիկա խաւրեցին: Ասոր մանրամասն պատմութիւնը հոս դնելն աւելորդ կը սեպեմ, վասն զի գրքուկիս վերջը գրուելու Կոստանդին Պորփիրոսթենին ճառին մէջ աս ալ ընդարձակ կը պատմուի: — Սակայն աս ըսած դիպուածս պատահեցաւ նոյն Խոսրով Պարսից թագաւորին Եղեսպոս քաղաքը պաշարելէն ու նոյն պատերազմին մէջ յաղթուելէն (ինչպէս հետեւեալ գլխին մէջ պիտ'որ պատմուի) քիչ ատեն ետքը: Ասկէ ալ զատ՝ դարձեալ ուրիշ քանի մը գաղափարներ ալ Ս. Գաստառակին նայելով շինուեցան, որոնց պատմութիւնը խօսքերնիս ալ շատ չերկրնցընելու համար մէկ դի կը թողում:

Աս ամէն զանազան սուրբ կտաւներու վրայ պատմածներնէս յայտնի կ'ըլլայ հիմակ թէ ինչպէս դիւրին ու կարելի բան է եղեր, ու իրօք ալ եղած է որ այնչափ պատմագիրք Եղեսպոս Ս. Գաստառակին պատմութիւնն այնչափ իրարմէ տարբեր եւ այնչափ իրարու հակառակ պատմած են, երբեմն անոր բուն գաղափարն օրինակներուն հետ շփոթելով, երբեմն ալ ուրիշ տեսակ՝ բայց նման պատկերներն անոր տեղն առնելով, եւ ասով ժամանակը, անձինքն ու պարագաներն իրարու խառնելով ու օտար բան մը դուրս հանելով: Ամենուն վրայ հոս կարելի եղանակաւ լուսաւորութիւն տալէն ետքը՝ հիմայ դառնանք Եղեսպոս քաղաքին մեծ Գուռը, ուր որ Գ. գլխին մէջ Ս. Գաստառակը հրապարակական յարգութեան մէջ թողուցած էինք:

Ս. Գաստառակը Եդեսիա Կաթիկոսի Գրանը վրայ շատ դարեր ծածկուած էր ճեայ : — Նոյն Կաթիկոսի Կեղ ճը Նշանոյն Բանոյն Նենէն պաշարուած արեւն արեւելքով ճը էր յայտնուի : — Անէ Եդեսիա ճը յարգութեան ճը Կոն էր պահուի :

ԱՐԳԱՐ Թագաւորը իր դարձէն Ետքը գրեթէ Երեք տարի միայն ապրեցաւ, ու աս միջոցիս մէջ Քրիստոսի սուրբ Հաւատքը պայծառացաւ ինչպէս որ պէտք էր նէ : Բայց Երբոր իրեն մահուանէն Ետքը իր Անանուն որդին Թագաւորական դահն Ելաւ, ամէն բան տակն ու վրայ Եղաւ. ինչ բարիք որ կարգադրած էր Աբգարը՝ ջնջուեցաւ Եղծաւ չմնաց : Նոր Թագաւորն առջի Հին կռապաշտութիւնը նորոգեց, ինչպէս Խորենացին կը պատմէ <sup>1</sup> : Ուստի մտածեց ալ որ Յիսուսին սուրբ պատկերը, որն որ քաղքին մեծ դրանը վրայ ժողովրդենէ յարգութիւն ընդունելու համար կանգնուած էր, վար առնուի Եւ անոր տեղը Հին կռապաշտական արձանը դրուի :

Սակայն Թագաւորին աս մտածմունքը՝ Թագէոս առաքելոյն գացած ատեն իրեն տեղ նոյն քաղքին համար Եպիսկոպոս ձեռնադրած Ադդէ սուրբ հայրապետին Աստուծոյ կողմանէ յայտնութեամբ մը ծանուցուեցաւ : Ասիկա գիշերուան մէջ խել մը հաւատացեալներով մէկտեղ Ելաւ քաղքին դուռը գնաց. կամարաձեւ պատուհանին կամ ծակին առջին, ուր որ Ս. Գաստառակը կը կենար, կանթեղ մը վառեց, կղմինտրներով ծակին առջին պատ մը հիւսեց, ծեփեց Եւ որչափ որ կարելի էր՝ ծակին տեղն անյայտ ըրաւ ու գնաց : Ս. Գաստառակն աս կերպով կռապաշտ Թագաւորին աչուրներէն ծածկուելով, անոր հեթանոսական մտածմունքը խափանուեցաւ : Այսպէս ծածկուած մնաց Ս. Գաստառակը ամբողջ Հինգ դարու չափ, մինչուկ որ վերը յիշուած Պարսից Խոսրով Թագաւորը 539ին Եդեսիա պաշարեց, յետագայ

<sup>1</sup> Խոր. Պատմ. Հայ. Գիրք Բ. ԳԼ. ԼԳ :

պատճառին համար: Նոյն թագաւորին ականջն այնպէս  
հասած էր որ քաղքին բնակիչները սովորութիւն ունե-  
ցած ըլլան միշտ պարծենալու թէ քաղաքնին երբեք ան-  
հաւատ թշնամուց իշխանութեան տակ չիյնայ պիտի .  
որովհետեւ անոնք հին աւանդութիւն մ'ունին եղեր,  
իրբեւ թէ Քրիստոս Աբգարին գրած թղթին մէջ խոստա-  
ցած ըլլայ որ Ա. + ա. լ. + ս. երբեք չիւնան իշխանի + յաղթահարել:

Մենք՝ Յիսուսի Աբգարին գրած թղթին հարազատ  
օրինակին մէջ, ինչպէս որ մեզի Խորենացին ու Եւսեբիոս  
կ'աւանդեն, աս խոստմունքս չենք գտներ. բայց Աոստան-  
դին Պորփիրոսթենին յառաջ բերածին մէջ կը գտնուի,  
որն որ նոյն նամակին վերջը՝ ինչպէս գրքուկիս ետեւը  
պիտ'որ դնենք՝ աս խօսքերս կ'աւելցրնէ. Ե. + ա. լ. + ս. լ. ի  
+ ա. լ. + ս. լ. ի + ս. լ. + ս. լ. ի (իմ խրկելու Առաքեալս),  
որպէս զի երբեք իշխանները չանկէ չիւնան յաղթահարել:  
Բայց գուցէ նաեւ Ս. Եփրեմին՝ իր Արարի գրքին մէջ  
ըսած խօսքերը թէ «Օրհնեալ քաղաք Եդեսիա, դու  
մայր ես իմաստութեան, որ Արդւոյն կենդանի բերնէն իր  
աշակերտին ձեռքովն օրհնութիւն ընդունեցար, աս օր-  
հնութիւնս քովդ մնայ, մինչուկ որ Սուրբն երեւնայ»<sup>1</sup>  
Եդեսացւոց այսպէս հաւտալուն ու Պորփիրոսթենին ալ  
նոյն յաւելուածն ընելուն՝ պատճառ եղած ըլլայ:

Ինչ որ է նէ, աս համբաւս պատճառ եղաւ, ինչ-  
պէս ըսինք, կուսպաշտ թագաւորին որ զԵդեսիա պաշա-  
րեց: Թշնամին ամէն տեսակ մեքենաները սկսաւ բանե-  
ցրնել, որպէս զի քաղքին պարիսպները կարենայ խախ-  
տել ու կործանել: Եդեսացիները մեծ նեղութեան ու  
գրեթէ յուսահատութեան մէջ ինկան, եւ իրենց տագ-  
նապէն, վախէն ու առջեւնին կեցած ահագին վտան-  
գէն ազատելու համար՝ բոլոր սրտիւ միակ օգնականին  
գիմեցին, որ է Աստուած: Մէյ մ'ալ նոյն գիշերը քաղ-  
քին Եւլալիոս եպիսկոպոսին՝ բարձր հասակաւ շքեղ ու  
փառաւոր հագուած տիկին մը երեւցաւ ու ըսաւ. «Չեր

1 Ս. Եփր. Հատ. Բ. էջ 399. եւ աւելի ընդարձակ՝ էջ 235:

քաղքին դրան վրայ պատ հիւսուած կամարաձեւ պատու-  
հանի մը մէջ Փրկչին Ս. Գաստառակը կայ, փնտուեցէք  
գտէք, որ բաղձացած աղատութիւննիդ գտնէք» :

Ի ուրախութեամբ գնաց Եպիսկոպոսը տեսնելու  
համար թէ ան ըսուած անգին գանձը՝ Յիսուսի անձե-  
ռագործ պատկերն ո՛ւր է, եւ գտաւ ամբողջ ու անա-  
րատ, ու Ազդէ հայրապետին գրեթէ հինգ հարիւր տարի  
յառաջ վառած կանթեղն ալ դեռ կը վառէր պատու-  
հանին մէջ. բայց զարմանքն աւելի մեծցաւ, երբոր տե-  
սաւ թէ պատկերը չփնասելու համար անոր ու կանթեղին  
մէջտեղը դրուած կղմինտրին վրայ Յիսուսի պատկերին  
գաղափարը կատարելապէս տպաւորուած էր<sup>1</sup> :

Սուրբ երկիւղիւ ու յարգութեամբ վար առաւ Ե-  
պիսկոպոսը զՍ. Գաստառակը, շնորհակալ եղաւ Աստու-

**1** Խորենացին Հռիփսիմեանց ճանապարհորդութեան պատմութեա-  
նը մէջ կ'ըսէ թէ նոյն կուսանք Եգեսիա քաղաքը հանդիպե-  
լով՝ Ս. Գաստառակին յարգութիւն ըրին. «Ե- դարձեալ անդի  
(յերուսաղէմ) ինդր-նիւմբ էին յերեմիւս քաղաք, եւ երկրպա-  
տեալ Փրկչիան պարիտին, եւ Լցան սարխոս-նիւմբ, համարեցան  
դիտել զԲանն Վարդին եղեալ» : Արդ ասոնց հոն գալը շուրջ Քրիս-  
տոսի 300երորդ թուականին կ'իյնայ, որ ատենը որ՝ մեր վերը  
պատմածին նայելով, Ս. Գաստառակը դեռ յայտնուած պիտ'որ  
չըլար : Ուստի խօսքերնուս մէջ պատմական հակառակութիւն  
մը երեւան գալուն՝ հարկ է որ հոս երկու կողմն իրարու հետ  
միարանելու համար քանի մը Խորհրդածութիւն աւելցը-  
նենք : Արդ երկու կողմանք ալ՝ թէ Խորենացին եւ թէ 539ին  
յայտնուեցաւ ըսողները, որոնք ժամանակակից պատմիչներ  
են (ինչպէս Եւագրիոս ու Պրոկոպիոս), ստոյգ կը պատմեն.  
միայն թէ պէտք է որ զՍ. Գաստառակն երկու անգամ  
յայտնուած դնենք. մէյ մը Անանուսին ատենը (շուրջ 35ին)  
պիտ'որ ծածկուած ըլլայ ու յետոյ գտնուած, այնպէս որ  
Հռիփսիմեանց ժամանակը (300ին), ու նաեւ Խորենացւոյն  
ալ Եգեսիա քաղաքը գտնուած ատեն (430—440) պատկերս  
նոյն տեղւոյն քրիստոնեաներուն ծանօթ եղած պիտ'որ ըլլայ :  
Իսկ յետոյ՝ կամ Բարբարոսներու յարձակման պատճառաւ,  
եւ կամ ուրիշ վտանգաւոր առթի մը մէջ, Ս. Գաստառակն  
երկրորդ անգամ ծածկուած պիտ'որ ըլլայ, որն որ Խոսրովէն  
հրամայուած պաշարման ատենը գտնուեցաւ : Բայց պատմիչ-  
ները Ս. Գաստառակին երկու անգամ ծածկուելն ու գտնուել-  
ը իրարու հետ շփոթելով, երկուքէն մէկ շինած են : Աս' երկու

ծոյ, ու նոյնը ձեռքը բռնելով՝ պարսպին վրայէն ան տեղը գնաց, ուր որ թշնամիները պատուարին տակի կողմը արդէն փորած ու ական պատրաստած էին ու կրակ տային պիտ'որ: Հոս կանթեղին եղէն՝ կրակ տալու համար պարաստուած նիւթին վրայ վերէն ի վար քիչ մը կաթեցուց: Յանկարծ սաստիկ բոց մ'ելլելով՝ տարածուեցաւ ու ականը պատրաստելու համար հոն կեցողները տոչորեց: Յետոյ Եպիսկոպոսը նոյն Ս. Գաստառակով պարսպին ան կողմը գնաց, ուստի մեծ խարոյկը կ'երեւար, զորն որ թշնամին կը վառէր, որպէս զի մեքենաներով քաղքին մէջ կրակ նետէ ու այրէ: Մէյ մ'ալ Ս. Գաստառակին կողմանէ սաստիկ հով մը փրթաւ, բոցերն առաւ խարոյկին քովն եղողներուն վրայ դարձուց ու այրեց: Այսպէս ամօթով յաղթուելէն ետքը՝ վերջապէս պաշարումը վերցուցին Պարսիկներն ու մեծամեծ կորուստներով քաղքէն հեռացան դացին: Իբրեւ յաւելուած դրուելու Պորսիւրոժենին ճառին մէջ աս պարագաներն ալ ընդարձակագոյն ու վկաներով պիտի տեսնենք: Իսկ Եւագրիոս՝ իր Եկեղեցական պատմութեան Գ. գլխին մէջ աս բաներս յիշատակելով՝ ուրիշ պարագաներ ալ կ'աւելցրնէ, զորոնք զանց կ'առնենք:

1) Գաստառակն այսպէս յայտնուելէն ետքը՝ քանի մը դար ալ Եգեսիա մնաց, ամէն կողմերէն մեծ ջերմեռանդութեամբ անոր ուխտի կ'երթային, ու իրեն սքանչելագործութեան համբաւը հեռաւոր տեղեր տարածեցաւ:

կողման պատմութիւնը միաբանելու կերպս, պատմական ուսմանց տեղեակներուն առջին օտար ու չհաւտալու բան չ'երեւար. վասն զի շատ այսպիսի պատմական դիպուածներէն գիտենք որ աս տեսակ շիտթութիւններ շատ անգամ եղած են ու միշտ ալ կ'ըլլան, եւ աս՝ պատմութեան էական մասին վաւերականութեան վնաս մը չիտար, մանաւանդ երբոր երկու կողման ալ՝ իրարու դէմ երեւցող պատմիչները՝ արժանահաւատ ու ականատես վկաներ են, ինչպէս աս դէպքիս մէջ:

Ս. Գասարասանի լեզուսն ասողին Աստուծոյն հարմար ինչ փոխադրութի : — Երեսուցիք շատ արեւասի լեզուսն ինչն ինչն է լինելն ու ինչ արարութի : — Աստուծոյն հարմար լեզուսն ինչն ինչն է լինելն ու ինչ արարութի : — Աստուծոյն հարմար լեզուսն ինչն ինչն է լինելն ու ինչ արարութի : — Աստուծոյն հարմար լեզուսն ինչն ինչն է լինելն ու ինչ արարութի : — Աստուծոյն հարմար լեզուսն ինչն ինչն է լինելն ու ինչ արարութի : — Աստուծոյն հարմար լեզուսն ինչն ինչն է լինելն ու ինչ արարութի :

ԱՅՆԱՓ անհամար հրաշքներու եւ մասնաւոր բարիքներու համբաւը, որոնք աս սուրբ պատկերին ջերմեռանդներուն կ'ըլլային, ինչպէս ըսինք՝ ամէն հեռաւոր կողմերը տարածուեցան ու Արեւելքի քրիստոնեաներէն անթիւ բազմութեամբ ուխտաւորներ Եդեսիա քաղաքը կու գային : Ան ատենուան Եդեսիայի մահմէտական իշխաններն ալ աս բանիս արգելք մը չըլլալէն զատ՝ հաճութեամբ թողտուութիւն կը շնորհէին : Բնականաբար աս սքանչելեաց լուրերը Աստուծոյն պաշտօնի ալ հասան ու կայսեր պատմուեցան, որն որ նոյն ժամանակները Պորփիրոսէնն էր, եւ Պոմպոս Աւարակեանը, որն որ Ալեքսանդրոս ալ կը կոչուէր ու հայազգի էր, իրեն գահակից ունէր : Ասիկայ նոյն Աստուծոյն կայսեր միանգամայն աներն ալ էր : Աս Պոմպոսս՝ որն որ ինք զինքն իր փեսան Աստուծոյնէն անկախ իշխանի մը տեղ դնելով՝ տէրութեան կամ թէ ըսեմ կառավարութեան գլուխ եղած էր, բաղձաց որ անձեռագործ փրկչական պատկերը Եդեսիայէն իր արքունիքը բերուի : Եւ այսպէս ալ եղաւ իր իշխանութեան վերջնութիւն տարին, այսինքն 944ին, եւ աս փոխադրութեան պատմութիւնը գրեց նոյն իսկ ան ատենուան ժառանգական բուն կայսրը Աստուծոյն Պորփիրոսէն, ամէն պարագաներովը, որոնց մեծ մասին ինք ականատես վկայ էր, թող ուրիշ պատմիչներն ալ, որոնք աս գիպուածս նոյն ատեն արձանագրեցին, եւ որոնց անունն աս գրքուկիս մէջ տեղ տեղ նշանակած ենք :

Արդ Պոմպոս Ալեքսանդրոս սաստիկ բաղձալով որ Ս. Գասարասանի Փրկչէն Աբգար թագաւորին գրուած նա-

մակով մէկտեղ՝ իրեն արքունիքը բերուի, ամէն կերպով ջանաց ու շատ հեղ դեսպաններ խաւրեց Եդեսացիներուն որ աս սուրբ գանձերս իրեն խրկեն: Մասնաւոր մարդ մ'ալ Եդեսիա քաղքին մահմէտական կառավարը Սիւլէյման ոստիկանին խաւրեց, ու խոստացաւ որ Յունաց անոնցմէ գերի առած 200 Սարակինոսներն ետ կը դարձնէ ու 12,000 քանքար ալ ստակ կու տայ, թէ որ Եդեսացիները համոզելու ըլլայ իրեն կամքը կատարելու: Սակայն Եդեսիա քաղքին հաւատացեալներն ամենեւին միտք չունէին կայսեր խնդիրն ի գլուխ տանելու եւ կ'ըսէին այսպէս. Մենք հաստատութեամբ մտքերնիս դրած ենք որ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ մեր Աբգար թագաւորին շնորհած սիրոյ գրաւականը, մեր քաղքին պահպանողն ու խնամողը՝ երբեք ուրիշի մը ձեռք չյանձնենք, թէ եւ աշխարհքիս գանձը տալու ըլլայ: Երբ որ կայսրն աս ընդդիմութիւնները լսեց, հրաման տուաւ որ ծանր զօրքով Եդեսիա քաղքին վրայ քալեն ու պաշարեն: Ասկէ նեղուելով քաղքին տաճիկ ոստիկանը՝ կայսեր միջնորդ խաւրեց ու քաղքին պաշարումը վերցընել տուաւ աս թէութեամբ որ անոր խնդիրքը ստուգիւ կը կատարէ, թէ որ ան ալ խոստացած բաներէն զատ՝ նաեւ իր աս աղաչանքն ալ ընդունելու եւ գրով հաստատելու ըլլայ որ ասկէ ետքը մէյ մ'ալ երբեք իր Եդեսիա կամ Ռուհա, Խառան, Սարուչ ու Սամոսատա քաղաքներուն վրայ թշնամութեամբ չիյարձակիր ու անոնց բնակիչները չիխուովեր:

Կայսրն աս բաներս բովանդակ յանձն առաւ եւ հրամայեց որ սկսուած պաշարումը վերցընեն. շուտով մ'ալ Սամոսատա քաղքին Աբրահամ Եպիսկոպոսը՝ որն որ նոյն ժամանակը Աոստանդնուպոլիս կը գտնուէր, ճամբայ հանեց որ Եդեսիա երթայ, իր բաղձացած սուրբ գանձը բերէ: Մէկտեղ խաւրեց միանգամայն խոստացած ստրկի քանքարներն ու գերիները: Եպիսկոպոսը հոն հասածին պէս՝ բովանդակ Եդեսիա քաղաքը խռովեցաւ, ու

կայսեր հրամանին սաստիկ դէմ կեցաւ: Բայց քաղքին տաճիկ ոստիկանն ամէն ճիգն ի գործ դրաւ, ու կէս մը սպառնալիքներով, կէս մ'ալ անուշ խօսքերով ու խոստմունքներով ժողովրդեան սիրտն առաւ. վերջապէս Եպիսկոպոսին ձեռքը զՍ. Գաստառակը քրիստոսին նամակովը մէկտեղ յանձնել տուաւ, եւ այսպէս ճամբայ ելլելու պատրաստութիւն տեսնուեցաւ:

Բայց երբոր Եպիսկոպոսը հանդիսութեամբ քաղքէն ելլելու վրայ էր, յանկարծ տեղատարափ անձրեւ մը սկսաւ, եւ որոտումն ու փայլատակումը չորս կողմը կը թնդացրնէր: Ասիկայ պատճառ եղաւ որ Եղեսացիք նորէն խռովութիւն հանեցին ու դարձեալ ընդդիմանալու սկսան: Ամէնքը մէկէն կ'աղաղակէին այսպէս. Աս յանկարծ փրթած մրրիկը նշան է որ Աստուած ալ աս բանիս դէմ է. Աստուծոյ հաճոյ բան չէ՝ որ մենք մեր ամենապատուական հոգեւոր գանձն օտարի յանձնենք, ուրիշ քաղաք խաւրենք: Ան ատեն տաճիկ ոստիկանին հարկ եղաւ որ ամենայն խստութեամբ մէջ մտնէ ու բանն որոշէ որ քաղաքացիները թէ որ կամաւ չէ նէ, ակամայ ու բռնութեամբ պէտք է որ զիջանին ու Եպիսկոպոսն առանց յապաղելու ճամբայ ելլէ: Եղեսացի հաւատացեալներէն շատերն աս սրբազան գանձին ետեւէն եկան մինչուկ Եփրատ գետը, իրենց վերջին յարգութիւնն անոր ցուցրնելու եւ իբրեւ թէ իրենց հրաժարական ողջոյնը տալու համար:

Շու հաւատարիմ Եղեսացիներուն սիրտը նորէն ելաւ, սկսան լալ ու դառնացեալ սրտիւ կայսեր խրկած մարդիկներուն երեսն աղաղակել թէ “Եթէ որ յայտնի նշան մը չենք տեսներ համոզուելու չափ որ Աստուած աս սրբազան գանձերուն մեզմէ ուրիշ տեղ փոխադրուիլը կ'ուզէ եղեր, բոլոր աշխարհք մէկտեղ գալու ըլլայ, մենք չենք թողուր”։ Ուզած նշաննին ալ իրօք տրուեցաւ. վասն զի հազիւ թէ երկու եպիսկոպոսունք, Սամոսատացին ու Եղեսացին, որոնք որ Ս. Գաստառակին ու



Թղթին սնտուկը բռնած էին, ոտուրնին նաւը դրին, ու  
 Եղեսիայ եկեղեցւոյն աւագերէցը քանի մը հոգւով մէկ-  
 տեղ ներս մտան, մէկէն ի մէկ նաւն ինքիրեն բացուեցաւ  
 առանց մէկը զանի հրելու քաշելու, եւ շիտակ անցաւ  
 գնաց գետին մէկալ եզերքը կեցաւ: Երբոր բարեպաշտ  
 Եղեսացիներն աս տեսան, ապշեցան մնացին ու յուսա-  
 հատած լռեցին, եւ ոչ մէկը կրցաւ սրտին ցաւէն ու  
 տրտմութենէն ալ բերանը բանալ, որովհետեւ Աստուծոյ  
 կամքը յայտնի տեսան: Այսպէս յաջողութեամբ շարու-  
 նակեցին ճամբանին սրբազան գանձը տանողները, որն որ  
 ամէն տեղ ուր որ կը հասնէր, մեծամեծ հրաշքներ գոր-  
 ծեց. կոյրերը, կաղերն եւ ուրիշ հիւանդութիւն ունե-  
 ցողները Ս. Գաստառակին զօրութենէն կը բժշկուէին:

Արբոր կայսերական քաղաքը Աոստանդնուպոլիս մօ-  
 տիկցան նէ, զսուրբ գանձը Ս. Աստուածածնայ նուիրուած  
 եկեղեցւոյ մը մէջ դրին եւ սպասեցին մինչուկ որ կայ-  
 սրը Ս. Գաստառակը դիմաւորելու համար իր մեծամեծ-  
 ները խաւրեց. աս միջոցիս մէջ սուրբ պատկերը շատ  
 դիւահարներ ու հիւանդներ բժշկեց: Պալատականներն  
 եկան հասան, որոնց մէջն էին նոյն իսկ Ռոմանոս կայսեր  
 որդիքն ու Թէոփիլակտոս Պատրիարքը, որն որ նոյնպէս  
 կայսեր մէկ որդին էր: Օգոստոսի տասնուհինգին, Ս. Աս-  
 տուածածնայ վերափոխման օրը, առին բերին նուիրական  
 սնտուկը՝ Աոստանդնուպոլիսի մայրաքաղաքէն դուրս գլտ-  
 նուող Ս. Տիրամօր եկեղեցին, ուր որ հաւատացեալ ժո-  
 ղովուրդն ամէն դիաց ժողված՝ անհամբերութեամբ Ս.  
 գանձին գալստեան կը սպասէր: Զերմեռանդ ժողովոր-  
 դեան սիրտը հաճելու համար նոյն օրը Ս. Գաստառա-  
 կը յիշեալ եկեղեցւոյն մէջ թողուցին, որպէս զի ամենէն  
 յարգութիւն ընդունի:

Արկրորդ օրը Թէոփիլակտոս Պատրիարքն ու կայսեր  
 մէկալ որդիքը Ստեփանոս ու Աոստանդին՝ նուիրական  
 սնտուկն ուսերնուն վրայ առած՝ քաղաք բերելու ժա-  
 մանակնին՝ բոլոր արքունիքն ու եկեղեցականները ձե-

առւրնին ջահեր ու կերտներ բռնած՝ փառաւոր հանդի-  
սութեամբ թափոր մը կազմելով՝ անոնց միացան, ու Ուի-  
րուսը ըստած կողմէն քաղաքը մտնելով՝ անհամար բազ-  
մութիւնը չորս կողմերնին առած Ս. Սուրբիա (Անստեղծ  
Իմաստութեան) հռչակաւոր տաճարն եկան մտան: Քիչ  
մը ատեն խորանին վրայ դնելէն ետքը՝ որպէս զի ժողո-  
վուրդը համբոյր մատուցանէ անոր, առին կայսերական  
պալատը տարին ու կայսերական գահին վրայ դրին, որ-  
պէս զի Քրիստոս Փրկիչը նոյն գահն օրհնէ ու իր աս-  
տուածային շնորհաց առատութիւնը նոյն գահն ելլող-  
ներուն վրայ հեղու: Ասկէ ալ ետքը առին նոյն կայսերա-  
կան պալատին մատուռը տարին, որն որ Ս. Աստուածա-  
ծնայ նուիրուած էր ու հոն պահուեցաւ:

Այրբոր ըսածնուս պէս Ս. Գաստառակը փառաւոր  
թափորով քաղքին մէջէն կը տարուէր, անդամալոյծ  
մարդ մը հեռուանց նշմարեց, եւ ուզեց որ քիչ մ'ալ  
աւելի մտանց տեսնէ, ու ջանաց ինչչափ կրցաւ նէ  
ժողովրդի, մէյ մ'ալ ինչ կը նայիս, Ս. Գաստա-  
ռակին զօրութիւնը վրան հասաւ, ծնկուրները հաստա-  
տուեցան, ոտք ելաւ ու սկսաւ վազվազել: Սրտին ու-  
րախութենէն լացք եկաւ խեղճ մարդուն վրայ, բիւր  
շնորհակալութեամբ վազեց եկաւ նուիրական սնտուկին  
քով ու հազար համբոյր տուաւ անոր, այնպէս որ տես-  
նողները բոլոր լացուց: Հաւատացեալ ժողովրդեան փա-  
ռաքանութեան ձայնն աս հրաշքիս վրայ կրկնապատ-  
կուեցաւ ու երգերնուն հնչումէն օդը կը թնդար:

Արչափ որ պատմելու ըլլամ, Աոստանդին Պորփիւ-  
րոժենին չափ խօսքիս ազդեցութիւն չեմ կրնար տալ,  
որն որ աս ըսած բաներս իր աչքովը տեսաւ, եւ այնպէս  
ալ կենդանի նկարագրով աւանդած է, ինչպէս իւր տե-  
ղը պիտի տեսնենք:

Աս փոխադրութեան պատմութիւնը Ֆլէօրի ալ կը  
յիշէ իր պատմութեան մէջ: Ասիկայ Ս. Գաստառակին  
սկզբան եւ ուրիշ պարագայից վրայ Աոստանդին Պոր-

փիւրոժենին համաձայն պատմելէն ետքը՝ աս խօսքերս  
 ալ կ'աւելցնէ. «Արեւելեան պատմութիւնն ալ աս փոխա-  
 գրութիւնս այսպէս կը պատմէ ու կ'ըսէ թէ Հռոմայե-  
 ցիներուն առաջարկելովը Ռուհա (այսպէս կ'անուանեն  
 անոնք զԷդեսիան) քաղքին բնակիչներն ասոր վրայ Մուս-  
 տաֆա Խալիֆին գրեցին, որն որ նոյն ատենները կ'իշխէր,  
 եւ անիկա Եպարքոսին (Վէշեբէն) հրամայեց որ ամէն ատե-  
 նակայներն (գորշեբէն) ու նախարարները խորհրդի կանչեն,  
 եւ ասոր վրայ որոշում մ'ընեն: Ամանք ըսին թէ Մահ-  
 մէտականներուն ամօթ բան է նոյն պատկերը Հռոմայե-  
 ցոց տալը. սակայն ուրիշներն ասոր հակառակ պնդե-  
 ցին թէ այսպիսի գնով մը մահմետական գերիները փրկա-  
 նաւորելը գովելի բան մըն է: Եւ աս խորհուրդս յաղ-  
 թեց,<sup>1</sup>:

Արովհետեւ աս փոխագրութեան հանգէսը ինչպէս  
 վերը ըսինք՝ Ս. Աստուածածնայ վերափոխման երկրորդ  
 օրն աւարտեցաւ, անոր համար սահմանուեցաւ որ ամէն  
 տարի նոյն օրը, այս ինքն՝ Օգոստոսի 16ին տօն մը կատա-  
 րուի նոյն փոխագրութեան յիշատակին համար, ինչպէս  
 Յունաց ու Հայոց Յայսմաւուրքներուն մէջ Օգոստոսի  
 16ին կը գտնուի: Աւստի եւ նոյն Ֆլէօրին կ'ըսէ. «Յու-  
 նաց Եկեղեցին աս փոխագրութեան տօնը նոյն օրը՝  
 Օգոստոսի 16ին՝ կը տօնախմբէ,<sup>2</sup>:

Վմանապէս Բարոնիոս ալ՝ Ս. Գաստառակին փո-  
 խագրութեան պատմութիւնը յառաջ բերելէն ետքը՝  
 այսպէս կ'ըսէ. Աւստի նոյն օրը, Օգոստոսին 16ին, որ  
 օրուան մէջ ատ սրբազան պատկերը Աոստանդնուպոլիս  
 բերուեցաւ, անկէ ետեւ յաւերժական յիշատակի օր  
 սահմանուեցաւ, եւ ամէն տարի մեծ հանդիսութեամբ կը  
 տօնուի: Վասն զի իրենց (Յունաց) Յայսմաւուրքին մէջ  
 նոյն վերը յիշուած օրը աս վերնագիրն ունի. Տէստն Ռեոյ  
 Է- Փրկչին Յիսուսի Քրիստոսի անյեւթործ պատկերէն յիշա-

1 Ֆլէօ. Եկեղ. Պատմ. Գիրք ԾԵ. ԳԼ. 30:  
 2 Անդ:

արևելք, որն որ Եդեսիա քաղաքէն առ Տիր՝ Ասորո-ժո՛ղ պաշտպանուած ընդ-որակն ճայրատաղաքս (Ասորո-ժո՛ղ) բերուեցաւ, 1:

Աս փոխադրութեանս պատմութիւնը կը յիշատակէ նաեւ Ամրոս Նեստորականը, ժամանակակից վկայի մը պատմութենէն քաղելով, ու վրան աս խօսքերս կ'աւելցընէ. «Նոյն Հռոմայեցի կայսրը յիշեալ նամակները (այս ինքն՝ Աբգարինը առ Քրիստոս, ու Քրիստոսինը առ Աբգար, որոնք Ս. Գաստառակին հետ հոն տարուած էին) հոն հասնելուն պէս՝ Ասորերէնէն ճշգիւ ու հաւատարմութեամբ յունարէն թարգմանել տուաւ. իսկ մեզի ալ արարելէն թարգմանեց նոյն թարգմանիչը, որն որ զյունարէնն ըրած էր, մի եւ նոյն ճշգութեամբ ու հաւատարմութեամբ, 2:

Աս հրաշագործ պատկերս ու ամենասուրբ Փրկչին նամակը երկայն ատեն Աոստանդնուպոլիս պահուեցան ու շատ սքանչելիքներ գործեցին: Յետոյ նամակը միայն՝ դարձեալ Եդեսիա քաղաքը բերուեցաւ, ու նոյն տեղը պահուեցաւ, ուր որ յառաջ կը կենար: Սակայն երբոր 1030ին Ռոմանոս Գ.ին կայսրութեան ժամանակը՝ Յոյնք Եդեսիա քաղաքը Տաճկաց ձեռքէն առին նէ, զնամակն անկից դարձեալ Աոստանդնուպոլիս բերին, ինչպէս Աեդրենոս, Չոնարաս ու Յովհաննէս Սկիւզիցա պատմիչները կ'աւանդեն: «Նաեւ Գէորգ Մանիակէս Պրոթոսպատարիոս, Եփրատէս գետին քովն եղող քաղաքներուն մարդպանը՝ Եդեսիա քաղաքն առաւ, ու Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի իւր ձեռօքը գրած նամակը հոն գտնելով՝ կայսեր խրկեց, 3 կ'ըսէ Չոնարաս: Իսկ Աեդրենոս. «Նոյն տարին (այս ինքն 1030ին) Գրիգոր Պրոթոսպատարիոս Մանիակէս, Գուգեղեաց Մանիակեաց որդին, Եփրատին կողմերն եղող քաղաքներուն ոստիկանը, Սամոսատ քաղաքը գտնուելով՝ Միջագետաց Եդեսիա քաղաքին վրայ

1 Բարոն . ամ 944:  
 2 Ամրոս՝ Յովս . Սիմ . Աստեմանիին գործքերուն մէջ, Հատ . Բ . էջ 393:  
 3 Չոնար . էջ 165:

յարձակեցաւ . . . ու . . . բովանդակ քաղքին տիպեց, եւ  
 քրիստոսի իր ձեռօքը Աբդարու գրած թուղթը գտնե-  
 լով՝ Բիւզանդացոց կայսեր խաւրեց, <sup>1</sup> : Եօթը տարի ետ-  
 քը, ուստի 1037 թուականին կոստանդնուպոլիս մեծ ե-  
 րաշտութիւն պատահեցաւ, այնպէս որ վեց ամիս միօրի-  
 նակ կաթիլ մը անձրեւ չեկաւ : Ասոր համար նոյն կայսե-  
 րական քաղաքը հանդիսական աղօթքներ ապսպրուեցան,  
 ու Միքայէլ Պատիղագոն կայսեր որդիքն եւ ուրիշ մեծա-  
 մեծները Պատրիարքն ալ մէկտեղ՝ Ս. Գաստառակը, նա-  
 մակն ու Փրկչին սուրբ որրոցը ուսերնուն վրայ առած՝  
 փառաւոր թափորով քաղքին մէջ պտըտցուցին, որպէս  
 զի Աստուած յողորմութիւն շարժելով իրենց անձրեւ  
 տայ, ինչպէս վերոյիշեալ մատենագիրները կը պատմեն :  
 Բայց փոխանակ անձրեւի զորն որ կը խնդրէին, սաստիկ  
 կարկուտ եկաւ, որ ծառերը պառկըցուց ու տներու  
 վրայի կղմինտրները կոտրտեց, ինչու որ Աստուած նոյն  
 մայրաքաղքին բնակչացը մեղքերուն համար խիստ բար-  
 կացած էր : Անկէ ալ ետքը՝ շուրջ 1325 թուականին,  
 երբոր Անդրոնիկոս Բ.ին ատենը Յունաց կայսրութիւնը  
 մեծ խռովութեան մէջ ինկած էր, ան սնտուկը՝ որուն մէջ  
 որ Փրկչին նամակը կը պահուէր, ուրիշ շատ անգին բա-  
 ներու հետ մէկտեղ գողցուեցան, ինչպէս Նիկեոսա կը  
 պատմէ : «Անդրոնիկոս աս կերպով թագաւորութենէն  
 իյնալով, Իսահակ պալատը մտաւ . . . : Իսկ ժողովրդեան  
 մեծ մասը պալատը բաց գտնելով ու դէմ դնող քաջ  
 մարդ մ'ալ դիմացնին չելելով, չէ թէ մինակ ան դրամ-  
 ները գողցան, որոնք որ գանձատունը կը պահուէին (եւ  
 աս պահուածներս էին չգործուած մետաղներէն զատ՝  
 12 կենդինար ոսկի, 30 կենդ. արծաթ, 200 կենդ.  
 պղինձ), այլ նաեւ ինչ որ ձեռուրնին անցաւ նէ ու ինչ  
 ալ որ շատերը մէկտեղ կրցան նէ վերցընել, առին  
 գացին : Նաեւ զինատան մէջէն հազարաւոր զէնքեր փախ-  
 ցուցին : Մանաւանդ թէ գողութիւնը մինչուկ կայսերա-

<sup>1</sup> Կեդրեն, էջ 731 :

կան մատուռներու մէջ թափանցեց . սուրբ պատկերներու զարդերը կողոպտուեցան , նաեւ ան նուիրական անօթը գողցուեցաւ , որուն մէջ որ , ինչպէս մեր նախնեացն աւանդութենէն գիտենք , Քրիստոսին իւր ձեռօքն Աբգարին գրած նամակը կը պահուէր»<sup>1</sup> :

Իսոյց Ս . Գաստառակը տակաւին հոն մնաց մինչուկ 1360 կամ 1363 թուականը : Իսկ յետոյ՝ ինչպէս յաջորդ գլխին մէջ պիտ'որ տեսնուի , անկից ճենովա քաղաքը տարուեցաւ :

Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Խ

Ս . Գաստառակը Յունաց կայսերէն ճենովացի Լեոնարայոյ շքապետին պարգեւէն կը արդիւնէ , որն որ զանիկայ իւր Կալուստը ճենովա կը արանի , որ որ թնչուի մա օրոնան օրս Ս . Բարթողիմէոսի եկեղեցոյն մէջ յարգութեամբ կը պահուի :

Ս . ԳԱՍՏԱՌԱԿԻՆ վրայ տալու հետեւեալ տեղեկութիւններս իտալերէն գրուածքէ մը քաղած եմ , որուն վերնագիրն է . Տեառն Վերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Թաշկենակ ըստած Կրաշաֆորժ Պատիւերին վրայ պատմական Կենսութեան Գրքի : Աս գործքիս հեղինակը կամ մատենագիրն է՝ Հ . Պօղոս Բիքքոնի , Բառնաբեան կարգին կրօնաւորաց ընդհանրական Մեծաւորը , որոնց ձեռքն է հիմա ճենովայի վերոյիշեալ Ս . Բարթողիմէոսի եկեղեցին , որն որ յառաջագոյն մինչուկ 1650 թուականը՝ Ս . Բարսղի կարգին Հայ կրօնաւորաց ձեռքն էր<sup>2</sup> : Արդ նոյն գրուածքին մէջ բանը հետեւեալ կարգաւ կը պատմուի :

Արբոր Անդրոնիկոս Գ . Յունաց կայսրը մեռաւ նէ , իրեն որդին Յովհաննէս Բալէօլոկ՝ 1341ին անոր տեղն անցաւ . բայց դեռ չափահաս չըլլալուն՝ Յովհաննէս Աանդակուղէն անունով մէկը տէրութեան գործքերուն կա-

<sup>1</sup> Նիկեաս , էջ 40 :

<sup>2</sup> Հայոց առ կրօնը յետոյ պատճառաւ մը ջնջուեցաւ ու վերցաւ բոլորովին :

ուսմարութեան համար անոր քով յանձանձիչ դրուեցաւ : Յետոյ ասիկայ միանգամայն նաեւ Քալէօղոկ կայսեր աներն եղաւ :

Ի այց ինչպէս որ ատեն մը Ռոմանոս Առաջին Աստանդին Պորփիրոսթենին ըրած էր, ինչպէս վերը ըսինք, այսպէս ալ աս Աանդակուզէնը Քալէօղոկ երիտասարդ կայսեր գէմ ապստամբեցաւ ու կ'ուզէր առանձին թագաւորել : Սակայն կայսրը շուտ մը ասոր ճարը գտաւ. վասն զի Ճենովացիներէն<sup>1</sup> օգնութիւն գտնելով՝ օրինաւոր իշխանութեան կողոպտիչը յաղթահարեց, ինչպէս Պղատինա կը պատմէ : Բայց հազիւ թէ կայսրն իր ներքին թշնամիները զսպած էր, Սարակինոսներու գէմ պատերազմի ելլելու ստիպուեցաւ, ինչու որ ասոնք կայսրութեան Արեւելք ունեցած երկիրներէն քանի մը երեւելի մասերն յափշտակած էին :

Կայսրն աս անգամուս ալ դարձեալ Ճենովացիներն օգնութեան կանչեց : Ճենովայէն ալ՝ աս մեծ գործքը կատարելու համար՝ Լէոնարտոյ քաջ ծովակալին հրամանին տակ զօրաւոր նաւատորմիղ մը խրկուեցաւ : Արիասիրտ Ճենովացին բարբարոսներուն վրայ յարձակեցաւ, զանոնք փախուց, կայսեր ձեռքէն յափշտակուած երկիրներն ետ առաւ եւ դարձեալ իրենց օրինաւոր իշխանին ձեռքը յանձնեց : Իսկ կայսրը մտածեց որ աս քաջ Ճենովացւոյն իրեն ըրած մեծ ծառայութեան ու կատարած փառաւոր յաղթութեանը փոխարէն՝ անոր արժանաւոր վարձք մը հատուցանէ, այնպէս որ տրուելու վարձքը թէ կայսեր առատաձեռնութեան վայլող եւ թէ ատ քաջ սպարապետին արդեանցը համեմատ բան մ'ըլլայ : Աս նպատակիս ալ աւելի յարմարագոյն՝ Քրիստոսի հրաշագործ Ս. Դաստառակէն զատ բան մը չկրցաւ գտնել, ան Դաստառակը կամ սուրբ պատկերը կ'ը-

<sup>1</sup> Ատենօք Աստանդնուպոլսի Ղալաթիան Ճենովացւոյ հասարակապետութեան հող էր, ուր որ իրենցմէ բազմաթիւ բնակիչներ կային :

սեւմ, որն որ ատենօք Եղեւսիա քաղաքէն բերուած ու պա-  
լատին մատրան մէջ զգուշութեամբ պահուած էր, ինչ-  
պէս վերը ըսած ենք: Արդ աս սուրբ պատկերս կամ  
Գաստառակս՝ ուրիշ շատ սրբոց մասունքներով ու անգին  
բաներով մէկտեղ Աէոնարտոյին պարգեւ տուաւ կայս-  
րը: Աէոնարտոյ ալ աս անհամեմատ գանձին յարգն ա-  
ղէկ ճանչնալով՝ խիստ շատ ուրախացաւ վրան եւ առաւ  
1360ին կամ 1363ին իրեն հետ մէկտեղ ճենովա քաղա-  
քը տարաւ: Հոս իր պալատն աղօթարանի մը մէջ գաղ-  
տուկ քսան տարի մեծ յարգութեամբ պահեց, միշտ ու  
անպակաս պատկերին առջեւը մոմ վառելով: Յետոյ աս  
բարի մարդս ծանր հիւընդցաւ, ու երբոր մեռնելու վրայ  
էր, իրեն խոստովանահայրը կանչեց, որն որ Ս. Բար-  
թողիմէոսի վանքն եղող Ս. Բարսղի կարգէն Հայ կրօնաւ-  
որ մըն էր, եւ Ս. Գաստառակին գաղտնիքն յայտնելով՝  
անկէ խորհուրդ խնդրեց<sup>1</sup>: Աերջապէս բանն անանկ որո-  
շուեցաւ որ Աէոնարտոյ իր կտակին մէջ զՍ. Գաստա-  
ռակը ճենովա քաղաքին Ս. Բարթողիմէոս Եկեղեցւոյն  
թողու: Ճենովայի Ատենագարութեան դիւանին մէջ մին-  
չուկ աս օրուան օրս կը տեսնուի վկայական թուղթ մը  
թէ ինչպէս Ս. Գաստառակը Ս. Բարսղի կրօնաւորաց  
ձեռքը յանձնուեցաւ, Բարթողիմէոս Արտիմէնդոյին ձեռ-  
քովը, զորն որ մեռնողն իր որդիքներուն ու ժառանգնե-  
րուն կտակակատար կարգեր էր: Աս գրուածքիս մէջ կը  
գտնուի նաեւ կտակին՝ Ս. Գաստառակի վերաբերեալ լա-  
տիներէն յօդուածը, որն որ այսպէս կ'ըսէ:

“Ա,աեւ կ'ուզեմ՝ թէ որ Տէ Մուղղետոյ ըսուած Ս.  
Բարթողիմէոսի կրօնաւորաց հաճելի կ'ըլլայ նէ, որ աւան-  
դատան քովն եղող Ս. Աստուածածնայ մատուռն իմ ժա-  
ռանգներուս յանձնուի . . . կ'ուզեմ որ Ս. Գաստառակը

<sup>1</sup> Տես Աստուծոյ նախախնամութիւնը որ, ինչպէս ի սկզբան  
Տէրն մեր աս մեծագին ընծան Հայոց ազգին ու թագաւորին  
չնորհած էր, այսպէս ալ այդչափ արկածներէն ետքը՝ դարձեալ  
Հայոց ազգին ձեռքն ուզեց նոյնը յանձնել եւ անոնց միջ-  
նորդութեամբը տեղաւորել:



նոյն եկեղեցւոյն տրուի, այսու դաշամբ որ նոյն պատկերը մեծ հանդիսական տօներու օրեր յիշեալ խորանին վրայ բացուած դրուի, ու վերոյիշեալ եկեղեցւոյն կրօնաւորները պարտական ըլլան իմ հոգւոյս համար ամէն օր մէյ մէկ պատարագ ընելու: . . . Գրուեցաւ (կտակս) իմ ձեռօքս, որ եմ Ռափայէլ Տէ կուսքոյ ատենագրայիր, յամի փրկութեան 1384 ի 14 Յունիս ամսեան, :

Արդ թէպէտ կտակն այսպէս 1384ին գրուեցաւ. բայց Ս. Գաստառակին՝ վերը ըսածնուս պէս՝ Բարթողիմէոս Արտիմէնդոյին ձեռքովը Բարսեղեան կրօնաւորաց յանձնուիլը՝ չորս տարի ետքը պատահեցաւ, ինչպէս Յովհաննէս Բերոչեղոյ ատենագրին ձեռքովը 1388ին Յուլիսի Տին գրուած՝ յանձնուելուն վկայական թղթէն կը ստուգուի: Սակայն անկէ ամիս մը յառաջ, այս ինքն՝ Յունիսի 14ին, որ օրը որ Լէոնարտոյ չորս տարի առաջ վախճանած էր, Բարսեղեան կրօնաւորները հանդիսական թափորով մեռնողին տունը գացին, որ տունը որ եկեղեցիէն քիչ մը հեռու՝ յառաջագոյն Մարտիոսի եւ հիմակ Մարտիոսի ըսուած բլրի մը վրայ է, ու մինչուկ աս օրուան օրս դեռ կեցած է, զՍ. Գաստառակն անկէ իրենց Ս. Բարթողիմէոսի եկեղեցին բերելու համար, ուր մինչուկ աս օրս կը պահուի:

Աս Ս. Գաստառակին վերը ըսուած կերպով պարգեւուելուն, ինչպէս նաեւ կոստանդնուպոլսէն ճենովա քաղաքը բերուելուն եւ միանգամայն Ս. Բարթողիմէոսի եկեղեցւոյն մէջ պահուելուն պատմական ստուգութեանը կը վկայէ Հ. Բցովիոս Քահանան (որն որ Բարոնիոս կարգինային մահուանէն ետքը՝ անոր եկեղեցական տարեգրութիւնները շարունակեց) աս խօսքերով. «Աս տարի (1384ին) ճենովայի Ս. Բարթողիմէոս մայր եկեղեցին նոր զարդ մը ստացաւ՝ զՍ. Գաստառակը, որն որ՝ վրան սպաւորուած Փրկչին սքանչելի պատկերին համար՝ խիստ հռչակաւոր է: Աս կտաւովս Գրիստոս Տէրն մեր երեսին քրտինքը սրբելով՝ իրեն կերպարանքը վրան գրոշմեց:

Սուրբ պատմութիւնները հաստատութեամբ կը վկայեն թէ աս պատկերս նոյն ինքն Տէրն մեր Աբգար թագաւորին խաւրած է, անոր խնդրելովը: Իսկ Մոնղալոյ, ճենովա-ցիներուն սպարապետը, զասիկայ իր տունը պահելու ամէն կարելի յարգութեամբ մեծարել էր, մինչուկ որ ինքը փոխադրական տենդէ մը բռնուելով՝ վերջապէս մահուան դուռը հասաւ: Ան ատեն զասիկայ հասարակապետութեան ընծայ ըրաւ, որպէս զի վերոյիշեալ եկեղեցւոյն մէջ պահուի,<sup>1</sup>:

Աւելի եւս յայտնի ու մանրամասնաբար կը պատմէ աս բանս Ճիւսդիսիանի անունով ուրիշ Խտալացի պատմագիր մ'ալ այսպէս<sup>2</sup>. «Աւ ինչպէս որ Աստուծոյ նախախնամութեան հաճոյ թուեցաւ, Մոնղալոյ Յունիսի տասնումէկին փոխադրական տենդէ մը բռնուելով հիւրնդցաւ, ու երեք օրէն ետքը վախճանեցաւ, յառաջագոյն ամէն թէ հոգւոյն ու թէ մարմնոյն վերաբերեալ բաները, ինչպէս որ աղէկ ու ճշմարիտ քրիստոնեաները կ'ընեն, ըստ պատշաճի կարգադրելէն ու կատարելէն վերջը: Իր կտակին մէջ յայտնեց ու բացատրեց ատ անգին գանձն ու ամենայն յարգութեան արժանի Մասունքը, զՍ. Գաստառակը կ'ըսեմ, որուն վրայ Յիսուսի Տեառն մերոյ աշխարհիս Փրկչին ճշմարիտ պատկերը տպաւորուած էր, զորն որ՝ ինչպէս բարեպաշտաբար կը հաւտացուի, ինք Տէրն մեր Աբգար թագաւորին խաւրել էր: Ան պատկերս ու անգին յիշատակս՝ պարգեւ տրուեցաւ Աէոնարոյ սպարապետին, Աոստանդնուպոլսի կայսերմէն, միեղջերուի եօթը թիղ երկայն եղջերով մը եւ ուրիշ ան ատենները յարգի սեպուած շատ բաներով մէկտեղ: Ասն զի Աէոնարոյ երկու նաւատորմի վրայ հրամանատար դրուած դէպ ի Գանա նաւարկելով՝ Տաճկաց ձեռքէն . . . առեր էր ան ամէն երկիրները՝ զորոնք ասոնք անոնց ձեռքէն յափշտակած էին, ու

1 Աբրահ. Բցով. Եկեղ. Տարեգր. Հատ. ԺԵ. ամ 1384, Թիւ 12:

2 Ճիւսդիս. Տարեգր. Գիրք Գ. ամ 1384:

զամէնքն ալ դարձեալ իրենց օրինաւոր տիրոջը կայսեր  
 դարձուցեր էր, ասոր համար կայսրն ալ վարձատրեց զա-  
 նիկայ վերոյիշեալ ընծայով: Սպարապետը շատ ատեն իր  
 աղօթարանին մէջ զՍ. Գաստառակը գոց ու գաղտուկ պա-  
 հեր էր, սակայն մեծ յարգութեամբ ու առջեւն անպա-  
 կաս մոմ վառելով: Երբոր վախճանը մօտիկցաւ նէ, զա-  
 սիկայ կտակաւ Ս. Բարթողիմէոսի վանքին թողուց, ան  
 ատենուան ստակով 300 լիրայի մշտնջենաւոր ողորմու-  
 թիւն ալ կապելով. . . ինչպէս յայտնի կը տեսնուի դիւա-  
 նագիր վկայականէն, զորն որ ես ինքն տեսայ ու վաւե-  
 րական գտայ, :

Հիմակ ինծի ուրիշ բան չիմնար ընելու, բայց եթէ  
 փոքրիկ քննութիւն մ'ալ ընելով՝ քանի մը պատմագիր-  
 ներուն իրարու հակառակ երեւցող վկայութիւնները, եւ  
 մասնաւորաբար Բարոնիոսի խօսքը մեր ըսածներուն հետ  
 միաբանելու, որովհետեւ ոմանք կը կարծեն ու գլխաւո-  
 րաբար Բարոնիոս իր Տարեգրութեանցը մէջ նշանակած  
 է թէ Եդեսական պատկերը կամ Ս. Գաստառակը կոս-  
 տանդնուպոլսէն Հռոմ քաղաքը բերուած ըլլայ: Ուստի  
 մենք կ'ուզենք ցուցընել թէ աս կարծիքս մեր ըսածնե-  
 րուն ամենեւին չիկրնար հակառակիլ, որպէս զի ճենովա  
 գտնուող սուրբ Պատկերին վաւերականութիւնը ստու-  
 գուի եւ անոր՝ բուն Եդեսական Ս. Գաստառակն ըլլալուն  
 վրայ ամենեւին տարակոյս չմնայ:

Մ Ե Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Գ Գ Լ Ո Ւ Խ

Բարոնիոս կարգինալին կործեացը զրայ +ննո-խի-ն, թէ արդեօ+  
անկիայ սորոյք հասարացէր էր որ Եդեսական Ս. Գաստառակին  
իրօ+ Հոոմ +աղաքը քարոնի:

ՏԱՄՆՈՒԵՕԹՆԵՐՈՐԳ Դարու քանի մը մատենագիր-  
ներն ուղեցին պաշտպանել թէ Բարոնիոս կարգինալին  
համոզուած ըլլայ որ Եդեսական Ս. Գաստառակը հիմակ  
իրօք Հոոմ քաղաքը գտնուի, որովհետեւ ասիկայ իրեն  
Տարեգրութեանց Իններորդ հատորին մէջ՝ Ս. Գաստա-  
ռակին սկզբանն ու անոր 944 թուականին Եդեսիայէն  
Կոստանդնուպոլիս փոխադրուելուն վրայ խօսելէն ետքը,  
իր պատմութիւնն աս խօսքերով լմընցուցած է. «Բայց  
յետոյ՝ երբոր պատերազմն երթալով զօրացաւ, ու Կոս-  
տանդնուպոլիս քաղաքը յաճախ անգամ առնուեցաւ ու  
թշնամիներէն կողոպտեցաւ, եւ միանգամայն ուղղափառ  
հաւատքին հաղորդակցութենէն շատ հեղ բաժնուեցաւ  
նէ, Աստուծոյ նախախնամութեամբն եղաւ որ ատ յար-  
գութեան արժանաւոր պատկերը Հոոմ քաղաքը բե-  
րուեցաւ, ուր մինչուկ աս օրուան օրս Ս. Սեղբեստրոսի  
եկեղեցւոյն մէջ յարգութեամբ կը պահուի»:

Հ. Բաճի քահանան Բարոնիոսին աս խօսքերուն  
վրայ գեղեցիկ ու համառօտ կերպով իր միտքն այսպէս կը  
յայտնէ. «Թէ արդեօք ատ պատկերը Հոոմ քաղաքը  
կը գտնուի, ինչպէս Բարոնիոս կը զրուցէ, չէ՛ նէ ար-  
դեօք ճենովա քաղաքը կը պահուի, ինչպէս Բցովիոս՝ ա-  
նոր (Բարոնիոսին) շարունակողը կ'ապացուցանէ, ասոր  
վրայ վիճելն ես ուրիշին կը թողում» : Աս խօսքերով  
Բաճի իմացընել կ'ուզէ որ ինք Բարոնիոսին ըսածը լոկ  
խօսքի մը, իսկ Բցովիոսին պատմածը հիմնական ապա-  
ցուցի տեղ կ'առնու, ուստի եւ վերջինին խօսքերն աւելի  
նախամեծար կ'ընտրէ :

Այլ աս բանս իրաւամբ կ'ընէ, վասն զի՝ որովհետեւ  
Բարոնիոս իր Տարեգրութիւնը մինակ մինչուկ տասնու-

մէկերորդ դար հասցուցած էր, դեռ ժամանակ չէր ունեցած չորեքտասաներորդ դարուն յիշատակարաններն ինչպէս որ պէտք էր նէ քննելու, ուստի եւ հարկաւոր եղած ապացոյցները չէր կրնար ունենալ: Բայց Բցովիոսին չէին կրնար պակսիլ աս տեղեկութիւնները, եւ հարկ էր որ ինք քննած ըլլար աս բանիս վերաբերեալ ապացուցական պատճառները, ասոր համար ալ ինքը՝ մէկային գործքին շարունակողն ըլլալով, պէտք էր որ իր նախորդին՝ ետքի ժամանակներուն վրայ տուած վերիվերոյ տեղեկութիւնները մէկդի ձգելով, իր քննութեամբը ստոյգ գտածները յառաջ բերէր, մանաւանդ թէ նոյն ինքն Բարոնիոս ալ՝ թէ որ մինչուկ Ս. Գաստառակին ճենովա քաղաքը տարուելուն ժամանակներն իր պատմութիւնը շարունակած ըլլար նէ, առջի ըսածն անտարակոյս կ'ուղղէր ու Բցովիոսին պէս կը պատմէր:

Աս հետեւութիւնը կը քաղենք մենք նաեւ նոյն իսկ անոր (Բարոնիոսի) պատմութեան ընթացքէն: Բարոնիոսին պատմութեան նայելով՝ Ս. Սեղբեստրոսի եկեղեցին քովի վանքովը մէկտեղ ութերորդ դարու մէջ շինուեցաւ, Պօղոս Ա. Քահանայապետին հրամանաւ, եւ աս ատեններս Աոստանդին Աոպրոնիմոս պատկերամարտ կայսեր հալածանքէն Աոստանդնուպոլիս թող տալով Հռոմ քաղաքը փախչող Յոյն քահանաներուն՝ նոյն Քահանայապետէն բնակութեան համար շնորհուեցաւ<sup>1</sup>: Աս քահանաներս Հռոմ՝ Քահանայապետին հրամանաւն իրենց ժամերգութեան կարգը Յոյն արարողութեամբ կը կատարէին. ուստի իրենց տարեկան տօնի օրերն ալ նոյնպէս շարունակեցին Յունաց տօնացուցին կարգաւ կատարելու, ինչպէս որ աղգերնուն մէջ սովորութիւն էր, եւ ըստ հետեւորդի՝ աս քահանայից յաջորդները սկսան յետոյ աս աղգային տօնն ալ տօնախմբելու, որ տասներորդ դարուն մէջ՝ ինչպէս վերը պատմեցինք՝ ընդհանուր Յունաց եկեղեցւոյն մէջ դրուեցաւ, Ս. Գաստառակին հանդի-

<sup>1</sup> Բարոն. Հատ. Թ. ամ 761:

սուժեամբ Եղեւսիայէն Աոստանդնուպոլիս փոխադրուելուն յիշատակին համար : Արդ այսպիսի տօնախմբութիւն մը ինչպէս որ պէտք է նէ հանդիսութեամբ ու ջերմեռանդութեամբ կատարելու համար, խիստ հաւանական է որ յիշեալ քահանաներն ան հրաշագործ ու անձեռագործ փրկչական պատկերին գաղափարը կամ օրինակը նկարել տուած ըլլան : Աս եղած է աւասիկ նոյն Ս. Սեղբեստրոսի եկեղեցւոյն մէջ գտնուող փրկչական պատկերին սկիզբը, եւ աս նոյն եկեղեցւոյն մէջ Օգոստոսի 16ին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պատկերի մը տօնին տօնախմբութեան պատճառը, նախ Յունացմէ սկսուած ու ետքը Բենեատիկտեան կրօնաւորաց անցած, որոնք որ Յոյներուն յաջորդեցին ու վերջի ատենները՝ մինչուկ աս օրուան օրս ալ Փռանկիսկեան կարգին կուսանացմէ շարունակած, որոնց որ խել մը ատենէ ի վեր նոյն եկեղեցին վանքովը մէկտեղ շնորհուած է :

Արդ ինչպէս կարելի է՝ աս ըսած կարգաւս բանը մտածելով՝ հետեւցընելն ու պնդելը թէ Բարոնիոս կարծած ըլլայ որ աս Յունացմէ Եղեւսիայէն Աոստանդնուպոլիս բերուած փրկչական պատկերին յիշատակին համար միայն յարգուող պատկերս, նոյն իսկ բուն օրինակը կամ Եղեւսիան Ս. Գասպարուհի եղած ըլլայ : Ա՛վ կրնայ այնպիսի զգուշական ու ծանրաբարոյ մատենագրի մը այսչափ թեթեւամտութեան կարծիք դնել, կամ թէ աս աստիճանի անոր յարգն իջեցընող գատաստան մը կտրել : Եւ սակայն գտնուեցաւ Հ. Ղուկաս Աատինկոյ անունով Փռանկիսկեան կարգէն մէկը, որն որ ան հռչակաւոր պատմագրին վրայ աս անմտական կարծիքը դնելու համար ձակեցաւ, ու նոյն իսկ Բարոնիոսին վերը յառաջ բերուած խօսքերովն ապացուցանելու ջանացաւ, հետեւեալ կերպով. «Բարոնիոս կ'երեւայ որ ան խօսքերով հասկըցընել կ'ուզէ թէ ան կրօնաւորները (յոյն քահանաները) Արեւելքէն Աոպրոնիմոսին հրամանաւ հալածուած ըլլան, որոնք խիստ մեծ բաղմութեամբ Հռոմ քաղաքը փախան ու Պօղոս

Ա. Քաճանայապետէն հրաման ընդունեցան իրենց մայրենի լեզուաւ ժամերգութիւննին կատարելու: Իսկ որովհետեւ ան բարեպաշտ մարդիկը չուզեցին սուրբ բաները շնորուն առջին նետել, ուստի փախած ատեննին զսուրբ Գաստառակը, այսինքն՝ Տեառն մերոյ Յիսուսի պատկերը՝ որն որ իր չարչարանքէն քիչ մը յառաջ տպաւորուած ու Ասորիքի Եղեսիա քաղքին Աբդար թագաւորին խաւրուած էր, ու Ս. Յովհաննէս Մկրտչին գլուխն ալ մէկտեղ հետերնին առած՝ հոն տարին (եւ ասիկայ եղաւ՝ աղէկ միտ դիր, 757 թուականին), որ անգին գրաւականները որ ամէն Հռոմայեցիներէն խիստ մեծ յարգութեամբ կը մեծարուին,<sup>1</sup>:

Հիմակ Աատինկոյին կարծեացը համաձայն՝ Բարոնիոսին ըսածը Պօղոս Ա. Քաճանայապետին ու Աոստանդին Աոպրոնիմոսին ժամանակներուն բաներն են, որ ըսել է թէ 757ին ու 763ին մէջտեղերը կ'իյնան, եւ ըստ հետեւորդի՝ Եղեսական Ս. Գաստառակին Աոստանդնուպոլսէն Հռոմ բերուիլն աս ժամանակներու մէջ պատահած պիտ'որ ըլլար: Արդ նոյն իսկ Բարոնիոսին պատմածին համեմատ՝ Ս. Գաստառակը շուրջ երկու հարիւր տարի ետքը Եղեսիայէն առջի անգամ Աոստանդնուպոլիս բերուեցաւ. ապա ուրեմն Բարոնիոս իրեն անձին հակառակ խօսած է: Ահաւասիկ Աատինկոյին ծուռ պատմութենէն կամ տրամաբանութենէն յառաջ եկած հետեւութիւնը:

Նոյն Աատինկոյին ծուռ կարծեացը հետեւեցաւ աս նիւթիս մէջ ճեաքէդդի անունով Քաճանայ մ'ալ, որն որ Փրկչակն Պարիէրէն Վրայ (Iconologia Salvatoris) գրած գործքին մէջ նոյնպէս կը համարձակի ան մեծանուն մատենագրին (Բարոնիոսին) նոյն անտեղի ու հակասական կարծիքն ընծայելու: Ասիկայ ալ խօսքին մինակ նիւթական մասին վրայ կենալով՝ միտ չիղներ թէ արդեօք

1 Առկ. Աատինկոյ, Տարեգր. Մինորիդ կրօնաւ. Հատ. Բ. ամ 1285:

պատմագիրն աս ըսածին մէջ մինակ ժողովրդեան կարծիքը յառաջ կը բերէ, չէ նէ բանը մանրամասնաբար, հիմնովին ու ժամանակագրական կերպով՝ պատմիչներու արժանահաւատ վկայութեամբը կը պատմէ ու կը հաստատէ թէ Ս. Գաստառակն անկէ Հռոմ քաղաքն եկած ըլլայ: Բարոնիոսին սովորական մատենագրութեան եղանակն աս է որ պատմածներուն մէջ պատմագիրներուն վկայութիւնները յառաջ կը բերէ, ու պատմած բաներուն ժամանակը ճշգիւ ժամանակագրական կերպով կ'որոշէ, ինչպէս որ Ս. Գաստառակին սկզբանն ու անոր 944 թուականին Եղեսիայէն Կոստանդնուպոլիս բերուելուն վրայ պատմածներուն մէջ ըրած է: Մինակ հոս, ուր որ նոյն Ս. Գաստառակին վերջի փոխագրութիւնը կը յիշուի, իր սովորական կարգէն դուրս կ'ելլէ եւ իր ուրիշ ատեն գործածած զգուշութիւններն ի գործ չի դնէր: Աւրեմն աս ըսել է որ Ս. Գաստառակը Հռոմ քաղաքն եկած է ըսած ատենը, ժողովրդեան մէջ տարածուած կարծիքն ու խօսքը կը զրուցէ, չէ թէ ինքն այնպէս համոզուած ըլլալով կը պատմէ, ապա թէ ոչ՝ նոյն իսկ իրեն ուրիշ տեղ ուրիշ կերպ պատմածին դէմ խօսած կ'ըլլար: Ասիկայ՝ բան հասկըցողին առջին յայտնի ու հաստատուն փաստ մըն է:

Աստի դարձեալ կը կրկնեմ. Բարոնիոսին աս Ս. Գաստառակին վերաբերեալ վերջի խօսքերէն ան ապացուցական հետեւութիւնը հանելու է որ անիկայ իբրեւ ռամիկ մարդկան կարծիք մը նոյները յիշած է, առանց անոր ստույգութեան կամ ճշմարտութեան վրայ նոյն տեղ դատաստան մը կտրելու: Բցովիոս ալ Բարոնիոսին աս ընթացքին կամ մտացը քաջ տեղեակ ըլլալով՝ անոր մահուանէն ետքը ան՝ թէ եկեղեցական եւ թէ արտաքին պատմութեան ատշափ օգուտներ ընող մատենագրին Տարեգրութիւնները շարունակելու ձեռք զարկած ատեն՝ անոր աս վերիվերոյ կերպով անցած խօսքերուն անտեղի միտք մը կամ նշանակութիւն մը ընծայել չուզեց, ինչ-



պէս վերը յիշուած Վատինկոյ ու Ճեաքէդդի մատենա-  
գիրներն ըրին, հապա ատ խօսքերուն ուղիղ միտքն իմա-  
նալով, Ս. Գաստառակին ճշմարիտ պատմութիւնը յա-  
ռաջ տարաւ շարունակեց ու աւարտեց, առանց իր  
բազմարդիւն Նախորդին ըսածներուն կապուելու:

Արդ այսպէս կրնանք մենք ստոյգ ըլլալ որ Բարո-  
նիոս ոչ երբեք համոզուած էր թէ Ս. Գաստառակը  
Հռոմ քաղաքը կը գտնուի, հապա իր ժամանակին  
ընդհանուր եղած ռամկական կարծիքն ուղեց յիշա-  
տակել, որուն գտիչը Փռանկիսկեան կրօնաւորներն էին,  
որոնք որ Ս. Գաստառակին հիմնական պատմութեան  
տեղեակ չըլլալնէն ու միանգամայն իրենց կարգին եկե-  
ղեցւոյն աւելի պարծանք մը տալու եռանդէն շարժե-  
լով, շուտով մը գաղափարը բուն օրինակին տեղ ա-  
ռին եւ այսպէս բանը հաստատեցին: Սակայն տեսնելով  
յետոյ որ Վատինկոյին կարծիքը (թէ ութերորդ դարու  
մէջ 757 — 763 Ս. Գաստառակը Հռոմ բերուած ըլլայ)  
մեծ ժամանակագրական սխալանք ունի եւ նոյն իսկ Բա-  
րոնիոսին ուրիշ տեղ պատմածին (թէ Ս. Գաստառակն  
առջի անգամ 944 թուականին Աոստանդնուպոլիս հասաւ)  
հակառակ կ'ելլէ, թող տուին անոր հետեւիլը, բայց  
մտքերնուն մէջ միշտ Ս. Գաստառակին Հռոմ ըլլալը  
պաշտպանելը հաստատուն դրած ըլլալով, այսպէս սկսան  
ըսել թէ Աոստանդնուպոլիս քաղաքին 1453ին Տաճիկներ-  
էն առնուելէն ետքը Հռոմ փախչող Յոյներն ատ ան-  
գին գանձն ալ հետերնին մէկտեղ նոյն Հռոմ քաղաքը  
բերած ըլլան: Եւ իրաւցրնէ ալ Բարոնիոսին ան խօս-  
քերը (թէ Բայց յետոյ՝ երբոր պատերազմն երկուսով սաստ-  
կացաւ ու Աոստանդնուպոլիս քաղաքը յաճախ անգամ առնուե-  
ցաւ ու լեռնափնէրէն կողոպտեցաւ, եւ միանգամայն ուղլափա-  
հասարակ հաղորդակցութենէն ալ շատ հեղ բաժնուեցաւ նէ,) կրնայինք գուցէ աս հնգետասաներորդ դարուս վրայ  
մանաւանդ աւելի պատշաճութեամբ ու հաւանականու-  
թեամբ իմանալ, քան թէ ութերորդ դարուն վրայ,

ինչպէս Աատինկոյ կ'ուզէր, սակայն աս ալ չենք կրնար  
 ընդունիլ. վասն զի վաւերական պատմութիւնը յայտնի  
 մեր առջին կը դնէ թէ Ս. Գաստառակն ան ատենը (չո-  
 րեքտասան դարէն ի վեր 1360—1363) արդէն ճենովա  
 քաղաքը կը գտնուէր, ինչպէս նախընթաց գլխին մէջ  
 պատմեցինք: Իսկ ո՞վ որ դեռ եւս աս բանիս ստուգու-  
 թեան վրայ կը տարակուսի նէ, թող քալքանեհինոյ մա-  
 տենագրին գործքը բանայ ու տեսնէ թէ քանի քանի  
 քահանայապետներ Բարսեղեան Հայ կրօնաւորաց ինչ-  
 չափ մեծ շնորհմունքներ ու արտօնութիւններ տուած  
 են, մի միայն աս պատճառիս համար որ Եղեւսական  
 Ս. Գաստառակն իրենց Ս. Բարթողիմէոսի եկեղեցւոյն  
 մէջ պահուած էր, ու ամէն դիաց անհամար բազմութիւն  
 հոն ուխտի կը դիմէր, փրկչական անձեռագործ պատկե-  
 րին առջին աղօթք ընելու համար, եւ այսպէս նոյն կրօ-  
 նաւորները քահանայապետական շնորհմունքներու կարօ-  
 տութիւն կ'ունենային: Մեզի բաւական ըլլայ հոստեղս՝  
 Սեքստոս Գ. քահանայապետին աս նիւթիս վրայ տուած  
 կոնդակի մը մէկ հատուածը միայն յառաջ բերելը, որ  
 քահանայապետը որ թէպէտ Փռանկիսկեան կարգէն էր,  
 սակայն նոյն իսկ իրեն ատենը (շուրջ 1471 թուականին)  
 կը ճանչնար թէ աս սուրբ գանձը, անձեռագործ փրկչա-  
 կան պատկերը, չէ թէ Հռոմ քաղաքը Ս. Սեղբեստրոսի  
 եկեղեցւոյն մէջ, հասպա ճենովա քաղաքը Ս. Բարթողի-  
 մէոսի եկեղեցւոյն մէջ կը պահուէր: Ահաւասիկ յիշեալ  
 կոնդակին խօսքերը. «Արովհետեւ իմացանք որ Ս. Բար-  
 սղի կարգէն Հայ կրօնաւորաց Ս. Բարթողիմէոսի վան-  
 քը, որն որ ճենովա քաղքին պարսպին դրսի դին կը  
 գտնուի եւ որուն մէջ որ ան Փրկչական պատկերը կը պա-  
 հուի, զորն որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս Աբգարին  
 խաւրեր էր, շատ աղքատութեան մէջ է, ուստի . . . »<sup>1</sup>:

<sup>1</sup> Հոս տեղս կ'ուզեմ քիչ մ'ալ Բանջիրիոյ մատե-  
 նագրին կարծեացը վրայ խօսիլ: Ասիկայ ալ մէկայնբուն

1 Քալքան. ծանօթ. 15:

պէս՝ Բարոնիոսին ան վերիվերոյ ըսած խօսքին վրայ կե-  
նալով, չէ թէ մինակ կը կարծէ որ Եդեսական Ս. Գաս-  
տառակը Հռոմ Ս. Սեղբեստրոսի եկեղեցւոյն մէջ կը  
գտնուի, հապա կը ջանայ միանգամայն որ Բարոնիոսին  
ան խօսքերն իր մտացը համաձայն ուրիշ կերպով մը  
նշանակել տայ ու երեքտասաներորդ դարուն սկիզբին  
վրայ մեկնէ, աս եղանակաւ. «Թէպէտեւ աս Ս. Պատկե-  
րիս Ս. Սեղբեստրոսի եկեղեցւոյն պարգեւ տրուելուն  
ժամանակը յայտնի չէ, սակայն Բարոնիոսին պատշաճ  
թուեցաւ աս դիպուածս ան ժամանակին գնել, երբ  
որ Յունաստանը (Վոստանդնուպոլսի յոյն ժողովուրդը)  
սկսաւ ուղղափառ հաւատքէն բաժնուիլ, եւ ասիկայ  
կ'երեւայ որ 1203ին եղած ըլլայ, որ ժամանակը որ  
Իննովկենտիոս Գ. Քահանայապետը զկայսրութիւնն Ա-  
լէքսին յանձնեց,՝<sup>1</sup> Իսկ ասոր դէմ Քալքանեինոյ<sup>2</sup> իրա-  
ւամբ այսպէս պատասխան կու տայ. «Պատմութեան տե-  
ղեակ ըլլողները, կ'ըսէ, թող աղէկ մը միտ գնեն թէ  
արդեօք ան ժամանակն ուղղափառութիւնը Վոստանդնու-  
պոլիս քաղքին մէջ մնաս մը կրած է ու կրօնաւորները  
ստիպուած են մայրաքաղաքը թող տալով փախչելու, եւ  
սուրբ պատկերներն իրենց հետ փախցընելու,»: — Աս-  
կէ ալ զատ՝ մենք արդէն վերը Թ. գլխին մէջ ցուցու-  
ցինք թէ 1325 թուականին ատ սուրբ պատկերը դեռ  
Վոստանդնուպոլիս քաղաքը կը գտնուէր:

Յիշեալ մատենագիրներուն աս ամէն ենթադրա-  
կան պատմութիւնները չեն կրնար այնչափ ստուգա-  
պատում պատմագիրներուն դրական վկայութիւնները  
տեղերնէն խախտել, եւ տեսանք ալ որ նոյն իսկ Բա-  
րոնիոս, եթէ որ ճիշդ քննական աչօք նայուելու ըլ-  
լայ, մեր ըսածին հաստատութիւն կրնայ սեպուիլ, թէ-  
պէտեւ անոր խօսքերը քանի մը մատենագիրներ այդպէս

<sup>1</sup> Ոկտ. Բանչիր. Հասնայ ծածկեալ գանձերը, երկրորդ տպագր.  
էջ 1625:

<sup>2</sup> Ծանօթ. 26:

ճուռ ըմբռնեցին ու անտեղի կերպով մեկնեցին : Հուսկ յետոյ կ'ուզեմ հոս նաեւ Շալոնի Պրիմոս Եպիսկոպոսին Տեղագրութիւն Աւայեց (Topographia Martyrum) գիրքը յիշատակել, որն որ 1450ին տպուած է, եւ որուն մէջ մեր ըսածներուն հաստատութեան համար աւելի փառաւոր վկայութիւն մ'ալ կը գտնենք, աս հետեւեալ խօսքերով. «Աբգար պատկերհան մը խաւրած էր որ Փրկչին պատկերը քաշէ ու բերէ իրեն. իսկ որովհետեւ պատկերհանը Քրիստոսի երեսին չկրցաւ նայիլ՝ անոր բռնոր կերպարանքէն ճառագայթի պէս դուրս ցայտող փառաւորութեան համար, ուստի ինք Քրիստոս կտաւի մը վրայ իր երեսը տպաւորեց. աս պատկերս՝ զորն որ Աբգարին խաւրած էր, հիմայ ճենովա քաղաքը Ս. Բարձրոյն մէոսի եկեղեցւոյն մէջ կը պահուի» :

Այն մատենագիրը յիշեալ գրքին մէջ Հռոմայ եկեղեցիներուն վրայ խօսելով, Ս. Սեղբեստրոս եկեղեցւոյն մէջ փրկչական պատկեր մը պահուած ըլլալուն վրայ ամենեւին խօսք մը չ'ըներ. սակայն նոյն Ս. Սեղբեստրոս եկեղեցւոյն մէջ իրօք գտնուող Ս. Յովհաննէս Մկրտչին Գլուխն եւ ուրիշ հոն եղող անհամար մատուցները մէկիկ մէկիկ կը յիշէ ու վրան ալ կ'աւելցընէ թէ Առաւմուտայ վանքն ալ հոն է : Աս եկեղեցւոյս մէջ գտնուող նոյն Ս. մատուցները կը յիշատակէ նաեւ Հ. Սանգի Ակոսգինիանոյ, Հռոմայոսայեւրոսեան եկեղեցիները գրքին մէջ, որն որ տպուած է 1588ին, ու Հ. Յովհաննէս Սեփերանոյ տէլ՝ Օրագորիոյ իր Սուրբ յիշատակաց գրուածքին մէջ, տպուած 1630ին. սակայն եւ ոչ խօսք մը կը գրեն թէ հոն այսպէս անգին ու սքանչելի փրկչական պատկեր մը պահուած ըլլայ : Արեւելի բա՛ն էր որ աս եւ ուրիշ այնչափ մատենագիրներ, որոնց անունը եւս հոստեղս լռութեամբ կ'անցնիմ, այսպիսի հռչակաւոր ու ծանօթ Եղեսիայէն բերուած Փրկչին պատկերը Ս. Սեղբեստրոսի եկեղեցւոյն ուրիշ երեւելի բաներուն հետ մէկտեղ բնաւ չ'իշխին, թէ որ աս անգին գանձին իրօք Ս. Սեղբեստրոսի

տրոսի եկեղեցւոյն մէջ գտնուելուն վրայ ստուգիւ համոզուած ըլլային նէ :

Բայց վերոյիշեալ մատենագիրներէն շատերուն այնպիսի անհիմն կարծիք ունենալուն պատճառ եղած է Միւորիդ կրօնաւորներուն ընդհանրական մեծաւորը՝ Հ. Փռանկիսկոս Առնղակայ, Ս. Փռանկիսկոսի կամ Սերճիքէան կարգին Ծագմանը վրայ գրած գործքովը, որն որ 1587ին տպուած է, եւ որուն մէջ մատենագիրը ինչչափ որ նոյն կարգին վանքերուն մէջ յիշատակաց արժանի ու նշանաւոր բաներ կան նէ՝ կը ստորագրէ. իսկ Ն. գլխին մէջ Առանայ վրայ՝ Ս. Սեղբեստրոս վանքին կուսանքներէն յարգութեամբ պահուած փրկչական պատկեր մը կը յիշատակէ՝ աս խօսքերով. «Տէաան Տերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Գաստառակը, զորն որ նոյն ինքն Տերն Տեր Աբգար Բագարէն խաբար է,» : Աս խօսքս առ առաւելն այնչափ միայն կըրնար նշանակել թէ Ս. Սեղբեստրոսի եկեղեցւոյն մէջ շատ տարիներէ ի վեր Քրիստոսի Տեառն մերոյ մէկ սուրբ պատկերը յարգութեամբ կը պահուի, եւ ասիկայ ան անձեռագործ ու Քրիստոսէ Աբգարին խաւրուած բուն օրինակին յիշատակին համար է, որն որ հին ժամանակները Եդեսիա քաղաքը կը գտնուէր : Բայց չէ թէ որ ասիկայ իրօք նոյն իսկ հռչակաւոր Եդեսական սուրբ պատկերը կամ Գաստառակն եղած ըլլայ. ասպա թէ ոչ թէ որ աս խօսքս ալ աւելի զօրութիւն մ'ունեցած ըլլար նէ, անտարակոյս նոյն իսկ Քարոնիոս ալ ան մեծանուն ու դիտնական ու միշտ անմահ յիշատակաց արժանի մարդը՝ յիշեալ Հ. Առնղակային ժամանակակից ըլլալով, աս բանիս ճշմարտութեան վրայ ստուգիւ համոզուած պիտ'որ ըլլար. եւ սակայն չէր, ինչպէս աս գլխիս մէջ մինչուկ հիմայ ցուցուցինք :

Ճենովա Գաղաթը Գորնո-ող Ս. Գասարասաակին անունն ու սորո-  
րադրո-խի-նը:

Աս Գրիստոսի սուրբ երեսաց պատկերը՝ Ճենովա քաղաքը հասարակօրէն Սուրբ Թաշկինակ (il santo Sudario) կը կոչուի: Աս անունս կը տրուի նաեւ Գուրին քաղաքը գտնուող Գրիստոսի գերեզմանին սուրբ կտաւին ալ, ինչու որ Ս. Յովհաննու աւետարանին լատիներէն թարգմանութեանը մէջ նոյն կտաւը՝ որն որ Գրիստոսի գլխոյն վրայ փաթթուած էր՝ այսպէս կ'անուանուի<sup>1</sup>. Չորն որ մեր հայերէն թարգմանութիւնը վարչամի կը կոչէ. Ե- վարչամի՞ն որ էր ի գլխի նորա:

Եւ այց Հայերն իսկզբանէ մինչուկ հիմայ, այս ինքն՝ Աբգարին ատենէն մինչուկ աս օրս նոյն փրկչական պատկերը իբրեւ սեպհական կամ յատուկ անունով մը՝ Ս-րք Գասարասակ կ'անուանեն, որ է ըսել՝ սուրբ կտաւ կամ վարչամակ: Իսկ Յոյները՝ աս Ս. Գաստառակս ձեռուրնին անցնելէն ետքը, անոր բուն սկզբնական նշանակութեանը հետեւելով՝ սկսան զանիկայ իրենց լեզուաւը τὸ ἅγιον μανδήλιον<sup>2</sup> կոչել, որն որ նոյնը կը նշանակէ՝ ինչ որ սուրբ կտաւ կամ դաստառակ կամ թաշկինակ:

Աս անունս կը ցուցնէ միանգամայն աս պատկերիս կամ կտաւիս վաւերականութիւնն ու անոր ուրիշ ամէն պատկերներէն վեր ունեցած սեպհական պատիւը: Աս պատկերս անոր համար մասնաւորապէս ու առանձինն եղանակաւ Ս-րք Գասարասակ կամ կրա- կամ Թաշկինակ կը կոչուի, վասն զի աս կտաւս Տեառն մերոյ ու Փրկչին ամենասուրբ ձեռացն ու երեսացը շօշափելովը սրբուեցաւ ու

<sup>1</sup> Et sudarium, quod fuerat super caput Jesu. Joh. 20. 7.

<sup>2</sup> "Որպէս զի Գրիստոսի անձեռագործ պատկերին վրայ՝ Չորն որ τὸ ἅγιον μανδήλιον կոչելու սովորութիւն է, դնեն, եւ այլն: Ի պատմ. վարուց Ս. Պօղոսի Լատրեան, Սիրմիոսի ու Բարսեղոսի մատենագր. մէջ. ամ 944:

սրբազան իր կամ մասունք մը եղաւ : Թէ որ ասիկայ մի-  
նակ «-ը» պատկեր անուանուած ըլլար, ուրիշ պատկեր-  
ներէն աւելի մասնաւոր պատիւ կամ յարգ մը կամ թէ  
երեւելիութիւն մը ունեցած չէր ըլլար, ինչու որ հասա-  
րակօրէն Յիսուսի ու Սուրբերու պատկերները «-ը» կը  
կոչուին : Իսկ հոս բոլորովին տարբեր եղանակաւ՝ նոյն  
իսկ պատկերին նիւթը, այս ինքն՝ պատկերին նիւթական  
մասը, կտաւը՝ սուրբ կը կոչուի, ինչպէս՝ սուրբ մասունք  
մը, վասն զի քրիստոսի բուն ամենասուրբ ձեռքն ու  
երեսը վրան քսուած է :

Մեր կարգացողներուն աս սուրբ մասունքին եր-  
կնային ձեւոյն կամ կերպարանացն ու հանգամանքներուն  
վրայ՝ որչափ կարելի է նէ մերձաւոր տեղեկութիւններ  
տալու համար վերը Թ. գլխին սկիզբը յիշուած Բիքքոնի  
մատենագրին ըրած նկարագիրը ձեռքս կ'առնում, վասն  
զի ասիկայ շատ հեղ ու մօտանց Ս. Գաստառակը տես-  
նելու եւ զննելու առիթ ունեցած է : Աս պատկերս, կ'ը-  
սէ նոյն պատուական մատենագիրը, խիստ վեհ ու հրա-  
շալի տեսք մ'ունի, իր վրան աստուածային ահեղ փա-  
ռաւորութիւն ու մեծ վայելչութիւն մը կայ, այնպէս որ  
տեսնողը կը յափշտակուի, կը ստիպուի անոր յարգու-  
թիւն ու մեծարանք ընելու : Այն ու չափաւորապէս մեծ  
ճակտին մէջտեղէն դէպ ի աջ ու ձախ թխագոյն ու գրե-  
թէ սեւ մազեր երկու կողմանէ կղակին վրայէն վար կա-  
խուած են, որոնք ականջները գոցելով կու գան իրար կը  
խառնուին ու կը միանան մորուքին հետ : Մորուքը գլխոյն  
մէկալ մազերուն հետ մէկտեղ երեք ճիւղ բաժնուած կը  
տեսնուի : (Ասիկա աւելի յայտնի կ'երեւայ իր հիմակուան  
վիճակին արծաթեղէն զարդարանքին տակ, իսկ թէ որ  
զարդը մէկ դի վերցընելու ըլլաս, մազերուն ու մորու-  
քին բնական տեսքը քիչ մը տարբեր է, թէպէտեւ միշտ  
երեք ճիւղ բաժնուած կ'երեւայ : Համեմատէ գրքուկիս  
ճակատը դրուած կրկին պատկերը : ) Աջ կողմի ճիւղը քիչ  
մը դէպ ի վեր ծուած է, ձախ կողմինն ալ թէպէտ այնչափ

չէ, բայց նոյնպէս դէպ ի աջ կը նայի. միջին ճիւղը մի-  
նակ մորուքին մազէն է ու քիչ մը դէպ ի ձախ հակած  
է. ընթուինները սեւ են, աչուրները կենդանացայտ ու թա-  
փանցանց զօրութիւն մը ունին, իբրեւ թէ լուսոյ շառա-  
ւիղներ կ'արձակեն, ու կարծես որ ամէն դիաց քու ե-  
րեսդ կը նային՝ շնորհալի ու մեղմ նայուածքով մը: Քի-  
թը շիտակ է, քիչ մը երկրնկէկ, բայց խիստ չափաւոր  
ձեւով. ընչացքին մազերը վերի պրկունքը բոլոր ծած-  
կած են, բայց վարի պրկունքը բաց թողուցած, այնպէս որ  
գեղեցկակազմ ու շնորհատեսիլ բերնին շրջանակն անար-  
գելք կ'երեւայ:

Սուրբ երեսին գոյնը սեւագոյն ու թխատեսիլ է,  
այնպէս որ հաղիւ թէ կրնայ մէկը բուն մարմնոյն գլխաւ-  
որ գոյնը ճանչնալ, ան ալ ճակտին ու քթին վրայ եւ  
աչուրներուն ու կղակին մէջտեղը, սակայն այնչափ միայն  
յայտնի կը ցուցնէ թէ աս պատկերս գերբնական բան  
մ'ունի, որ մարդկային արհեստը ոչ երբեք կրնայ անոր  
նմանիլ, ինչպէս ասիկայ Քալքանեհինոյին պատմածին  
նայելով՝ շատ վարպետ պատկերհաններ խոստովանած  
են, մասնաւորաբար Ղուկաս անունով Ճենովացի անուանի  
նկարիչը, որն որ երկայն ժամանակ Բարսեղեան Հայ կրօ-  
նաւորներուն հետ բնակելով՝ առիթ ունեցած էր աս  
պատկերս մտադրութեամբ զննելու: Ուստի ասիկայ շատ  
հեղ խօսք եղած ատեն՝ կ'ըսէր ու կը պնդէր թէ Անկարե-  
լի է որ մեր գոյներովն ատ երեսին գէթ փոքր մէկ նմա-  
նութիւնը կարող ըլլայ նկարուիլ, ասոր համար ալ որչափ  
որ իրեն աղաչեցին նէ ալ՝ միշտ դէմ կեցաւ անկէ դա-  
ղափար մը առնելու: Բայց նոյն Ս. Բարթողիմէոսի վանքին  
սեղանատան մէջ նոյն նկարչին խիստ վարպետութեամբ  
քաշած ընթրեաց մեծ պատկերին վրայի Քրիստոսին կեր-  
պարանքը, կ'ըսէ Հ. Բիքքոնի, Ս. Գաստառակին գեղեց-  
կութեան քիչ մը կը նմանի:

Սեր հոս Հ. Բիքքոնիէն առնելով դրած Քրիս-



տասի Տեառն մերոյ երեսին ստորագրութեան հետ՝ Նիկե-  
 փորոս Վալլիստոսին ըրած ստորագրութիւնն ալ գրեթէ  
 բոլորովին համաձայն է, որուն, այսինքն՝ Քրիստոսի երե-  
 սին՝ այսպէս ըլլալը, կ'ըսէ նոյն պատմիչը, մեր նախնեաց  
 աւանդութեամբը գիտենք (sicuti a veteribus accepimus):  
 Ուստի Վալլիստոս իր ստորագրութիւնն այսպէս  
 կը կնքէ: «Անիկայ (Քրիստոս) ո՛չ կլոր ու ո՛չ ալ սուր  
 երես ունէր, հապա ըստ ամենայնի այնպէս, ինչպիսի էր  
 իր Մօրը երեսը. այս ինքն՝ քիչ մը դէպ ի վար հա-  
 կած ու չափաւորապէս կարմիր, ուր ծանրութիւնն ու  
 խոհեմութիւնը շնորհալի հեղաբարոյութեամբ մը միացած  
 էին, ու անբարկանալի խաղաղասիրութիւնը կը փայլէր:  
 Համառօտ ըսեմ, իր երեսն աստուածարեալ անարատ  
 Մօրը երեսին ամենայնիւ եւ ըստ ամենայնի նման էր,<sup>1</sup>:

Բովանդակ կտաւը, որուն վրայ որ պատկերը տպաւ-  
 որուած է, հիմայ ոսկի թիթղան մը վրայ կպցուած է,  
 զորն որ հազիւ կրնայ մարդ նշմարել վրան գտնուող ամե-  
 նափոքրիկ ծակէ մը: Նոյն իսկ ոսկի թիթեղն ալ ու-  
 թիշ ծանր փայտեայ տախտակի մը վրայ կը կենայ. իսկ  
 գրսէն գունաւոր մետաքսեայ կերպասով մը ծածկուած  
 է, որն որ, կ'ըսեն, 1600էն յառաջ այնչափ երկայն ու  
 դէպ ի վար կախուած է եղեր, որ բովանդակ Ս. Գաս-  
 տառակին վրայ կը ծալուի ու զանիկա կը ծածկէ եղեր  
 տապանակին մէջ պահուելու ատեն:

<sup>1</sup> Նիկեի. Վալլիստ. Եկեղեց. պատմ. Գիրք Ա. ԳԼ. 10:

Ս. Գաւարաւանքին հիմակոտան վիճակին հէջ ունեցած զարդերուն  
 նկարագիրը:

Ս. ԳԱՍՏԱՌԱՎԻՆ մինչուկ 944երորդ տարին ունեցած զարդը՝ մի միայն ոսկեզօծ շրջանակ մըն էր, վրան փորագրուած հառաչանքով մը առ Յիսուս, ինչպէս որ Գ. գլխին վերջերը պատմեցինք: Իսկ Աոստանդնուպոլիս բերուելէն ետքը, Աոստանդին Պորփիւրոժէն՝ որ տարիէ մը վեր արդէն Ռոմանոսին հարստահարութենէն ազատած, ալ Հռոմայեցւոց տէրութեան կառավարութիւնն ինք մինակ ձեռք առած էր, ան Աբգարին շինել տուած շրջանակը վերցընելով, անոր տեղը խիստ ծանր ու փառաւոր զարդարանք մը շինել տուաւ, որուն ինչպէս ըլլալը ես դարձեալ Հ. Բիքքոնիին ստորագրութենէն առնելով հոս կը դնեմ:

Ս. Պատկերին բոլորտիքն եղած, կամ թէ ըսեմ՝ կտաւին վրայի ոսկեղէն զարդը  $17\frac{1}{2}$  ճենովացւոց մատնաչափ երկայն ու 13 մատնաչափ լայն է, մինակ սուրբ երեսը զարդէն դուրս մնացած ու բաց է, որուն ալ մեծութիւնը ճակտին ծայրէն սկսեալ մինչուկ մորուքին վարի ծայրը  $11\frac{1}{4}$  մատնաչափ ու լայնութիւնը 7 մատնաչափ է: Անմիջապէս երեսին բոլորտիքը շրջապատող թիթղան ոսկեղէն յօրինուածը շատ բարակ բան ու վարպետ մարդու գործուածք է, ու երկայնաձեւ քառանկիւն շրջանակ մը կը ձեւացընէ: Աս քառանկիւն թիթղանս կից է բուն շրջանակին մէկալ մասն ալ, որն որ մինակ զարդաձեւ գծերով կամ թէ շառաւիղներով առջինին հետ կը միաւորի, եւ որն որ դարձեալ քառանկիւնի շրջանակ մը ձեւացուցած է, ու ամէն կողմանէ երկու մատնաչափ լայնք ունի:

Շրջանակին առջի մասին, այս ինքն՝ թիթղեղնաձեւ գործուած զարդարանքին երկու վերին կողմերը կամ անկիւնները՝ Յիսուսի քրիստոսի ամենասուրբ անուանն յու-

նական սկզբնագիրները փորուած են, ու ասոնց տակ Ս. Գաստառակը նշանակող խօսքերը կան, այսպէս.

ⲐϢ ⲈϢ

ΤΟ ΑΓΙΟΝ ΜΑΝΔΗΛΙΟΝ

(Յիսուս Քրիստոս. Ս. Գաստառակը.)

Իսկ բուն շրջանակին մէկալ մասին վրայ տասը քառանկիւն փորուածքներ կան, իրարմէ հաւասար հեռաւորութեամբ զատուած, որոնց ամէն մէկը դրամի կամ մետալի ձեւով է, եւ ամէնքն ալ խորաքանդակ ըսուած կերպով փորուած պատկերներ են: (Տես ճակատին պատկերը):

Առջի մետալին պատկերը Աբգար թագաւորը կրներկայացրնէ, իբրեւ թէ անկողնոյն մէջ պառկած՝ զԱնանէն կը խաւրէ, ու քովը աս յունարէն խօսքերս կան. 'Ο Αὐγαρος πρὸς τὸν Κύριον τὸν Ἀνανίαν ἀποστέλλων<sup>1</sup>, այսինքն՝ Աբգար զԱնանիան (զԱնանէն) առ Տէրն կը խաւրէ:

Արևորդին մէջ յիշեալ Անանէն ներկայացուցուած է այնպէս՝ իբրեւ թէ կու լայ, եւ աս խօսքերս կան. 'Ο Ἀνανίας τὸν Κύριον μὴ δυνάμενος ἰστορῆσαι, այսինքն՝ Անանիան չկրնար շէրն նկարել:

Արրորդ պատկերին մէջ կը տեսնուի այնպէս՝ իբրեւ թէ Տէրն մեր երեսը լուալ կ'ուզէ, ու քովը այսպէս

<sup>1</sup> Աս յունարէն կտորները Հ. Բիքքոնիին գործքին մէջ շատ սխալներով բերուած էին: Ուստի մենք՝ որովհետեւ նոյն բառերը քննելու եւ սխալներն ուղղելու համար նոյն իսկ Ս. Գաստառակը քովերնիս չունէինք, եւ ոչ ալ մեր գործքին մէջ կ'ուզէինք նոյն սխալները կրկին դնել, պատշաճ սեպեցինք որ հոս գոնէ ան վրիպակներն ուղղենք, որոնց համար որ ստոյգ կը կարծէինք թէ օրինակողին կամ շարողին սխալելովն եղած ըլլան, ինչպէս՝ τὴν φησαίνω εἰκῶνα τὴν, εἰκῶνα φησαίνω εἰκόνα, δυνάμενος φησαίνω δυνάμενος, μανθηλίον φησαίνω μανδήλιον, διαμονιζόμενος φησαίνω δαιμονιζόμενος եւ այլն, եւ այլն. իսկ տարակուսականներն այնպէս թող տուինք, ինչպէս որ գտանք:

գրուած է. 'Απολουμένος ο Κύριος ΙΗΣΟΥΣ ΧΡΙΣΤΟΣ.  
այս ինքն՝ Տէրն Տէր Յիսուս Քրիստոս երեւել էր լուսով: (Տես  
Պորփիրոսի ճառին մէջ:)

Չորրորդին մէջ կը տեսնուի Փրկիչը, որն որ իր  
սուրբ երեսին պատկերը վրան տպաւորուած կտաւ մը  
կու տայ Անանէին ձեռքը, ու տակը աս խօսքերս կան.  
'Ο Κύριος τὸ μανδήλιον καὶ τὴν ἐπιστολὴν τῷ Ἀνανίᾳ δι-  
δοῖ. այս ինքն՝ Տէրն Տէր Բարձրեանն ու Կամակը կու տայ  
Անանէին:

Հինգերորդին մէջ Անանէն ներկայացուցած է  
այնպէս իբրեւ թէ ետ է դարձեր Աբգարին կու գայ, ու  
Հետը բան մը կը բերէ, եւ տակն այսպէս գրուած է.  
'Ο Ἀνανίας τὸ μανδήλιον καὶ τὴν ἐπιστολὴν τῷ Ἀυγάρῳ  
διακομίζων. այս ինքն՝ Անանէն Բարձրեանն ու Կամակը կը  
յանձնէ Աբգարին:

Վեցերորդ խորաբանդակին մէջ՝ Ս. երեսին աջ  
կողմը երկու սիւն կը տեսնուի, որոնց մէկուն վրայ Ս.  
Գաստառակը կայ, ու թագաւորն ալ անոր յարգութիւն  
կ'ընէ. իսկ մէկային վրայէն չաստուածոյ մը արձան վար  
կը նետուի, ինչպէս նկարին քովի խօսքերը կը յայտնեն  
այսպէս. Ἀγγαρος τὸ εἶδωλον καταλήσας τὴν εἰκόνα ἀνί-  
στησι τοῦ Κυρίου. այս ինքն՝ Աբգար շատախառնի արձանը  
վար կործանելէն ետքը, անոր տեղը Տեսնն Տէրոյ պատկերը  
կանդնէ:

Եւսկէ ետքը կու գայ եօթներորդ պատկերը, ուր  
սանդուղք մը կը տեսնուի, սիւնի մը վրայ կոթնած,  
վերը պատուհանաձեւ ծակ մը կայ, ու առջին եպիսկո-  
պոս մը կեցած՝ ձեռքը Ս. Գաստառակով, քովն ալ աս  
խօսքերս կան. 'Ο Ἐπίσκοπος ἀποκαλύψας διὰ τοῦ κε-  
ραμίου τὸ μανδήλιον ἀτενίζει. այս ինքն՝ Երէնը կը շնորհ  
Տէր ինչ արձան-եցանն է, եղիւնդը ՂՍ. Գաստառակը  
գրուած:

Ութերորդ պատկերին մէջ դարձեալ եպիսկո-  
պոս մը կը տեսնուի, որն որ սանդուղքէն վար կ'իջնայ,

եւ առ խօսքերս կանք քոյր. 'Απεκάλυψε τὸ μανδήλιον δια  
καλλίστου τοῦ κεραμιδίου ἔχοντος τὴν εἰκόνα. այս ինքն՝  
Ս. Գասպարանի յայտնուեցաւ իշխանքին երեւել, որ  
որոշած էր:

Իններորդը Տրդեհ մը կը ներկայացընէ, որուն  
պատճառը քոյր գրուած խօսքերը կը յայտնեն այսպէս.  
'Ο Ἐπίσκοπος τὸ ἔλαιον τῶ πνυρὶ ἔπιχε ὁ τοὺς Πέρσας  
κατέκασσεν. այսինքն՝ Երբոր եղիւր որ իշխան իշխան  
իւրեւել, Պարսիկներն երեցան:

Այսինքն ձախ անկիւնն եղող վերջին պատկերին  
մէջ թիակներով նաւակ մը կը տեսնուի, ու քիչ մը  
անդին մարդ մը կեցած, որն որ գրեթէ բոլորովին  
ջրի մէջ ընկղմածի պէս է, ու քովի եղած խօսքերը  
բանին պատճառը կը յայտնեն այսպէս. Τοῦ μανδήλιου  
διακομιζομένου εἰς τὴν Κωνσταντινούπολιν ὁ δαιμονιζόμε-  
νος ἰάθη. այս ինքն՝ Երբոր Ս. Գասպարանի Աստուծոյ  
լիւ իւր բերեւել, զիւրեւել թշնամեցաւ:

Թէ Ս. Գաստառակին մինչուկ Տիմայ ստորագրուած  
սկզբէն զարդարանքը կամ շրջանակը Աստուծոյն Պոր-  
փիւրոժենին Տրամանաւը շինուած է՝ ասիկայ Տետեւեալ  
եղանակաւ կը ցուցուի:

Ս. Գաստառակին Եղեսիա քաղքէն Տանդիսու-  
թեամբ Աստուծոյնուպոլիս փոխադրուելը պատահեցաւ  
Քրիստոսի 944 թուականին, ինչպէս իւր տեղն արդէն  
ըսած ենք: Աս փոխադրութենէն ետքը Աստուծոյն  
կայսրը տասնուհինգ տարի ալ ապրեցաւ, որովհետեւ  
959ին մեռաւ, ինչպէս պատմագիրներուն վկայութենէն  
յայտնի է: Իսկ ան սքանչելի տպաւորումը՝ որ եղաւ  
Լատրեան Ս. Պողոսին կտաւին վրայ (Տես վերը, էջ 51,  
52), նոյն Ս. Ճգնաւորին վերջին տարին պատահեցաւ,  
այս ինքն՝ 956ին: Արդ՝ թէ որ Ս. Գաստառակին վերը  
ստորագրուած սկզբէն զարդարանքն աս սքանչելի դի-  
պուածէն ետքը շինուած ըլլար նէ, Աստուծոյն Պորփիւ-  
րոժէն անտարակոյս աս Տրաշքիս յիշատակն ալ նոյն

չըջանակին վրայ փորել տուած պիտ'որ ըլլար, ինչպէս որ Ս. Գաստառակին՝ 944ին Աոստանդնուպոլիս փոխադրուած ատեն՝ դիւահարի մը պատահած յանկարծական բժշկութեան հրաշքը շրջանակին տասներորդ պատկերին մէջ քանդակել տրուած է. ինչու որ աս հրաշքս՝ որ Ս. Ճգնաւորին եղաւ, մէկալէն աւելի նշանաւոր է. որովհետեւ թէպէտ ան կտաւին վրայ ոչ ոք կրնար բան մը նշմարել, սակայն յիշեալ Ս. Ճգնաւորը Քրիստոսի երեսին պատկերը՝ ամէն անգամ որ ան կտաւին վրայ կը նայէր՝ միշտ կը տեսնէր, եւ այնպէս ըստ ամենայնի՝ ինչպէս որ Ս. Գաստառակին վրայ տպաւորուած էր :

Հիմայ ասկէ կրնանք հետեւցընել որ Ս. Գաստառակին վրայի մինչուկ հիմայ կեցող զարդարանքն անտարակոյս 956երորդ տարիէն յառաջ շինուած էր : Այսպէս ալ մէկալ հրաշքը, այս ինքն՝ 944ին Աոստանդնուպոլիս պատահած դիւահարին բժշկութիւնը կը ցուցընէ որ աս զարդարանքը նոյն 944երորդ տարիէն ետքը շինել տրուած է. եւ այսպէս պէտք է ըսել որ Աոստանդին Պորփիրոսէն աս զարդարանքս երկու յիշեալ հրաշքներուն մէջտեղն անցած (944 — 956) տասուերկու տարիներու միջոցին մէջ շինել տուած է :

Տասնուերթներորդ դարուն սկիզբն աս սուրբ մասունքս վերը ստորագրուած զարդարանքներուն հետ մէկտեղ արծաթի սնտուկի մը մէջ առնուեցաւ, Փռանկիսկոս Փերարեան անունով մէկու մը ծախիւք, որն որ արդէն 1594ին ան փառաւոր մատուռն ու տապանակը շինել տուած էր, որուն մէջը որ, ինչպէս քիչ մը ետքը պիտ'որ տեսնենք, աս սուրբ մասունքս մինչուկ աս օրս պահուած է : Մնտուկին երեսը դէպ ի վեր բարձրանալով նեղցած, ու բերանը պղտիկ շրջանակ մը ձեւացուցած եւ ապակի անցուած է. իսկ կռնակի կողմը տափարակ է ու վրան աս լատիներէն խօսքերս փորագրուած են.

FRANCISCUS FERRARIUS

CHRISTI IMAGINIS INCOLUMITATI  
HAC LAMINA CONSULENDUM CURAVIT.

ANNO 1601.

այս ինքն

Փրանկիսկոս Փերարեան՝ պատկերին ապահովու-  
թեան համար աս տապանակս շինել տուաւ 1601ին : —  
Եւ քրիստոսի սուրբ անունը կապող գրերուն բոլորտիքը  
հետեւեալ լատիներէն երկտող ոտանաւորը կը կար-  
դացուի .

Dulce tuum nostro scribas in pectore nomen,  
Namque tuo constat Nomine vera salus.

այս ինքն

Քաղցր անունիդ գրոշմը, ո՛վ Տէր, սիրտըս գրէ,  
Ինչու որ ան միայն ըստոյդ կեանք յինքըն կրէ :  
Աւելի ապահովութեան ու ամրութեան համար, առջի  
շրջանակին վրայ՝ արծրթէ շինուած ոսկեղօծ երկրորդ  
շրջանակ մ'ալ աւելցուեցաւ, որուն վրայ քանի մը ազ-  
նիւ քարեր ալ կը գտնուին . աս զարդս 1702ին կատա-  
րուեցաւ, ինչպէս աս վրայի յիշատակագրէն կ'իմացուի .

Hoc devotionis suae in sacrosanctum Sudarium  
tenue pignus, quod vivens, sed ad mortem in-  
firmus Jo. Jacobus incœpit, superstes et haeres  
Jo. Baptista Deferrariis q. Sanctini ejus frater  
pari animo ac voto prosequebatur anno 1702 in  
Pentecoste prid. non. Junii. — այս ինքն

Լ. Ս Ս . Դաստառակին ունեցած ջերմեռանդութեանը փո-  
քրիկ գրաւականս, զորն որ Յովհ. Յակոբոս իր կենդա-  
նութեան ատեն, բայց մահուան մօտիկ հիւանդութեան  
մէջ ինկած՝ սկսել տուած էր, իր կենդանի մնացող  
Ժառանգ եղբայրը Յովհ. Մկրտիչ Փերարեանց, Ասպ.  
Սանքղինի, նոյնպիսի բարենախանձ փափաքով ու եռան-  
դով լմրնցընել տուաւ յամին 1702, ի տօնի զենտեկոս-  
տէին, ի 6 Յունիսի :

Ս. Գասարաւահը կը յաճըրահոնի ու Գաղղիա կը գարոնի, յե-  
րոյ դարձեալ ետ կը դարձոնի, ու անկէ ետեւ ամէլի եւս զգո-  
շտեմո՛ք կը պահոնի: — Ասորո՛ջոյ արանձինն նախախնամո-  
ւեմո՛քը 1798ին պարահաժ արարանաւեանէն, ինչպէս նաեւ  
1810ին Փարիզ +ու+ը գարոնելու վրանգէն կ'աղաթի:

Ս. ԳԱՍԱՌԱԿԸ՝ Ժ. գլխին մէջ յիշուած 1388ին  
յիշատակագրովը Բարսեղեան Հայ կրօնաւորներուն  
ձեռքը պահպանութեան համար յանձնուած օրէն  
սկսեալ, իրենց մեծ պարտք մը սեպեցին նոյն Հարքը,  
մեռնող Մոնղալոյին կտակին կարգադրութիւնն անմի-  
ջապէս ու հաւատարմութեամբ կատարելու: Ս. մա-  
սունքն արդէն նոյն տարւան մէջ երեւելի տօնի օրերը  
Ս. Աստուածածնայ մատրան խորանին վրայ բացուած  
կը դնէին, որպէս զի ժողովուրդն անոր առջին աղօթէ  
ու տեսնէ, եւ յետոյ դարձեալ աւանդատան մէջ իրեն  
սեպհական տեղը կը պահէին: Երբոր 1507ին Ճենո-  
վացւոց հասարակապետութիւնը զէնքի զօրութեամբ  
Լուդովիկոս ԺԱ. Գաղղիացւոց թագաւորին ձեռքն ին-  
կաւ նէ, դղեկին վրայ պահպանութեան համար կեցող  
հարիւրապետ մը առիթ գտնելով, հնարքով մը զՍ.  
Գաստառակը գողցաւ. սակայն մինակ աս չէ, հապա ա-  
սով մէկտեղ ուրիշ սուրբ մասունք մ'ալ յափշտակեց,  
ձյսինքն՝ Ս. Բարթողիմէոս առաքելոյն ձախ ոտքը, զորն  
որ Մարկոս Սբինոլա Ասպ. Օդդոպոնոյ 1430ին Ապրիլի  
23ին աս եկեղեցւոյն պարգեւ տուած էր, ինչպէս Քալ-  
քանեհինոյ՝<sup>1</sup> ու քարի վրայ փորագրուած յիշատակարան  
մը կը վկայեն, եւ որն որ նոյն աւանդատան մէջ կը  
պահուէր:

Բայց գողութիւնը շուտով իմացուեցաւ. ինչու որ  
գողցողները մէկէն ի մէկ քաղքէն աներեւոյթ ըլլալով-  
նին՝ իրենք զիրենք կասկածելի ըրին ու մատնեցին, ուս-  
տի եւ փախած տեղերնին՝ որ Գաղղիա էր, Ճենովայէն

<sup>1</sup> Քալքան. ծանօթ. 21:



առ Գաղղիայի թագաւորը խաւրուած երկու երեւելի պատգամաւորներուն, այսինքն՝ Ճեանոյ Արիլոյին ու Ճեամպաղղիսոգա Ղացանեային ժրութեամբը գտնուեցան ու բռնուեցան: Իսկ սուրբ մասունքները թագաւորին հրամանաւ անմիջապէս իրենց տեղը ետ խաւրուեցան: Սակայն Ճենովայի քաղաքացիք պատշաճ չսեպեցին նոյները դարձեալ Ս. Բարթողիմէոսի եկեղեցւոյն մէջ պահելու, մինչուկ որ անոնց աղէկ պահպանութեան համար յիշեալ եկեղեցւոյն մէջ նորէն ամուր տեղ կամ պահարան մը չպատրաստեն: Ուստի տէրութեան մասնաւոր կարգադրութեանը համեմատ՝ նոյն մասունքները առ ժամանակ մի քաղքին մայր եկեղեցւոյն մէջ իբրեւ աւանդ մնացին: Իսկ երբոր տապանակը կամ պահարանը ինչպէս որ պէտք էր նէ ամուր ու ապահով կերպով նորոգուեցաւ նէ, յաջորդ տարին Մարմնոյ եւ Արեան Տեառն տօնին օրը հանդիսութեամբ ու փառաւոր թափորով <sup>1</sup>

**1** Աս հանդիսին ատենը հետեւեալ սքանչելի դիպուածը պատահեցաւ: Հանդիսական թափորը յառաջ կը քալէր Քաննեդոյ ու Ճիւսդինիանի փողոցներուն մէջէն. մէյ մ'ալ Սուրբ Գէորգի հրապարակին վրայ բարեպաշտ կնիկ մը ժողովրդեան մէջէն դուրս ելաւ, ու կամացուկ մը թափորին մօտիկնալով յարգութեամբ ծունկ չոքեց Ս. Գաստառակին առջին, եւ սկսաւ այրած սրտիւ ու թախանձանօք, արտասուալից աչօք ու ողորմ ձայնիւ աղաչել Պրկչին՝ որ ողորմի դժայ իր աղջկանը վրայ: Աս աղջիկը վերջին աստիճանի սաստիկ ցաւերու մէջ կը շարշարուէր սլափկուցի վեր. անդամալուծութիւնն ալ մէկալ կողմանէ կը տիրէր խեղճին վրայ, այնպէս որ բոլոր մարմինն ու անդամները քայքայած իրարու անցած՝ այլանդակ հրէշ մը ձեւացեր էր ողորմելին: Մարդասէր տէր Յիսուս խեղճ կնկան ջերմեռանդն աղօթքը մտիկ ըրաւ նոյն վայրկենին մէջ. ուստի հիւանդ աղջիկը մէկէն ի մէկ կատարելապէս առողջանալով ոտք ելաւ վազեց արտօրանօք ու եկաւ դտաւ զմայրը հրապարակին վրայ՝ երբ որ անիկայ տուն կը դառնար: Երկուքն ալ համոզուելով որ աս բանս մինակ Ս. Գաստառակին շնորհքն է՝ սրտանց անբաւ շնորհակալութիւն ու գոհութիւն մատուցին Պրկչին, ու ամենուն առջին հրապարակաւ վկայութիւն տուին ու հաստատեցին եղած հրաշքը:

Աս սքանչելի դէպքս պատմութեան կարգին հետ կապ ունենալուն՝ նշանակեցինք հոս, որն որ իբրեւ ապացոյց ըլլայ մի-

ՉՍ. Գաստառակը մայր եկեղեցիէն իր առջի տաճարը ետ դարձուցին ու անոր սեպհականեալ տապանակին մէջ պահեցին, վեց զանազան բանալիներու տակ, ինչպէս որ տէրութիւնը մասնաւոր աս բանիս համար յայտարարութիւն մը հրատարակելով հրամայեր էր: Ճիւղինիանի իր տարեգրութեանցը մէջ աս դէպքս յետագայ խօսքերով կը յիշատակէ. «Աս տարւոյս (1507ին) վերջերը՝ Գեկտեմբերի մէջ Ս. Գաստառակն ու Ս. Բարթողիմէոսին ոտքը՝ որոնք Ս. Բարթողիմէոսի եկեղեցին Հայ կրօնաւորաց զգուշութեան տակ կը պահուէին, դղեկի պահպանին նենգութեամբն ու Վաւրենտիոս տի Վարիզիոյ անուն մէկու մը չարութեամբը՝ Գաղղիա տարուեցան, սակայն թագաւորին հրամանաւը նոյները դարձեալ (Ճենովա) քաղքին ետ տրուեցան, ու Մարմնոյ եւ Արեան տօնին օրը (1508ին) հանդիսական թափօրով վերոյիշեալ վանքին յանձնուեցան, եւ քաղաքն ալ նոյն վանքին պարտաւորութիւն դրաւ որ անկէ ետքը նոյն սրբազան գանձերուն վրայ աւելի եւս զգուշութեամբ հսկէ»<sup>1</sup>:

Աս բանս քալքանեինոյ<sup>2</sup> ալ աւելի ընդարձակ կը պատմէ: Ս. Գաստառակին յիշեալ կերպով իւր տեղը դառնալուն համար տրուած յայտարարութիւններուն յիշատակագիրները մէկիկ մէկիկ յառաջ բերելէն ետքը, մասնաւոր յայտարարութիւն մ'ալ կը յիշատակէ, զորն զի խել մը ատեն ետքը, այս ինքն՝ 1595ին Մարտի 8ին ծերակոյտը տուած է, եւ որով Ս. Գաստառակին նոր շինած մատուռը փոխադրուելուն հրաման կը տրուի, զորն որ՝ ինչպէս վերը յիշուեցաւ՝ Փռանկիսկոս Փերարեան մեծ ջանքով ու ծախքով շինել տուած ու փառաւոր

անգամայն մէկալ անհամար սքանչելի բժշկութիւններուն, որոնք խիստ շատ անգամ կուրերուն ու կաղերուն պատահեր են նոյն Ճենովա քաղքին մէջ. բայց մենք ճառիս ուսումնական կերպը հրաշք պատմողի կերպին չգարձընելու համար զանց կ'առնունք հոս նշանակելու:

<sup>1</sup> Ճիւղինի. Տարեգր. ամ 1507:

<sup>2</sup> Քալքան. ծանօթ. 17:

պատշգամբով մը զարդարած էր, որուն վրայ տարւոյն մէջ մասնաւոր սահմանեալ տօնի օրերը Ս. Գաստառակը բացուած կը դրուի, ժողովրդէն յարգութիւն ընդունելու համար. եւ տապանակի մը մէջ ալ կը պահուի, որն որ նոյն մատրան մէջտեղը կանգնուած է, առջի տապանակէն շատ աւելի ամուր շինուածով: Բացուելու տեղը մէկ կողման վրայ է ու զանազան բանալիներով կը բացուի, որոնց մէկ հատը՝ վերոյիշեալ յայտարարութեան հրամանին համեմատ՝ նոյն Փերարեանին յանձնուեցաւ, որ քովը պահէ: Բայց հիմայ աս իրաւունքը քեովարի ըսուած ազնուական տոհմին անցաւ, որն որ ան բարեպաշտ ու մեծանձն բարերարին ժառանգն եղած էր:

Միտ Ս. Գաստառակը նոյն Մարտ ամսոյն 11ին իր նորակառոյց մատրանը մէջ դրուեցաւ, ու անկէ ետեւ սկսաւ մինակ Պենտեկոստէի տօնին օրը դուրս հանուիլ, եւ մինչուկ աս օրս ալ միշտ նոյն որոշեալ ժամանակին մէջ միայն կը բացուի, ինչպէս որ քիչ մը ետքը մանրամասնաբար պիտ'որ պատմենք: Բայց աս սովորութիւնը առջի անգամ 1537ին հաստատուեցաւ, նոյն տարին Մայիսի 13ին յայտարարութիւն մը հրատարակուեցաւ աս նոր կարգադրութիւնս ծանուցանելու համար, իսկ անկէ յառաջ 1508ին տրուած մէկալ յայտարարութիւնն ետ առնուեցաւ, որուն մէջ որ սահմանուած էր թէ Ս. Գաստառակը տարին մէկ անգամ, այս ինքն՝ Չատկին երեք օրերուն մէջ միայն բացուի: Հոգեգալստեան փոխուելուն պատճառն էր, որովհետեւ Չատկի տօնախմբութիւնն այնպիսի ժամանակի մը կ'իյնար՝ որ գրեթէ միշտ անձրեւ կը պատահէր, ու բարեպաշտներու անթիւ բազմութիւնը չէր կրնար Հայ կրօնաւորաց գեղեցիկ բլուրն ելլել:

Ս. Գաստառակը պահողներուն այսպիսի հոգացողական զգուշաւոր պահպանութիւնն անոնց աս վարձքը արդիւնաւորցուց որ խիստ վտանգաւոր արկածներու մէջ ալ ատ անգին գանձը չկորսընցուցին եւ իրենց ձեռքը

մնաց : Առջի մեծ վտանգը պատահեցաւ 1798ին, որ ատենը որ Ռամկապետական ըսուած կառավարութենէն ամէն կողմերը գործակալներ խաւրուեցան աս հրամանով որ ամէն տեղ սուրբ եկեղեցիներուն թէ պատուականութեամբ ու թէ հնութեամբ յարգի սեպուած ամէն երեւելի ու պահցու բաները կողոպտեն առնուն ու իրեն բերեն : Աս հրամանս կատարելու որոշուած մարդիկները ձենովա քաղաքն ալ եկան : Ս. Բարթողիմէոսի եկեղեցին եկողները դժբախտութեամբ ան աստիճանի ցած մարդիկ էին, որ ոչ սուրբ մասունքներու առջին դոնէ փոքրիկ յարգութիւն մը կը ցուցնէին եւ ոչ ալ անոնց բարեպաշտ պահապաններէն կ'ակնածէին : Ուստի աս դահիճ մարդիկներս կատաղութեամբ մը եկեղեցւոյն նոյն ատենուան խեղճ մեծաւորին վրայ դիմեցին, ու անկէ պահանջեցին որ Քրիստոսի պատկերին վրայ որչափ որ արծաթեղէն ու ոսկեղէն զարդեր ու պատուական քարեր կային նէ, ամէնն ալ իրենց ձեռքը տայ : Հազիւ թէ պատուական քահանան անոնց պատասխանած էր թէ բանայինները քովերնին պահող քաղաքացւոց երեւելիները չեն ուզեր նոյնները տալ եւ այսպիսի սոսկալի ու սրբապիղծ պահանջման զիջանելով՝ զսուրբ գանձն անոնց ձեռքը յանձնել, ան աստիճանի տաքցան ու կատաղեցան, որ սկսան զարհուրելի ձայներով աղաղակել ու սպառնալ թէ Մենք մեզի տրուած լիակատար իշխանութիւնը հիմակ ի գործ կը դնենք, ու ատ դէմ կեցող սոսկականները մեր բռնութեան տակը կը ճնշենք : Աս ըսած չըսած՝ սկսան անամօթ յանդդնութեամբ մը սուրբ մասունքներուն ձեռք զարնել, ինչպէս Հ. Բիքբոնի կը վկայէ, որն որ նոյն ատեն եղածներուն ներկայ էր, եւ առանց անոնց առջին փոքրիկ յարգութիւն մը ցուցնելու կամ քաշուելու՝ ամպարշտաբար կնիքները քակել ու արծաթի զարդերը մէկիկ մէկիկ փրցընել առնուլ : Մինչուկ բանն ան աստիճան հասաւ, որ խեղճ մեծաւորը Հ. Գ. Գ. Բ. Ռոսսի, սրտին ցաւէն ու ան-

ձկութենէն քիչ մնաց մարելով գետինը պիտ'որ իյնար :  
 Սակայն իր բարեպաշտութիւնը զինքը զօրացուց, օգտա-  
 կար խորհուրդ մը անոր միտքը ձգելով, այս ինքն է՝ որ  
 յիշեալ սուրբ դարդերը բիրտ գործակալներուն ձեռ-  
 քէն ոսկւով ազատէ, ուստի գին կտրեց եւ ամբողջ  
 գումարը ձեռուրնին դրաւ : Ասանկով ապահովցուց ան  
 երկու անօթներուն արծաթը, որոնց մէջը որ Պանդալէոն  
 ու Ալմաքքիոս սուրբ մարտիրոսներուն ոսկրները պա-  
 հուած էին, ինչպէս նաեւ Բարթողիմէոս առաքելոյն՝  
 նոյն եկեղեցւոյն պաշտպան Սուրբին ձախ ոտքի դարշա-  
 պարին վրայ փաթթուած արծաթն ալ, որ սուրբ մա-  
 սունքներս որ անօրէններն արդէն իրենց տապանակներէն  
 հանած սրբապղծաբար աւրշտկելու սկսեր էին : Ասոնք  
 ազատեցան, բայց խեղճ մեծաւորը հարկադրեցաւ Ս.  
 Գաստառակին նկատմամբ անոնց խոստանալ թէ որչափ  
 որ կարելի է նէ շուտով բանալիներն անոնց տէրերէն  
 առնու եւ տապանակը բանայ : Իրօք ալ շատ ջանա-  
 ցաւ աս ընել, բանալիները պահողներուն շատ խօսե-  
 ցաւ զանոնք համոզելու համար որ եթէ դէմ կենալու  
 ըլլան նէ, բռնութեամբ կը ստիպուին զիջանել ու ա-  
 սով սուրբ մասունքն ալ աւելի եւս անպատուութիւն ու  
 վնաս կը կրէ : Սակայն բանալիները պահողները որչափ  
 որ բարեպաշտ, անսացող եւ ուրիշ բաներու մէջ քաղա-  
 քավար էին նէ, աս նիւթիս մէջ բնաւ չուզեցին մեծաւո-  
 րին անսալ, չզիջան, գործակալներուն ըրած սպառ-  
 նալիքները բանի տեղ չդրին, բանալիներուն եւ ոչ  
 մէկ հատը յանձնեցին, ուստի եւ ուզողներն աւելի եւս  
 կատաղելով՝ մտքերնին դրին որ բռնութեամբ մատուռը  
 մտնեն, տապանակը կտրեն եւ ուզածնին առնուն :  
 Բայց Աստուծոյ նախախնամութեամբ բանն այնպէս  
 դարձաւ որ գործակալները նոյն օրերը մտածելու եւ  
 գործելու ուրիշ ծանր ու հարկաւոր զբաղմունքներ ու-  
 նեցան, եւ ըրած սպառնալիքնին ի գործ դնելու խոր-  
 հուրդը մտքերնէն ելաւ, բորբոքած կատաղութիւն-

նին մէջ մ'ալ շիշեցին, վտանգն անցաւ գնաց: Եւ այսպէս Ս. Գաստառակը նոյն ատեն ու հետեւեալ չորս տարիներու մէջ զգուշութեամբ իր տապանակին մէջ պահուած կեցաւ, առանց տարւոյն սահմանեալ տօնի օրերուն մէջ բացուելու եւ ժողովրդեան ցուցուելու: Իսկ երբոր ամէն բան նորէն խաղաղցաւ ու վախ մը չմնաց նէ, դարձեալ սկսան զՍ. Գաստառակը Հոգեգալստեան տօնին օրերը՝ առաջուան սովորութեան համեմատ՝ բանալ ու հրապարակական յարգութեան համար ժողովրդեան ցուցընել, բայց Գաղղիացոց բռնութենէն վախնալնուն համար՝ քանի մը ուրիշ մասնաւոր զգուշութիւններ ալ աւելցուցին:

Իսկ 1810երորդ տարին, որուն մէջ կրօնաւորները իրենց ապաւինութեան տեղերէն հալածուեցան, Ս. Բարթողիմէոսի եկեղեցւոյն մէջն ալ աստուածային պաշտօնը դադրեցաւ եւ ճենովացիներուն գլուխը երկրորդ ու աւելի սաստկագոյն վտանգը հասաւ, եւ մազ մնաց որ զՍ. Գաստառակը բոլորովին կը կորսընցընէին: Իրօք ալ աս բանս կը պատահէր, թէ որ Աստուծոյ բարեխնամ տեսչութիւնը՝ իր միածին Արդւոյն հաւատարիմ ծառաներուն վրայ չհսկէր ու գրեթէ հրաշքով մը ան ծանր վտանգը չվանէր: Նաբոլէոնին սոսկալի հրամանը, որմէ նոյն ատենները բոլոր Եւրոպա կը դողար, արդէն եկած հասած էր ու Ս. Գաստառակին բանալիները սաստկութեամբ կը պահանջէր: Աչ ոք կրնար համարձակիլ դէմ դնելու, ինչու որ եկած հրամանն անդառնալի էր, ու վճռուած էր թէ ինչչափ որ անգին, ու թէ արարհետին, թէ հարստութեան եւ թէ հնութեան կողմանէ երեւելի ու հազուագիւտ բաներ կային նէ, թէ սուրբ բաներ ըլլան թէ աշխարհական, նոյն կայսեր մայրաքաղաքը պիտ'որ տարուէին: Իտալիայի ամէն քաղաքները, նոյն իսկ տիեզերահռչակ Հռոմ մայրաքաղաքը ստիպուած էր աս սոսկալի հարկին գլուխ ծռել: Աւստի ճենովա քաղաքին Ս. Բարթողիմէոս եկեղեցին ալ պէտք

էր որ իր զոհն ընէր, մանաւանդ որ աս Տեառն մերոյ սուրբ երեսին պատկերը շատ գարերէ ի վեր Գաղղիացոց նախանձը գրգռած ըլլալով՝ հողի կը նետէին նոյն անգին գանձը ձեռք ձգելու: Ասոր համար աս առթիւ կը պահանջէին որ անպատճառ նոյնն իրենց յանձնուի: Բանալիները զանազան մարդիկներու քովէն ժողվեցան բերուեցան, որոնք տասուիրեք հատ էին թուով, ու շատ հնագէտ մարդիկներու եւ քաղքին կառավարութենէն որոշուած մեծամեծներու եւ քաղաքացիներու առջին տապանակը բացին. խեղճ ճենովացիները դառն ցաւով կը սպասէին իրին վախճանը տեսնելու:

Հապանակը բացուելուն պէս՝ Ս. Պատկերն ալ իր հրաշքը ցուցուց, որովհետեւ իր երեսը հոն ներկայ եղողներուն աչքէն կարծես թէ պահեց ու ինքը զինքը ծածկեց: Ուստի գործակալներն անիկայ ձեռուրնին առին, նայեցան, որչափ որ զննեցին նէ, վրան երեւելի ու արտաքոյ կարդի նշանաւոր բան մը չտեսան, հապա մինակ թխատեսիլ կտաւ մը, եւ հին ու դոյնը նետած պատկեր մը, որուն վրայ հազիւ թէ մարդու կերպարանք մը կը նշմարուէր: Աերջապէս որոշեցին որ չառնուն. վասն զի, ըսին, ասիկայ կայսերական թանգարան մը զարդարելու բան չըլլալով, մէկտեղ տանելու աշխատութիւնը չարժեր: Աս ըսելով թող տուին գացին: Բայց չըլլայ որ մէկուն միտքը գայ թէ աս պատկերս իրօք այնպէս առանց գեղեցկութեան ու աւրշտկած բան մ'եղած ըլլայ: Չէ. վասն զի ո՛վ որ աս պատկերս տեսնելու առիթ ունեցաւ նէ, անոր աղուորութեանն ու փառաւորութեանը վրայ ապշած մնացած է. հապա ըսելու ենք որ աս սքանչելի փրկչական պատկերս չուղեց նոյն ատեն իր շնորհալի երեսին վայելչութիւնն ան մարդիկներուն աչքին ցուցընել, ու պահեց կամ թէ ըսեմ՝ ծածկեց ինք զինքը, որպէս զի Ս. Գրքին հետեւեալ խօսքերն աս առթիս մէջն ալ ստուգուի, թէ Թագոցեց (Գարցեց) զէրեւելի նոյանէ <sup>1</sup>:

<sup>1</sup> Երկր. Օրին. ԼԲ. 20:

1) . Գաստառակին եղած ընդհանուր յարգութիւնը : անոր սովորական ու սովորականէն դուրս արտասոյ կարգի Բացոնելը , մարդիկէրէն ջերմեանդական թշարանք ընդունելու համար :

Գ.ԲԵԹԷ Տինգ Տարիւր տարի կ'ըլլայ , յորմէ Տետէ բովանդակ Լիգուրիայի ու սահմանակից երկիրներու մէջ Տամբաւ տարածուած է թէ ճենովա քաղաքը Աստանդնուպոլսէն բերուած Քրիստոսի Տեառն մերոյ Տրաշագործ մէկ պատկերը կը գտնուի : Աս Տամբաւս ելած տարիէն սկսեալ՝ թէ մօտ ու թէ Տեռաւոր տեղերէն անթիւ մարդկան բազմութիւն Տոն կը դիմէին , աս սուրբ պատկերս տեսնելու եւ զանիկայ ջերմեանդութեամբ յարգելու համար : Եւ որովՏետեւ յայտնի է ամենուն թէ 1507ին պատահած դէպքէն (Տես նախընթաց գլուխը) ետքը կարգ դրուեցաւ ու սովորութիւն հաստատուեցաւ որ անիկայ տարին մէկ անգամ միայն՝ (յառաջագոյն Ս . Զատկին օրերը , ետքը Հոգեգալստեան օրերը) բացուի ու ժողովրդեան առջին յարգութեան համար բաց թող տրուի , եւ ուրիշ ատեն իր տապանակին մէջ գոց պահուի , աս գիտնալով ամէն մարդ կը ջանայ որ նոյն սահմանեալ տօնի օրերը Տոն երթայ ուխտի համար , ինչպէս որ մինչուկ հիմայ ալ կ'ըլլայ :

2) . Գաստառակն այսպէս հանդիսական կերպով բացուելէն յառաջ՝ իննօրեայ ջերմեանդութիւն մը կը կատարուի , նոյն իսկ Ս . Գաստառակին մատրան մէջ : Իններորդ օրը իրիկունը սովորական հանդիսութեամբ եկեղեցական ու աշխարհական պաշտօնատէրներու առջին տապանակը կը բացուի , ու Տետեւեալ կիրակին օրը , որ է Ս . Պէնտէկոստէի տօնախմբութիւնը , առտուանց ժամը վեցին նոյն մատրան փառաւորապէս զարդարուած պատշգամբէն՝ Տոն ժողոված բարեպաշտ ժողովրդեան ու բովանդակ քաղքին Ս . Գաստառակով օրհնութիւն կը տրուի ու Տոն անանկ բաց կը դրուի :



Եւ արարողութիւնս երեք օր վրայէ վրայ ամէն ան-  
 դամ բացուելու ատեն կը կատարուի: Եթէ որ օրն աղէկ  
 կ'ըլլայ ու անձրեւ չի գար, այնչափ շատ բազմութիւն  
 այցելութեան կու գայ, որ եկեղեցին զամէնը մէկտեղ  
 չի կրնար մէջը բովանդակել, ուստի հարկ կ'ըլլայ որ  
 օրհնութիւն տալը ստէպ կրկնուի. հասարակօրէն երեք  
 ժամը մէյ մը կը կրկնուի, երբեմն ալ աւելի յաճախ,  
 որպէս զի բարեպաշտ հաւատացելոց ջերմեռանդու-  
 թիւնը գոհ ըլլայ: Բայց նախընթաց ու հետեւեալ օր-  
 հնութեան մէջտեղը՝ պատշգամբին կից եղող արտաքին  
 մատրան մէջը քահանայ մը Ս. Գաստառակը ձեռքն ա-  
 ուած կը բռնէ, որպէս զի անդադար եկող ժողովուրդեան  
 մէջէն պատշգամբին սանդուղքին վրայ ելլել ուզողները  
 զանիկայ աւելի մօտանց տեսնեն ու իրենց յարգու-  
 թիւնն ընեն: Տեսնելու բան է թէ ինչպէս բարեպաշտ  
 ժողովուրդը Յիսուսի սուրբ պատկերին առջին երեսը գե-  
 տինը դրած՝ սրտաշարժ ջերմեռանդութեամբ կ'աղօթէ,  
 Փրկչին երկրպագութիւն կը մատուցանէ, իր զանազան  
 պիտոյքը կը խնդրէ ու անհամար համբուրիւ Ս. երեսը  
 կը ծածկէ: Շատերն ալ իրենց վարդարանները Ս. պատ-  
 կերին կը դպցընեն, որպէս զի անոր ամենակարող պաշտ-  
 պանութեան գրաւականը մէկտեղ տներնին տանին:

Եթէ որ մեծ պատճառ մը պատահելու ըլլայ, ինչ-  
 պէս ըսեմ՝ թագաւորներէն կամ մեծ իշխաններէն մէկը  
 նոյն օրերը հոն գալու ըլլայ Ս. պատկերին այցելութիւն  
 ընելու, ան ատեն ասոնց բարեպաշտութիւնը գոհ ընե-  
 լու համար՝ մինչուկ առջեւի շաբաթ օրը բաց կը մնայ,  
 իսկ թէ որ այսպիսի ծանր պատճառ մը չ'ըլլար նէ, ան-  
 խափան Ս. Պենտէկոստէին երրորդ օրը իրիկունը կը վեր-  
 ցուի ու կը պահուի: Բայց տապանակին ամէն անգամուն  
 օրըստօրական թէ բացուելուն ու թէ գոցուելուն՝ քաղ-  
 քին առաջին երեսփոխանը ներկայ պիտ'որ ըլլայ. եւ թէ  
 որ ինք չի կրնար գալ նէ, իրեն տեղապահը կը խաւրէ,  
 որն որ իրեն հետ մէկտեղ ան բանալին ալ կը բերէ,

զորն որ առջի ատենները տոժը կամ դուքսն իր պա-  
լատին մէջ կը պահէր: Աս ամէն հանդիսութիւնը հրա-  
պարակական յիշատակագրով մը կը լմընայ, այս ինքն՝  
թղթի կ'անցնի յիշատակարան կ'ըլլայ, որուն բուն օրի-  
նակը քաղքին գիւանին մէջ կը պահուի:

Ա երը ըսինք որ Ս. Գաստառակին տապանակը տա-  
րին մէկ անգամ մինակ կը բացուի: Սակայն եղած է ու  
կրնայ ալ ըլլալ որ սովորականէն դուրս ծանր հարկաւ-  
որութեան կամ մասնաւոր ջերմեռանդութեան համար ալ  
բացուի: Բառնաբեան կղերիկոսաց քովը գտնուող յի-  
շատակարանի մը մէջ այսպիսի սովորականէն դուրս շատ  
բացումներ կը պատմուին, որոնք զանազան ատեններ կա-  
ռավարութեան մասնաւոր յայտարարութեան մը միջոցաւ  
հրաման տալովն եղած են: Մենք հոստեղս անոնց մէկ  
քանին միայն կարճառօտիւ կը յիշենք:

Ս. Գաստառակին առաջին անգամ սովորական ա-  
տենէն դուրս բացուիլը պատահեցաւ 1599ին, ինչպէս  
Քալքանեհինոյ<sup>1</sup> ալ կը յիշատակէ, այս ինքն՝ երբոր Աւս-  
տրիայի կայսերական տանէն Մարգարիտա դշխոյն՝ Սպա-  
նիայի թագուհին իր ճամբորդութեան մէջ ճենովա քա-  
ղաքը հանդիպեցաւ: Ս. Գաստառակը՝ Գեր. Մատթէոս  
Ռիվարոլա արքեպիսկոպոսին խնդրելովը փառաւոր հան-  
դիսական թափորով քաղքին մայր եկեղեցին տարուեցաւ  
ու հոնտեղ իշխանուհին իր ջերմեռանդական յարգու-  
թիւնը մատոյց: Բարեպաշտ տիկինն ուղեց նաեւ որ  
նոյն սուրբ պատկերին օրինակը միշտ քովն ունենայ, ու  
Գ. Բ. Գասդելլոյ պատկերհանը կատարեց յետոյ անոր  
փափաքը:

1625ին վտանգներուն մէջ, երբոր թշնամիները  
քաղքին վրայ քալելու կը սպառնային, քաղքին պարիսպ-  
ները դեռ ան ատեն ըստ բաւականին ամուր չըլլալուն՝  
ժողովուրդը մտածեց որ Ս. Գաստառակն ապահովու-  
թեան համար Ս. Լաւրենտիոսի եկեղեցին տանին: Բայց

<sup>1</sup> Քալքան . ծանօթ . 2:

վտանգն անցնելէն ետքը հետեւեալ տարին անկէ դարձեալ Ս. Բարթողիմէոսի եկեղեցին բերուեցաւ :

1668ին Գանտիա Մահմէտականներէն պաշարուած ըլլալուն՝ նոյն տարւան Հոկտեմբերի 6ին Ս. Գաստառակը բացուեցաւ ու առջին հրապարակական աղօթքներ եղան :

Դարձեալ 1671, 1686, 1689 տարիներուն մէջ նոյն Ս. Գաստառակն իր սովորական ատենէն դուրս բացուեցաւ, քանի մը երեւելի իշխաններուն ջերմեռանդութիւնը գոհ ընելու համար, ինչպէս Ղիզա կարգինալին, Մանդուլի դքսին ու Նայպուրկի իշխանին : Իսկ 1691ին նոյն Ս. Գաստառակը բացուած՝ աւագ խորանին վրայ գրուեցաւ, Ճենովայի արքեպիսկոպոսը՝ Գեր. Ֆիէսքիի ներկայութեամբը, շրջանակին նոր ապակի մը անցընելու համար :

Նոյնպէս 1706ին Յուլիս ամսոյն 15ին Ս. Պատկերը բացուեցաւ, Սաւոյայի թագաւորական տան բարձրապատիւ իշխաններէն յարգութիւն ընդունելու համար, որոնք նոյն ատենները Գուրին քաղաքը պաշարուած ըլլալուն՝ Ճենովա եկած էին : 1716ին նոյնը ցուցուեցաւ Պաւիէրայի կարողոս դքսին, որն որ ետքը կայսր եղաւ, ու 1747ին Լեհաստանի իշխան արքեպիսկոպոսին :

Շնորհաց (delle grazie) ըսուած վանքին Լատերանեան նուիրական կուսանքներուն ու Սուրբ Անտոնի վանքին Փռանկիսկեան կուսանքներուն՝ 1745ին հրաման տրուեցաւ որ Ս. Գաստառակը տեսնեն ու անոր առջին աղօթք ընեն, երբոր Ազդիացոց ումբակոծութենէն փախչելով, աս յիշուած կուսանքներէն առջինները՝ Սուրբ Բարթողիմէոսի վանքը եւ վերջինները Յերպինոյի Ս. Խաչի վանքն ապաւինելու հարկադրուած էին :

Նոյն յիշատակարանին մէջ գրուած է նաեւ որ երբոր 1747ին կայսերական զօրքը Ճենովացոց հասարակապետութեան երկիրներն աւրշտկելու եւ իրենց ճամբան գէպ ի մայրաքաղաքը շտկելու սկսան նէ, տեղացիք Ս. Գաստառակը նոյն տարւոյն Ապրիլի 24ին բա-

ցին, ու ժողովուրդն իննօրեայ ջերմեռանդութիւն կատարեց առջեւը: Նոյնպէս 1767ին Փետրուարի 27ին նոյն պատկերը բացուելով երեքօրեայ ջերմեռանդութիւն կատարուեցաւ առջին, նոյն ատենը պատահած սաստիկ երկրաշարժին դադրելուն ճար մ'ըլլալու համար: Քաղաքացիներէն շատերը վախերնէն արդէն ճենովայէն դուրս փախած էին. իսկ աս ջերմեռանդութենէն անմիջապէս ետքը, որ է ըսել՝ նոյն իսկ երրորդ օրը, մութը փարատեցաւ ու երկինքը դարձեալ պայծառացաւ ու վտանգն անցնելով՝ ալ վախնալու բան չմնաց:

Նաեւ 1819երորդ տարին նշանաւոր եղաւ, Ս. Գաստառակին արտաքոյ կարգի ու հանդիսական կերպով մը բացուելուն պատճառաւ: Ասոր առիթ եղաւ Բառնաբեան կղերիկոսաց, որոնք արդէն 1810ին իրենց վանքէն վճնտուած էին, դարձեալ նոյն Ս. Բարժողիմէոսի վանքը դառնալը: Աս ուրախական առթիս մէջ Ս. Գաստառակն իր մատրան խորանին վրայ բացուած դրուեցաւ, եւ ան բարեպաշտ վանականները, ինչպէս նաեւ անմոռաց յիշատակի արժանի Ախկտոր Էմմանուէլ (Սարգիսեայի) թագաւորն անոր առջին իրենց ջերմեռանդութիւնը կատարեցին: Աս անգամէս ետքը ալ չիզիտցուիր թէ Ս. Գաստառակը սովորական ատենէն դուրս ու հրապարակաւ բացուած ըլլայ, ի բաց առեալ ղ1840երորդ տարին միայն, որուն մէջ նոյնը դարձեալ իր սովորական ատենէն դուրս մասնաւոր անձի մը, այս ինքն՝ Յովսէփի Գափփէլէզդի անուն իտալացի քահանայի մը ցուցուեցաւ, զորն որ նոյն Գափփէլէզդիին այսպէս կը պատմէ. «Աս պատկերս մինակ թագաւորներու աղաչանքով եւ ան ալ խիստ քիչ անգամ իր սովորական ժամանակէն դուրս կը բացուի՝ ատենելու համար. երբեք ալ վրայի ապակին անկէ չիհանուիր: Իսկ ես կրնամ պարծենալ որ ան առանձնական մարդը, որուն՝ մինչուկ հիմայ թագաւորներէն զատ ուրիշի մը չեղած շնորհքը պատահած ըլլայ՝ ես մինակ եմ: Ես 1840ին նոյն (ճենովա) քաղաքը գտնուելովս, Վար-

մեղեանց եկեղեցին մեծ պահոց քարոզները տալու համար, մասնաւոր հրաման խնդրեցի ու ընդունեցայ, որպէս զի յիշեալ պատկերը տեսնեմ, ու ապակիէն ալ հանուած ձեռքս բռնելով մտադրութեամբ մը զննեմ. որպէս զի կարող ըլլամ վկայել թէ ասիկայ ատենօք Հայաստան գտնուող նոյն իսկ (փրկչական պատկերին) նախագաղափարն է, ինչպէս որ պատմութիւններէն ու ազգային (Հայոց) վկայութիւններէն արդէն գիտէի<sup>1</sup>: (Աս պատկերը քննելուս վրայ իբրեւ արտաքոյ կարգի բան մը՝ խօսեցան թէ ճենովայի ու թէ Լոմպարտեան Աննետկոյ լրագիրները:) Ուստի ասոր համար անոր ճիշդ ստորագրութիւնն ընելու եւ հաստատութեամբ վկայելու կը համարձակիմ որ թէ ճենովացոց, թէ Յունաց ու թէ Հայոց պատմական յիշատակարանները միաբան ու միաբերան են իրենց վկայութեանց մէջ, թէ ասիկայ նոյն իսկ ան պատկերն է, զորն որ Անանէ նկարեց ու Եղեսիա քաղաքը Հայոց Աբգար թագաւորին բերաւ Հասարակ թուականին ՅՁերորդ տարին,<sup>2</sup>:

Աս մատենագրիս վերի խօսքերուն մէջ մինակ բան մը կրնանք ու կը պարտաւորինք սրբագրել, այս ինքն՝ ան ըսածը թէ Յիսուսին պատկերը Անանէէն նկարուած ըլլայ, եւ ոչ թէ Տեառն մերոյ երեսը կտաւին քսուելով միայն՝ պատկերը տպաւորուած ըլլայ, ինչպէս մինչուկ հիմայ մեզի ծանօթ եղած թէ յոյն ու թէ հայ պատմիչները կը զրուցեն: Իրեն աս կարծիքն առանձնական բան մըն է, բնաւ յիշատակարանի մը մէջ չի գտնուիր, հասկա իրմէ միայն հնարուած է, գուցէ անոր համար որ առանց հրաշք խոթելու պարզ եղանակաւ մը բանը մեկնէ:

1 Աս մարդս Աննետիկ Սրբոյն Ղազարու վանքը, Յարգոյապատիւ Մխիթարեան Հարցմէ բաւականապէս հայերէն սորված է, մեր ազգային պատմութեան վրայ մանրամասն տեղեկութիւններ ունի, եւ մեր հին մատենագիրներէն քանի մը հատն ալ լատիներէնի ու իտալերէնի թարգմանելով, անմահ յիշատակաց արժանի Գրիգորիոս ԺՁ. Ս. Քահանայապետէն Օրհնութեան թուղթ ընդունած է:

2 Յովս. Գափիիէլ. Հայաստան, Հատ. Գ. էջ 27. Ի Ծանօթ:

Արովհետեւ Ս. Գաստառակին պատմութիւնը՝ Աբգար թագաւորին ու գլխաւորաբար անոր ճշմարիտ հաւատքի դառնալուն պատմութեան հետ կից է, անոր համար պատշաճ կը սեպեմ Ս. Գաստառակի վրայի տեղեկութիւններս աւարտելէն ետքը, նոյն իսկ Աբգարի վրայ ալ քանի մը մասնաւոր գիտնալու արժանի բաներ աւելցընել, որոնք գուցէ մեր հասարակ ժողովրդեան դեռ այնչափ ծանօթ չեն : Մենք աս առաքինի թագաւորիս մեծամեծ շնորհակալութիւններ պարտական ենք՝ իրեն առաքելական նախանձուն ու եռանդեան համար, որով արժանի եղաւ Քրիստոսէ Տեառնէ մերմէ իրեն ամենասուրբ երեսին պատկերն իբրեւ վարձք ընդունելու : Իսկ ընդունածն ալ մեզի՝ մեր ազգին կ'ըսեմ ու բովանդակ հաւատացեալներու ժողովքին՝ իբրեւ անգին ու սրբազան դանձ մը յիշատակ թողուց, որն որ մեր Փրկչին անբաւ սիրոյն գրաւականն ըլլալով՝ մեր սրտերուն մէջ խորին երախտագիտութեան պարտքն անջնջելի կը դրոշմէ : Ուր թողունք Ս. Թագաւորիս մէկալ առաւելութիւնն ալ, որ ճշմարիտ աստուածագիտութեան անզուգական փափաքովը բորբոքած եւ ուղիղ հաւատքն ընդունելու պատրաստականութեամբը սրբուած ըլլալով, մեր Հայաստան աշխարհքիս ճշմարիտ հաւատքի դառնալուն առջի դուռը բացաւ :

Աբգարին վրայ հետեւեալ պատմելիքներս ալ ինչպէս որ առջի երկու գլուխներուն մէջ ըրի՝ նոյնպէս Խորենացւոյն պատմութիւններէն առնելով, անոր խօսքերովը յառաջ պիտ'որ բերեմ : Ինչու որ անիկայ չէ թէ միայն արժանահաւատութեամբը, հասկա նաեւ համառօտասիրութեամբը յարգի ու զարմանալի է : Արդ ան տեղէն պիտի սկսիմ շարունակել, ուր որ (գործքիս Բ. գլխին մէջ) յիշեալ մատենագրին խօսքերն ընդմիջելով թողտուի, այս ինքն՝ Խորենեան Հայոց պատմութեան ԼԳ. գլխէն :

Թարեւս առաւել երեւիս առաւել Աբգարին կը խորհի :  
 — Աբգար՝ իր հասարակութեան դարձեալ ետեւ շահաւոր խորհուրդ-  
 ներս իշխելու կը գրէ, Քրիստոսի ստորագրութեան վարդապետութեան  
 ինչու յաշարակներու եւ շահեկան անոնց տարողութեան համար : —  
 Աբգարին յանգ : (Մովս. Խոր. Գեր. Բ. Գ. Լ. Լ. Գ. :)

«Ս» եր փրկչին երկինք համբառնալէն ետքը, Թով-  
 մաս առաքեալ տասուերկուքներէն մէկը, զԹադէոս՝ եւ  
 թանասուն աշկերտներէն մէկը Եդեսիա քաղաքը խաւ-  
 րեց, զԱբգար բժշկելու եւ Տեառն մերոյ հրամանին  
 համեմատ՝ աւետարանը հոն քարոզելու համար :

«Թադէոս Տուբիա անունով հրեայ իշխանի մը տուն  
 իջաւ, որն որ՝ ինչպէս կ'ըսեն, Քաղրատունեաց ցեղէն  
 էր : Տուբիա՝ Արշամայ հալածանքէն փախչելով մը աղա-  
 տած ըլլալով, իրեն ուրիշ ազգականներուն պէս հրէա-  
 կան օրէնքը չէր թողուցեր, հապա անոր վրայ հաստա-  
 տուն կեցած էր, մինչուկ որ Քրիստոսի վարդապետու-  
 թիւնն ընդունեցաւ : Աս միջոցիս Թադէոսին գալուն լուրը  
 բոլոր քաղքին մէջ տարածուեցաւ : Երբոր Աբգար աս  
 իմացաւ նէ՛ ըսաւ. Աս ան մարդը պիտ'որ ըլլայ, որուն  
 համար որ Յիսուս ինծի գրած էր. ու զինքն անմիջապէս  
 իր առջեւը կանչել տուաւ : Երբոր Թադէոս անոր քովը  
 մտաւ, Աբգար անոր երեսին վրայ սքանչելի երեւոյթ մը  
 տեսաւ. ուստի շուտով մը իր գահէն ցատքեց, անոր  
 առջին երեսին վրայ ինկաւ եւ այսպէս անոր իր մեծա-  
 րանքը ցուցուց : Աս բանս իր քովն եղող բոլոր իշխան-  
 ները մեծ զարմացման մէջ ձգեց, որովհետեւ ասոնք Աբ-  
 գարին երեւցած հրաշքէն բան մը չէին գիտեր :

«Ան ատեն Աբգար իրեն այսպէս խօսեցաւ. Գուն  
 իրաւ ան օրհնեալ Յիսուսին աշկերտն ես, զորն որ ինք  
 խոստացած էր ինծի խաւրելու. եւ իմ ցաւերս կրնաս  
 արդեօք բժշկել : Թադէոս պատասխան տուաւ անոր.  
 Թէ որ դուն Աստուծոյ Արդւոյն Յիսուսի Քրիստոսի կը  
 հաւտաս նէ, քու սրտիդ ամէն բաղձանքները կը կատա-

րուին: Աբգար ըսաւ անոր. Ես արդէն անոր ու իրեն  
 Հօրը հաւտացեր եմ, եւ իմ բոլոր զօրքերս մէկտեղ առ-  
 նելով գայի պիտ'որ զանիկայ խաչ հանող Հրեաները ջար-  
 դելու համար, թէ որ Հռոմայեցւոց տէրութենէն չակն-  
 ածելու ըլլայի:

“Ասոր վրայ սկսաւ Թագէոս Աբգարին ու անոր  
 քաղքին աւետարանը քարոզել, եւ յետոյ ձեռքն ա-  
 նոր վրայ դնելով բժշկեց զանիկայ, ինչպէս նաեւ Աբգիու  
 անունով թագաւորին մտերիմ ու քաղքին փառաւոր  
 իշխանը, որ ոտնացաւութիւն ունէր (պատագրոս էր):  
 Ասկէ ալ զատ՝ քաղքին մէջ որչափ որ հիւանդ ու տկար-  
 ներ կային նէ՛ առողջացուց, եւ այսպէս ամէնքն ալ ճշմա-  
 րիտ հաւատքի դարձան: Աբգար ու անոր հետ մէկտեղ  
 բովանդակ քաղաքը մկրտուեցաւ, մեհեանները գոցուե-  
 ցան, ու որչափ որ խորաններու եւ սիւներու վրայ չաս-  
 տուածներու պատկերներ կային նէ, եղէգներ փաթթե-  
 լով ծածկեցին: Ի վերայ այսր ամենայնի Աբգար ոչ զոք  
 բռնադատեց ճշմարիտ հաւատքն ընդունելու, հապա  
 հաւատացեալներու թիւն օրէ օր ինքիրմէ կը շատնար:  
 Թագէոս առաքեալը խոյր շինող մարդ մըն ալ մկրտեց,  
 որուն Ադդէ անուն դրաւ, զինքը Եդեսիա քաղքին  
 եպիսկոպոս ձեռնադրեց, ու իրեն տեղ զանիկայ թա-  
 գաւորին քովը թողուց: Անկէ ետքը ինք Աբգարէն հրո-  
 վարտակ մը առնելով, որ ամէն մարդ քրիստոսի աւե-  
 տարանին գլուխ ծռէ, ելաւ գնաց Աբգարու քեռորդին՝  
 Սանատրուկին քովը, զորն որ ինք Աբգար տէրութեան  
 կառավարիչ ու զօրաց վերին հրամանատար դրեր էր:

“Աս միջոցիս Աբգար ուզեց Տիբերիոս կայսեր աս  
 հետեւեալ նամակս գրել:

“Աբգար— Տիբերիոսին գրած նամակը:

“Աբգար Հայոց թագաւոր, իմ տիրոջս Տիբերիոս  
 Հռոմայեցւոց կայսեր՝ ողջոյն:

“Թէպէտեւ գիտեմ որ քու Մեծափառութիւնդ  
 ամէն բանի տեղեակ է, բայց քու մտերիմ բարեկամդ



ըլլալովս կ'ուզեմ աս հետեւեալ բանս Հրամանոց տեղն  
 ի տեղը գրով իմացընել: Պաղեստինացւոց երկիրը բնա-  
 կող Հրեաները մէկտեղ գալով, զՔրիստոս խաչ հա-  
 նեցին, թէպէտ անիկայ ամենեւին յանցանք մը չունէր,  
 մանաւանդ թէ անհամար մեծամեծ հրաշքներ ու բժշկու-  
 թիւններ անոնց մէջը գործեր ու մինչուկ շատ մեռած-  
 ներ ալ կենդանացուցեր էր: Բայց Հրամանքդ գիտցած  
 եղիր որ աս հրաշքներս սոսկ մարդ մը չիկրնար ամե-  
 նեւին գործել, հապա մինակ Աստուած կրնայ ընել: Ինչու  
 որ նոյն իսկ Հրեաները զանիկայ խաչ հանած ատեննին՝  
 արեգակը խաւարեցաւ, երկիրս դողալով շարժեցաւ, ու  
 երեք օրէն ետքը անիկայ ինք իրեն կենդանացաւ, յա-  
 րեաւ ու շատերուն երեւցաւ: Եւ մինչուկ աս օրուան  
 օրս իր անունն ամէն տեղ իր աշկերտներուն ձեռօքը  
 մեծամեծ հրաշքներ կը կատարէ, ինչպէս նաեւ իմ ան-  
 ձինս վրայ ալ պատահեցաւ: Արդ Հրամանոց Մեծափա-  
 ռութեան գործն է որ թէ այսպիսի մեծ յանցանքի մը  
 տէր եղող հրէական ազգին պէտք եղած պատիժը հրա-  
 մայես, ու թէ բոլոր աշխարհք հրովարտակ մը հանես, որ  
 ամէն մարդ զՔրիստոս իբրեւ ճշմարիտ Աստուած պաշտէ:  
 Ո՛ղջ մնաս,:

“Տիբերիոսին Աբգարոս գրած պատասխանը:

“Տիբերիոս կայսր Հռոմայեցւոց, Աբգարու Հայոց  
 թագաւորին ողջոյն:

“Ինչու մտերմութեանդ գիրն իմ առջեւս կարդա-  
 ցուեցաւ, որուն համար քեզի շնորհակալ կ'ըլլամ: Թէ-  
 պէտ մենք արդէն յառաջագոյն (Քրիստոսի) հրաշքնե-  
 րուն վրայ շատերէն շատ բան լսած էինք, սակայն Պիղա-  
 տոս ալ մասնաւորապէս իբրեւ ի պաշտօնէ զանոնք մե-  
 զի ծանոյց, ու հաստատեց որ զանիկայ շատերն իր յա-  
 րութենէն ետքը ստուգիւ Աստուած ճանչցած են: Ասոր  
 համար ես ալ մտածեր էի որ նոյնն ընեմ, ինչ որ  
 դուն պատշաճ սեպեր ես ընել: Բայց որովհետեւ Հռո-



իմ, շնորհք ընես Երուսաղեմայ մէջ Պիլատոսին տեղ  
ուրիշ մը գնելու, որպէս զի քու հրամանովդ անիկայ  
իրեն յանձնուած պաշտօնէն անարգանօք վար ձգուի,  
վասն զի Հրէից կամօքը կատարեց եւ զՔրիստոս անիրաւ-  
ութեամբ առանց քու հրամանիդ խաչել տուաւ:

“Ողջ կենաս կը բաղձամ,”:

“Մըգար աս իրմէն դրուած նամակին օրինակը, ինչ-  
պէս նաեւ մէկալ նամակներունը՝ իր դիւանին մէջ պա-  
հել տուաւ:

“Նաեւ փոքրիկ Ներսէհին, Բաբելոնի՝ Ասորես-  
տանցոց թագաւորին ալ թուղթ մը գրեց:

“Աբգարոս՝ Ներսէհին գրած նամակը:

“Մըգար թագաւոր Հայոց, Ներսէհ օրդեկիս ողջոյն:

“Բոլոր ողջունագիրդ առի, զՊերոզ իր կապանքէն  
արձրկեցի, ու անոր իրեն յանցանքը ներեցի: Ուստի թէ  
որ քեզի հաճելի է նէ, Նինուէի վերակացութիւնն անոր  
յանձնես, ինչպէս որ քեզի աղէկ կ'երեւայ: Իսկ մէկալ  
բանին գալով, զորն որ դուն ինձի գրած էիր թէ քե-  
զի խաւրեմ՝ ան բժիշկը, որն որ այնչափ հրաշքներ կը  
գործէ եւ կրակէն ու ջրէն՝ աւելի հզօրագոյն ուրիշ Աս-  
տուած մը կը քարոզէ, որպէս զի դուն զանիկայ տես-  
նես ու անոր խօսքերը լսես, գիտցած ըլլաս որ ասիկայ  
այնպիսի բժիշկ մը չէր, որն որ մարդկային արհեստ  
բանեցրնէր, հապա անիկայ Աստուծոյ Արդւոյն՝ կրակի ու  
ջրոյ արարչին աշկերտն էր, որուն որ Հայաստանու ա-  
ռաքելութիւնը վիճակուած էր: Բայց ասոր գլխաւոր ըն-  
կերներէն մէկը, Սիմոն անունով, Պարսկաստան խաւ-  
րուած է: Զանիկայ հոն փնտուել տուր եւ անոր խօս-  
քերը մտիկ ըրէ, թէ դուն ու թէ քու հայրդ Արտաշէս 2:  
Անիկայ ամէն հիւանդութիւնները կը բժշկէ ու փրկու-  
թեան ճամբայ կը ցուցրնէ,”:

1 Կրակն ու ջուրը Պարսից աստուածներն էին:

2 Պարսից թագաւորը:

“Դարձեալ ուրիշ նամակ մ'ալ Արտաշէս Պարսից  
Թագաւորին գրեց, հետեւեալ կերպով :

“Աբգար — Արտաշէսին գրած նամակը :

“Վաբար Թագաւոր Հայոց, եղբօրս Արտաշէս Պար-  
սից Թագաւորին՝ ողջոյն :

“Եւտեմ որ դուն արդէն Քրիստոսին բաները լսած  
ես, որն որ Աստուծոյ Արդի էր, եւ Հրեաները խաչ  
հանեցին, ու ինք յարուծիւն առնելով կենդանացաւ,  
եւ իր աշկերտները բոլոր աշխարհք խաւրեց, ամէն տեղ  
մարդիկներու քարոզութիւն ընելու համար : Իսկ իրեն  
գլխաւոր աշկերտներէն մէկը, Սիմոն անունով, քու տէ-  
րութեանդ երկիրներուն մէջ կը գտնուի : Չանհկայ փրն-  
տուել տուր ու գտիր, անհկայ ձեր ամէն ախտերն ու հիւ-  
անդութիւնները կրնայ բժշկել ու ձեզի փրկութեան  
ճամբայ ցուցընել, դուն անոր խօսքերուն հաւտա, դուն  
ու քու եղբայրներդ եւ անոնք ամէնքն ալ՝ որոնք քու իշ-  
խանութեանդ տակն են : Ասան զի ինծի ամենամեծ մխի-  
թարութիւն մըն է, թէ որ զձեզ՝ իմ ըստ մարմնոյ տոհ-  
մակիցներս, նաեւ ըստ հոգւոյ ալ մտերիմ բարեկամ  
ու ազգական տեսնելու ըլլամ” :

“Վաբար աս գրած նամակներուն պատասխանը դեռ  
չընդունած՝ մեռաւ, երեսունուութը տարի Թագաւորե-  
լէն ետքը” :

# ՅԵՒԵԼՈՒԵՆՕ ԱՌԱՋԻՆ

ՍՈՒՐԲ ԴԱՍՏԱՌԱԿԻՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԵԼՈՒ ՔԱՆԻ  
ՄԸ ԱՂՕԹՔՆԵՐ

## Ե.

ԱՄԵՆԱԿԱՐՈՂ Տէր Յիսուս Քրիստոս, դուն որ եղեսիա քաղաքին կռապաշտ թագաւորը հաւատքի բերելու համար, անչափ մարդասիրութեամբ անոր հրաշք ցուցրնել հաճեցար, քու ամենասուրբ երեսիդ պատկերը կտաւի վրայ տպաւորելով, եւ երբոր դուն անոր վրայէն անհաւատութեան ու հոգւոյ կուրութեան խաւարը փարատեցիր, միանգամայն անոր բորոտութեամբ նեղուած մարմնոյն ալ առողջութիւն պարգեւեցիր: Արդ՝ դարձուր աչքդ ու նայէ, Տէր իմ, ինչպէս հիմայ քու ծառաներդ ալ քու կերպարանքիդ առջին երեսի վրայ ինկած քեզի երկրպագութիւն ընելով քեզմէ ողորմութիւն կը խընդրեն, որպէս զի մեր հոգիներն ալ լուսաւորես ու մեր սրտերն ալ մաքրես, շնորհելով մեզի այնպիսի կենդանի հաւատք մը, որով զքեզ չէ թէ միայն մեր Աստուածը, մեր Արարիչն ու մեր Փրկիչը ճանչնանք, հապա նաեւ ճանչնալնուս համեմատ ալ արժանաւորապէս պաշտենք, որպէս զի մենք ալ մեր մեղաց բորոտութենէն սրբուինք, որն որ մեր վրայ քու աստուածային երեսացդ երկնային լոյսը կը խաւարեցընէ, ու միշտ բարի դործքերու կը թուութեանց համար պատրաստական կամք ունենանք, քեզի փառք ու քու անուանդ պատիւ ըլլալու համար:

Հայր մեր, Ողջոյն, Փառք հօր:

## Բ.

Ամենասիրելի Փրկիչ, դուն որ այդչափ զանազան հրաշքներով աս սուրբ կտաւիս՝ որուն վրայ քու աստուածային պատկերդ տպաւորած ես՝ երկնային զօրութիւնը աշխարհքիս յայտնեցիր, որովհետեւ դուն անոր ձեռքովը դժոխքն ահով դողով լեցուցիր ու քու հաւատարիմ

երկրպագուներուդ քաղցր յուսոյ առարկայ մը շնորհեցիր, ո՞՞՞ Տէր իմ, հաճեաց հիմակ ալ մեր սրտերուն շնորհաց ու աղօթքի հողին հեղուլ, որպէս զի մենք ալ թէ հրապարակական ու թէ առտնին կենաց ամէն վշտերուն մէջ քու վրայ հաստատուն վստահութեամբ մը լեցուինք, մեր խոնարհ ու ջերմեռանդն աղօթքներուն արդիւնքն անշուշտ ընդունելու յուսով, եւ որպէս զի մենք ալ քու ամենակարող պաշտպանութեանդ տակ պատսպարուելով, քու սուրբ շնորհքներուդ արժանի ըլլանք, ու մեր քաղաքները, գերդաստաններն ու բնակարանները մեր արժանաւորած պատիժներէն պահուին ու պաշտպանուին :

Հայր մեր, Ողջոյն, Փառք հօր :

Գ.

Բազում ողորմ եւ մարդասէր Յիսուս, խոնարհական երկիւղիւ քու սուրբ Աերպարանքիդ երկրպագութիւն մատուցանելով, շնորհակալ կ'ըլլանք քեզի ան ամէն անհամար երախտիքներուն համար, զորոնք որ դուն միշտ քու հաւատարիմ ժողովրդեանդ վրայ առատապէս կը հեղուս, որն որ քու սուրբ անունդ կանչելով զքեզ աս սուրբ Գաստառակիս առջին կը մեծարէ, ու քեզի աղաչելով՝ որ քու սիրալիր ողորմութեանդ նշանները մեր վրայէն անպակաս ընես՝ խորին խոնարհութեամբ կը պաղատինք քեզի մեր մեղքերուն թողութեանը համար, սրտանց ցաւելով ու անդադար հառաչելով որ քու անսահման բարութիւնդ այնչափ անգամ վշտացուցեր ենք, ու հաստատութեամբ կը յառաջադրենք ու անցրելի դիտաւորութեամբ մտքերնիս կը դնենք որ զքեզ մէյ մ'ալ չվշտացրնենք : Ո՛վ ամենասիրելի Փրկիչ, քու ողորմութեանդ աշուրները մեր վրայ դարձուր, մեր հողիները բժշկէ ու քու սուրբ սիրոյդ երկնաւոր կրակը մեր սրտին մէջ վառէ, որպէս զի քու սուրբ Երեսացդ պատկերը աշխարհքիս մէջ տեսնելու համար մեզի ըրած

չնորհքդ մեզի ստոյգ գրաւական մ'ըլլայ օր մը երկինք  
հասնելու, ու հոն անվախճան յաւիտենիւ զքեզ բացօք  
երեսօք տեսնելու եւ սիրելու :

Հայր մեր . Ողջոյն . Փառք հօր :

Սաղմոս 66 :

Աստուած ողորմեա մեզ եւ օրհնեա զմեզ, երեւե-  
ցո Վերեաքո ի մեզ եւ ողորմեա մեզ :

Ղանաչել յերկրի զճանապարհս քո, յազինս ա-  
մենայն զփրկութիւնս քո :

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած,  
խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ամենայն :

Աւրախ եղիցին ազգք եւ ցնծասցեն ազինք, զի դու  
դատիս զժողովուրդս յուղղութիւն, եւ ազգաց երկրի դու  
առաջնորդես :

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք Աստուած,  
գոհասցին զքէն ժողովուրդք ամենայն :

Երկիր ետ զպտուղ իւր, եւ օրհնեաց զմեզ Աս-  
տուած Աստուած մեր :

Աստուած մեր օրհնեսցէ զմեզ, ի նմանէ երկիցին  
ամենայն ծագք երկրի :

Աղօթք :

Տէր մեր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ կեն-  
դանւոյ, որ վասն աշխարհիս փրկութեան զսքանչելիս մե-  
ծազօր զօրութեան քո յայտնի արարեալ ցուցեր ազգի  
մարդկան, եւ զմեզ արժանիս արարեր ընդունելոյ ի քէն  
զպատկեր ամենասուրբ Երեւոյ քոց, զոր ի վերայ սուրբ  
Պաստառակալի դրոշմեալ թողեր մեզ, սուր մեզ, Տէր,  
չնորհս՝ այնպիսի մեծարանօք պատուել զսոյն ի վերայ  
երկրի, զի յետ այնորիկ արժանի եղիցուք յաւուր միում  
բացօք երեսօք տեսանել զքեզ յերկինս, ուր կեաս եւ  
թագաւորես ընդ հօր եւ ընդ Սրբոյ Հոգւոյն ի յաւի-  
տեանս, ամէն :

# ՅԵՒԵԼՈՒԵՆԾ ԵՐԿՐՈՐԳ

ՇՆՈՐՀՕՔՆ ՔՐԻՍՏՈՍԻ

## ԿՈՍՏԱՆԴՆՊՈՐՓԻՒՐՈՒԺԷՆ

### ՀՈՒՄԱՅՆՅՈՑ ԿԵՅՍԵՐ

ՋԱՆԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՔԱՂԵԼՈՎ ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵԱՌՆ  
ՄԵՐՈՅ ԱՆՁԵՌԱԳՈՐԾ ՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԻՆ ՎՐԱՅ  
ԳՐԱԾ ՃԱՌԸ, ԹԷ ԻՆՉՊԷՍ ՍՈՒՐԻ ԴԱՍՏԱՌԱԿՆ ԱԲԳԱՐԻՆ  
ԽՐԿՈՒԵՑԱԻ, ԵՒ ԵՏՔԸ ԵԴԵՍԻԱՅԷՆ ԱՍ ԱՄԵՆԵՐՋԱՆԻԿ ՈՒ  
ԱՄԵՆԱՊԱՅԾԱՌ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՍ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԲԵ-  
ՐՈՒԵՑԱԻ:

Աստուծոյն գործերն ու հրաշքերը զի ստոր լախնեւ  
զէն, հապա զի յարգուեալն էն:

ՀՕՐԸ յաւիտենակից բանն Աստուած՝ չէ թէ ինք  
միայն ամէն ըմբռնմանէ վեր է, այլ նաեւ անոր գրեթէ  
խիստ շատ, մանաւանդ թէ ամէն գործքերը նոյն անըմ-  
բռնելիութեան միջով ծածկուած են: Չէ թէ ան գործ-  
քերը միայն, որոնցմով որ աս տեսանելի տիեզերացս  
կերտուածը կանգնուած կեցած է, այլ նաեւ տնօրէնու-  
թեան խորհրդով աս մեր թանձր բնութիւնն առնելէն  
ետքն ալ որչափ որ իւր նախնական ու միակ Աստուա-  
ծութեան կարողութեամբը կը գործէր: Եւ ասիկայ հարկ  
է որ այսպէս ըլլայ, որպէս զի ո՛վ որ ինք զինքը կը  
ճանչնայ ու գիտէ որ իր կարողութենէն վեր եղածները  
չիճանչնար, չափէն աւելի չպարծենայ, եւ ո՛չ ալ յի-  
մարարար խելք միտք հատցրնէ՝ որպէս թէ ամէն բան  
հասկրնայն իրեն տրուած ըլլայ, կամ թէ չգտնուած  
ըլլայ բան մը որ իրեն ըմբռնմանէն կարող ըլլայ ծած-  
կուիլ: Իսկ մասնաւորաբար՝ մարդացեալ Բանին Աստու-  
ծոյ ան պատկերին վրայ խօսելով՝ որն որ առանց գունոյ  
ու առանց նկարչութեան, այլ միայն արարողին զարմա-  
նալի կամօքը կտաւին վրայ իբրեւ լոյս տպաւորեցաւ,



որն որ ան ատեն Աբգարին խաւրուած էր, անոր առողջութիւն պարգեւելու համար, ու հիմայ Աստուծոյ մասնաւոր խնամքովը Եղեսիայէն աս ամենափառաւոր մայրաքաղաքս բերուեցաւ, որպէս զի նոյնն ապահովացուի ու պատասպարուի, որովհետեւ այնպէս կը վայլէր ալ թէ ինչպէս որ ինք ամէն աշխարհքիս առջեւ գահերիցութեան պատիւ ունի, ամէն տեղ գահագլուխն իրն է, այսպէս ալ ամէն գեղեցիկ ու նշանաւոր բաներէն եւ ոչ մէկը իր մէջը պակաս գտնուէր, հարկաւոր է՝ որ բարեպաշտ եւ ստուգապատում տեղեկութեանց ետեւէ ինկող ունկնդիրն ու ընթերցասէրը, իւրաքանչիւր իրաց պատմութիւնը զգուշութեամբ սորվի, եւ հին դիպուածներու վրայ հաւաստի ու ամէն ստուծենէ ազատ ծանօթութիւններ ստանալու ջանայ: Իսկ պատճառը թէ ինչո՞ւ համար հեղանիւթ կաթիլներով, առանց գունոյ խառնութեան ու առանց արհեստին գործակցութեանը, կտաւին վրայ կերպարանքին ձեւը տպաւորուած ըլլայ, եւ թէ ինչպէս անիկայ, թէպէտ բնութեամբ այնչափ անտեւական նիւթ մըն է, այնչափ ժամանակ ոչ մնաս մը կրած ու ոչ ալ հինցած ըլլայ, եւ ալ ուրիշ բաները, զորոնք որ մէկը մանրակրկիտ քննութեամբ իմանալու կը ջանայ, երբոր իր մը բնականօրէն զննել կ'ուզէ. թող աս ամէն բան Աստուծոյ իմաստութեանը ձգէ, որուն եւ ոչ մէկը կրնայ ըստ բաւականին միտք հասցընել, այս ինքն՝ գիտնայ այնպիսին թէ երբոր մէկը ամէն բան իր մտաց սրութեամբը կատարելապէս իմանալ կ'ուզէ նէ, կը հետեւի որ ամէն տգիտութեան խորխորատին մէջ ընկղմելով ու անբարոնելութեան ու ապշութեան անդունդը կործանելով, մէկալ գլխաւոր բաներուն գիտութենէն ալ կը զրկուի, փոխանակ զի ամենափոքր բաներու ալ խելք կ'ուզէր հասցընել: — Արդ գուք ամէնքնիդ ալ, որոնք ուղիղ դիտաւորութեամբ ու վառուն եռանդով հոս ժողոված էք, եկէք լսեցէք, ու ես պատմեմ ձեզի ան բանը, զորն որ պատշաճական քննութիւններու միջոցով մանրամասնա-

բար տեղեկացեր ու ճշմարտութեան հասնելու մեծ աշխատութեամբ ձեռք ձգեր ու սորվեր եւ՛, թէ անոնցմէ որոնք որ պատմութիւններու յիշատակարանները գրած են, թէ ան ճամբորդներէն՝ որոնք որ Ասորւոց կողմերէն մեզի գալով վկայեցին թէ իրենց քովը աս սքանչելի դիպաց վաւերական աւանդութիւնը կը գտնուի :

Հռոմայեցոց արեւո-մեան յիշատական իշխանութիւնը Բրիտանի-մեան ծաղկելուն օգոստոս էր :

Երբ որ մեր Տէրը, Աստուածն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս՝ մարդկան գլորած ազգը կանգնելու համար աշխարհք եկաւ նէ, ան ատեն Մարգարէին ըսածին պէս՝ խաղաղութեան առատութիւն էր երկրիս վրայ (Սղմ. ՀԱ. 7), շատ մեծերու իշխանութիւններ վերցուած էին, ու Հռոմայեցւոց տէրութիւնը բոլոր տիեզերքը իբրև թէ գօտւոյ մը մէջ առած՝ իր հրամանին տակ կասկած էր, ու զամէն բան մէկ կառավարիչ ու մէկ ուղղիչ ձեռքն առած կը բռնէր : Աս պատճառաւ՝ ամէն երկիրներէ իրարու անցնելու, երթեւեկելու եւ իրարու հետ հաղորդակցութիւն ընելու կատարեալ աղատութիւն կար. ու մարդիկ աշխարհքիս վրայ այնպէս բնակած կ'երեւային, որ ոչ թէ իրարմէ բաժնուած ապրէին, հասկա իբրև թէ մի եւ նոյն տիրոջ երկրին ու կալուածքներուն մէջ ժողոված ըլլային, ինչպէս որ ալ ամէն բան մի եւ նոյն ալքարէն ստեղծուած էր, ու ծառայից մէջ առջի գլխաւորին պարանոցնին խոնարհեցընելով իրարու հետ խաղաղութեամբ կը վարուէին : Ասոր համար նոյն ատենուան Եդեսիա քաղքին Արգար թագաւորն ալ Եգիպտոսի Ռասիկանին հետ բարեկամ ու ծանօթ ըլլալուն՝ երկուքին ալ պաշտօնատէրներն իրարու կ'երթային կու գային : Երբ որ բաներն աս վիճակիս մէջ էին, եւ Տէրն մեր ալ ու Աստուած՝ իր Հօրը հրամանը կատարելով մարդկան փրկութեանարեւ վարդապետութիւններ կը քարոզէր, ու նշանաւոր եւ զարմանալի սքանչելագործութիւններով անոնց սիրտը իր քարոզած հաւատքին կը շահէր, պա-

տաճեցաւ որ Արգարին պաշտօնատէրներէն Անանիա  
անունով մէկը Պաղեստինու երկրէն անցնելով գէպ ի  
Եգիպտոս գացած ատենը Քրիստոսի հանդիպեցաւ, ու  
տեսաւ թէ ինչպէս անիկայ բարձր վարդապետութեան  
ուժովը զժողովուրդը մոլորութենէն ետ կը դարձընէր,  
ու ամենուն կարողութենէն վեր հրաշքներ կը գործէր:  
Արգարին երիտ- արեասի հիւանդ- ի- նը: Անանիա պաշտօնէին  
էր արեւմտեան ցոյցեցած հասարակի՛ ծարայ- ի- նը:

Աւստի Եգիպտոս ընելու ճամբորդութիւնը կատա-  
րելէն ու հոն իրեն հրամայուած բաներն աւարտելէն  
ետքը, կը պատրաստուէր Անանիա իր տիրոջը քով գառ-  
նալու, որովհետեւ գիտէր թէ անիկայ երկայն ատենէ ի  
վեր ստէպ կրկնող ախտի մը տառապանաց մէջ սաստիկ  
կը չարչարուէր, ու սեւ բորոտութեամբ մը կը հիւժէր,  
կը մաշէր, ու կրկին նեղութեան մէջ կը դանուէր, կամ  
թէ լաւ եւս ըսեմ՝ շատ տեսակ հիւանդութիւններով կը  
տառապէր, նաեւ յօղուածացաւութիւն ալ ունէր ու  
գէշ բորոտութեան մէջ խղճալի կեանք մը կ'անցընէր,  
որոնց ամենուն վրայ աւելցած էր նաեւ նոյն իսկ բորո-  
տութեան գարշահոտութիւնը, որուն պատճառաւ եւ ոչ  
մէկու մը աչքին կ'ուզէր երեւնալ, ու չէ թէ մինակ շատ  
անգամ անկողնոյն մէջ ծանր նեղութեամբ թաղուած կը  
մնար, հասպա նաեւ զինքը տեսնելու համար եկող բարե-  
կամներէն ալ երեսը մասնաւորաբար կը ծածկէր: Արդ  
երբոր Անանիան գառնալու եղաւ նէ, բանն աւելի եւս  
զգուշութեամբ քննել ուղեց, որ իրն ստուգութեամբ տի-  
րոջը պատմէ, կարելի է թէ ինքն ալ անոր դեղովը կրնայ  
բժշկուիլ ըսելով: Գնաց եւ զՏէրն մեր նոյն սքանչելա-  
գործութեանց մէջ զբաղած գտաւ, այս ինքն թէ՛ տեսաւ  
որ մեռածները կը յարուցանէր, կուրաց աչուրները կը  
բանար, կաղերուն շիտակ քալելու կարողութիւն կու տար,  
ու մէկ խօսքով՝ ամէն տեսակ հիւանդութեանց մէջ  
դանուողներուն առողջութիւն եւ ոյժ կը շնորհէր:

Աս բաներէն ստուգիւ համոզուելով ու միտքը գնե-

լով որ աս բաներս Աստուծոյ ամենակարող զօրութեան  
 գործքերն են, իր հայրենիքն ու տունը դառնալուն պէս՝  
 Աբգարին պատմեց, եւ ամէն տեսածներն ու լսածները  
 անոր յայտնեց: Եւ որովհետեւ ինչ գործքի համար որ  
 խաւրուած էր նէ՛ անոր պատճառաւ անկէ աւելի բան  
 տեսած եւ իր տիրոջը բարեգուշակ եւ ուրախարար լուր  
 բերած էր, անոր համար ալ տիրոջմէն խիստ մեծ մարդա-  
 սիրութեամբ ընդունուեցաւ ու ամենահաւատարիմ ծա-  
 ռաներուն կարգն անցաւ: Արդ վասն զի վատառողջ ու  
 հիւանդոտ մարդ մը ինչ որ լսելու ըլլայ՝ միշտ շուտով մը  
 կը յափշտակուի, այսպէս ալ Աբգար աւետաբեր պաշտօ-  
 նէին ստիպելովն ու յոյս տալովը կրկին եւս դրդուելով,  
 որոշեց որ լսած բանը ձեռք բերելու եւ վայելելու միջոցն  
 առանց ժամանակ կորսընցընելու ի գործ դնէ, ուստի այդ-  
 պիսի առողջութիւններ պարգեւողին թուղթ մը գրելով  
 իրեն հրաւիրեց, ու ամէն յապաղումը մէկ դի գնելով՝  
 ան բոլոր աշխարհք հռչակուած նամակը գրեց Քրիստոսի  
 Տեառն մերոյ, որուն խօսքերը գրեթէ ասոնք էին:

Աբգարին Քրիստոսին գրած նամակը:

«Աբգար, Եդեսիա քաղքին իշխանը, Յիսուսի  
 Փրկչին՝ որն որ Երուսաղէմ քաղաքը իբրեւ բարերար  
 բժիշկ մը յայտնուեցաւ, ողջոյն շատ կը մատուցանէ:

«Վնձի քուկին ու քու բժշկութիւններուդ վրայ պատ-  
 մեցին, զորոնք դուն առանց դեղերու ու խոտերու գոր-  
 ծակցութեան կը կատարես եղեր: Արովհետեւ կը պատ-  
 մուի թէ դուն կոյրերուն աչքը կը բանաս, կաղերուն քա-  
 լել կու տաս եղեր, բորոտները կը սրբես, դեւերն ու  
 պիղծ ոգիները կը հալածես եղեր, շատ ժամանակներէ  
 ետեւ հիւանդութիւններ քաշողները կը բժշկես ու վեր-  
 ջապէս մեռածները կը յարուցանես եղեր: Երբոր ես աս  
 ամէն բան քու վրադ լսեցի նէ, մտքիս մէջ աս մտա-  
 ծեցի, կամ դուն ստուգիւ Աստուած ես, որ երկինքէն  
 իջած աս բաներս կ'ընես, կամ թէ իրօք իսկ Աստուծոյ  
 Արդին ես դուն: Ասոր համար աւասիկ գրեցի քեզի, ա-

դաչելով որ զմեզ տեսնելու եւ մեր հիւանդութիւնն ող-  
ջացրնելու համար աս կողմերս գալու աշխատութիւն յանձն  
առնուս: Ինչու որ կը լսեմ թէ Հրեայք քու վրայ չա-  
րախօսութիւն կ'ընեն ու քու կենացդ դարանակալ կ'ու-  
ղեն ըլլալ: Ես՝ թէպէտ փոքրիկ, բայց աղուոր զարդա-  
րուած քաղաք մ'ունիմ, որն որ մեր երկուքին ալ բաւա-  
կան է, հոն հանգստութեամբ կեանք անցրնելու համար:  
Տէրո՛ւնս յարկերը Աբգարին կը խորհի: անոր ցանկալի  
ներկայութիւնը հիւանդին սփոփութիւն կը պարծառէ:

Արդ որովհետեւ Անանիա արդէն իր տիրոջը վրայ  
մեծ սէր ունէր ու հաւատարմութեան յայտնի նշաններ  
ցուցըցած եւ ճամբուն ալ տեղեակ էր, եւ նկարչու-  
թեան արհեստն ալ աղէկ գիտէր, ուստի ասոր ձեռքովը  
խաւրեց Աբգար Յիսուսին սոյն այս նամակս, կրկին եւ  
կրկին ապսպրելով որ եթէ Քրիստոս նամակին աղաչան-  
քին չզիջանի եւ իրեն գալ չուղելու ըլլայ նէ, ան-  
պատճառ անոր կերպարանքին նմանութիւնն ըստ ամենայ-  
նի տախտակի մը վրայ նկարէ ու իրեն բերէ, որպէս զի  
չէ թէ միայն լսելով, հապա նաեւ կերպարանքին նմանու-  
թիւնը տեսնելով ալ տեղեկանայ թէ այդչափ հրաշքներ-  
րու կատարիչն ո՞վ է: Իսկ երբոր այսպէս Հրէաստան  
խաւրուողը հոն հասաւ նէ, զՏէրն մեր գտաւ դուրսը  
գաշտի մը վրայ, ուր որ գլուխը ժողված բազմութեան  
ճառ կը խօսէր, եւ մեծամեծ ու զարմանալի հրաշքներ  
կը գործէր: Բայց որովհետեւ ամէն մէկուն մէյմէկ տեսակ  
հարկաւոր կարօտութեանը համար անոր գլուխը ժողվող  
անթիւ բազմութեան պատճառաւ կարելի բան չէր Անա-  
նիային որ Յիսուսին քովը մօտենար, ուստի Յիսուսին կե-  
ցած տեղւոյն մօտ երկրէն քիչ մը բարձրկեկ քարի մը  
վրայ ելաւ ու նստեցաւ անոր դիմացը: Այսպէս բազմու-  
թենէն զատուած, զՔրիստոս աչքին տակ ունենալով,  
ու ինքն ալ բարձրկեկ տեղ մը՝ սկսաւ ան իր դիմացը  
կեցողին նմանութիւնը պատկերհանի գրչաւ քաշել:

Յիսուս հոգւովը բանն իմացաւ, եւ զԹովմաս կան-

չելով՝ Գնա՛, ըսաւ, ան տեղը, հոն քարի վրայ նստած  
 ու իմ պատկերս քաշելու զբաղած մարդ մը կայ, զանի-  
 կայ ինծի կանչէ, եւ իրեն ինծի համար բերած նամակն  
 ալ թող հետն առնու բերէ, որպէս զի նամակը գրո-  
 ղէն ինչ հրաման որ ընդունեցաւ նէ, կատարեմ: Թովմաս  
 գնաց, եւ ըսուած նշաններէն մակաբերելով՝ զմարդը  
 գտաւ ու ճանչցաւ, եւ հետն առած Յիսուսին բերաւ:  
 Քրիստոս՝ զեռ նամակը ձեռքը չառած, Անանիան ինչո՛ւ  
 համար իրեն եկած է ու նամակին մէջ ինչ բան պարու-  
 նակուած է, բոլորն անոր պատմեց: Ետքէն թուղթն անոր  
 ձեռքէն առաւ, կարդաց, ու անոր պատասխան՝ Աբգա-  
 րին ուրիշ թուղթ մը խաւրեց, որուն խօսքերն ասոնք էին:

Քրիստոսին Աբգարոս արած պատասխանը:

Այրանելի ես, Աբգար, որ զիս չտեսած՝ ինծի հաւ-  
 տացիր, ինչու որ ինծի համար գրուած է թէ որոնք որ  
 զիս տեսած են, ինծի պիտ'որ հաւտան, որպէս զի ո-  
 րոնք որ չէին տեսած, հաւտան ինծի ու փրկութեան  
 հասնին: Իսկ ինծի գրածիդ վրայ գալով, որ խնդրեր ես  
 թէ ես քեզի գամ, առ բանը հիմակու հիմայ չ'ըլլար,  
 մինչուկ որ ինչ բանի համար որ խաւրուած եմ, ամբողջ  
 կատարեմ, եւ զանոնք աւարտելէն ետքը դառնամ  
 Հօրս, որն որ զիս խրկած է: Բայց երբոր անոր քովն  
 ելլեմ՝ անպատճառ իմ աչկերտներէս մէկը քեզի կը խաւ-  
 րեմ, որ թէ քու հիւանդութիւնդ բժշկէ, ու թէ յաւի-  
 տե՛նական կեանք ու խաղաղութիւն քեզի ու քու կիներ-  
 րուդ պարգեւէ. նաեւ քու քաղքիդ ապահովութիւն  
 տայ՝ որ անոր դէմ երբեք թշնամիները չկրնան զօրանալ:

Արբոր Քրիստոս աս թուղթս Անանիային տուաւ,  
 ճանչնալով անոր սրտին փափաքը, որով իր տիրոջը մէ-  
 կալ պատուէրն ալ կատարելու կը փութար, այս ինքն թէ  
 անոր երեսին նմանութիւնը քաշելով տիրոջը կ'ուզէր տա-  
 նել, ջուր առնելով երեսը լուաց, ու անկէ վազած հիւթը  
 (Առաքեալներէն) մատուցուած թաշկինակով մը սրբելով՝  
 մտքի խելքի հասողութենէ ու ճառելու կարողութենէ

վեր աստուածային գաղտնիքով մը իր կերպարանքն անոր վրայ տպաւորեց, ու զանիկայ Անանիային տալով ապստամբութեան օր տանի Աբգարին տայ, որպէս զի թէ իր սիրոյն եռանդը սիրտուծիւն գտնէ ու թէ իր ախտին թեթեւութիւն մ'ըլլայ: Անանիան զասոնք առած ճամբայ ելաւ, ու երբոր Յերապոլիս քաղաքը հասաւ նէ, զոր քաղաքն որ Սարակինոսները իրենց լեզուաւ Մէֆո, ու Ասորիք՝ Մասոն կ'անուանեն, ուզեց քաղաքէն դուրս իջեւանել, ու հոն նոր եփած կղմինտրներու կոյտեր դիզուած ըլլալով, Անանիան զսուրբ կտաւն ասոնց մէջ պահեց: Իսկ կէս գիշերուան ատեն սկսան բոլոր ան տեղուանք մեծ հրդեհի մը բոցեր տարածուիլ ու քաղաքացիք կարծելով թէ ամէն բան դուրսը կ'այրի, իրենց հոնտեղն ունեցած բաներուն վրայ կասկածելով, քաղաքէն դուրս վազեցին ելան, որպէս զի իրենց երեւցած ահագին կրակը քննեն ու բանին էութեանը տեղեկանան: Մէյ մ'ալ նայիս՝ զԱնանիան գտան, ու վնասուն պատճառն ան է կարծելով բռնեցին զինքը, սկսան հարցընել թէ ատ երեւցածն ինչ է, ինքն ո՞վ է, ուստի կու գայ եւ ո՞ր կ'երթայ: Անանիան՝ վրան այսպիսի յանցանք մը դրուելուն համար վախնալով, ստիպեցաւ անոնց պատմել թէ ինք ուստի է, ուստի կու գայ ու քովն ինչ ունի, եւ խոստովանեցաւ թէ հոն կղմինտրներու մէջ պահուած է ան բանը, ուստի հրդեհի երեւոյթը կը պատճառի:

Ուրիշ անշեւործ պատկեր մ'ալ, ասլի նախագաղափարին դրոշմներն շինուած:

Իրին ճշմարտութիւնը տեսնելու անհամբերութեամբ սկսան անմիջապէս ան ըսուած տեղը փնտռել. եւ չէ թէ մինակ ան իրը գտան, զորն որ Անանիան հոն պահած էր, հապա նաեւ անոր մօտը կեցող կղմինտրի մը վրայ ան աստուածային կերպարանքը չըսուած կերպով տպաւորուած տեսան, որն որ ամէն մարդու հասողութենէն վեր է, թէ ինչպէս ան առջի կտաւի վրայ ելած անձեռագործ պատկերէն՝ նոյն աղիւսին վրայ անցած էր: Երբոր

աս տեսան, զարմացմամբ ու ապշութեամբ լեցուելով թէ իրին համար եւ թէ վասն զի վառած կրակ մը չէր տեսնուեր, հապա պատկերին պայծառութենէն միայն կ'երեւար թէ բոց կը շողայ, իբրեւ սուրբ գրաւական ու պատուական դանձ մը ուղեցին քովերնին պահել ան կղմինտրը՝ որուն վրայ աստուածային կերպարանքը տպաւորուած էր, արդէն իրենց տեսածէն հետեւցընելով որ ասիկայ անտարակոյս աստուածային զօրութիւն մը պիտի ունենայ: Իսկ զբուն օրինակն ու անոր պաշտօնեան վախնալով արգելելու՝ Աբգարին խաւրեցին: Մինչեւ հիմայ ատ քաղքին բնակիչներուն քովը նոյն աղիւսի վրայ ելած աննկար կերպարանքին աննկար ձեւը, այս ինքն՝ անձեռագործ պատկերն ամբողջ պահուած է ու ամենէն մեծ յարգութիւն կ'ընդունի: Իսկ Անանիան իր ճամբորդութիւնը գլուխ հանելով՝ բերաւ փրկութենաբեր գանձը իր տիրոջը յանձնեց, ու ճամբան եղածները պատմեց:

Ահա ան կտաւին վրայ տպաւորուած Փրկչին անձեռագործ պատկերին ընդ աշխարհ ամենայն հռչակեալ պատմութիւնն այսպէս է: Բայց ասիկայ ուրիշ կերպ մ'ալ կը պատմուի, եւ ան ալ ճշմարտութենէ հեռի չէ եւ իրեն կողմը հաւատարիմ վկաներ ունի: Ասոր համար կ'ուզեմ ան ալ յառաջ բերել, որպէս զի մէկը չկարծէ թէ ես մէկուն պատմածը չգիտնալով, մէկային պատմածին միամտաբար հաւատք ընծայած ըլլամ: Եւ զարմանալով բան մ'ալ չէ որ այսչափ ժամանակուան միջոցին մէջ փոքր սուտ մը պատմութեան մէջ սպրդած մտած ըլլայ: Բայց իրին բուն էական մասին մէջ ամէնքն ալ կը միաբանին, ու կը հաստատեն թէ տէրունական կերպարանքէն չլսուած կերպով մը կտաւի վրայ պատկերը տպաւորուած է, մինակ իրին մէկ պարագային (այս ինքն ժամանակին) վրայ է տարբերութիւնը: Եւ աս ալ ինչպէս որ կ'ուզէ թող ըլլայ, ճշմարտութեան վնաս մը չիտար: Արդ մէկալ պատմութիւնն այսպէս կ'աւանդուի:



Քրիստոսի Եդեսիան անյեւոքործ սուրբ Դաստատակին՝ մէկ  
 սուրբ կերպով աւանդումս զաստուծոսն ալ:

Քրիստոս իւր կամօքը մեռնելու գացած ատեն,  
 երբոր մարդկային բնութիւնը մահուան ընկերակից եղող  
 սաստիկ վախէն պաշարուած ըլլալուն աղօթքի դիմած էր  
 նէ, ինչպէս աւետարանական պատմութիւնն ալ անոր  
 քրտինքին համար կը զրուցէ թէ արեան կաթիլներու  
 պէս երեսէն վար կ'իջնար, ան ատեն, կ'ըսեն, (ինքն  
 Տէրն մեր) ատ կտաւի կտորը՝ զորն որ հիմայ կը տեսնենք,  
 աշակերտներէն մէկուն ձեռքէն առնելով երեսին կայ-  
 լակնաձեւ հիւթերն անով սրբեց, ու աս հիմայ մեր  
 տեսած աստուածային կերպարանքն անոր վրայ մէկանց  
 տպաւորուած երեւցաւ: Ասիկայ թովմաս առաքելոյն  
 իբրեւ աւանդ մը յանձնուեցաւ ու ապսպրուեցաւ անոր  
 որ Յիսուսի երկինք համբառնալէն ետքը, նոյնը թաղէ-  
 ոսին ձեռքով Աբգարին խաւրէ, արդէն յառաջագոյն  
 գրով տրուած խոստմունքը կատարելու համար: Արդ  
 Քրիստոսի Տեառն մերոյ երկինք համբառնալէն ետեւ,  
 թովմաս աս տէրունական կերպարանքին անձեռագործ  
 պատկերը թաղէոսին տալով հրամայեց որ Աբգարին  
 տանի: Իսկ թաղէոս Եդեսիա քաղաքը հասնելով՝ առջի  
 բերան Տուբիա անունով տեղացի Հրէի մը տունը բնա-  
 կեցաւ: Գեռ թագաւորին հետ չտեսնուած (որովհետեւ  
 թաղէոս այնպէս միտքը դրած էր որ գործքերովն Աբ-  
 գարին ճանչցուի), որչափ որ քաղքին մէջ հիւանդներու  
 պատահեցաւ նէ, զամէնքն ալ բժշկեց, միայն Քրիս-  
 տոսի անունը կանչելով: Աս միջոցիս Քրիստոսի համբառն  
 ամենուն բերանը տարածուելով, (ինչպէս այսպիսի դի-  
 պուածներու մէջ սովորաբար կը պատահի, որովհետեւ  
 զարմանալի ու չլսուած բաները շատ լրաբերներ կ'ունե-  
 նան), Ամգու անունով մեծամեծներէն մէկու մը միջո-  
 ցով բանն Աբգարին ականջն ալ հասաւ, Քրիստոսի ա-  
 ռաքեալն եկեր է ըսելով: Աբգար արդէն միշտ աս յոյսն  
 ունենալով սրտին մէջ, մէկանց միտքը բերաւ ու յիշեց

Թէ աս անիկայ եղած պիտ'որ ըլլայ՝ որուն համար որ Յիսուս իրեն գրով խոստացած էր թէ պիտի խաւրէ: Ուստի Թագէոսին վրայ աղէկ մը տեղեկանալէն ետքը, երբոր բանը ստուգուեցաւ նէ՝ հրամայեց որ զանիկայ իրեն բերեն: Տուբիան գալով աս հրամանս առաքելոյն ծանոյց: Ան ալ՝ իրեն խաւրուելուն գլխաւոր պատճառն ան ըլլալը յայտնելէն ետքը՝ երկրորդ օրը ելաւ գնաց անոր: Երբոր ներս մտնելու եղաւ նէ, նոյն պատկերը նշանի մը պէս ճակտին վրայ դրաւ, շտկեց եւ աս կերպով Աբգարին քովը մտաւ:

Սուրբ պատկերին փայլատակող արեւելք:

Աբգար իր բարձր տեղէն անոր գալը նշմարելով՝ տեսաւ թէ անոր երեսէն նոյն իսկ պատկերին շողշողալովն այնպիսի լոյս մը կը փայլատակէր ու մինչուկ իր երեսը կը ցոլանար՝ որ մարդուս աչքը չէր կրնար համարձակ նայիլ: Արդ ան փայլուն լուսոյ անհանդուրժելի պայծառութենէն ապշուածեան ու զարմացման մէջ իյնալով ու իբրեւ թէ ախտին վրդովմունքն ու անդամներուն երկայն ատենէ ի վեր լուծուած ըլլալը մոռնալով, յանկարծ անկողնէն դուրս ցատքեց, ու մարմնոյն քայքայուած յօդուածները ստիպեց որ վազեն անոր դիմացն ելլեն: Աս դէպքս ըստ ամենայնի նոյնպիսի ազդեցութեամբ էր, թէ եւ ոչ նոյն կերպով, ինչպէս Թափոր լերան վրայ անոնց (Առաքելոց) պատահեցաւ, որոնք լուսոյ շառաւիղներ արձրկող (աստուածային) դէմքը տեսան:

Պատարակին եղած յարգութիւնն ու ախտին մերժուելք:

Յետոյ առաքելոյն ձեռքէն պատկերն առնելով, յարգութեան համար զանիկայ նախ գլխոյն վրայ դրաւ, եւ ետքը աչուրներուն ու ձեռուրներուն ու պրկունքներուն ու մարմնոյն ուրիշ ամէն մէկ անդամներուն մէկիկ մէկիկ դպցուց քսեց: Մէյ մ'ալ ինչ կը նայիս՝ մէկանց սկսան ամէն անդամներն ուժովնալ ու լաւագոյն վիճակի մը փոխուիլ, բորոտութիւնը սրբուելու եւ անցնելու երես բռնեց, թէպէտ անոր քանի մը նշաններն ու

սպինները ճակտին վրայ մնացին: Արդ առաքեալէն յայ  
 նագոյն եւս ճշմարտութեան վարդապետութիւնը սոր-  
 վելով, եւ քրիստոսի անլուր հրաշքներուն, չարչարանք-  
 ներուն ու թաղման եւ աստուածային զօրութեամբ ի  
 մեռելոց յառնելուն եւ երկինք համբառնալուն պատմու-  
 թիւնը լսելով՝ զքրիստոս ճշմարիտ Աստուած դաւանեցաւ,  
 եւ սկսաւ կտաւին վրայ տպուորած պատկերին վրայ հարց-  
 ուիորձ ընել, որովհետեւ մտադրութեամբ զննելով՝ եր-  
 կրաւոր գունոց խառնութիւն մը չէր կրցեր վրան տես-  
 նել, ու անկէ ընդունած զօրութեան վրայ կը զարմանար  
 որ այնպիսի մեծ ու անլուր հրաշքով անկողնէն վեր  
 ցատքելով ելաւ ու կատարեալ առողջութիւն ստացաւ:  
 Ասոր պատասխան տուաւ Թադէոս, (քրիստոսի կրած)  
 մահուան երկիւղն ու անձկութիւնը մեկնելով եւ առանց  
 գունոց խառնութեան՝ միայն քրտինքի զօրութեամբ նոյն  
 պատկերին տպուորուած ըլլալը սորվեցընելով, ու թէ  
 ինք Տեառն հրամանաւ անոր եկած է, եւ ալ ուրիշ  
 ինչ որ վերը պատմութիւնը զրուցեց:

Արբոր թէ ասոնցմով ու թէ միանգամայն առա-  
 քելոյն յանուն Յիսուսի քրիստոսի ձեռուրներն անոր  
 վրան դնելովը՝ իրեն ցաւերուն սաստկութիւնն ու տագ-  
 նապը դադրեցաւ, լուծուած անդամները գրեթէ նո-  
 րէն հաստատուեցան, երեսին տղեղութիւնն անցաւ,  
 ու ամէն բան առողջութեան կերպարանք ստացաւ, բո-  
 լոր աս եղածներուն վրայ Աբգար ամէն դիաց զար-  
 մացման մէջ իյնալով, Ստուգիւ, ըսաւ Թադէոսին, դուն  
 Յիսուսի Արդւոյն Աստուծոյ աշկերտն ես, որն որ առանց  
 դեղեր ու խոտեր գործածելու բժշկութիւններ կը կա-  
 տարէր: Ես այնչափ սիրով ու հաւատով անոր հետ կա-  
 պուած եմ որ եթէ Հռոմայեցւոց բարձր տէրութեան  
 զօրութիւնն ինձի արգելք եղած չըլլար նէ պատե-  
 ըազմ բանալու, զորն որ նոյն տէրութիւնն արգելած էր,  
 ըսելով որ չըլլայ թէ հպատակներն իրարու մէջ կռիւ բա-  
 նալով զիրար կործանեն, ստուգիւ Հրէից դէմ պատե-

բազմ ելած ու զիրենք նուաճած կ'ըլլայի: Իսկ Տիմայ որովհետեւ տեղեկացայ որ անիկայ թէ մահն իր ուղե-  
լովը յանձն առած է, եւ թէ ստոյգ եւմ որ եթէ ինք  
ուզած չըլլար նէ՝ անօրէն ժողովուրդը ոչ երբեք անոր  
վնաս մը կրնար հասցընել, ալ անոր համար ոչ բան մը  
ընելիք եւ ոչ ալ բան մը ըսելիք կը մնայ: Միայն կ'ա-  
զաչեմ որ աստուածային մկրտութեան շնորհքին ար-  
ժանանամ, եւ բովանդակ ընտանեօքս հետ Քրիստոսի  
օրինաց լուծին տակ գլուխս ծռեմ ու զիս անոր նուի-  
րեմ: Արդ անհամար սքանչելիքներ կատարելէն ու զա-  
մէնքն ալ բժշկելէն ետքը՝ որոնք որ ախտէ մը կը նե-  
ղուէին, որոնց մէջ կը գտնուէր գլխաւորաբար մէկն ալ,  
որն որ աղնուականութեամբն ու երեւելիութեամբն Աբ-  
գարին խիստ սիրելին էր, ու Քրիստոսի առաքելոյն շնոր-  
հիւ իր ունեցած ոտնացաւէն առողջանալով՝ ամէն տեղ  
անկէ ընդունած բժշկութիւնը կը հռչակէր, անոր վրայ  
զԱբգարը սուրբ աւազանին հրաւիրեց, եւ ըստ պատշաճի  
պատրաստութիւններ տեսնել տալէն ետքը զինքն ու իր  
ամուսինն ու զաւկրները բոլոր տնովը մէկտեղ մկրտեց,  
եւ աս աստուածային քաւութեան աւազանէն բոլորովին  
մաքրուած ու առողջացած ելաւ Աբգար. բորոտութիւնն  
արդէն անցած ըլլալով՝ ատ քիչ մնացորդներն ալ  
աներեւոյթ եղան, որոնք ճակտին վրայ դեռ կեցեր էին:

Ս. Գառաւառակին Եդեսիայ մէջ նոր պաշտօնն ու պարի-ը:

Ասկէ ետքը թագաւորը, որն որ արդէն նոյն տէ-  
րունական պատկերին ու կերպարանքին ամէն կարելի ե-  
ղանակաւ յարգութիւն ու պատիւ կ'ընծայէր, ան ամէն  
բարեպաշտութեանց վրայ նորէն աս ալ աւելցուց: Այս  
ինքն՝ Եդեսիա քաղքին գլխաւոր դրանը վրայ յունական  
սնտիապաշտութեան չաստուածոյ արձան մը կանգնած  
էին, որուն ամէն մէկ քաղաքը մտնել ուղողը հարկ էր  
որ յարգութիւն ընէր ու նոյն կուռքին ընծաներ նուի-  
րէր. եւ աս կատարելէն ետքը՝ իրեն հրաման կ'ըլլար  
քաղքին փողոցներուն ու հրապարակներուն մէջ հա-

մարձակ պտրտելու: Արգար աս արձանը վար առնել վերցրնել տուաւ ու անոր կեցած պատուանդանին տեղը սոսինձով տախտակ մը կպցրնել տալով՝ անոր վրայ աս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անձեռագործ Գաստառակը հաստատել հրամայեց, հիմակուան<sup>1</sup> երեւցած ոսկեղէն յօրինուածովը փառաւորապէս զարդարուած, վրան աս ոսկեղրոշմ գրերով. Քրիստոս Աստուծ, ո՛վ որ էր յոյսը քո՝ զրոյ հը քնե, երբեք պարտադ չեւեր: Հրաման մ'ալ հանեց որ ո՛վ որ ան դռնէն անցնելու ըլլայ, ան հին սնտի ու գլխովին անօգուտ դրօշուածին տեղ՝ Քրիստոսի հրաշագործ ու շատ պատճառներու համար զարմանալի եղած պատկերին արժանաւոր յարգութիւն ու պարտուպատշաճ երկրպագութիւն ու պատիւ մատուցանէ, եւ յետոյ իբրեւ բարեկամ հիւր Եղեսիա մանէ: Պարկերին պաշտօնը հը դատարի Աբգարոս Ռոմին Բանակալութեան արեւը. այլ նոյն Գաստառակն անձեռագ իր պահուի:

Բարեպաշտ թագաւորին աս յիշատակաց արժանի գործքն ու ջերմեռանդական սուրբ կարգադրութիւնը այնչափ տեւեց, որչափ որ ինքն Արգար ու որդին՝ կենդանի մնացին, որովհետեւ որդին ալ իր հօրը թագաւորութեան հետ անոր բարեպաշտութիւնն ալ ժառանգած էր<sup>2</sup>: Բայց երբոր ասոնց որդին ու թոռը՝ հօրն ու պապին իշխանութեան աթոռը նստաւ նէ, բնաւ չհետեւեցաւ անոնց բարեպաշտութեանը, մանաւանդ թէ՛ այսպէս ըսեմ՝ բարեպաշտութեան դէմ աքացելով նորէն սատանաներուն ու կուռքերուն դարձաւ: Ուստի իբրեւ թէ չար դեւերուն եղած անարդանքին հատուցում մ'ընել ուղելով, միտքը դրաւ որ ինչպէս որ իր պապն ան սնտիապաշտութեան կուռքը տեղէն վերցը-

<sup>1</sup> Պորփիրոսէն առ ճառս փոխադրութեան առջի տարին խօսած ըլլալուն, ան վերը (ԳԼ. ԺԳ.) ստորագրուած զարդերը դեռ չկային, հասկա մինակ նոյն իսկ Արգարին շինել տուած զարդովն էր զարդարուած Ս. Գաստառակը:

<sup>2</sup> Աս կտորիս մէջ յայտնի կը սխալի Պորփիրոսէն, զորն որ մեր ազգային պատմիչը խորենացին կ'ուղղէ: Գիրք Բ. ԳԼ. ԼԳ:

Նել տուած էր, այսպէս ալ ինք տէրութեան պատկերը վար առնել տայ: Բայց անօրէնը միտքը դրած խորամանկութիւնը չկրցաւ ի գործ դնել: Ինչու որ տեղւոյն եպիսկոպոսը յառաջգիտութեամբ մը բանը հոգաց՝ ինչպէս որ պէտք էր նէ: Պատկերին կեցած տեղը գլանի ձեւով շինուած կիսաբոլորակ մ'ըլլալով, պատկերին առջեւը կանթեղ մը վառեց, ու կղմինտը մ'ալ դնելով դրսանց կրով ու եփած աղիւսներով գոցեց ու ծեփեց նոյն տեղւոյն բերանը, ու բոլորովին տափարակ մակերեւոյթ մ'ըրաւ: Այսպէս՝ նախանձնին գրգռող պատկերը աչուրներնէն աներեւոյթ ըլլալով, ամպարիշտ մարդն ալ իր խորամանկութեան խորհրդէն ետ կեցաւ: Եւ քահանան՝ ես կարծեմ թէ անոր համար պատկերին առջեւը կղմինտը դրած էր, որպէս զի շէնքին ու կրոյն խոնաւութենէ փտութեան մը չհանդիպի կտաւը, որուն վրայ որ պատկերը տպաւորուած էր, եւ երկայն ժամանակ հոն մնալովը վնաս մը չկրէ:

Երեսիս Կաղապար Խորհրդէն (Պարսից Խորհրդէն) Իւր Կաղապարի: Գաղապարի Կաղապարի Կաղապարի Կաղապարի: Աս բանիս վրայ Երեսիս Կաղապարի Կաղապարի Կաղապարի:

Աս բանիս վրայ շատ տարիներ ու երկայն ատեն անցաւ, ու մարդիկներու մտքէն ջնջուեցաւ դնաց ան յիշատակը թէ հոն ատենօք պատկեր մը կանգնուած ու յետոյ պահուած ըլլայ: Երբոր յետ ժամանակաց Խորհրով Պարսից թագաւորն Ասիայի քաղաքները նուաճելով Եդեսիա հասաւ, եւ պատնէշ շինելով ամէն ճիգն ի գործ դրաւ ու քաղաքը նուաճելու համար ամէն հարկաւոր եղած միջոցները բանեցուց նէ (ամէն տեսակ մէքենաները կանգնել տալով, որոնք կը ծառայէին նետեր արձակելու, պարիսպները քանդելու եւ գոները խորտակելու), Եդեսացիները վերջին աստիճանի վտանգի մէջ իյնալով, իրենք ալ իրենց կողմանէ սկսան շատ մը մտամտութեամբ հոգալ թէ ինչ ճամբով կարող ըլլան իրենք զիրենք պաշտպանել ու պատերազմ յարդարել:

Հռոմայեցւոց զօրապետներուն պատգամաւոր խաւրելով՝  
 դաշնակցութեան պարտքերնին անոնց յիշեցուցին ու  
 անոնցմէ օգնութիւն խնդրեցին: Հռոմայեցւոց բանակին  
 հրամանատարն ան ատեն Յերապոլիս (Արեգ քաղաքը)  
 կը գտնուէր, եւ ինքն ալ Պարսից զօրքէն ներքը մտած  
 ըլլալով՝ Նդեսիա քաղքին բնակիչներուն օգնելու չափ  
 բաւական զօրք չէր կրնար խաւրել, սակայն նամակով  
 անոնց քաջալերութիւն կու տար, եւ Փրկչին թուղթն  
 ու անոր մէջն եղած հաստատուն խոստմունքն անոնց կը  
 յիշեցընէր թէ ինչպէս կը պատմուի ու կը հաւտացուի,  
 ատ քաղաքն ամէն վտանգներէն ազատ ու թշնամիներէն՝  
 միշտ անառիկ պիտ'որ մնայ: Սակայն Պարսիկները թէ  
 յայտնի կը պատերազմէին ու թէ դարան գործելով ու  
 գետնի տակէն ճամբաներ բանալով քաղքին տիրելու կը  
 ջանային: Երբոր սյսպէս քաղքէն խել մը հեռաւո-  
 րութեամբ ական բանալով գետնափոր անցքերու մէ-  
 ջէն քաղաք մտնելու վրայ էին, ու պարիսպներուն  
 տակը լողորդներու նման յաջողակութեամբ շարունակ  
 գործքերնին յառաջ կը տանէին՝ մէյ մ'ալ իրենց  
 գաղտուկ հնարքները հետեւեալ կերպով յայտնուե-  
 ցան: Քաղքին պարիսպներուն մէկուն տակը պղնձա-  
 գործ մը խանութ ունէր, ուր որ պատերուն վրայ զա-  
 նազան կաթսաներ կախուած կը կենային, ու Պարսիկ-  
 ներուն գետնի տակ փորած ու վառօդով՝ նետած ա-  
 տեննին, պղնձէ ամանները սարսելով ձայն հանեցին:  
 Քաղաքացիներն աս իմանալով խորհուրդնին հատաւ, ու  
 վերջին յուսահատութեան մէջ ինկած՝ Աստուծոյ ա-  
 պաւինեցան, եւ ցաւած սրտիւ ու աչուրնին լի արցուն-  
 քով զանիկայ օգնութեան կանչեցին: Նոյն գիշերը փա-  
 ռաւոր հազուստներ հագած՝ ծանր ու համեստ կերպա-  
 րանքով, մարդկային բնութենէ գերազանց տեսքով դշխոյ

1 Պատմիչները կը հաստատեն թէ բուն վառօդին դանուէլէն  
 յառաջ Ասիայի կողմերը վառօդի նման փոշի մը գործածելու  
 հին սովորութիւն կար, մանաւանդ Պարսիկնոսաց մէջ:

մը երեւցաւ Եպիսկոպոսին (որուն անունը Եւլալիոս էր), ու խրատ տուաւ անոր որ Քրիստոսի անձեռագործ պատկերն առնու եւ անով պաղատանք մ'ընէ, թէ որ աս կը կատարէ՝ բոլորովին ստոյգ ըլլայ որ Աստուած իր զօրութիւնն ու սքանչելիքը կը ցուցնէ: Եպիսկոպոսը պատասխան տուաւ որ ինք ամենեւին չի գիտեր թէ այնպիսի պատկեր մը Եդեսացուոց կամ թէ ուրիշներուն քով գտնուի: Ան ատեն տիկնոջ կերպարանքով երեւցողն ըսաւ անոր, Քաղքին գրանը վրայ սանկ տեղ մը այսպիսի կերպով պահուած է ըսած պատկերս:

Արկրորդ օրը առտուանց՝ եղած տեսիլքին վրայ վստահանալով՝ Եպիսկոպոսը հանդիսական թափոր մը կազմելով նոյն յիշեալ տեղն եկաւ, փնտռեց ու գտաւ զաստուածային պատկերն ողջ ու անարատ, ու տեսաւ թէ այնչափ տարուրնէ յառաջ վառուած կանթեղը գեռ չէր մարած, ու անոր անվնաս պահուելուն համար կանթեղին առջեւը դրուած կղմինտրին վրան ալ նոյն պատկերին օրինակը տպաւորուած էր՝ որն որ մինչուկ աս օրուան օրս (այսինքն Պորփիրոսէն կայսեր ատենը) Եդեսիա քաղաքն անարատ կը պահուի: Արդ Քրիստոսի՝ մարդացելոյն Աստուծոյ՝ կերպարանքը ձեռքն առնելով Եպիսկոպոսը, մեծ վստահութեամբ ելաւ գնաց մինչեւ ան տեղը՝ ուր որ պղնձի անօթներուն հնչելուն ձայնը լսուած էր, որով որ գետնի տակ ճամբայ փորող Պարսիկները յայտնուած էին, եւ երբոր քաղաքացիք դրսէն, ասոնք ներսէն իրար պատահեցան նէ, նոյներէն թշնամիներուն համար պատրաստուած կրակին վրայ պատկերին կանթեղին եղէն կաթեցրնելով, դէպ ի ծակը հրեցին, ուր որ Պարսիկները պահուրտած էին ու հոն զամէնքը փճացուցին: Աս կերպով Եդեսացիներն իրենց լարուած որոգայթէն ազատելով, նոյն եղանակաւ նաեւ պարսպին դուրսը պատրաստուած մեքենաներուն ալ կրակ տալով մէկանց այրեցին, որոնց հետ մէկտեղ շատ զինուորականներ ալ կրակին զոհ եղան: Աս յաջողութիւններէն սիրտ առնե-



լով, պարսպին վրայէն սկսան անդադար քարեր վար նետել, որոնց ծանրութեամբն ու գլտորելովը պիղծ բանակին վերին հրամանատարներն եւ ուրիշ շատերն ալ մէկտեղ մահուամբ կորան: Աս միայն հերիք չէ, հապանաեւ դուրսը Պարսիկներէն քաղաքացիներուն դէմ վառուած ու ձիթենւոյ ծառերով եւ ուրիշ շատ տեսակ անչափ անհամար փայտերու դիզուածներով բորբոքած ու փռնկցուցած խարուկին բոցերը՝ աստուածային պատկերին զօրութիւնն իր բարերար գործակցութեամբը նոյն իսկ վառողներուն վրայ դարձուց: Որովհետեւ երբոր Եւլալիոս եպիսկոպոսը նոյն պատկերը ձեռքը բռնած՝ պարսպին վրայէն քաղքին բոլորտիքը թափոր պտրտցընելով խարուկին շիտկութեան հասաւ նէ, յանկարծ սաստիկ հով մը ելլելով, ան ահագին բոցը նոյն իսկ փայտերը փռնկցընողներուն վրայ քալեցուց, ու զանոնք հալածելէն ետ չկեցաւ, մինչեւ որ զամէնքն ալ՝ հին ատենները քաղդէացւոց պատահածին պէս՝ չերեց չհատցուց:

Ասորոց անդոթեան վկաները:

Չըլլայ որ մէկը կարծէ թէ մենք աս բաներս միայն ականջը հաճելու համար, կամ թէ ճշմարտութիւնը չարաչար գործածելու մտքով, առանց հաւատարիմ վկաներ ունենալու, մեզմէ յարմարցընելով պատմած ըլլանք. հապա երեք անուանի Պատրիարքներ՝ Յովբ Աղէքսանդրացին, Քրիստոփորոս Անտիօքացին ու Բասիլիոս Երուսաղէմացին՝ աս բաներս միաբան արձանագրած են. եւ աս բաներուս ստոյգ այսպէս ըլլալը Թէոփիլոս կայսեր, որ սուրբ պատկերաց թշնամի էր, թուղթ գրելով բացայայտ վկայութեամբ ծանուցած են<sup>1</sup>, այս ինքն՝ աստուածային պատկերները սուրբ սեպելու եւ անոնց յարգութիւն ընելու վրայ երկայն ճառ մը շարադրելով, աս բանս ալ անոր մէջ հիմնովին յառաջ բերին, ինչպէս յայտնի կը տեսնեն բանի տեղեակ մարդիկ, եթէ որ ան երկայն նամակը կարդալու ըլլան:

<sup>1</sup> Համեմատէ աս կտորս վերը ՔԼ. Ե. էջ 19. գրուածին հետ:

Եւազրիոսին պատմութեան մէջ եղած դարձերո-նի-նը :

Բայց թէ որ մէկը Եւազրիոսին ալ եկեղեցական պատմութիւնը մտադրութեամբ աչքէ անցընելու ըլլայ, յայտնի կը տեսնէ թէ անիկայ Գ. Գրքին մէջ աս սուրբ պատկերին վրայ որչափ բաներ գրած է : Ասիկա կը պատմէ թէ Խոսրով (Պարսից թագաւորը) ուրիշ պատճառներէն զատ, մասնաւորաբար աս բանիս համար ալ Եդեսիա քաղաքը պաշարեց, որպէս զի քրիստոնեաներուն՝ ան քաղքին երբեք թշնամիները պիտ'որ չիկրնան յաղթել ու զանիկայ կործանել ըսելով պարծենալը սուտ հանէ : Արդ (թագաւորը, կ'ըսէ Եւազրիոս,) անդադար գործքի զբաղած զինուորներու ձեռքով փայտերու ահագին ու գրեթէ անչափ հաւաքում մը պատրաստել տուաւ քիչ ժամանակուան մէջ, եւ ասոնցմէ գետինը ցցեր զարնել տալով, գրեթէ կրկին պարիսպով քաղաքը պատեց պաշարեց ու բոլոր մէջտեղը հողով լեցընել տուաւ. եւ այսպէս քաղքին պարսպին դիմացն ուրիշ նոյն իսկ քաղաքապարսպէն բարձրագոյն պատուար մը հանելով՝ ան աստիճանի հասցուց բանը, որ ատ բարձրութենէն մեծ դիւրութեամբ մը քաղքին պահապան զօրացը վրայ նետերու սաստիկ անձրեւ մը կրնար ուղածին չափ տեղացընել : Անդիէն տեսան ու միտք առին քաղաքացիները թէ ան լերան պէս բարձր պարսպէն թշնամին իբրեւ թէ տափարակի մը վրայ քալելով անաշխատ ու ապահովապէս քաղաքը կրնար մտնել : Բայց որչափ որ ալ խորհուրդնին տակնուվրայ եղաւ ու այլալեցան նէ, իրենք ալ իրենց կողմանէ կրցածնուն չափ աշխատելով, թշնամւոյն շինած նոր պարսպին տակը մեծ ու ահագին փոս կամ խորխորատ մը փորեցին, որպէս զի ան իբրեւ թէ երազի մէջ յանկարծ ի վեր բարձրացած սոսկալի պատնշապատ պատուարը կարենան մէկէն ի մէկ նոյն խորխորատին մէջ կործանել ու հարթայատակ ընել, զանիկայ ոտքի վրայ բռնող ցցերը տակէն կրակով խախտելով ու փռնկցընելով : Յիշեալ փոսը գլուխ ելաւ

աւարտեցաւ, ու փայտերուն կրակ տուին, սակայն բանն ուղածնուն պէս չյաջողեցաւ, ինչու որ հողը խիստ շատ խտացած էր ցցերու մէջ ու փայտերն ալ դեռ թարմ ու կանաչ էին, ուստի եւ կրակն առանց նոր ճարակ կամ լուցկիք ընդունելու չէր կրնար պատնշապատը փոքնկցրնել: Անոր համար աս սուրբ պատկերս նոր փորուած փոսը տարին ու անկէ սրբուած ջրով խարոյկը սրակեցին, մէյ մ'ալ ինչ կը նայիս, խիստ սաստիկ ու լափլիզող բոց մըն է ելաւ ու սկսաւ տարածուիլ, ջուրը ձէթի տեղ եղաւ կրակին, սակայն այնպէս որ աստուածային զօրութիւնն իր հրաշքը ցուցրնելով՝ փոսին մէջ գործողներուն ամենեւին մնաս մը չէր տար, իսկ ուրիշ ինչչափ որ առջեւը բան ելաւ նէ, այրեց տոչորեց փձացուց: Ան ատեն Պարսից թագաւորը քաղաքն առնելէն յուսահատելով եւ միանգամայն գիտնալով թէ քաղքը ցիները որուն օգնութեամբն այնչափ կը զօրանան, միտքը դրաւ որ իրաւախոհ ըլլայ ու հաշտութեան դաշինք դնելով իւր տէրութեան երկիրը դարձաւ:

Խորովին աղջիկը դիւնէն կ'աղաթի:

Եւ այց սոյն ինքն (թագաւորն) ալ շատ պիտ'որ չանցնէր՝ աս սուրբ պատկերէս բարիքներ պիտ'որ ընդունէր, որն որ հիմայ այնպէս իւր թշնամիները կը խորտակէ ու իրեն ջերմեռանդիցը հակառակորդները մահուան կորուստին կը մատնէ: Ասան զի թագաւորին աղջիկը, որուն որ չար դեւը տիրած էր ու բնական խելքին գործածութիւնը կորսընցուցած էր, իրեն ներսը բնակող սատանային ստիպելէն անդադար աղաղակներ կ'արձակէր, ըսելով թէ աղջկան ներսը եղող սատանան պիտ'որ չելլէ անկէ, թէ որ Եդեսիայէն անձեռագործ պատկերը չբերուի ու անոր չցուցուի: Թագաւորն աս լսելով պաշարման ատենին պատահածները միտքը բերելով, (որովհետեւ Եդեսացիներուն այնպէս մէկէն ի մէկ զօրանալուն ու համարձակ դէմ դնելուն գաղտնիքն իրմէն ծածուկ չէր մնացեր) քաղքին կառավարին ու Եւլալիոս Մետրո-

պողտին եւ նոյն քաղքին բովանդակ հասարակութեանը շուտ մը թուղթ խաւրելով, խնդրեց որ ան աստուածային ու ծայրագոյն զօրութիւն ունեցող պատկերը շուտով իրեն խաւրեն, կրկին եւ կրկին աղաչելով որ իրեն խընդրուածը չմերժեն: Իսկ ասոնք՝ թէ անհաւատ ազգին բարուցը վրայ կասկածելով եւ թէ վախնալով որ գուցէ Պարսից թագաւորն աս բանս անոր համար նիւթեր է, որպէս զի անոնց զօրութիւն ու պաշտպանութիւն տուողն անոնցմէ յափշտակէ, բանը հասուն խորհրդով մը կշռելէն ետքը, որ չըլլայ թէ անխոհեմութեամբ զանիկայ օտարի ձեռք յանձնեն, որն որ մինչեւ հիմայ իրենց բաները ապահովութեան վիճակի մէջ կը պահէր ու զիրենք բարերարութիւններով կը ճոխացընէր, եւ միանգամայն ալ չուղելով որ աս բանիս պատճառաւ մէջերնին եղած խաղաղութեան դաշինքն աւրուի, ճարպիկ ու քաղքին օգտակար մտածմունք մը մտքերնին ինկաւ: Այս ինքն է՝ բողորովին նախագաղափարին համեմատ եւ որչափ որ կարելի էր՝ անոր նման օրինակ մը քաշել տալով, անձեռագործ աննկարին՝ արուեստի ճարտարութեամբ վերջին աստիճանի վարպետութեամբ նկարուած նմանութիւնն առին խաւրեցին թագաւորին, անոր խնդրոյն համաձայն: Բայց հազիւ թէ աս սրբազան գրաւը տանողները Պարսից տէրութեան սահմանը մտեր էին, մէկանց սկսաւ սատանան աղջկան՝ բերնովը պոռալ թէ ինքն իր բնակութիւնը թող տալու եւ ելլելու պատրաստ է, միայն թէ ան բերել տրուած պատկերն ետ դարձուի, ու ոչ թագաւորական քաղքին եւ ոչ ալ Պարսից քաղաքներուն մէկու մը մօտենայ: Աս բանս շատ թախանձանօք ու սաստիկ պաղատանօք կը խնդրէր թագաւորէն սատանան: Թագաւորը խոստացաւ, եւ երբոր այսպէս սատանան ելաւ ու աղջիկն առողջացաւ նէ, խոսրով՝ սատանային հաւատարիմ մնալու եւ անոր տուած խոստմունքը կատարելու համար, կամ թէ նաեւ իրեն չար ու աղտեղի գործքերուն պատճառաւ՝ եկողին զօրութենէն վախնալով, հրամայեց որ

պատկերը նոյն քաղաքը ետ դարձուի, ուստի որ ելած էր, ու բաց ասկէ՝ զանիկայ խաւրողներն առատ պարգեւներով վարձատրեց:

Հռոմայեցոց կայսեր՝ աս սրբազան գրաւին ցոցլցած Բարեպաշտի ման յարգութիւնը:

Եղեսացւոց քովը աս անգին մասունքս անսպառ գանձ մը սեպուած էր, պատկերին ան բուն՝ առանց նկարչութեան ճարտարութեան շինուած օրինակը հոն ընդհանուր յարգութիւն կ'ընդունէր, եւ ինքն ալ իրեն բարեպաշտներն անոնց յարգութեանը փոխարէն կը պահպանէր ու կը պաշտպանէր: Արդ որովհետեւ աշխարհքիս բոլոր կողմերէն ամէն տեսակ չքնաղագիւտ ու ամենագեղեցիկ բաները ապահովութեան համար աս ամենապայծառ քաղաքս (Վոստանդնուպոլիս) ժողոված էին եւ Աստուծոյ ալ կամքն էր որ աս սրբազան գրաւականն ալ իր ամէն փառաւոր զարդերովը մէկտեղ հոն բերուէր, ասոր համար Ռոմանոս, որն որ (ան ատեն) Հռոմայեցւոց տէրութեան ղեկը ձեռքն ունէր ու ամէն բանի կ'իշխէր, աս բանիս ձեռք զարկաւ ու ջանք դրաւ որ իր հոգացողութեամբը տէրութեան ամենապայծառ մայրաքաղաքին երջանկութեանցը վրայ աս բանս ալ աւելցուի: Ուստի զանազան ատեններ շատ անգամ պատգամաւորներ խաւրելով Եղեսացիներուն՝ աղաչեր էր անոնց որ Տեառն մերոյ իր ձեռքովը<sup>1</sup> գրած (ու Աբգարին խաւրած) թըղթին հետ մէկտեղ աս սուրբ պատկերս (Գաստառակը) իրեն խրկեն, եւ անոր փոխարէն ինքն ալ խոստացած էր որ երկու հարիւր Սարակիսոս<sup>2</sup> ու տասուերկու հազար կոխուած արծաթի դրամ իրենց հատուցանէ: Իսկ Եղեսացիները դէմ կը դնէին, անպատշաճ է, կ'ըսէին, որ

<sup>1</sup> Ալ թէ իր ձեռքովը, հասկա թովմաս առաքեալին ձեռքով գրել առած, ինչպէս վերը ՔԼ. Բ. էջ 6 ու ՔԼ. Ե. էջ 16. Խորենացիէն առնելով գրինք:

<sup>2</sup> Արոնք ատենօք Եղեսաիա քաղաքին սահմաններէն դերի բռնուած էին:

մեր քաղքին պահապանն ու պաշտպանը դրամով կամ թէ մահկանացու գլուխներով փոխարինենք :

Հոմայեցի (Եդեսացոց վրայ) դարերազէ կ'ենէն ու զօրով  
 Գործու էլ դառնէն :

Շատ հեղ այսպէս աղաչանքներ եղան եւ ամէն անգամ ալ մերժուեցան, վերջապէս աշխարհքիս ստեղծմանէն ետեւ վեցհազար չորսհարիւր յիսունուերկու տարին՝ Եդեսիա քաղաքը նստող Ամիրան գեսպան խաւրելով՝ ըսաւ կայսեր որ խնդրած պատկերն ու Քրիստոսի նամակն իրեն յանձնել կու տայ, միայն թէ ինքն ալ ոսկի մատանեաւ կնքուած գրաւոր գաշինքով մը խոստմունք տայ թէ ասկէ ետքը Հռոմայեցւոց զօրքը մէյ մ'ալ թշնամութեամբ չեն յարձակիր հետեւեալ չորս քաղաքներուն վրայ, այս ինքն՝ Ռուխայի (Ռուհայի, որով բարբարոսները զԵդեսիա կ'անուանեն), Խառանի, Սառոսի ու Սամոսատայի, եւ անոնց ագարակները չեն աւրըշտրկեր ու բնակիչներէն գերի չեն բռներ, եւ երկու հարիւր տեղացի Սարակինոսներն ազատ թող կը տրուին, ու յառաջագոյն խոստացուած դրամական գումարը կը հատուցուի :

Կայսրը ատ բաղձացած ցանկալի գանձին սիրոյն համար աս ամէն առաջարկութեանց զիջաւ, ու խնդրածնին առատաձեռնութեամբ հատուցանելէն ետքը, Սամոսատա քաղքին ամենաբարեպաշտ Աբրահամ Եպիսկոպոսը, որ նոյն ատենը Քիւզանդիոն կը գտնուէր, աստուածային պատկերն ու Քրիստոսի Տեառն մերոյ նամակը բերելու խաւրեց : Բայց թէ խաւրողն ու թէ խաւրուողը մասնաւոր զգուշութիւն ըրին որ չըլլայ թէ սրբազան գանձը յանձնուելու ատեն խաբէութիւն մը գործուի, եւ անձեռագործ ու բուն ճշմարիտ նախատիպ պատկերին տեղ ան յանձնուի, որն որ Պարսից ստիպո-

1 Այս ինքն թէ Ռասիկանը՝ տեսնելով որ իր երկիրները կայսեր զօրքէն պաշարուած է : Ճառին հեղինակը՝ Ս. Գասատակին համար Եդեսացւոց վրայ կայսերմէն պատերազմական զօրք խաւրուած ըլլալը չ'ուզէր այնչափ յայտնի նշանակել :

ղական խնդրոյն համար ան ատեն նախագաղափարին նմա  
 նութեամբ յարմարցուած էր. ուստի աս երկուքն ալ ու  
 Նեստորականներուն եկեղեցին պահուած ուրիշ երրորդ  
 մ'ալ՝ որն որ դարձեալ հաւանականաբար ան առջի նա-  
 խագաղափարէն նկարուած էր (համեմատէ վերը էջ 49  
 էմմէրիք Աուսին ըսածին հետ), ապահովութեան համար  
 խնդրեց մէկտեղ տարաւ Աբրահամ Եպիսկոպոսը, որոնց  
 երկու ետքինները յետոյ տեղերնին դրուեցան, մինակ ան  
 պահուեցաւ, որն որ բուն ճշմարիտն էր :

Սրբազան Մատնեռէրը եղեւիս ասոյն ինչ ասոյնին :

Բայց աս ետքը պատահեցաւ : Իսկ երբոր աս հրա-  
 մանն ի գործ դրուելու եղաւ, Եղեսիա գանուող հաւա-  
 տացեալները մեծ շիտթութիւն հանեցին. քաղքին մէջ  
 սաստիկ ընդդիմութիւն ելաւ աս բանիս վրայ, ինչու որ  
 իրենց հայրենեացը փրկութիւն ու ապահովութիւն շնոր-  
 հող աս սրբազան գանձերն իրենցմէ հեռացընել ամե-  
 նեւին չէին ուզեր, մինչեւ որ Սարակինոսներուն իշխանը  
 շիտթութիւն հանողներէն ոմանք հաւանողական խօսքե-  
 ըով, ոմանք բռնութեամբ ու ոմանք ալ մահուան եր-  
 կիւղիւ զսպելով՝ ուզուածն իրեն ձեռքը յանձնել տու-  
 աւ : Բայց երբոր՝ սրբազան պատկերին ու Քրիստոսի նա-  
 մակին քաղքէն դուրս հանուելու բոլէին մէջ յանկարծ  
 արհեստով արդեօք չէ նէ վերին Նախախնամութեան  
 ուզելովը, որոտում ու փայլատակում մը ելլելով սաս-  
 տիկ անձրեւ իջնալ սկսաւ նէ, ընդդիմացողները դար-  
 ձեալ մեծ աղմուկ ու շիտթութիւն պատճառեցին, ըսե-  
 լով որ Երկինքն աս սոսկալի նշանով կ'ուզէ իմացընել որ  
 աս սրբազան գանձերուն ասկէ ուրիշ տեղ փոխագրուիլն  
 Աստուծոյ կամօցը համաձայն չէ : Սակայն Սարակինոսնե-  
 ըուն մեծը, որուն հրամանին ամէն բան կը հնազանդէր,  
 վրայ տալով ու ստիպելով թէ պայմանը պահելու եւ  
 տրուած խօսքին վրայ կայնելու է, անդին պատկերն ու  
 Քրիստոսի ձեռքով գրուած համառօտ նամակը քաղքէն  
 կը հանուին ու հոս կը բերուին :

Նախնիք հրաշքով ճշ ինքիւն Եփրատէս գետին ձեկաւ կողմը  
կ'անցնի :

Այսպէս աւասիկ ճամբայ ելլելով սրբազան գանձերուն տանողները, Եփրատ գետին եզերքը կը հասնին . հոս առջիններէն աւելի նորէն շիտթութիւն մ'ալ կ'ելլէ . Եղեսացիները մէկ բերան կ'աղաղակէին թէ Երկինքէն նշան մը չտեսնելու ըլլանք նէ, ինչ որ կ'ընէք ըրէք՝ չենք թողուր որ մեր ողջութիւնն ու խաղաղութիւնը մեզի ապահովընողները տանիք : Իրենց անհաւատութեանն ու զԱստուած փորձելուն համար՝ ալ իրօք նշանը տրուեցաւ : Վասն զի նաւակը՝ որն որ պատրաստուած էր Եփրատ գետէն անցնելու համար, դեռ Ասորոց կողման գետեզերքը կեցած տեղ, հազիւ թէ աստուածային պատկերն ու նամակը տանող Եպիսկոպոսները ներս մտած էին, մէկանց շարժիլ սկսաւ, առանց թիակ քաշողի կամ նաւավարի եւ կամ թէ հրողի մը, հապա մինակ աստուածային կամաց ուզելովը, եւ գնաց մէկալ գետեզերքն անցաւ ու կոթրնեցաւ կեցաւ . խռովարարները տակաւին սրուալու վրայ էին : Աս բանս հոն ներկայ եղողներն ու տեսնողները զարմացմամբ ու ապշութեամբ լեցուց, որոնք որ աս դիպուածիս վրայ ալ ձայներնին կտրեցին ու թող տուին որ սրբազան գրաւականները տարուին :

Ուրիշ շար հրաշքներ ալ կ'ըլլան :

Ասկէ սրբազան գանձին սպասաւորները Սամոսատա քաղաքը կը հասնին : Ասոնք էին Սամոսատացոց ու Եղեսացոց եպիսկոպոսները, աս ետքինիս քահանաներուն աւագերէցն եւ ուրիշ քանի մը բարեպաշտ քրիստոնեաներ, որոնց ընկերացած էր Հռոմայեցի աղնուական մ'ալ, Ամիրային պաշտօնեան : Քանի մը որ հոս կենալէն ետքը, որ ատենուան մէջ որ սրբազան մասունքները շատ հրաշքներ գործեցին, դարձեալ ճամբանին յառաջ տարին : Ճամբորդութիւննին սկսելու ատեն սուրբ պատկերին ու Քրիստոսի նամակին ձեռքովը դարձեալ անհամար



սքանչելիքներ կատարուեցան, կոյրերը մէկանց տեսնելու  
կարողութիւն ստացան, կաղերն ողջըննալով ու տկար  
անդամին հաստատուելով ոտք ելան վազել սկսան, զորոնք  
որ յառաջ հիւանդութիւնն անկողնոյն մէջ կապած էր,  
եւ որոնց որ ձեռուրները քաշուած էին՝ նորոգ կենդա-  
նութեամբ զօրացան: Եւ (համառօտ ըսելու համար) ամէն  
հիւանդութիւն ու տկարութիւն աներեւոյթ կ'ըլլար կը  
փարատէր, եւ որոնք որ կ'առողջանային՝ զԱստուած կը  
փառաւորէին ու անոր սքանչելիքները կը բարձրացընէին:

Այսպէս միօրինակ ճամբանին շարունակելով Ս.  
Աստուածածնի վանքը հասան, զորն որ Եւսեբիոսի տուն  
կ'անուանեն ու Թեմատէի մէջ է, որն որ Ռպտիմատոս կը  
կոչուի: Աս վանքիս եկեղեցւոյն մէջ յարգութեամբ ու  
բարեպաշտութեամբ դրին սքանչելագործ պատկերին  
սընտուկը, ու կենդանի հաւատով անոր մօտիկցողներն  
իրենց հիւանդութենէն բժշկուեցան:

Այսահարի ճշ գոչակոթիւնը թէ՛ կայսերոթիւնը նորէն կոս-  
տանդիանոսին յետէլ ոչիտ'որ յանձնուի:

Ասոնց հետ մէկտեղ այսահար մ'ալ եկաւ, զորն  
որ չար դեւն իրեն գործիք առնելով պատկերին ու նամա-  
կին վրայ շատ գովեստներ խօսեցաւ, ինչպէս նոյն տեսակ  
ողիները երբեմն Տեառն մերում ալ ըսած էին. Գիտեմք  
զքեզ՝ ով ես սուրբդ Աստուծոյ (զքեզ կը ճանչնանք մենք  
թէ՛ Աստուծոյ սուրբն (Ընտրեալն) ես դուն<sup>1</sup>): Ասիկայ  
իր խօսքերուն վերջը աս գուշակութիւնս ըրաւ, ըսե-  
լով. Ա՛ռ քեզի, կոստանդնուպոլիս քաղաք, նոր փառա-  
ւորութիւն ու խնդութիւն մ'ալ. ձեռքդ առ դուն ալ,  
կոստանդին Պորփիրոսէն<sup>2</sup>, քու կայսերութեանդ իշխա-  
նութիւնը: Աս ըսաւ ու առողջացաւ այսահարը, եւ մէ-  
կանց դիւին չարչարելէն ազատեցաւ: Աս խօսքերուս շատ  
մարդիկ վկայ են: Ինչու որ կայսրը (Ռոմանոս) պատուա-  
կան սուրբ նշխարաց յարգութիւն ցուցընելու համար Ծե-

<sup>1</sup> Ղուկ. Դ. 34:

<sup>2</sup> Աս ճառիս հեղինակն է:

րակուտի ու ատենակալներու դասէն բոլոր երեւելիները, եւ ասոնց հետ մէկտեղ թիկնապահներու ալ մեծ բազմութիւն դիմաց խրկած էր, ուստի դիւրաւ պատահեցաւ որ ատենակալներն ու պատրիկները (աղնուականները) եւ ստորին դասէն ալ շատերն աս խօսքերս լսեցին ու անոնց ականջալուր վկայ եղան: Եւ որովհետեւ աս գուշակութեան խօսքերը քիչ ժամանակէ ետքը իրօք ալ կատարուեցան, ուստի իրաւամբք կրնայ մէկը տարակուսի երթալ թէ սատանային յառաջգիտութիւն ունենալն ուստի է: Բայց չէ թէ իրենցմէ ունին աս գիտութիւնս, որովհետեւ անոնք արդէն աստուածային լուսաւորութենէ զրկուած են ու լուսոյ տեղ խաւար եղած են. հապախչպէս որ ատեն մը Աստուծոյ զօրութիւնը զԲաղաամ իրեն գործիք առաւ, յետոյ ըլլալու բանն անոր բերնովը կանխագոյն իմացընելու համար<sup>1</sup>, նաեւ ուրիշներն ալ ուրիշ անգամ նոյնպէս գործածեց, իմաստուն ու խոհական խորհուրդ մը բացատրելու համար, թէպէտ եւ անոնք աս բանին բոլորովին անարժան էին, այսպէս ալ հիմայ աստուածային պատկերին վրայ բնակող զօրութիւնը զսատանան գործիք ըրաւ ու անով քիչ մը ետքը ըլլալէքը գուշակեց: Աս դէպքս պատմութեան կարգին հետ ճիշդ վերաբերութիւն ունենալուն՝ այսչափ յիշատակելը պատշաճ սեպուեցաւ: Հիմայ մնացած պատմելիքները շարունակենք:

Սրբաշան հրահանքուն Աստուծոյ խոսքին մէջ ընդունուիլը:

Արովհետեւ Օգոստոս ամսոյն տասնուհինգերորդ օրը ըստ սովորութեան՝ միշտ կուսին Մարիամու Աստուածածնի Վերափոխման տօնախմբութիւնը կը կատարուէր, Բլաքերնա ըսուած տեղը եղող սուրբ եկեղեցւոյն մէջ, բոլոր կայսերականաց ներկայութեամբն ու մեծ փառաւորութեամբ, ուստի սրբազան գրաւները տանող պաշտօնեաները նոյն օրը կանուխ առտուրնէ հոն հասան, ու նոյն տաճարին վերին աղօթարանին մէջ պատկերին ու

նամակին սնտուկը դրին: Այստեղականք գալով մեծ յարգութիւն ու դրսանց համբոյր մեծարանաց մատուցին:

Պալատին Փարոս կոչուած մատուցը:

Յետոյ մեծ պատուով ու ամենափառաւոր հանդիսութեամբ ու ճրագներու բազմութեամբ Պրետորական սրահը տարին ու անկէ պալատն եկան, եւ հոն եղող Փարոս (գուցէ անոր համար ըլլայ աս անունս որ իբրեւ թէ փառաւոր պատմութեանի մը պէս գեղեցիկ կերպով զարդարուած էր) ըսուած մատրան մէջ զսնտուկը դրին բարձրաւանդակի մը վրայ: Իսկ անմիջապէս երկրորդ օրը, այս ինքն ամսոյն վեշտասաներորդին, դարձեալ բարեպարիշտ մեծարանքով ու յարգութեան համբոյրներ տալով անոր պատիւ ընծայելէն ետքը՝ անկէ վերցուցին քահանաներն ու կայսեր որդիքը (որովհետեւ ծեր կայսրը ոյժ չունենալուն համար տունը մնացած էր) եւ սաղմոսներով, երգերով ու վառուած մոմերու բազմութեամբ դէպ ի ծովն իջեցուցին, ու դարձեալ Պրետորիոն հանդիստ առնելով, քաղքին մերձաւոր ծովեզրներուն վրայ նաւով պտըտցուցին, որպէս զի այնպէս ծովի վրայ ժուռ գալովը քաղքին պաշտպանութիւն շնորհէ, ու այսպէս պարսպէն դուրս արեւմտեան ծայրը հասան: Հոս նաւէն ելելով, սկսան քալել թէ նոյն իսկ կայսրները եւ թէ բոլոր ծերակոյտն ու Պատրիարքը եւ բովանդակ եկեղեցականաց դասը՝ վայելուչ կարգաւ թափոր մը կազմելով, ու նոյն կերպով գրեթէ երկրորդ տապանակի մը պէս, մանաւանդ թէ տապանակէ ալ դերազանց՝ փառաւորապէս առին տարին ան սնտուկը, որուն մէջ ամենասուրբ ու յարգելի գրաւները պահուած էին: Պարսպին դրսի դիէն ինչուան Ասկեղէն ըսուած դուռը քալելով ու անկէ քաղաք մտնելով, սաղմոսներու եւ եկեղեցական երգերու ու հոգեւորական օրհնութիւններու բարձրաձայն նուագներով ու ցնծութեամբ, եւ անչափ լապտերներու լուսաւորութեամբ ու բովանդակ ժողովրդեան խմբերովը փոխադրութեան հանդէսը կատարելով, քաղ-

քին բուն մէջ տեղէն ճամբայ ըրին, առ հանդիսական  
 թափորով իրրեւ թէ քաղքին պայծառութիւն ու մեծա-  
 գոյն պաշտպանութիւն ու ապահովութիւն եւ թշնամեցն  
 առջեւը մշտնջենաւոր անյաղթելիութիւն մաղթել կ'ու-  
 ղէին: Երբոր այսպէս քաղքին ժողովուրդը լուսաւորու-  
 թեան ետեւէն կ'յնալով՝ տեսարանին մասնակից ըլլալու կը  
 ժողովէին ու ամէն գիաց մարդիկը ծովու մեծ ալիքներու  
 նման իրարու վրայ կը դիզուէին կը խոնէին, շատոնցուրնէ  
 անդամալոյծ ու հիւանդոտ մարդուն մէկն ալ իրեն սպա-  
 սաւորներուն բազկին կ'աթրնցած՝ աստուածային պատ-  
 կերը տեսնելու համար ոտք ելաւ, եւ զանիկայ տեսածին  
 պէս՝ նոր ու չսուած հրաշքով մը առողջանալով ու  
 զգալով որ ոտուրներուն զօրութիւնը հաստատուած է,  
 ինքիրեն ոտուրներովը քալելով վազեց դնաց ու պատկե-  
 րին սնտուկը պագնելով բարձրաձայն օրհնութեամբ զԱս-  
 տուած փառաւորեց, իր վրայ եղած սքանչելիքը պատմե-  
 լով, իսկ հոն եղողները տեսնելով եւ իր խօսքերը լսե-  
 լով, Աստուծոյ բիւր փառք կու տային, որն որ ամէն  
 բանի վերին տէրն է ու միշտ զարմանալի սքանչելիքներ  
 կը գործէ:

Այն ակնջէն աւելի աղբոյափոյն է:

Եւ այց ուրախութեան սաստկութենէն սյնչափ ար-  
 ցունք թափուեցաւ, սյնչափ շատ աղօթք ու դոհութիւն  
 արուեցաւ Աստուծոյ, սյնչափ բովանդակ քաղքէն պա-  
 զատախառն խնդրուածք եղան նոյն իսկ աստուածային  
 պատկերին ու նուիրական նամակին միջնորդութեամբը,  
 որ լեզուի ճառելովն ամենեւին չիկրնար պատմուիլ, ո-  
 րովհետեւ անկարելի է թէ աչքին տեսածին չափ լեզուն  
 կարող ըլլայ հասկըցընել: Աւստի մեծ ու նշանաւոր բա-  
 ներն աւելի աչօք տեսնելու է՝ քան թէ միայն լսելու,  
 վասն զի պատմութիւնը չիկրնար իրին մեծութիւնն ըստ  
 ամենայն մասին նկարագրել: Արդ երբոր հանդիսութեան  
 առաջնորդներն Աւգոստոսիոնին առջեւի հրապարակն եկան  
 նէ, աջէն քիչ մը գէպ ի ձախ խոտորելով՝ Աստուածային

խմաստութեան՝ հռչակաւոր սուրբ տաճարը մտան, ու նուիրական պատկերն ու նամակը Աւանդատան քաւութեանը մէջտեղը դրին:

Հոս բովանդակ եկեղեցականաց դասը մեծարանք մատուցանելէն եւ ինչպէս որ պէտք էր նէ՝ յարգութիւն ու պատիւ ընծայելէն ետքը, դարձեալ անկէ ալ ելլելով սրբազան գրաւները կրողները յառաջ երթալ սկսան, ու կայսերական պալատը գալով, Տրիկլինիոն ըսուած Ասկեղինին, այս ինքն՝ թագաւորական գահին վրայ դրին աստուածային պատկերը, ուր որ մեծամեծ բաներու վճիռ տալու եւ որոշումներ ընելու սովորութիւն էր. եւ ասիկայ մեծ խորհրդով ըրին, իբրեւ թէ մտածելով որ կայսեր նոյն իսկ աթոռն անկէ (պատկերէն) շօշափուելով բոլորովին սրբուի, այնպէս որ անկէ ետքը անոր վրայ նստողներուն արդարութիւն ու գթութիւն պարգեւէ առատապէս Ս. Գաստառակը: Եւ ըստ սովորութեան երկայն ու ընդարձակ ճառ մը խօսուելէն ետքը՝ դարձեալ ասկէ ալ հանելով զսուրբ պատկերը՝ վերը յիշուած Փարոս տաճարը տարին, եւ աջ կողմը դէպ ի արեւելք դրին ու նուիրեցին ի պարծանս հաւատացելոց, ի պահպանութիւն կայսերաց, յապահովութիւն եւ ի պաշտպանութիւն բովանդակ քաղաքին ու բոլոր հասարակութեան քրիստոնէից:

Եւ այց դուն, սիլ (Աստուծոյ) Հօր անխորհուրդի նմանութեան նմանութիւն ու պատկեր, դուն՝ որ պատկերն ես անոր, որն որ պատկեր է հայրական էութեան, սիլ նուիրական ու ամէն պատուոյ արժանաւոր՝ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառացը նկարագիր. (որովհետեւ կենդանութիւն կրողի մը պէս քեզի հետ մտերմական սիրով կ'ուզեմ խօսակցիլ) պահէ եւ ի մշտնջենաւորս պահպանէ զանիկայ, որն որ բարեպաշտութեամբ ու հեղութեամբ մեր վրայ կ'իշխէ եւ քու գալտեանդ յիշատակը փա-

1 Աստուծոյ նուիրելի հիմակուան Այստուծոյ:

աւարապէս կը տօնէ, զորն որ քու կամելովդ մեր նախ-  
 նեաց ու հարցը գահը հասցուցիր: Անոր զակրներն ան-  
 փորձ պահէ ի յաջորդութիւն ազգատոհմին եւ ի մշտնջե-  
 նաւորութիւն իշխանական գաւազանին: Հասարակութեան  
 խաղաղութիւն ու անդորրութիւն պարգեւէ: Աս մեծա-  
 պայծառ քաղաքս թշնամւոյն զէնքերուն առջին անխո-  
 նարհելի պահէ, ու շնորհք ըրէ որ մենք քու նախա-  
 պատկերիդ՝ Քրիստոսի Աստուծոյ մերում հաճոյանալով,  
 անոր երկնաւոր արքայութեան մէջ ընդունուելու արժա-  
 նի ըլլանք, անոր փառաբանութիւն ու գոհութեան օր-  
 հնութիւն երգելու համար: Ասն զի անոր կը վայելէ  
 փառք ու երկրպագութիւն ի յաւիտեանս յաւիտենից, ա-  
 մէն:

Հ. Փրանկի-կոս Առճբէփէն, ի Յաճախապար. Տարեւնի ան-  
 ղեղն անցելոց Առսրանդիւնի. Կաղաթին: Փարէշ, 1664:

Յ Ե Ն Կ

- ԳԼ. Ա. Արդարին թագաւորութեան ատենները եւ քանի մը  
ասոր նման տեղեկութիւններ, իբրեւ Պատրաստութիւն: 1
- ԳԼ. Բ. Արդար իր իշխաններէն մէկ քանին Ելեւթերոպոլիս  
քաղաքը Մարինոս կուսակալին կը խաւրէ: — Խաւ-  
րուածներն աս առթիւ զՔրիստոս Տէրն մեր կը տես-  
նեն, եւ ասանկով Արդարին քրիստոնէութեան դառ-  
նալուն սկիզբը կ'ըլլայ: — Արդար Յիսուսի Քրիստոսի  
թուղթ մը կը դրէ. իսկ Քրիստոս Տէրն մեր ալ անոր  
նամակին պատասխանովը մէկտեղ, զորն որ Թովմաս ա-  
ռաքեալ իր վարդապետին բերնէն դրեց, իւր պատկերը  
կը խաւրէ: . . . . . 4
- ԳԼ. Գ. Ինչպէս շինուեցաւ աս սքանչելի պատկերս: . . . 7
- ԳԼ. Դ. Դաստառակն Եդեսիա Արդարին կը բերուի: — Ճամ-  
բորդութեան մէջ եղած սքանչելիքները: Ս. Դաս-  
տառակին Եդեսիա ցուցուած յարգութիւնն ու մեծա-  
րանքը: . . . . . 10
- ԳԼ. Ե. Սրբոց Հարց, Տիեզերական ու Մասնաւոր Ժողովոց եւ  
ուրիշ երեւելի մատենադրաց վկայութիւնները, աս  
Արդարին խաւրուած անձեռագործ փրկչական Պատկերիս  
վաւերականութիւնը հաստատելու համար: . . . . 15
- ԳԼ. Զ. Թէ ինչ բանի համար Եւսեբիոս մեծ պատմագիրը՝ աս  
հռչակաւոր ու ընդհանուր ամենուն ծանուցուած  
փրկչական պատկերին վրայ իր եկեղեցական պատմու-  
թեանը մէջ ամենեւին յիշատակութիւն մը չէ ըրած: 28
- ԳԼ. Է. Քրիստոսի Տեառն մերոյ ուրիշ պատկերներուն վրայ  
տեղեկութիւններ, որոնք որ նոյնպէս հրաշքով կտաւի  
վրայ տպաւորուեցան ու հրաշագործ են, եւ ասոր հա-  
մար ալ զանազան տեղեր յարգութիւն կ'ընդունին: . 41
- ԳԼ. Ը. Ս. Դաստառակը Եդեսիա քաղքին դրանը վրայ շատ  
դարեր ծածկուած կը մնայ: — Նոյն քաղաքը հեղ մը  
թշնամւոյն բռնութենէն պաշարուած ատեն՝ տեսիլքով  
մը կը յայտնուի: — Անկէ ետեւ մեծ յարգութեան  
մէջ հոն կը պահուի: . . . . . 54
- ԳԼ. Թ. Ս. Դաստառակը Եդեսիա քաղքէն Առստանդնուպոլիս  
կը փոխադրուի: — Եդեսացիք շատ տեսակ ընդդիմու-  
թիւններ կ'ընեն ու կը արամին: — Առստանդնուպոլսի  
հաւատացեալ Ժողովրդեան ընդհանուր ուրախութիւնը,  
զորն որ ամէնքն առհասարակ ցուցուցին աս մեծ ու

- անդին հողեւորական գանձն ընդունելու ատենին: —  
 Աս առթիս մէջ գործուած հրաշքերը: . . . . . 58
- ԳԼ. Ժ. Գաստառակը Յունաց կայսերմէն ճենովացի Լէոնարտոյ  
 զօրապետին պարգեւ կը տրուի, որն որ զանիկայ իւր  
 քաղաքը ճենովա կը տանի, ուր որ մինչուկ աս օրուան  
 օրս Ս. Բարթոլոմէոսի եկեղեցւոյն մէջ յարգութեամբ  
 կը պահուի: . . . . . 66
- ԳԼ. ԺԱ. Բարոնիոս կարդինալին կարծեացը վրայ քննութիւն,  
 թէ արդեօք անիկայ ստոյգ հաւատացեր էր որ Եդեսա-  
 կան Ս. Գաստառակն իրօք Հռոմ քաղաքը գտնուի: . 72
- ԳԼ. ԺԲ. Ճենովա քաղաքը գտնուող Ս. Գաստառակին անունն  
 ու ստորագրութիւնը: . . . . . 82
- ԳԼ. ԺԳ. Ս. Գաստառակին հիմակուան վիճակին մէջ ունեցած  
 զարդերուն նկարագիրը: . . . . . 86
- ԳԼ. ԺԴ. Ս. Գաստառակը կը յափշտակուի ու Գաղղիա կը  
 տարուի, յետոյ դարձեալ ետ կը դարձուի. ու անկէ  
 ետեւ աւելի եւս զգուշութեամբ կը պահուի: — Աս-  
 տուծոյ առանձին նախախնամութեամբը 1798ին պա-  
 տահած աւարառութենէն, ինչպէս նաեւ 1810ին Փա-  
 րիզ քաղաքը տարուելու վտանգէն կ'ազատի: . . . . 92
- ԳԼ. ԺԵ. Ս. Գաստառակին եղած ընդհանուր յարգութիւնը.  
 անոր սովորական ու սովորականէն դուրս արտաքոյ  
 կարգի բացուիլը, մարդիկներէն ջերմեռանդական մեծա-  
 րանք ընդունելու համար: . . . . . 100
- ԳԼ. ԺԶ. Թագէոս առաքեալ Եդեսիա քաղաքը Աբգարին կը  
 խաւրուի: — Աբգար՝ իր հաստատուն դարձէն ետքը  
 զանազան թագաւորներու թղթեր կը գրէ, Քրիստոսի  
 աստուածային վարդապետութիւնը պաշտպանելու եւ  
 զանիկայ անոնց քարոզելու համար: — Աբգարին մահը: 107
- ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. Գաստառակին առջին ընկելու քանի մը աղօթք: 113
- ՅԱԻԵԼՈՒԱԾ Բ. Շնորհօքն Քրիստոսի Աստանդին Պորփիւրո-  
 թէն Հռոմայեցւոց կայսեր զանազան պատմութիւննե-  
 րէն քաղելով Քրիստոսի տեառն մերոյ անձեռագործ  
 ու աստուածային Պատկերին վրայ գրած ճառը, թէ  
 ինչպէս սուրբ Գաստառակն Աբգարին խրկուեցաւ, եւ  
 ետքը Եդեսիայէն աս ամեներջանիկ ու ամենապայծառ  
 մայրաքաղաքս Աստանդնուպոլիս բերուեցաւ: . . . . 116





